

ԱՐԿԱՒԻ ԱԿՈՊՈՎ

ՏԱՅԻՔ

ՎԱՐՉԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ
ՊԱՏԿԵՐԸ XVI ԴԱՐԻՑ XIX ԴԱՐԻ
I ԵՐԵՄՆԱՄՅԱԿԸ



9(47.925)
2h-39

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐԿԱԴԻ ԱՐՏՅՈՍԻ ԱԿՈՊՈՎ

ՏԱՅՔ

ՎԱՐՉԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ
XVI ԴԱՐԻՅ XIX ԴԱՐԻ
I ԵՐԵՄՆԱՄՅԱԿԸ

4986

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇԽԵԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ



ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES

94

94

ԵՐԵՎԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
2013



Գիրքը հրատարակության է երաշխավորվել

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի և Շիրակի հայագիտական
ինտագրատությունների կենտրոնի գիտական խորհուրդների որոշմամբ

խմբագիր՝ Ա. Ա. Մելքոնյան, պ.գ.դ.,

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Ակոպով Ա.

Ա 398 Տայք. վարչաժողովրդագրական պատկերը XVI դարից XIX դարի I
երեսնամյակը/ Ակոպով Ա. Ա. - Եր.:

Պատմության ինստիտուտի, 2013. – 213 էջ:

Մենագրությունը, որը նվիրված է Մեծ Հայքի XIV աշխարհի Տայքին, ներկայացնում է XVI դարից մինչև XIX դարի I երեսնամյակը Կարսի, Ախալցխայի և Էրզրումի նահանգների միջև տարբարությունները Տայքի վարչատարածքային բաժանումները, բնակավայրերի տեղագրությունն ու տեղաբաշխումը, էթնոժողովրդագրական տեղաշարժերը և այլ հիմնահարցեր: Աշխատության մեջ անդրադարձ է կատարվել նաև Տայքի հին և միջնադարյան շրջանների պատմությանը՝ հատուկ ուշադրության արժանացնելով Տայքի-Խաչուքյան շրջանում քաղկեդոնականության տարածման շարժառիթների և ընթացքին:

Գիրքը հասցեագրված է մասնագետ-պատմաբաններին և ընկերացող հանրությանը:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեծ Հայքի Հյուսիսարևմտյան Տայք աշխարհը, Հանդիսանալով Հայ ժողովրդի կազմավորման և պետականության կարևոր գոյատևրած շրջաններից մեկը, Հայ պատմագիտության կողմից դեռ Հավուր պատշաճի ուսումնասիրված է: Հաճախ Հայ պատմաբանները խուսափել կամ պարզապես չըջանցել են դիտաբաղաբական և ճանաչողական նշանակություն ունեցող Տայքի պատմաժողովրդագրական հարցերը: Տայքի պատմության առանձնահատկություններից մեկն այն է, որ այնտեղ արդեն վաղ միջնադարի վերջերին տարածում ստացավ քաղկեդոնականությունը, ինչն իր հերթին որոշակի ներգործություն ունեցավ էթնոգրական ու ժողովրդագրական գործընթացների վրա: Նախկինում Հայ առաքելական վանական Համալիրները վերածվեցին քաղկեդոնական մենաստանների: XVI դարում օսմանյան տիրապետության հաստատումը արմատապես փոխեց Տայքի ինչպես վարչական կառուցվածքը, այնպես էլ ժողովրդագրական ու մշակութային կյանքը: Մահմեդականության տարածումն ու թուրքերենի ազդեցությունն իր ներգործությունն ունեցան ժողովրդագրական հետագա զարգացումների վրա, իսկ արևմտահայերի վերաբնակեցումն առավել թուլացրեց տեղում մնացած Հայ բնակչության դիրքերը:

XIX դարից ցայսօր վրացագիտության մեջ գործադրվում են մեծագույն ջանքեր, «ապացուցելու» Տայքի ի սկզբանե վրացական տարածք լինելը, համարելով այն Վրաստանի ոչ միայն պատմության, այլև մշակութային կարևորագույն կենտրոն՝ յուրացնելով այսօր էլ դեռ պահպանված Հայկական ճարտարապետության գլուխգործոցները և ոտնահարելով պատմական ճշմարտությունը: Այս հարցում Վրաստանը գործուն աջակցություն է ստանում Թուրքիայի կողմից: 2003 թ.-ից ի վեր Թուրքիայի Փամուկլալիի և Սեբաստիայի համալսարանների պատմաբան արվեստաբաններն ուսումնասիրել են մոտ 300 կրոնական, պատմամշակութային հուշարձան (վանքեր, մատուռներ, եկեղեցիներ) և դրանք գրանցել որպես վրացական: Հատկանշական է, որ այդ հուշարձանների մեծ մասը գտնվում է Տայքում: 2008 թ. երկու երկրների կառավարությունների միջև ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ Տայքի Հայկական հուշարձաններից Օշկվանքի և Իշխանի վերականգնման գործում վրացական

կողմին ներգրավելու մասին: Համաձայնեցված է նաև վրացական կողմի մասնակցությունը Տայքի մյուս հայկական հուշարձանների (Խախու, Բանակ, Չորգվանք և այլն) վերականգնման գործում: Դրա փոխարեն վրացական կառավարությունն իր համաձայնությունն է տվել Վրաստանում տարածք տրամադրել 4 մզկիթների կառուցման համար: Խոսքից զործին անցնելու գործընթացն իրեն երկար սպասել չի տվել: 2012 թ. թուրքական «Անֆորա միմարլիս ռեստորասիոն» ընկերությունը կազմել է Իշխանի եկեղեցու վերականգնման նախագիծ, ինչպես նաև չափազրուամներ անցկացրել Օշկվանքում: Նախագիծը հանրությունը ներկայացվել է 2012 թ. սեպտեմբերի 5-8-ին՝ Բաթումում անցկացված Տայքին նվիրված միջազգային գիտաժողովի ժամանակ, որի կազմակերպիչն էր Վրաստանի ձեռագրերի ազգային կենտրոնը:

Վերականգնման աշխատանքները սկսելու համար նախագիծը ֆինանսավորած թուրքական կառավարության հայտարարած մրցույթում հաղթել է վերոհիշյալ «Անֆորա միմարլիս ռեստորասիոն» ընկերությունը: Արդեն 2013 թ. դարձան սկսվել են Իշխանի եկեղեցու վերականգնման աշխատանքները: Ծանոթանալու և մասնակցելու համար կատարվող աշխատանքներին՝ թուրքական կողմի հետ Վրաստանի մշակույթի փոխնախարար Մ. Միզանդարիի ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, վրացի մասնագետները մեկնել են Թուրքիա: Իշխանի եկեղեցու հատակը մաքրելու ժամանակ ի հայտ է եկել խճանկարը, իսկ եկեղեցուց դուրս են բերվել որմնանկարների մնացորդներ պարունակող բազմաթիվ քարեր և հող:

Իրադարձությունների այսպիսի զարգացումը լուրջ վտանգ է ներկայացնում Տայքի հայկական հուշարձանների համար: Հայ առաքելական եկեղեցու իրավասություններն այս հարցում բավականին սահմանափակ են, քանի որ տարածվում են միայն առաքելական եկեղեցիների վրա, ուստի Մայր Աթոռն այստեղ դառնում է անկարող: Հետևաբար այս խնդիրը պետք է տանել քաղաքական հարթություն և հիմնահարցը լուծել պետական մակարդակով: Մշակույթի նախարարությունն է, որ պիտի հանձն առնի հայկական մշակութային հուշարձանների պահպանության ու պահանջատիրության հարցը, մշակի հետևողական գործողությունների ծրագիր:

Ստեղծված իրավիճակում ուղղակի կենսական անհրաժեշտություն է դառնում հատկորեն սանմանազատել անաչառ պատմությունը հայ-վրացական արդի հարաբերությունների հրամայականից:

կարծում ենք, որ այդ նպատակին կարող է ծառայել Տայքի պատմության հին և միջնադարյան ժամանակահատվածի ուրվագծային և XVI-XIX դարերի իրադարձություններին՝ տարածաշրջանի էթնոկոնական զիմախեղման պատմության հարցերին նվիրված ներկա ուսումնասիրությունը:

Ժամանակագրական առումով մեր ուսումնասիրությունն ընդգրկում է XVI դարից մինչև XIX դ. առաջին երեսնամյակը, այսինքն՝ թուրքական տիրապետության հաստատումից մինչև 1829-1830 թթ. արևմտահայերի վերաբնակեցումը: Խնդրո առարկա ժամանակաշրջանում Օսմանյան կայսրությունում «Տայք» անունով վարչական միավոր չի եղել: «Աշխարհացոյց»-ում ներկայացված Տայքի դավառները (Կող, Բերդացփոր, Պարտիզացփոր, Ծակք, Բողխա, Ոքաղե, Ազորդացփոր և Արսյացփոր) XVI-XIX դարերում բաժանված են եղել էրզրումի, Չլզըրի (Ախալցխայի) և Կարսի էյալեթների միջև: Այդուհանդերձ, թե՛ միջնադարում, թե՛ XVI-XIX դարերում, և թե՛ այժմ Տայք ասելով հասկանում ենք աշխարհագրական այն շրջանը, որը հայտնի է «Աշխարհացոյց»-ից: Հետևաբար ներկա ուսումնասիրության մեջ Տայքի վարչատիրապետական պատկերը քննվելու է այն աշխարհագրական սահմաններում, որը համապատասխանում է «Աշխարհացոյց»-յան Տայքին¹:

Աշխատության առաջին գլխի առաջին ենթագլխում անդրադարձել ենք Տայքի հին ու միջնադարյան ժամանակաշրջանին և քաղկեդոնականության տարածման հիմնախնդիրներին, քանի որ վերոհիշյալ հարցերի լուսաբանումն անհնարին է առանց նախորդ դարաշրջանի պատմության ուսումնասիրության: Նման մոտեցումը պայմանավորված է մեկ նահանգի ամբողջական պատմության ստեղծման անհրաժեշտությամբ և հիմնահարցի գիտաքաղաքական կարևորությամբ:

Ներկա ուսումնասիրության մեջ փորձել ենք նոր մեկնաբանություն պահանջող արևելային փաստաթղթերի և վավերագրերի, վիճակագրական տվյալների, թեմային վերաբերող պատմագիտական, տեղագրական և ժողովրդագրական գրականության քննախույզ ուսումնասիրման հիման վրա ներկայացնել Տայքի հին և միջնադարյան շրջանի պատմությունը Մեծ Հայքի պատմության համատեքստում, նրանց փոխկապակցվածությունն ու անքակտելիությունը:

¹ Տե՛ս Հավելված, քարտեզ 1:

նը, վերլուծել Տայքում քաղկեդոնականության տարածման պատճառները, դրա բացասական հետևանքները Տայքի դավանաբանական, հետադադարում նաև կրոնական պատկերի վրա, ներկայացնել Տայքի տեղն ու դերը XVI—XIX դդ. Օսմանյան կայսրության վարչատարածքային բաժանումների համակարգում, տեղադրել Տայքի 8 գավառները և նրանց շուրջ 400 բնակավայրերը՝ զուգահեռ փորձելով ցույց տալ վերջիններիս ազգային կազմը և բնակչության թվաքանակը, քննության առնել ժողովրդագրական գործընթացների առանձնահատկությունները Տայքում՝ դրանք համագրելով Արևմտյան Հայաստանի մյուս շրջաններում թուրքական կառավարության վարած ժողովրդագրական քաղաքականության հետ, բնակչության տեղաշարժերը պայմանավորող սոցիալ-տնտեսական և քաղաքական գործոնները, ինչպես նաև ցույց տալ 1829—1830 թթ. վերաբնակեցման հետևանքով ձևավորված էթնոժողովրդագրական պատկերը Տայքում: Գիտական առումով կարևոր ենք համարում նաև Տայքի էթնոժողովրդագրական գործընթացները ներկայացնել որպես մեկ ամբողջություն Հայաստանի՝ մասնավորապես էրզրումի, Ախալցխայի և Գարսի նահանգների առջև ծառայած ժողովրդագրական հիմնախնդիրների համատեքստում: Նման մոտեցումը Հնարավորություն է տալիս՝ մի կողմից Տայքը դիտարկել առանձին՝ սեփական հիմնախնդիրներով և առանձնահատկություններով, մյուս կողմից՝ ներկայացնել համահայկական սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական գործընթացները, որոնք, զուգակցելով տեղական նշանակության գործոնների հետ, արտահայտում են նահանգի ընդհանուր պատկերը:

Տայքի պատմությունը կարիք ունի մանրակրկիտ ու համակողմանի ուսումնասիրության: Հետազոտվող թեմայի բազմաթիվ խնդիրների շարքում հատկապես դժվար լուծելի է թվում Տայքի էթնոժողովրդագրական պատկերի վերհանումը՝ պայմանավորված համապատասխան աղբյուրների բացակայությամբ: Ձեռագիր և տպագիր աղբյուրներում կան միայն աղքատիկ տեղեկություններ այս կամ այն բնակավայրերի մասին, որտեղ, սակայն, մեծամասամբ բացակայում են բնակավայրերի ծխերի քանակին ու բնակչության ազգային և կրոնական պատկանելության վերաբերյալ տեղեկությունները: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ XVI—XVIII դարերի վերաբերյալ արևելյան նյութերի բացակայությունն ավելի է դժվարացնում տարածաշրջանի համակողմանի և անաչառ ուսումնասիրության:

յունը: Ուստի առաջացած բացը փորձել ենք լրացնել տարբեր աղբյուրներում հայթայթած փոքրաթիվ նյութերով և առանձին ուսումնասիրողների հետազոտությունների միջոցով, որոնք այս կամ այն չափով անդրադարձել են թեմային:

XVI—XIX դարերին վերաբերող արխիվային նյութերի կարելի է հանդիպել ինչպես Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրային և արխիվային ֆոնդերում (Հատկապես Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունու դիվանում), այնպես էլ Վրաստանի պատմության կենտրոնական պետական արխիվում (ՎՊԿՊԱ) և Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանում: Եղած փաստաթղթերը հիմնականում գեղեցագրեր ու նամակներ են՝ ուղղված ռուսական զինվորական հրամանատարություններ կամ Հայ հոգևորականության ականավոր ներկայացուցիչներին, ինչպես նաև բազմաթիվ գրություններ, որոնք պատմում են Հայ բնակչության ռուսական սահմաններում վերաբնակվելու մասին: ՎՊԿՊԱ 415 և 1438 ֆոնդերում առկա վավերագրերը վիճակագրական տեղեկություններ են հաղորդում տարածաշրջանի ժողովրդագրական պատկերի վերաբերյալ, սակայն այդ տեղեկություններն աղքատիկ են և չեն կարող բավարար լինել ամբողջ Տայքի էթնոժողովրդագրական նկարագիրը վեր հանելու գործում: Այս հարցում մեզ օգնության են հասնում Հայ և օտարազգի հեղինակների աշխատություններում հանդիպող կցկտուր տեղեկությունները, և այս նյութերի համադրությունն է օգնում վերլուծություններ և ընդհանրացումներ կատարել:

Մեծ արժեք են ներկայացնում նաև արխիվային փաստաթղթերի ժողովածուները: XIX դ. առաջին երեսնամյակի էթնոժողովրդագրական հիմնախնդիրների ուսումնասիրությունն անհնար է առանց Կովկասյան Հնագրական Հանձնաժողովի հրատարակած 12 հատոր կազմող արխիվային նյութերի², Հայաստանի ԳԱ Պատմության ինստիտուտի հրատարակած «Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին» փաստաթղթերի և նյութերի երկհատոր ժողովածուի³, ինչպես նաև 1828—1830 թթ. պարսկահայության և արևմտահայության

² Стів Акты, собранные Кавказской археографической комиссией (այսուհետև՝ АКАК), т. 7, Тифлис, 1878.

³ Стів Присоединение Восточной Армении к России. Сборник документов. Редактор П. П. Агаян, т. 2, 1814—1830, Ер., 1978.

յան վերաբնակեցման վերաբերյալ նյութերի, որոնք հավաքվել և գիտական չրջանառության մեջ են դրվել Մ. Դարբինյանի կողմից⁴:

Տայքի ժողովրդագրական և պատմաաշխարհագրական հիմնահարցերին առաջին անգամ անդրադարձել է XVII դ. հայ հեղինակ Հակոբ Կարնեցին, որի «Տեղագիր Վերին Հայոց»⁵ աշխատությունն ունի աղբյուրագիտական անդնահատելի նշանակություն: Նրա հաղորդած տեղեկությունները Տայքի դյուղերի և բնակչության կազմի վերաբերյալ թույլ են տալիս մեզ հաստատապես պնդելու, որ XVII դ. կեսերին Տայքի մեծագույն մասը բնակեցված էր հայերով, որոնց մեջ զգալի թիվ էին կազմում քաղկեդոնիկ հայերը:

Իրենց անգագրական բնույթով և Օսմանյան կայսրության վարչական բաժանումներին վերաբերող տեղեկություններով առանձնահատուկ են XVII դ. թուրք հեղինակներ Քյաթիբ Չելեբի⁶, էվլիա Չելեբի⁷ աշխատությունները, ինչպես նաև թուրք այլ հեղինակների աշխատություններ⁸, որոնք թարգմանվել և հրատարակվել են Ա. Խ. Սաֆրաստյանի կողմից: Թուրքական աղբյուրների մեջ մեծ արժեք են ներկայացնում հատկապես օսմանյան հարկացուցակները՝ դավթարները, որոնց թարգմանության, հրատարակության և ուսումնասիրության գործում մեծածավալ աշխատանք է կատարվել վրացագիտության մեջ: Ակագեմիկոս Ս. Ջիբրայի կողմից թուրքերեն բնագրով և վրացերեն թարգմանությամբ հրատարակվել է XVI դ. վերջին վերաբերող մի բացառիկ աղբյուր՝ «Գյուրջխատանի վիլայիթի մեծ դավթարը»⁹, իսկ Յ. Աբուլաձեի և Մ. Սվանիձեի կողմից՝

⁴ Տե՛ս Դարբինյան Մ., Վավերագրեր պարսկասիայի և արևմտասիայի 1828–1830 թթ. գաղթի վերաբերյալ, Բանբեր Հայաստանի Արխիվների (այսուհետև՝ ԲՀԱ), 1973, թիվ 2, էջ 135–146, նույնի՝ Новые документы о переселении персидских и западных армян в 1828–1830 гг., ԲՀԱ, 1977, N 3, էջ 3–23:

⁵ Տե՛ս Ցակոբ Կարնեցի, Տեղագիր Վերին Հայոց, յիշատակարան ԺԷ դարու, Վաղարշապատ, 1903:

⁶ Տե՛ս Քյաթիբ Չելեբի, Ջիհան Նյումա, Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին (այսուհետև՝ Թուրքական աղբյուրներ...), կազմեց Ա. Խ. Սաֆրաստյանը, հ. Բ, Եր., 1964, էջ 13–73:

⁷ Տե՛ս էվլիա Չելեբի, Թուրքական աղբյուրներ... թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Խ. Սաֆրաստյանի, հ. Գ, Եր., 1967:

⁸ Թուրքական աղբյուրներ... կազմեց Ա. Խ. Սաֆրաստյանը, հ. Ա, Եր., 1961:

⁹ Տե՛ս Գյուրջիստանի շիտաիտիս ճիճի Գառնի, Բ. 2, տարեգրության Եվրոպական ժամանակագրության և Գ. Յուրգիստանի շիտաիտիս ճիճի Գառնի, Բ. 3, տոմոս, 1941, Բ. 3, տոմոս, 1958.

Թուրքական մեկ այլ հարկացուցակ՝ «Չիբերի էյալիթի Չարա Դավթարը»¹⁰: Մ. Սվանիձեի կողմից լուրջ ուսումնասիրություններ են կատարվել նաև XVI–XVII դարերի վրաց-թուրքական հարաբերությունների, ինչպես նաև Սամցխեի պիտակության սոցիալ-տնտեսական կացության շուրջ, որտեղ բնականաբար անդրադարձ է արվել Տայքին, ներկայացվել նրա դերը տարածաշրջանային գործընթացներում¹¹:

Տայքի համակողմանի ուսումնասիրման գործում մեջ օգնում են նաև վրացական աղբյուրները¹², ուստի դրանք օգտագործել ենք՝ համադրելով միջնադարյան հայկական աղբյուրների հետ: Կարևոր էր նաև անաչառ ներկայացնել Տայքում քաղկեդոնականության տարածման հետ կապված հիմնախնդիրները, ուստի այդ հարցում մեզ օգնեցին Վ. Ստեպանենկոյի և Վ. Արուտյունովա-Ֆիդանյանի հետազոտությունները¹³:

¹⁰ Տե՛ս Քիլոմորոս Երևանցի, 1694–1732, տարեգրության Եվրոպական ժամանակագրության և Գ. Յուրգիստանի շիտաիտիս ճիճի Գառնի, Բ. 3, տոմոս, 1958.

¹¹ Տե՛ս Տայքի մ., Տայքի շրջանում և Երևանի շրջանում Երևանի օսմանյան ժամանակագրության և Գ. Յուրգիստանի շիտաիտիս ճիճի Գառնի, Բ. 3, տոմոս, 1958.

¹² Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին (այսուհետև՝ Վրաց աղբյուրներ), կազմեց Լ. Միխայիլ-Քելեր, հ. Բ, Եր., 1936, հ. Գ, Եր., 1955, Վրաց ժամանակագրություն (1207–1318), թարգմանությունը հին վրացերենից, առաջաբանը և ծանոթագրությունները Պարույր Մուրադյանի, Եր., 1971, Летопись Картали, перевод, введение и примечание Г. В. Цудая, Тбилиси, 1982, Вахушти Багратиони, История царства Грузинского, перевод, с введением предисловием, словарями и указателями Н. Т. Накашвили, Тбилиси, 1976, յիշատակագրության և Գ. Յուրգիստանի շիտաիտիս ճիճի Գառնի, Բ. 3, տոմոս, 1958.

¹³ Տե՛ս Степаненко В. П., Чортванели, Торники и Тарониты в Византии, (к вопросу о существовании Тайкской ветви Торникийцев), Античная древность и средние века, 1999, Вып. 30, էջ 130–148, նույնի Աղախանյանի վրաց-թուրքական հարաբերությունները և Գ. Յուրգիստանի շիտաիտիս ճիճի Գառնի, Բ. 3, տոմոս, 1958. И. А. Капранов, Из истории византийской провинциальной администрации в II в., Античная древность и средние века, 2008. Вып. 38, с. 96–113, նույնի Еще раз о грузинском посольстве в Ани в 1045 г. (к генеалогии грузинских и армянских Багратионов и Аргрунидов Васпуракана), Античная древность и средние века, 2003, Вып. 34, с. 265–274, В. Арутюнова-Фиданян, Из истории севе- ровосточных пограничных областей Византийской империи в III–IV вв., ИФЖ, 1972–1, с. 91–102, նույնի Православные армяне и армяно-византийская контактная

Հայաստանի վարչատարածքային բաժանման և ժողովրդագրական բնութիւն լայն հարցադրումներով առանձնանում են Մխիթարյան միաբանութեան անդամ, անվանի աշխարհագրագետ, պատմաբան և բանասեր Ղուկաս Ինճիճյանի «Ստորագրութիւն Հին Հայաստանեայց»¹⁴ և «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի»¹⁵ աշխատութիւնները: Առաջինում անվանի հայագետը տալիս է Մեծ Հայքի պատմաաշխարհագրական բնութագիրը, տեղանունների ստուգաբանութիւնը և կատարում տեղանունների տեղագրական ճշտումներ: Երկրորդի առաջին հատորը նվիրված է Հայաստանին: Այս աշխատութիւնը, որն Արեւմտյան Հայաստանի նահանգների ու գավառների բազմակողմանի ուսումնասիրութիւնն է՝ հիմնված արխիվային և տպագիր հարուստ նյութերի վրա, բացառիկ տեղեկութիւններ է հաղորդում XVIII դ. վերջին Օսմանյան կայսրութեան կազմում Հայաստանի վարչատարածքային բաժանման, բնակչութեան տեղաբաշխման և տեղաշարժերի մասին:

XIX դ. կեսերին Տայքի վարչական բաժանմանը և տեղագրական հարցերին է անդրադառնում Մխիթարյան միաբանութեան անվանի մեկ այլ հայագետ Ղևոնդ Ալիշանն իր «Տեղագիր Հայոց Մեծայց»¹⁶ աշխատութեան մեջ: Տայքի տեղագրութեանն ու պատմաճարտարապետական հուշարձանների մանրակրկիտ հետազոտման արդյունք է Մխիթարյան միաբանութեան անդամ, նշանավոր ազբյուրագետ Ներսես Սարգիսյանի աշխատութիւնը¹⁷: Վերջինս հնագիտական, աշխարհագրական ուսումնասիրութիւններ կատարելու, պատմական և մատենագրական հուշարձաններ որոնելու նպատակով 1843–1853 թթ. ճամփորդել է Հայաստանում և հարակից շրջաններում: Ուղևորութեան բնթացքում նա այցելել է նաև Տայք, և նրա շնորհիվ մոռացութիւնից փրկվել ու մեզ են հասել Տայքի հրաշակերտ հուշարձանների՝ Օշկի, Խախուրի, Իշխանի եկեղեցիների կարևորագույն

մանրամասնութիւններ: Ն. Սարգիսյանը, չտիրապետելով հին վրացերենին, գրեթե անթերի պատճենել է Իշխանի եկեղեցու և Օշկիների արձանագրութիւնները, որոնք վերծանվել են Ֆրանսիացի կովկասագետ Մ. Բրոսսի կողմից: Ն. Սարգիսյանի վաստակն էլ ավելի մեծ արժեք է ստանում այսօր, քանի որ ժամանակը և մահմեդականների անհանդուրժողականութիւնը կործանարար ազդեցութիւն են թողել եկեղեցիների արձանագրութիւնների վրա:

1829–1830 թթ. արևմտահայերի վերաբնակեցման մասին ուշադրով տեղեկութիւնների ենք հանդիպում նաև Եփրեմ Սեթի¹⁸ և Գյուտ քահանա Աղանյանցի աշխատութիւններում, որոնց մանրակրկիտ ուսումնասիրութիւնը, հնարավորութիւն տվեց նոր իրողութիւններ բացահայտել 1829–1830 թթ. իրադարձութիւնների վերաբերյալ¹⁹:

Տայքի և ամբողջ Ճորոխի ավազանի աշխարհագրութեան ուսումնասիրութեանն է նվիրված Հայ գրող, աշխարհագրագետ և պատմաբան Ատրպետի «Ճորոխի ավազանը»²⁰ աշխատութիւնը: Ատրպետն անձամբ այցելել և տեղում հետազոտել է խնդրո առարկա տարածաշրջանի լեռնագրութիւնն ու ջրագրութիւնը, ճշգրտել բնակավայրերի տեղագրութիւնը: Անուբանալի է նաև նրա վաստակը Տայքի շատ տեղանունների ստուգաբանման գործում:

Տայքի պատմութիւնը, տեղագրութիւնը, ինչպես նաև ժողովրդագրութիւնն ու աշխարհագրութիւնն ուսումնասիրելու գործում մեծ ավանդ ունի Մխիթարյան միաբանութեան ևս մեկ ականավոր ներկայացուցիչ՝ Հակոբոս Տայյանը: Բազմավաստակ հայագետի գրչին են պատկանում Տայքին վերաբերող երկու ծանրակշիռ աշխատութիւններ՝ «Հայ բնակչութիւնը Սև ծովէն մինչև Կարին»²¹ և «Տայք, դրացիք և Խոտորջուր»²² ուսումնասիրութիւնները: Առաջին աշխատութեան մեջ Հ. Տայյանը ներկայացնում է Ճորոխի ավազանի հայութեան տեղաբաշխումը, անդրադառնում է XIX դ. վերջի և XX դ. սկզբի հայաբնակ վայրերին, նրանց տեղագրութեանը: «Տայք,

зона, Вестник Православного Свято-Тихоновского гуманитарного университета. III, Филология, вып. 3 (17), с. 7–18, նույնի К вопросу о существовании халкидонитской церкви в Армении, Вестник ПСТГУ III: Филология 2010. Вып. 4 (22), с. 7–22.

¹⁴ Տես Ինճիճյան Գ., Ստորագրութիւն Հին Հայաստանեայց, Վենետիկ, ս. Ղազար, 1822:

¹⁵ Նույնի, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մաս Ա, հ. Ա, Ասիա (այսուհետև՝ Աշխարհագրութիւն...), Վենետիկ, 1806:

¹⁶ Տես Ալիշան Գ., Տեղագիր Հայոց Մեծայց, Վենետիկ, 1853:

¹⁷ Տես Սարգիսյան Ն., Տեղագրութիւն ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864:

¹⁸ Տես Կարապետյան Մ., Եփրեմ Մեքը արևմտահայոցյան 1829–1830 թթ. գաղթի մասին, Պատմաբանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 1997, № 2, էջ 285–294:

¹⁹ Տես Աղանյանց Գ., Կարմոյ գաղթը (1829–1830), Թիֆլիս, 1891:

²⁰ Տես Ատրպետ, Ճորոխի ավազանը, Վիեննա, 1929:

²¹ Տես Տայյան Հ., Հայ բնակչութիւնը Սև ծովէն մինչև Կարին, Վիեննա, 1921:

²² Նույնի, Տայք, դրացիք և Խոտորջուր, Վիեննա, Հանդես Անսորեայ (այսուհետև՝ ՀԱ), 1970–1973:

դրացիք և նոտորջուր» աշխատութեան մեջ հեղինակը մանրակրկիտ կերպով ներկայացնում է Տայքի գավառների պատմութիւնը, բնակավայրերի տեղագրութիւնը և բռնի մահմեդականութեան տարածման գործընթացը: Ծիշտ է, ականավոր հայագետի վկայութիւնների մեծ մասը հիմնականում վերաբերվում են XIX դ. երկրորդ կեսին, սակայն խիստ կարևոր են իրենց եզակիութեամբ և արժանահավատութեամբ: Հ. Տաշյանը մեծ ուշադրութիւն է դարձնում Տայքի XI դ. պատմութեանը՝ անդրադառնալով բյուզանդական տիրապետութեան հաստատման և ամրապնդման, նվազ չափով նաև քաղկեդոնականութեան տարածման գործընթացներին, ինչպես նաև Սամցխեի իշխանապետութեան կազմում Տայքի դերին և դիրքին: Ուշագրավ են նրա հաղորդումները կիսկիմի գավառի կաթողիկ հայերի բնակավայրերի վերաբերյալ, որոնք բացառիկ տեղեկութիւններ են պարունակում XIX դ. վերջին այդ բնակավայրերի վիճակի վերաբերյալ: Ցավոք, Տաշյանը չի անդրադառնում Տայքի էթնոօղովորագրական պատկերի վրա մեծապես ազդած 1829—1830 թթ. արևմտահայութեան վերաբնակեցմանը, այլ միայն նշում է նրա կործանարար հետևանքների մասին: Չի խոսվում նաև Կուրի վերնագավառի և Օլթի գետի ավազանի հայկական բնակավայրերի մասին: Նշված բացթողումներով հանդերձ՝ անուբանալի է Հ. Տաշյանի վաստակը Տայքի ուսումնասիրութեան գործում:

XIX դ. սկզբին Անդրկովկասում Ռուսաստանի դեպի հարավ ծավալվելը և ամրանալը խթանում է ուսման հետազոտողներին ուսումնասիրել թուրքիան և մասնավորապես՝ Արևմտյան Հայաստանը: 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում ուսման հետազոտողների կողմից բավականին մեծ քանակութեամբ նյութեր հավաքվեցին Օսմանյան կայսրութեան արևելյան Ռուսաստանին սահմանակից նահանգների վերաբերյալ: Գեներալ Ի. Ֆ. Պասկևիչի հանձնարարութեամբ ուսման բանակի շտաբի զինվորականներից կազմված հատուկ հանձնախումբը զգալի աշխատանք կատարեց երկու տարվա ընթացքում մեծ քանակութեամբ վիճակագրական նյութեր կուտակելով, որոնք մի քանի անգամ հրատարակվեցին Ն. Ուշակովի կողմից²³: Մեծարժեք այս աշխատութիւնը, ուր ներկայացված են յուրաքանչյուր նահանգի աշխարհագրական պայմանները,

²³ St'u История военных действий в Азиатской Турции 1828—1829 годах, ч. 1—2, Варшава, 1843.

վարչական կառուցվածքը, բնակչութիւնը և ռազմական գործընթացները Կովկասյան ճակատում, ցավոք, դերժ էջ նաև բացթողումներից: Այդ թիրութիւններից մեծադուրսը, այն է, որ անուշադրութեան են մատնվել Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած էթնիկ տեղաշարժերը, որոնց արդյունքում փոփոխվել էր հայ և մահմեդական ազգաբնակչութեան միջև տոկոսային հարաբերակցութիւնը:

1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի իր արտացոլման է դառել ուսման հեղինակների աշխատութիւններում, որոնք հրատարակել են պատերազմի հետ կապված սեփական հիշողութիւնները և դիտարկումները²⁴: Տարածաշրջանի XIX դ. առաջին կեսի վերաբերյալ հետաքրքիր աշխատութեան հեղինակ է նաև Օ. Եվեցկին²⁵:

XIX դ. երկրորդ կեսին Արևմտյան Հայաստանի ուսման սիրողների թիւում էր Յա. Մալաման²⁶, որի աշխատութիւնն ուշագրավ տեղեկութիւններ է պարունակում Արևմտյան Հայաստանի էրզրումի նահանգի վերաբերյալ: Առանձնապես կարևոր են հեղինակի հաղորդած տեղեկութիւնները 1829 թ. Ադրիանուպոլսի հաշտութիւնից հետո Տայքի վարչական բաժանման մասին:

XIX դ. ընթացքում Արևմտյան Հայաստանում աշխուժանում են ինչպես կաթողիկ և բողոքական քարոզիչները, որոնք իրենց գործունեութեան համար նոր ոլորտներ էին որոնում, այնպես էլ՝ եվրոպացի ճանապարհորդները: Մտահոգված Հայաստանում կաթողիկ եկեղեցու արձանագրած որոշ հաջողութիւններից՝ իրենց գործունեութիւնն են ծավալում ամերիկացի բողոքական քարոզիչներ Էլի Սմիթը և վերապատվելի Հ. Գ. Օ. Դուայթը²⁷: Նրանք ճանապարհորդել են 1830—1831 թթ.: Բնակչութեան մասին նրանց հաղորդած տեղեկութիւնները հնարավորութիւն են տալիս մեզ պատկերացում կազմել ինչպես Տայքի մի մասում (հատկապես Թորթումում), այնպես էլ Արևմտյան

²⁴ St'u Пушкин А. С., Путешествие в Арзрум во время похода 1829 г., сочинения в 3-х томах, т. 3, Москва, 1986, с. 370—410, Лукьянович Н., Описание Турецкой войны 1828—1829 годов, 1844, ч. 3, Санкт-Петербург, 1847, Аверьянов П. И., Курды в войнах России с Персией и Турцией в течении XIX столетия. Современное политическое положение турецких, персидских и русских курдов, Тифлис, 1900.

²⁵ St'u Евецкий О., Статистическое описание Закавказского края, Санкт-Петербург, 1835.

²⁶ St'u Малама Я. Д., Описание Эрзерумского вилайета, СПб., 1874.

²⁷ St'u Smith E., Researches of the rev. E. Smith and rev. H. G. O. Dwight in Armenia: Including a journey through Asia Minor, and into Georgia and Persia with a visit to the Nestorian and Chaldean christians of Oormiah and Salmas, vol. 1, Boston; New-York, 1833.

Հայաստանի որոշ նահանգներում տեղի ունեցած էթնիկական տեղաշարժերի մասին:

Արևմտահայերի 1829–1830 թթ. վերաբնակեցումից հետո ստեղծված իրավիճակի մասին եզակի տեղեկություններ է հաղորդում գերմանացի ճանապարհորդ պրոֆեսոր Կ. Կոխը²⁸: Ի տարբերություն այլ ուղեգիրների, որոնք զլխավորապես ճանապարհորդել են Հայաստանի քաղաքները կապող խոշոր ճանապարհներով, Կ. Կոխն իր ճանապարհորդության ընթացքում (1843–1844 թթ.) անցել է դժվարանցանելի ճանապարհներով: Կ. Կոխը, որն այցելել է Տայքի գրեթե բոլոր գավառները՝ Գյուլե (Կոլ), Փենեք, Օլթի, Թորթում, Կիսկիմ և այլն, կարևոր տեղեկություններ է հաղորդում և մեկնաբանություններ կատարում այդ գավառների սոցիալ-տնտեսական վիճակի ու քաղաքական կացության վերաբերյալ:

1877–1878 թթ. ուռու-թուրքական պատերազմի արդյունքում Ռուսաստանի կողմից Տայքի մեծ մասի գրավումը հնարավորություն էրնձեռեց շատ հեղինակների՝ այցելել և հետազոտել Օլթի գետի և նրա բազմաթիվ վտակների ավազանում ընկած հնությունները: Այս գործում հատկապես աչքի ընկան վրացի դիտնականներ Գ. Բաբրաձեն²⁹ և է. Թաղախչիլիին³⁰, որոնց հաղորդած տեղեկությունների մի մասը հատկապես օգտակար է Տայքի մի շարք բնակավայրերի տեղագրության ուսումնասիրության համար:

Տայքի վաղ և դարձաքամ միջնադարյան շրջանի մասին ուշագրավ տեղեկությունների ենք հանդիպում ակադեմիկոս Ն. Մառի աշխատություններում³¹: Հեղինակը ներկայացնում է Հայկական միջավայրում քաղկեդոնականության տարածման գործընթացը, ընդունում Տայքի Հայկականությունը, իսկ վրացական (քաղկեդոնիկ) եկեղեցու գերակայությունն այնտեղ բացատրում զուտ դավանաբանական և ոչ թե քաղաքական կամ մշակութային գործոններով:

²⁸ Տե՛ս Koch K., Wanderungen im Oriente während der Jahre 1843 und 1844. II. Reise im Pontischen Gebirge und Türkisch-Armenien, Weimar, 1846.

²⁹ Տե՛ս Бахрадзе Д., Историко-этнографический облик Карсской области, в. м. и г..

³⁰ Տե՛ս Тахайшвили Э., Археологическая экспедиция 1918 года в Южные провинции Грузии, Тбилиси, 1952.

³¹ Տե՛ս Марр Н., Аркаун, монгольское название христиан связи с вопросом об армянах халкедонитов, (այսինքն՝ Մարր Կ., Արկաուն...) Византийский Временник (այսինքն՝ ВВ), XII, СПб., 1906, стр. 1–68, նույնի Георгий Мерчуле, Жизнь Григория Хандзтийского, перевод Н. Марра, с дневником поездки в Шавшию и Кларджю, Санкт-Петербург, 1911.

Տայքի X դ. պատմությանն է անդրադառնում նաև Հայ մեծնուն պատմաբան Ն. Ազոնցը, որը յուրահատուկ մոտեցում է ցուցաբերում Դավիթ Կյուրապաղատի դերին Տայքի պատմության մեջ³²:

Վրաց պատմագրության ականավոր ներկայացուցիչ Ի. Զավախչիլիին իր «Վրաց ազգի պատմություն»³³ քառահատոր աշխատության մեջ անդրադառնալով Տայքին՝ այն ներկայացնում է իբրև վրացական ազգային մշակութային շրջան, դեռ ավելին՝ նրա հետ կապում վրացական միասնական պետության ձևավորումը X դարում: Տայքի «պատկանելության» խնդրին են անդրադառնում նաև Ս. Զանաշիան, Վ. Բերիձեն և Պ. Զաքարյան³⁴, որոնք ամբողջ Հյուսիսային Հայաստանը, ինչպես նաև Այրարատի որոշ շրջաններ, փորձում են ներկայացնել իբրև բուն վրացական տարածքներ:

Տայքի բնակավայրերում թյուրքական տարրի աստիճանական աճը և Հայկական բնակչության քանակական նվազումը տեսնելու գործում մեզ օգնում է XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբին ստեղծված հայալեզու գրականությունը³⁵, որտեղ առկա տեղեկությունները համադրելով ավելի վաղ շրջանի աղբյուրներում մեզ հասած տեղեկությունների հետ, երևում է տարածաշրջանում էթնոգործողագրական զարգացումների ընդհանուր շարժը:

Տայքի որոշ հիմնախնդիրների է անդրադառնում նաև Մաղաբիա արքեպիսկոպոս Օրմանյանն իր «Ազգապատում»³⁶ աշխատության մեջ, որի հաղորդած եզակի տեղեկությունները մեզ օգնում են ճշգրտելու Տայքում կաթոլիկության տարածման նախապայմանները, առաջին փորձերը XVII դարում, ինչպես նաև պատմաքաղաքա-

³² Տե՛ս Աղոնց Ն., Դավիթ Կյուրապաղատ, ՊԲՀ, 2002, 3, էջ 3–37: Վաղ միջնադարում Տայքի ունեցած դերի ու նշանակության մասին տե՛ս Աղոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Եր., 1987:

³³ Տե՛ս ჯავახიშვილი ი., ქართველი ერის ისტორია, წ. 1, თბ., 1960, წ. 2, თბ., 1965.

³⁴ Տե՛ս Джанашиа С., Об одном примере искажения исторической правды по поводу книги Н. Токаре-кого “Архитектура древней Армении”, Тбилиси, “Заря Востока”, 1947, Беридзе В., Архитектура Тао-Кларджети: Место памятников Тао-Кларджети в истории грузинской архитектуры, Тбилиси, 1981, Захарая П., Золчество Тао-Кларджети, Тбилиси, 1990.

³⁵ Տե՛ս Երիցեանց Ա., Ամենայն Հայոց կարողիկոսութիւնը և Կովկասի հայր XIX դարում, մաս Ա, 1800–1832, Թիֆլիս, 1894, Ա-Դո, Վանի, Բիբլիսի և Էրզրումի վիլայեթները, Ե., 1912, Էփրիկեան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. 1, Վենետիկ, 1902, հ. 2, Վենետիկ, 1907:

³⁶ Օրմանեան Մ., Ազգապատում, հ. Բ-Գ, ս. Էջմիածին, 2001:

կան այն պայմանները, որոնց հետևանքով Տայքի բնակչության մի մասը նախընտրեց կաթնլիկությունը:

XX դ. կեսերին հայ պատմագրության մեջ սկսվեց Արևմտյան Հայաստանի պատմության խորը գիտական ուսումնասիրությունը: Ստեղծվեցին բազմաթիվ աշխատություններ, որոնք լույս էին սփռում ինչպես օսմանյան լծի տակ տառապող հայ ժողովրդի կացության, ազատագրական պայքարի, այնպես էլ սոցիալ-տնտեսական և վարչաքաղաքական հիմնախնդիրների վերաբերյալ: Հրատարակվեցին Ա. Ներսիսյանի, Ս. Երեմյանի, Հ. Անասյանի, Մ. Զուլալյանի, Թ. Հակոբյանի, Հ. Ղազարյանի ուսումնասիրությունները³⁷, որոնցում քննության էին առնված մինչ այդ խորությամբ չուսումնասիրված վերահիշյալ հիմնախնդիրները: Ստեղծվեցին նաև աշխատություններ, որոնք փոքրիշատե առնչվում էին Տայքի այս կամ այն շրջանի պատմությանը և մշակույթին: Այս առումով ուշադրավ էին Տ. Մարությունի, Ա. Սարուխանի, Թ. Գևորգյանի, Հ. Պատրիկյանի և Ն. Տոկարսկու աշխատությունները³⁸:

Հետխորհրդային շրջանի հայ պատմագրությունը որոշ չափով անդրադարձել է Արևմտյան Հայաստանի էթնոլիճակագրության խնդիրներին: Խնդրի առնչությամբ պետք է առանձնացնել հատկապես Ա. Մելքոնյանի մենագրությունները³⁹, որտեղ արխիվային նորահայտ նյութերի հիման վրա լուսարանվել են էրզրումի նահանգի

XIX դ. առաջին երեսնամյակի հայ ազգաբնակչության տեղաբնակման, տեղաշարժերի, էթնոժողովրդագրական զարգացման հիմնական խնդիրները և Զավախքի քաղաքական, ժողովրդագրական, սոցիալ-մշակութային պատմության անցքերը վաղ ժամանակներից մինչև XX դ. առաջին քառորդը՝ վեր հանելով Զավախքի էթնոժողովրդագրական իրական պատկերը: Կարսի նահանգի XIX դ. առաջին երեսնամյակի խնդիրներին է նվիրված Հ. Մուրադյանի մենագրությունը⁴⁰, որտեղ հեղինակը արխիվային հարուստ նյութի օգտագործմամբ, մանրադնին կերպով ներկայացնում է Կարսի նահանգի վարչական, սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական նկարագիրը:

Այսպիսով, հիմնականում վերահիշյալ արխիվային փաստաթղթերի, տպագիր սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների հիման վրա փորձել ենք ներկայացնել Տայքի XVI դ. – XIX դ. առաջին երեսնամյակի վարչական, տեղագրական և ժողովրդագրական բնույթի հիմնահարցերը, լուսարանել էթնիկական տեղաշարժերի ղերնամիկան XVI–XIX դարերում:

³⁷ Տե՛ս Ներսիսյան Ա., Արևմտահայերի տնտեսական ու քաղաքական վիճակը և ռուսական օրինատացիան XIX դարի առաջին կեսին, Եր., 1962, Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963, Անասյան Հ., XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Եր., 1961, Զուլալյան Մ., Արևմտյան Հայաստանը XVI–XVIII դարերում, Եր., 1980, Հակոբյան Թ., Հայաստանի պատմական աշխարհագրություն, Եր., 1968, նույնի Հակոբյան Թ., Պատմական Հայաստանի քաղաքները, Եր., 1987, Ղազարյան Հ., Արևմտահայերի սոցիալ-տնտեսական ու քաղաքական կացությունը 1800–1870 թթ., Եր., 1967:

³⁸ Տե՛ս Մարությունի Տ., Տայքի ճարտարապետական հուշարձանները, Եր., 1972, նույնի՝ Հայ ճարտարապետության հուշարձաններ. Խորագույն Հայք, Եր., 1978, նույնի՝ Հայ դասական ճարտարապետության ակունքներում, Եր., 2003, Մարտիան Ա., Վիրահայրի Տայք և Կղարք գավառների հին հայ և վրացական վանքերը, ՀԱ, 1939, էջ 102–115, Գևորգյան Թ., Խորքուր, Բանբեր Երևանի Համալսարանի (այսուհետև՝ ԲԵՀ), 1971, 3, էջ 204–216, Պատիկեան Յ., Տայք: Բարձր Հայք: Վրացական, քի՛ հայկական, Եր., 2005, Токарский Н., Архитектура Древней Армении, Եր., 1946:

³⁹ Տե՛ս Մելքոնյան Ա., Էրզրում. Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը XIX դարի առաջին երեսնամյակին, Եր., 1994, Զավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Եր., 2003:

⁴⁰ Տե՛ս Մուրադյան Հ., Կարսի նահանգի վարչաժողովրդագրական նկարագիրը XIX դարի առաջին երեսնամյակին, Եր., 2006:

49861



**ՏԱՅՔԸ ՎԱՐՉԱՔԱՂԱՔԱԿԱՆ
ԲԱԺԱՆՈՒՄԵՆԵՐՈՒՄ ՀՆԱԳՈՒՅՆ
ՃԱՄԱՆԱԿՆԵՐԻՑ ՄԻՆՁԵՎ XIX ԴԱՐԸ**

ա) Տայքը հնագույն ժամանակներից մինչև XV դարը

Մեծ Հայքի տասնհինգ նահանգներից (աշխարհներ) տասնչորսերորդը՝ Տայքը, զբաղեցնում էր Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևմտյան հատվածը: Այն հյուսիս-արևելքից սահմանակից էր Գուգարքին, արևելքից ու հարավից՝ Այրարատին, հարավ-արևմուտքից և արևմուտքից՝ Բարձր Հայքին, հյուսիսից՝ Խաղտիքին ու Եգեբքին: Նշված բոլոր կողմերում Տայքը հարևաններից բաժանված էր լեռնաշղթաներով: Տայքի բնական սահմանները հյուսիսից և հյուսիս-արևմուտքից կազմում էին Պանտական (Պարխարի) լեռները՝ Քաջքար գագաթով (3937 մ) և Արսյաց լեռնաշղթան, հարավ-արևմուտքից և հարավից՝ Ձորմայրի, Կապույտ և Միրանյաց, հարավ-արևելքից և արևելքից՝ Մեծրաց (Սողանլուղի) և Կարմիր Փորակ լեռնաշղթաները: Լեռնային և անտառապատ այս երկիրը հայտնի է իր անառիկությամբ: Այն քաղաքական աննպաստ պայմաններում հաճախ դառնում էր հայ թագավորների ու իշխանների ապաստարանը¹: Ղ. Ինճիճյանը, խոսելով Տայքի բնական պայմանների մասին, հատկապես մեծ տեղ է տալիս նրա ամուր դիրքին. «Բազում են ի Տայս տեղիք ամուրք և անքոյթ ի պատսպարուին ի թշնամեաց...»²:

Տայքը հարուստ է գետերով: Կողի գոգավորությունից՝ Կրիակունք գյուղի մոտից, սկիզբ է առնում Կուր գետը: Մնացած բոլոր գետերը պատկանում են Սև ծովի ավազանին և թափվում են Ճորոխի մեջ, որը հոսում է Տայքի միջով: Ճորոխի աջակողմյան հիմնական վտակն է Օլթի գետը, որին արևելքից միախառնվում է Բերդիկը՝ Բանակ և Պարտեզ ճյուղերով, ինչպես նաև Թորթումը (հնում Ազորդ), որը թափվում է Օլթի գետի մեջ մինչև Օլթի և Ճորոխ գետերի միախառնվելը: Ճորոխի ձախակողմյան խոշորագույն վտակնե-

¹ Տե՛ս Հակոբյան Թ., Հայաստանի պատմական աշխարհագրություն, էջ 260:
² Ինճիճեան Ղ., Ստորագրութիւն Հին Հայաստանեայց, էջ 369:

րից են Պարխարը և Խոտրջուրը, որոնք թեև աջակողմյան վտակներից կարճ են, սակայն աչքի են ընկնում իրենց ջրառատությամբ: Թորթում գետի հովտում է գտնվում Թորթում քիճը, որի երկարությունը 12-13 կմ է, լայնությունը՝ 1-1.2, որոշ տեղերում՝ մինչև 2,5 կմ, խորությունը՝ մինչև 100 մ: Այն առաջացել է 1791 թ., երբ երկրաշարժի ժամանակ Խարս (Հարս) լեռան վրայից մի խոշոր ժայռ է պոկվել և գլորվելով փակել Թորթումի ձորը: Կան կարծիքներ, որ լճի տակ մնացել են ավերակ վանքեր և ամրոցներ: Թորթում գետի վրա է գտնվում նաև համանուն ջրվեժը, որը 45 մ լայնություն ունի և Թև գյուղի մոտ գահավիժում է մոտ 48 մ բարձրությունից³:

Ըստ «Աշխարհացոյցի»՝ Մեծ Հայքի Տայք նահանգը բաղկացած էր ութ գավառներից՝ Կող, Բերդացփոր, Պարտիզացփոր, Ճակք, Բողխա, Ոքաղե, Ազորդացփոր, Արսյացփոր: Կողը (վրացերեն յოჯა-Կոլա, այժմ՝ Գյոլե) տարածվում էր Կուր գետի ակունքների շրջանում: Տայքի երկրորդ գավառը Բերդացփորն էր: Այն համապատասխանում է հետագա Բանակի (այժմ՝ Փենեք) շրջանին⁴: Բերդացփորից հարավ գտնվում էր Պարտիզացփորը՝ Պարտեզ (Բարդուզ, Բարդուզայ) գետի հովտում: Բերդացփորից հյուսիս գտնվում էր Ճակք գավառը՝ Օլթի և Ճորոխ գետերի եռանկյունում: Այստեղ էին Մամիկոնյան նախարարական տան կենտրոնները՝ Էրախանի, Տայոց քար ամրոցները և Իշխանաց գյուղը⁵:

Տայքի հինգերորդ գավառը Բողխան էր՝ Օլթի գետի վերին և միջին հոսանքի շրջաններում: Ոքաղե գավառը Վանի թագավորության արձանագրություններում հիշատակվող Կալի երկիրն է և ընդգրկում է Թորթում գետի վերին և միջին հոսանքի շրջանը⁶: Ազորդացփոր գավառը Թորթում գետի ստորին հոսանքում և Թորթում լճի շրջակայքում է⁷: Տայքի ութերորդ գավառը՝ Արսյացփորը, գտնվում էր Ճակքից և Ազորդացփորից արևմուտք և պարունակում է հետագայի Բերդազրակ, Կիսկիմ և Խոտորջուր վիճակները⁸: «Աշ-

³ Տե՛ս Ատրպետ, ցվ. աշխ., էջ 172-173: Ըստ Ատրպետի, Թորթումի ջրվեժը գահավիժում է 70 մ բարձրությունից:
⁴ Տե՛ս Երեմյան Մ., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 44-45:
⁵ Նույն տեղում, էջ 64:
⁶ Նույն տեղում, էջ 76:
⁷ Նույն տեղում, էջ 32:
⁸ Տե՛ս Ատրպետ, ցվ. աշխ., էջ 173:

խարհացոյց»-ում Արսյացփորը տեղագրվում է «առ Պարխար լե-
ռամբ»⁹, այսինքն՝ Ճորոխ գետից այն կողմ՝ Պարխարի լանջերին:

Տայքը հնուց ի վեր բնակեցված է եղել հայալեզու էթնիկական
խմբերով և մշտապես եղել է հայկական պետականության կազմում¹⁰:
Տայքի վերաբերյալ հնագույն տեղեկությունները վերաբերում են
Ք.ա. XII դարին: Երբ Ասորեստանի գահն անցնում է Թիգլաթպալաս-
սար I-ին (1115–1077 թթ.), Հայկական լեռնաշխարհի շատ երկրներ,
այդ թվում՝ Նաիրի միությունը, դադարում են Ասորեստանին հարկ
ու տուրք վճարել: Այդ պատճառով էլ Թիգլաթպալասար I-ը Ք. ա.
1115 թ. արշավանքներ է կազմակերպում ապստամբած երկրների,
այդ թվում՝ Նաիրի միության թագավորությունների վրա, որոնց
թիվը հասնում էր 60-ի: Իր տարեգրության մի հատվածում նա հի-
շատակում է այդ թագավորություններից միայն 23-ի անունները, ո-
րոնց թվում էր Դայանին (Տայքը): Նաիրի միության այդ 60 երկր-
ների թագավորներից Թիգլաթպալասար I-ը հիշատակում է միայն
Դայանի երկրի թագավոր Ս(ի)ենիի անունը: Նա եղել է անհնա-
զանդ և չի ցանկացել ենթարկվել ասուրական հարկային լծին: Այդ
անհնազանդության հիմքում, բնականաբար, ընկած է եղել նրա երկ-
րի հզորությունը՝ համեմատած Նաիրի միության մյուս երկրների
հետ: Թիգլաթպալասար I-ը Ս(ի)ենիին գերում է և տանում Ասորես-
տան՝ իր Աշշուր մայրաքաղաքը¹¹: Եթե Նաիրյան թագավորների մա-
սին Թիգլաթպալասարն ասում է, թե գերի է վերցրել և տեղում բաց
թողել, ապա Սենիի մասին նշում է, որ նրան գերեվարել էր, տարել
իր մայրաքաղաք Աշշուր, ապա ողորմաձաբար բաց թողել:

Ըստ Թիգլաթպալասար I-ի տեղեկությունների՝ Նաիրի միութ-
յան տարածքը Հյուսիսում հասել մինչև Սև ծով, հարավում՝ Արա-
ծանի գետ, արևելքում՝ Ճորոխ գետի ավազան, արևմուտքում՝ վե-
րին Եփրատ (Մալաթիայի դիմաց)¹²:

⁹ Տե՛ս Երեմյան Ա., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 110:

¹⁰ Арутюнян Б., К вопросу об этнической принадлежности населения бассейна реки
Чорох в VII–IV вв. до н.э., ՊԲՀ, 1998, 1–2, էջ 233–246:

¹¹ Տե՛ս Մարգարյան Գ., Դայանի-Դիաուխի պետության գրաված տարածքը և բնակ-
չության հայկական ծագումը, ԼՀԳ, 2003–2, էջ 168–170:

¹² Եիշտ կլիմի մտածել, որ Դայանիի ցեղապետ-արքա Սենիմ Աշշուրից փախուստի
էր դիմել:

¹³ Տե՛ս Մարգարյան Գ., Դայանի-Դիաուխի պետության գրաված տարածքը և բնակ-
չության հայկական ծագումը, էջ 170:

Ասորեստանյան Սալմանասար III թագավորը (Ք.ա. 859–824 թթ.)
ևս հիշատակում է Դայանի երկրի մասին: Նա արձանագրում է, որ
իր գահակալման տասնհինգերորդ տարում հարկեր է ստացել Դա-
յանիի Ասիա թագավորից¹³: Ասիայի օրոք Դայանիին բավականին
ընդարձակ տարածք էր զբաղեցնում՝ հասնելով ընդհուպ մինչև
Արածանիի ավազան¹⁴:

Տայքն ասորեստանյան կողոպտչական արշավանքներից ձեռքա-
զատվել է Վանի թագավորության հզորացումից հետո (Ք.ա. IX դ.
վերջ): Հարավում և հարավ-արևելքում Վանի թագավորությունը
գործ ուներ Առաջավոր Ասիայի հզորագույն տերության՝ Ասորես-
տանի հետ, ուստի Մենուա թագավորը (Ք.ա. 810–786 թթ.) իր թա-
գավորության սկզբնական շրջանում հայացքն ուղղեց դեպի Հյու-
սիս: Էրիկուսիսի և էթիուսի երկրները նվաճելուց հետո Վանի թա-
գավորությունը բախվում է ավելի հզոր հակառակորդի հետ Հյու-
սիս-արևմուտքում՝ Կարնո շրջանից մինչև Ճորոխի ավազանը
ձգված տարածքում: Այստեղ նա իր ուժերը չափում է Դիաուխի
(Դայա, Դայանի-Տայք) հզոր պետական կազմավորման հետ և հաղ-
թանակ տանում: Դիաուխիի թագավոր Ուտուպուրչին անձնատուր է
լինում և ծնկի դալիս Մենուայի առաջ: Վերջինս նրան ներում է
չնորհում հարկ վճարելու պայմանով¹⁵: Սակայն, ինչպես երևում է,
Դիաուխիին հնազանդեցնելն այդքան էլ հեշտ գործ չէր և Մենուան
չէր կարողացել վերջնականապես հաստատվել այնտեղ: Այդ մասին
է խոսում այն հանգամանքը, որ իր թագավորության սկզբին՝ Ք.ա.
785–784 թթ. Արգիշտի I թագավորը (Ք.ա. 786–764 թթ.) արշա-
վանքներ է ձեռնարկում դեպի Հյուսիս, այդ թվում նաև Մենուայի
նախկինում ասպատակած երկրները: Դիաուխիին մեկ անգամ ևս ն-
վաճվում է Վանի թագավորության կողմից, իսկ նրա արքան ստիպ-
ված է լինում Արգիշտի I-ին «նվիրել» 41 մինա* ոսկի, 37 մինա ար-
ծաթ, 10 հազար մինա պղինձ, 300 գլուխ խոշոր և 10 հազար գլուխ
մանր եղջերավոր անասուններ¹⁶: Բացի դրանից, Հյուսիսային այդ
նահանգը պարտավորվում էր հետագայում ամեն տարի Վանի թա-

¹³ Նույն տեղում, էջ 172:

¹⁴ Կարագյոզյան Հ., Մեպագիր արքյուրների Դայանու երկիրը, ԼՀԳ, 1978–6,
էջ 68–94:

¹⁵ Տե՛ս ՀԺՊ, հ.1, էջ 301:

* 1 մինան հավասար է 505 գրամի:

¹⁶ Նույն տեղում, էջ 382:

գաղութային իրեր սուրբ վճարել հարյուրավոր ձիեր, ցուլեր, կովեր, ոչխարներ: Այս տեղեկություններից պարզ է դառնում, որ Գիսուխի-Տայքը եղել է Հայկական լեռնաշխարհի անասնապահության զարգացած կենտրոններից մեկը: Այսպիսով, Արարատյան միասնական պետության ոլորտում տայեցիները դարձան կազմավորվող Հայ ժողովրդի բազալըստարրերից մեկը:

Երվանդյան Հայաստանի ժամանակաշրջանից (Ք.ա. VI–II դարեր) Տայքի վերաբերյալ ուղղակի տեղեկությունները շատ քիչ են: Ք.ա. V–IV դդ. հույն հեղինակ Քսենոփոնն իր «Անաբասիս» աշխատության մեջ հիշատակում է տառիսներին՝ որպես «Արևմտյան Հայաստանի» կառավարիչ Տիրիբագոսի բանակի վարձկաններ¹⁷:

Ք.ա. IV դ. II կեսին Արևմտյան տերության քայքայման հետևանքով Տայքը, ինչպես և իր հյուսիսարևելյան հարևան Գուգարքն ընդգրկվեցին Երվանդունիների Համահայկական նորանկախ պետության կազմի մեջ: Ք.ա. 270-ական թթ. Մեծ Հայքի հյուսիսային հարևանությամբ կազմավորվում է վրաց Փառնավազյան պետությունը, որն օգտվելով Հայ Երվանդյանների հակառակորդ Աելեկյանների օժանդակությունից, Հայոց երկրից գրավում և անջատում է Գուգարքն ու հարակից այլ շրջաններ¹⁸, այդ թվում և Տայքի մի մասը: Իրավիճակը նորից փոխվում է Հայկական գահը Արտաշես I-ին (Ք.ա. 189 – մոտ 160 թթ.) անցնելուց հետո: Ըստ հույն հեղինակ Ստրաբոնի, դեպի հյուսիս կատարած արշավանքների ընթացքում Արտաշեսն իբերներից (վրացիներից) գրավեց (վերադարձրեց) Պարիադրեսի լեռնալանջերը, Խորձենեն և Գոգարենեն¹⁹: Պարիադրեսի լեռնալանջերը, ըստ Հ. Մանանդյանի, համապատասխանում են Տայքին, Խորձենեն՝ Կղարջքին, Գոգարենեն՝ Գուգարքին²⁰: Վրացագիրտության մեջ գերիշխող տեսակետի համաձայն՝ Արտաշեսը, օգտվելով վրացական պետության առժամանակ թուլությունից, միացնում

¹⁷ Տե՛ս Քսենոփոն, Անաբասիս, Թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Եր., 1970, IV, 4, էջ 94: Քսենոփոնին Բագրևանդի գյուղերից մեկի գեղջուլազն ասել է, որ իրենց հարևան երկիրն է խալտրների երկիրը: Մինչդեռ Բագրևանդից դուրս գալով՝ Քսենոփոնն անցել է փասիանների, խալդայների ու տառիսների երկրով և նոր հասել խալտրների երկիր: Այս օրինակը ցույց է տալիս, որ Ք.ա. V դ. Հայաստանի կենտրոնական և ծայրամասային գավառների բնակչության ազգային կազմի մեջ այլևս տարբերություն չի եղել:

¹⁸ Տե՛ս Մեքսոնյան Ա., Ջավախքը XIX դ. և XX դ. I քառորդին, էջ 37–38:

¹⁹ Տե՛ս Ստրաբոն. օտար աղբյուրները հայերի մասին, հ. 1, Եր., 1940, էջ 54–57:

²⁰ Տե՛ս Մանանդյան Հ., Տիգրան Երկրորդը և Հռոմը, Եր., 1972, էջ 41:

է Տայքը Հայաստանին: Իբր հենց այդ ժամանակաշրջանի հետ է կապվում Հայկական տեղանունների առաջացումը Տայքում²¹: Ցարք, Վրաց հեղինակները անտեսում են Ստրաբոնի այն հաղորդումը, որ Արտաշես I-ի արշավանքներից հետո «միավորված Արմենիայի մեջ բոլորը միալեզու էին»²², բնականաբար խոսում էին ոչ թե վրացիներն, այլ հայերեն:

Արժեքավոր է նաև Տայքի վերաբերյալ Մովսես Խորենացու հաղորդած տեղեկությունները՝ կապված Հայոց Վաղարշակ թագավորի անվան հետ. «Եվ այսպես կատարեալ, կարգէ գիտղմանս Մածաքայ և զգրեղացիս և զեգերացիս. դառնա առ ստորոտովն Պարխարայ ընդ մէջ Տայոց ի գիջին և ի մառախլուտ տեղիս մայրեացն և ի լոռաւէտս. գեղեցիկ իմն կարգելով զերկիրն, հավասարելով ի բարեխառն և ի զուգազեղեցիկ վայելչութիւն իւրոյ թագաւորութեան. ամառաքն ժամանակին հովանոցս պատրաստելով»²³: Փաստորեն լեռնային, անտառապատ այս շրջանը դառնում է հարմար ամառանոց և որսատեղի: Երջանի կարևորության մասին է վկայում նաև այն, որ մինչև մ.թ. 230-ական թթ. Տայքը հանդիսանում էր արքունի կալվածք և զորակայան²⁴:

I դ. Հայկական գահի համար հռոմեապարթևական հակամարտության ժամանակաշրջանում, երբ Հայոց գահին է հաստատվում Հռոմի դրածո վրաց Փարսման թագավորի եղբայրը՝ Միհրդատը, ազատատենչ Հայ ժողովրդի պայքարը հռոմեական զավթիչների և նրանց դրածո վրաց արքայատոհմի ներկայացուցիչների դեմ գլխաժողովում է Գիսակ Դիմաքայանը: Նրա սուզմն ապաստանում է Տայքի Բողխա գավառում, և դրանից հետո Բողխան դառնում է Դիմաքայան նախարարական տան ժառանգական կալվածքը՝ Բողբերդ կենտրոնով (այժմ՝ Բուղա-կալե)²⁵:

230-ական թթ. Հայոց թագավոր Տրդատ II Արշակունին Տայքի մեծագույն մասը՝ որպես ժառանգական կալվածք, հատկացրեց այդ շրջանում պատմության ասպարեզ եկած Հայ հղորագույն նախարարական տոհմերից մեկին՝ Մամիկոնյաններին: Տարօրինակ է, որ Մ.

²¹ Խոլոթցյաց 3, Մենջեղուս 3, Երուզուրաջուս, օմ., 2006, թջ 19.

²² Տե՛ս Ստրաբոն, նշվ. աշխ., էջ 57:

²³ Սրբոյ իօրն մերոյ Մովսէսի Խորենացոյ պատմութիւն հայոց (այսուհետև՝ Խորենացի), Թիֆլիս, 1913, II, 2, էջ 101:

²⁴ Տե՛ս Երևնյան Ա., Մամիկոնյաններ, ՀՍՀ, հ. 7, էջ 193:

²⁵ Տե՛ս ՀԺՊ, հ.1, էջ 725:

Խորենացին լուում է Տայքի՝ Մամիկոնյաններին պատկանելու մասին: Պատմելով Տրդատի ժամանակ նրանց Հայաստան գալու առաջապելը՝ Խորենացին հայտնում է, որ Տրդատը նրանց բնակության համար որոշակի տեղ չի հատկացնում:

Տայքի բավականին վաղ քրիստոնեացման մասին են վկայում այն տեղեկությունները, համաձայն որոնց հենց Գրիգոր Լուսավորիչն է եպիսկոպոսներ նշանակում այնտեղ, որոնք կոչված էին ոչ միայն տեղի հոգևոր հոտը ղեկավարելու, այլ նաև՝ դեռևս հեթանոս մնացած ազգաբնակչությանը քրիստոնյա դարձի բերելու: Ազաթանգեղոսի պատմության արաբական տարբերակում, որը լրացնում է հայկական տարբերակի որոշ հատվածներ, նշվում են այն երկրներն ու նահանգները, որտեղ եպիսկոպոսություններ են հիմնվել: Այստեղ է, որ հիշատակվում է եպիսկոպոս Բաստը, որն այդ պաշտոնին էր նշանակվել Տայքի կողմից²⁶: Փավստոս Բուզանդն էլ իր հերթին խոսում է Տայքի Կիրակոս եպիսկոպոսի մասին. «Եվ էր եպիսկոպոսն Տայոց Կիրակոս, որ Շահապ անուն կոչէր, այր ճշմարիտ աստուածապաշտ ըստ կամացն աստուծոյ, և ուղիղ ճշմարտութեամբ առաջնորդ էր ժողովրդեանն իւրում. և վարէր զեպիսկոպոսութիւն իւր ըստ կամացն աստուծոյ զամենայն աւուրս կենաց իւրոյ»²⁷:

Փավստոսի հայտնած տեղեկություններից են պարզվում նաև որոշ մանրամասներ, որոնք ուղղակի վերաբերում են թե՛ Մամիկոնյաններին, և թե՛ նրանց դոմենը համարվող Տայքին: Այսպես, հաջորդ մեջբերումը վերաբերում է Տիրանի կառավարման տարիներին (338–350 թթ.), երբ դաժան հաշվեհարդար է իրականացվում թագավորի կողմից Ռշտունի և Արծրունի նախարարական տոհմերի նկատմամբ. «Եվ անդ զիպեալ Արտաւազդ և Վասակ, արք ի Մամիկոնեան տոհմէն, որք էին զօրաւարք ամենայն զօրացն Հայոց...: Ջի թէպէտ և սնուցանէին նոքա զորդին զարքային զԱրշակ, սակայն զհարեալք ընդ գործ ժամանակին՝ թողին զսանն իւրեանց զԱրշակ, և գնացին ի բաց ի բանակէն արքունի: Եվ չոգան յաշխարհն իւրեանց յամուրս Տայոց. և անդ նստան ամս բազումս ընտանեօք իւրեանց, և թողին զայլ գտուն իւրեանց»²⁸: Մյուս կալվածքներ ասելով, Փավստոս Բու-

զանդն ամենայն հավանականութեամբ ի նկատի ունի Մամիկոնյանների մյուս ժառանգական տիրույթը՝ Տարոնը:

Արշակ II-ի կառավարման տարիներին (350–368 թթ.) Մամիկոնյանները դառնում են երկրի ուժեղագույն նախարարություններից մեկը: Արշակն անձամբ գնում է Տայք, կարողանում վերականգնել դեռևս իր հոր օրոք Մամիկոնյանների հետ խաբուրված հարաբերությունները: Հայոց թագավորը Վարդան Մամիկոնյանին նշանակում է տոհմի նահապետ, իսկ Վասակին՝ Հայոց սպարապետ: Փավստոսը հիշատակում է նաև Տայքի էրախանի կոչվող բերդը՝ կապված Վարդան Մամիկոնյանի սպանության պատմության հետ, որը կազմակերպում է նրա եղբայր սպարապետ Վասակը՝ Արշակ թագավորի լուռ համաձայնությամբ²⁹:

387 թ. Հայաստանի առաջին բաժանումից հետո Տայքն անցնում է պարսկական տիրապետության տակ: Ի տարբերություն հարևան Գուգարքի, Հայոց թագավորության ազդեցությունը Տայքի վրա չի թուլանում՝ կապված առաջին հերթին Մամիկոնյանների գործունեության հետ, սակայն այս երկու նահանգների մեջ կար նաև շատ կարևոր մի ընդհանրություն. ինչպես Գուգարքում, այնպես էլ Տայքում բնակիչները «...հայք էին, բայց խառն ընդ վրացին»³⁰:

428 թ. Արշակունյաց թագավորության ներքո ձևավորվում է վարչական մի միավոր՝ Մարզպանական Հայաստանը, որի կազմում Տայքը շարունակում էր մնալ Հայ առաքելական եկեղեցու հովանու ներքո: Բացի Մամիկոնյաններից Տայքի Բողխա գավառում շարունակում էին պահպանել իրենց տիրույթները նաև Դիմաքսյանները: Գահնամակում Տայքի Բողխա գավառում իշխող Դիմաքսյանները հիշատակվում են հենց որպես «Բուխա Դիմաքսեանք»³¹: Համաձայն Զորանամակի՝ Բողխայի Դիմաքսյան իշխանն ուներ երեք հարյուր, իսկ Մամիկոնյանները՝ հազար հոգանոց այրուծի³²:

V գ. երկրորդ կեսին Տայքը դառնում է Սասանյանների դեմ ուղղված պայքարի կենտրոններից մեկը: Այդ պայքարի մասին մենք առավելագույն տեղեկություններ քաղում ենք Ղազար Փարպեչու-

²⁶ Տե՛ս Աղոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 365:

²⁷ Փաստոսի Բիզանդացոյ պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Փավստոս Բուզանդ), Թիֆլիս, 1912, VI, ԺԱ, էջ 403:

²⁸ Նույն տեղում, III, ԺԸ, էջ 73:

²⁹ Նույն տեղում, IV, ԺԸ, էջ 198–199:

³⁰ Չամչեանց Մ., Պատմութիւն Հայոց, հ. Գ, րաժին «Ժամանակագրություն», Եր., 1984, էջ 142:

³¹ Տե՛ս Աղոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 280:

³² Նույն տեղում, էջ 294:

«Հայոց պատմութիւն» աշխատութիւնից: Փարպեցին անդրադառնալով 450–451 թթ. ապստամբութեանը՝ հիշատակում է Տայքի Տաճատ եպիսկոպոսին, որը Հայոց մյուս եպիսկոպոսների հետ մեկտեղ մասնակցում էր 450 թ. Արտաշատի եկեղեցական ժողովին՝ պարսից Հագկերտ II-ի կրոնափոխութեան պահանջին պատասխանելու նպատակով³³: Հիշատակվում է նաև Հովսեփ Վայոցձորեցի կաթողիկոսին հաջորդած Գյուտ կաթողիկոսը, «որ էր ի գաւառէն Տայոց, ի գեղջէն Արահեզայ, այր լի գիտութեամբ հայովս և առաւելեալունին, յորդասաց բանիւ և առատարուղիս վարդապետութեամբ»³⁴: 481–484 թթ. ապստամբութեան ժամանակ հայերը տեսնելով «անկազմադոյն զպատրաստութիւն զօրուն, իւրենաց՝ խորհէին առ վայր մի յամուր տեղիս գաւառին Տայոց չուել»³⁵: Փարպեցու հաղորդմամբ՝ ապստամբ նախարարները մարդպան են կարգում Սահակ Բագրատունուն, սպարապետ՝ Վահան Մամիկոնյանին՝ իրենց կենտրոն դարձնելով Դվինը, իսկ ռազմական հենակետ՝ Տայքի ամուր աշխարհը:

482 թ. Ճարմանայի դաշտում պարտութիւն կրելուց հետո, երբ «... զօրքն ամենայն Հայոց, ընդ որս և անպիտան զօրքն Վրաց, հանդերձ թագաւորաւն իւրեանց Վախթանգաւ, վատնեալ ցրուեին»³⁶, Վահան Մամիկոնյանն իր ուժերով նահանջում է Տայքի խուլ վայրերից մեկը և նրա մոտ են հավաքվում Հայ «սինլքորքն փախտեիցն և այլք յահագ նախարարացն Հայոց»³⁷:

VI դարում ինչպես Գուգարքի, այնպես էլ Տայքի տարածքում ձևավորված կիսանկախ իշխանութիւնները, որոնք վրացական աղբյուրներում հայտնի են «էրիսթավութիւններ» անունով և կոչված էին փոխարինել բղեշխութիւններին, հոգևոր առումով ենթարկվում էին Հայոց կաթողիկոսին³⁸: Այս պնդմանը համակարծիք է նաև վրացականալոր պատմաբան Ի. Զավախիշվիլին³⁹:

³³ Ղազարայ Փարպեցոյ պատմութիւն հայոց, քոռք առ Վահան Մամիկոնեան (այսուհետև՝ Ղազար Փարպեցի), Եր., 1982, էջ 100:
³⁴ Նույն տեղում, էջ 264:
³⁵ Նույն տեղում, էջ 294:
³⁶ Նույն տեղում, էջ 328:
³⁷ Նույն տեղում:
³⁸ Տե՛ս Մելքոնյան Ա., Զավախքը XIX դ. և XX դ. I քառորդին, էջ 45:
³⁹ Տե՛ս ՋՅՅՅՈՑՅՅՇՇՇՇՇՇ Օ., լարտՅՅՇՇՇ յրօն օնՇՇՇՇՇ, ք. 1, օձ., 1960, ՅՅ. 300. Համաձայն Ի. Զավախիշվիլու, 506 ք. եկեղեցական ժողովին մասնակցել է Տայքի Առատն եպիսկոպոսը, իսկ Հովհաննես Բ Գարեղեցու կաթողիկոսության տարիներին

Հուստինիանոս I կայսեր (527–565 թթ.) օրոք Հայ եկեղեցին իր ինքնուրույնութիւնն ու ժողովրդի շահերը պաշտպանելու նպատակով գործնական քայլերի է դիմում: 554 թ. մարտի 29-ին Դվինում Ներսես Բ Բագրևանդեցի կաթողիկոսի նախաձեռնութեամբ համաժողով է գումարվում, որին մասնակցում են Հայաստանի թիվով 28 եպիսկոպոսները (այդ թիվում նաև՝ Տայոց եպիսկոպոսը)⁴⁰, 35 նախարարներ, հասարակութեան լայն խավերի ներկայացուցիչներ և անգամ շինականներ: Այդ ժողովում բանադրվում է ոչ միայն քաղկեդոնականութիւնը, այլև նեստորականութիւնը, քանզի ժողովի մասնակիցները քաջ գիտակցում էին, որ Հայ եկեղեցուն վտանգ է սպառնում ոչ միայն Բյուզանդիայից, այլև Պարսկաստանից, որն իր հովանավորութեան տակ էր առել նեստորականութեանը: Ժողովում վերջնականապես հիմք է դրվում Հայկական ազգային եկեղեցու ինքնուրույն գոյութեանը⁴¹: Ն. Աղոնցի կարծիքով՝ ի սկզբանե բաժանումը բյուզանդական եկեղեցուց ոչ թե դավանաբանական հողի վրա էր, այլ հիերարխիկ: Սակայն արդեն 571 թ. Հովհաննես Բ Գաբեղենցի կաթողիկոսը և Վարդան Մամիկոնյանը (Կարմիր Վարդան)՝ ելնելով քաղաքական կացութիւնից, մեկնեցին Բյուզանդիա և ընդունեցին քաղկեդոնականութիւնը⁴²:

591 թ. պարսկաբյուզանդական հաշտութիւնից հետո, երբ Հայաստանի մեծագույն մասն անցավ Բյուզանդական կայսրութեանը, Մամիկոնի (Մորիկ) կայսրը ձեռնամուխ է լինում կայսրութեան նոր տարածքների վարչական համակարգի ստեղծմանը: Նա բարեփոխում է Հուստինիանոսի սահմանած վարչական բաժանումները: Տայքը և Գուգարքի սահմանակից մասերն ստանում են Խորազույն Հայք անունը⁴³: Նույն 591 թ. Ավանում ստեղծվում է քաղկեդոնական կաթողիկոսութիւնը՝ ի հակադէմ Դվինի առաքելական կաթողիկոսութեան: Ավանի քաղկեդոնական կաթողիկոսութիւնն ուներ հետևորդներ ինչպես հասարակ բնակչութեան, այնպես էլ բարձրաս-

րին (VI դարի երկրորդ կես) որպես Տայքի եպիսկոպոս է հանդես գալիս Ստեփանոսը:
⁴⁰ Տե՛ս Հարութունյան Բ., Հայոց եկեղեցու քեմական բաժանումը Գրիգոր Լուսավորչի հովվապետության շրջանում, ՊԲՀ, 2000–2, էջ 112–113:
⁴¹ Տե՛ս ՀԺՊ, հ. 2, Եր., 1984, էջ 252:
⁴² Տե՛ս Уртян А. Р., Византийская империя и место в ней армян-халкедонитов, <http://novarm.narod.ru/arch052006/visant.htm>, էջ 13.
⁴³ Տե՛ս Լեւոն, Երկերի ժողովածու, հ. 2, Եր., 1947, էջ 224:

տիճան հոգևորականության շրջանում, այդ թվում Հայաստանի արևելյան մասում: 602–603 թթ. պարսից խոսրով II արքան գրավում է Հայաստանը և վերացնում Ավանի կաթողիկոսական աթոռը: Դվինում Աբրահամ I կաթողիկոսի պահանջով եկեղեցու հայրերը բանադրանքի են ենթարկում Քաղկեդոնի ժողովը: Եկեղեցական գործիչներին այն մասը, որոնք չկատարեցին Ամենայն Հայոց կաթողիկոսի պահանջը, ստիպված հեռացան Տայք, որը, լինելով սահմանակից Բյուզանդիային, լոյս էր քաղկեդոնական բնակչության հանդեպ⁴⁴:

608 թ., ինչպես հիշատակում է Մովսես Կաղանկատուացին, Կյուրոս կաթողիկոսի առաջնորդությամբ «...ուղղափառ հավատոյ դարձան Վիրք և եղեն քաղկեդոնիկ»⁴⁵: Այս անգամ ևս Աբրահամ I կաթողիկոսը Դվինում եկեղեցական ժողով է գումարում, որտեղ Կյուրոսը և բոլոր նրանք, ովքեր պառակտում էին ղցել Քրիստոսի եկեղեցու մեջ, բանադրանքի են ենթարկվում:

Տայքը նորից հիշատակվում է կապված 640-ական թթ. դեպի Հայաստան կատարած արաբական արշավանքների հետ. «Իսկ այն գաւրն, որ ի կողմանս Այրարատեան, եհար սրով մինչև ի կողմանս Տայոց, Վրաց և Աղուանից, առ գաւար և զգերութիւնս»⁴⁶: Բյուզանդացիներն առաջարկում են իրենց օգնությունն այն պայմանով, որ հայերն ընդունեն Քաղկեդոնի դավանանքը: 648 թ. Ներսես Գ Տայեցի (Իշխանցի) կաթողիկոսի նախագահությամբ Դվինում եկեղեցական ժողով է գումարվում, որը մերժում է Քաղկեդոնի կանոններն ընդունելու բյուզանդական առաջարկը: Հետագայում կաթողիկոսը փոխում է իր դիրքորոշումը, սակայն լոյս հենարան չունենալու պատճառով՝ հեռանում է Տայք. «Եւ երթեալ դադարեաց ի Տայս, և այլ ոչ դարձաւ ի տեղի իւր. զի իշխանն Ռշտունեաց և այլ իշխանքն, որ ընդ նմա՝ անհնարին ցասմամբ փքացեալ էին ի վերայ նորայ»⁴⁷: Ներսես կաթողիկոսը հաստատվում է իր ծննդավայրում՝ Իշխան

գյուղում, որտեղ զբաղվում է լայնածավալ եկեղեցաշինական գործունեությամբ:

Իսկ ինչու՞ Տայքի առաքելական հայության շրջանում լայն տարածում գտավ քաղկեդոնականությունը: Թերևս պատճառներն ավելի շատ են, քան դրանք երևում են առաջին հայացքից: Եթե V–VI դարերում հայերի շրջանում քաղկեդոնիկ դավանանքին հարելը Պարսկաստանին հակադրելու դրսևորում էր, ապա VII դ. կեսերին՝ արաբական առաջին արշավանքների ժամանակաշրջանում, հայութայն մի մասի մեջ սկսեց գերիշխել հունական եկեղեցու հետ միանալու տեսակետը՝ պայմանավորված մահմեդական արաբների դեմ Բյուզանդիայի աջակցությունը ստանալու ցանկությամբ: Այս միտումը բնորոշ էր սահմանամերձ շրջաններում բնակվող հայությանը, որը հայտնվելով ազգապահպանման համար անբարենպաստ պայմաններում՝ կրոնափոխ լինելուն գերադասել են դավանափոխ լինելը՝ ընդունելով հարևան Հզոր քրիստոնյա պետության դավանանքը:

VIII դ. սկզբին Տայքը շարունակում էր մնալ Հայաստանի կազմում, իսկ նրա Կող գավառը համարվում էր Հայաստանի Հյուսիսային սահմանը⁴⁸: Տայքը հարմար ապաստան էր հայ նախարարների համար իր անմատչելիությամբ: Դրա վառ օրինակներից է 703 թ. արաբներին ջախջախելուց հետո Ամբատ Բագրատունու այնտեղ քաշվելը և Թուխարք ամրոցում հաստատվելը⁴⁹: Շատ դեպքերում այդ տեղաշարժերը դեպի Տայք կատարվում էին ինչպես ամբողջ ընտանիքներով⁵⁰, այնպես էլ ամբողջ գերդաստաններով ու զորքով: VIII դ. վերջին 12 հազար մարդ Շապուհ Ամատունու և նրա որդի Համամի գլխավորությամբ, անտանելի կեղեքումներից ազատվելու նպատակով փորձում են անցնել հունաց կողմերը: Նրանք Տայքի Կող գավառում ջախջախում են իրենց վրա հարձակված արաբներին, ապա նաև հաստատվում Տայքում:

Տայքը մեծապես տուժեց արաբական դժնդակ տիրապետության ժամանակաշրջանում: VIII դարի հակաարաբական ապստամբությունների ընթացքում երկրամասը հաճախ դառնում էր հայկական

⁴⁴ Арутюнова-Фиданян В. А., Повествование о делах армянских (VII век), Источник и время, М., 2004, с. 183, 250.

⁴⁵ Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական քննադիր և ներածությունը Վ. Առաքելյանի, Եր., 1983, էջ 274: Տե՛ս նաև՝ Ուխտանաչ, Պատմութիւն քաժանման վարց ի հայոց, Վաղարշապատ, 1871:

⁴⁶ Պատմութիւն Սեբեոսի, Եր., 1979, էջ 146:

⁴⁷ Նույն տեղում, էջ 168:

⁴⁸ Տե՛ս Պատմութիւն Ղևոնդեայ Մեծի վարդապետի հայոց, Սանկտ-Պետերբուրգ, 1887, էջ 168:

⁴⁹ Նույն տեղում, էջ 26:

⁵⁰ Նույն տեղում, էջ 123:

ուժերի հավաքատեղին, որտեղից էլ կառավարվում էին հակաարաբական ելույթները: Տայքի ռազմավարական նշանակությունը գիտակցելով՝ արաբները մի քանի պատժիչ արշավախմբերի միջոցով ավարի ու այլերի ենթարկեցին նահանգը, որի արդյունքում Տայքի բնակչության մի մասն արտագաղթեց, մյուսը՝ ապաստանեց անմատչելի վայրերում⁵¹: Այն հայ հոգևորականները, ովքեր վերապրեցին արաբական արշավախմբերի սպանողը, գլխավորապես անցան Բյուզանդիա:

774–775 թթ. հակաարաբական ապստամբության ժամանակ արաբական հրոսակախմբերն ամառացում են Տայքը: Հատկապես մեծ հարված է հասցվում Տայքի վանական համալիրներին, որոնց վանականների մի մասը կոտորվում է, իսկ մյուս մասն ապավինում Հայաստանի անմատչելի վայրերին: Ա. Սարուխանը գրում է. «Ը դարում, արաբացիք արշակեցին ներս և սրով ու հրով քարուքանդ արին երկիրը: Վանքերն ու եկեղեցիները առաջին զոհերն եղան իսլամական մոլեռանդություն: Իսկ Հայ ժողովուրդը ապաստանեցաւ լեռներու ու ձորերու մեջ, որոնցմով այս գաւառները (Տայքը և Կղարջքը) առատորեն օժտուած են ի բնե»⁵²:

Հակաարաբական ապստամբության անհաջող վախճանից հետո Մամիկոնյանները ջախջախիչ հարված ստացան և դրանից հետո այլևս ուշքի չեկան: Տայքն անցավ Մամիկոնյանների հետ խնամիրական առնչություններ ունեցող Բագրատունիներին⁵³: Հայոց իշխան Աշոտ Մսակեր Բագրատունին Տայքի իշխանաց գյուղից ոչ հեռու կառուցեց Կաղամախի ամրոցը: Տայքի հյուսիսային հարևանը՝

Կղարջքը, անցավ 774–775 թթ. հակաարաբական ապստամբության ղեկավարներից մեկին՝ Վասակ Բագրատունուն⁵⁴, որի հետնորդներից Աշոտն իր հերթին ստեղծեց մի նոր իշխանություն՝ Արտանուջ կենտրոնով: Հաստատվելով Վրաստանին սահմանամերձ շրջանում, Աշոտը խնդիր ուներ ամրապնդելու իր իշխանությունը, ապահովագրելու այն արաբական ոտնձգություններից: Ուստի նրան անհրաժեշտ էր սոցիալական լայն հենարան և ուժեղ պետության հովանավորություն՝ Տփղիսի արաբական ամիրայությունից և պայքարում: Այդպիսի հենարան Աշոտ իշխանը տեսնում էր արաբական իշխանություններից դժգոհ վրացիների մեջ: Հակաարաբական պայքարում ամենամեծ օգնությունը կարող էր նրան ցույց տալ Բյուզանդական կայսրությունը: Շահելու համար այդ երկու ուժերի համակրանքը՝ Աշոտին անհրաժեշտ էր ընդունել քաղկեդոնական դավանանքը: Այդ հարցում Աշոտը չհապաղեց. նա և իր մերձավորները մկրավեցին քաղկեդոնական ծեսով, որից հետո ձեռնամուխ եղան նորաստեղծ իշխանության ամրապնդման աշխատանքին:

Կղարջքի իշխանության առաջացման վերաբերյալ վրաց տարեգիր Սոււբաա Դավիթիս-ձեն (Դավթի որդի Սմբատը – Ա. Ա.) գրում է հետևյալը. «Աշոտը հաստատվեց այնտեղ (Արտանուջում – Ա. Ա.) և Տերը նրան հաղթանակներ ուղարկեց և դարձրեց նրան Շավշեթ-Կլարջեթի տիրակալը... և ամրացրեց նրա թագավորությունը հունաց թագավորի կամքով»⁵⁵: Աշոտը հասնում է նրան, որ բյուզանդական կայսեր կողմից ստացած նոմինալ իշխանությանը նա տալիս է իրական բովանդակություն. «Եվ այնժամ հունաց թագավորն (Լևոն V, 813–820 թթ. – Ա. Ա.) Աշոտին շնորհեց կյուրապաղատի տիտղոս»⁵⁶: Կայսեր կողմից այս քայլը ոչ այնքան Աշոտին սիրաշահելու, այլ ուղղակի արաբներին հակակշիռ ստեղծելու նպատակ էր հետապնդում⁵⁷:

⁵⁴ Վասակ և Սմբատ Բագրատունիների հայրն էր հայոց սպարապետ Աշոտ «կոյր» Բագրատունին, որն իր հերթին 748–750 թթ. Հայաստանում հակաարաբական ապստամբության ղեկավարներից էր:

⁵⁵ Տե՛ս Սումբատ Դավիթ-ձե, История и повествование о Багратионах, перевод, введение и примечание М. Лордкипанидзе, Тб., 1979, էջ 31.

⁵⁶ Տե՛ս Летопись Картли, перевод, введение и примечание Г. В. Цулая, Тбилиси., 1982, էջ 48.

⁵⁷ Տե՛ս Մաթևոսյան Ռ., Բագրատունիներ, Պատմատոնիսարանական հանրագիտարան, Եր., 1997, էջ 118:

⁵¹ Արաբական ներկայությունը Հայաստանում և մասնավորապես Տայքում խթանում է արտագաղթը ոչ միայն հասարակ ժողովրդի, այլ նաև իշխող վերնախավի շրջանում: Հաստատվելով հարևան Բյուզանդիայում շատ հայեր դիմաստախիական անոսնությունների ճանապարհով կամ անձնական արժանիքների համար բարձր դիրքերի են հասնում պետական կառավարման համակարգում: Տե՛ս Арупонова-Фиданян В. А., Православные армяне и армяно-византийская контактная зона, Вестник Православного Свято-Тихоновского гуманитарного университета, III, Филология, вып. 3 (17), с. 10.

⁵² Մարտիան Ա., Վիրահայրի Տայք և Կղարջք գավառների հին հայ և վրացական վանքերը, ՀԱ, 1939, էջ 103:

⁵³ Տայքի որոշ մասերում շարունակում էին մնալ Մամիկոնյանների «կրտսեր ճյուղի» ներկայացուցիչները, որոնք հայտնի էին «Թոռնիկյաններ» և «Չորդվանելներ» անուններով: Դավիթ Կյուրապաղատի օրոք սրանք հանդես են գալիս իբրև Տայքի տիրակալի վասալներ: Տե՛ս Մարտիան Ս., Հայ դասական, ճարտարապետության ակունքներում, էջ 240–241:

Այսպես տեղի ունեցավ Կղարջքում կյուրապաղատությունների անաջատումը, որը X դարում ընդարձակվեց գերագանցապես Տայքի տարածքների հաշվին⁵⁸։ Բնակչության մեծամասնությունը իշխող վերնախավի նման հարեց քաղկեդոնականությանը։ Նորահաս բնակչության հոգևոր պահանջմունքների բավարարման համար Վրաստանից մեծ թվով հոգևորականներ եկան Տայք և Կղարջք, որտեղ նրանք, չբավարարվելով արդեն իսկ քաղկեդոնական մեծամասնության առկայությամբ, բազմապատկեցին հոգևորությունը։ Ինչ խոսք, վրաց հոգևորականության հետևից Տայք ներթափանցեցին նաև վրացական էթնիկական խմբեր, որոնք սակայն Տայքի բնակչության ազգային կազմի վրա լրջ չազդեցություն չունեցան։

X դարում կյուրապաղատությունը հարավից և հարավ-արևելքից սահմանակից էր Կայսիկների ամիրայություններ և Այրարատի Վանանդ դավառին, հյուսիս-արևելքից՝ Վրաստանին, իսկ հյուսիս-արևմուտքից՝ Բյուզանդական կայսրությանը։ Բացի Գուգարքի և Տայքի գավառներից, այս իշխանության մեջ ընդգրկվեցին նաև վրացական որոշ գավառներ (Մեսիսեթի և այլն), որի արդյունքում կյուրապաղատությունը խառն ազգաբնակչությամբ պետություն դարձավ⁵⁹։

Արդեն X դ. Տայքի հայ բնակչության մեջ սկսել էր զգացնել տալ հակումը դեպի քաղկեդոնականությունը։ Հայազգի քաղկեդոնականների մի մասը սկսեց դանդաղորեն փոխել իր ազգային նկարագիրը⁶⁰։ Հայերի հարելը քաղկեդոնականությանն այս տարածաշրջանում լայն աջակցություն էր գտնում ինչպես բյուզանդացիների, այնպես էլ վրացիների շրջանում։

Որն է պատճառը, որ հայաբնակ բնակավայրերում հայերի կողմից կառուցված հրաշալիքները՝ Չորզվանքը, Օշկվանքը, Խախուռն, Իշխանը, Բանակը և այլն, սեփականացվել էին վրացիների կողմից, և այսօր դրանք ներկայացվում են իբրև միջնադարյան վրացական

մշակույթի գլուխգործոցներ։ Վրացական կողմն ունի մի շարք ~~փոքր~~ տարիներ՝ արձանագրությունները եկեղեցիների վրա, Դավիթ Կյուրապաղատի հատած դրամները՝ վրացերեն մակագրություններով, Տայքի եկեղեցիներում գրված բազմաթիվ վրացերեն ձեռագրերը, Տայքում վրացական պատրիարքությանը ենթակա թեմերի գոյությունը։ Ինքնըստինքյան այս բոլոր փաստարկները խոսում են, բայց երբ կատարում ենք սկզբնաղբյուրներում առկա պատմական փաստերի համակողմանի և անաչառ վերլուծություն, ապա ստանում ենք բոլոր մեզ հետաքրքրող հարցերի պատասխանները։

Տայքի անցյալի վերաբերյալ մեծագույն բացահայտումները կատարվել են փկանավոր գիտնական ակադեմիկոս Ն. Մառի կողմից։ Մառը գտնում էր, որ «վրացի» տերմինը մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում ուներ դավանաբանական նշանակություն, որով բնութագրվում էին Տայքի հայ քաղկեդոնականները⁶¹։ Վերջինիս կարծիքով, հայ ժողովրդին հսկայական վնաս հասցրած հայ քաղկեդոնականների ապագայնացման գործընթացն է պատճառը, որ Վրաստանը հարստացավ Տայքով և Կղարջքով⁶²։ Մառի պնդմամբ, X դ. Տայքի վրացի հոգևորականությունը շրջապատված էր թեև հավատակից, սակայն այլազգի հայ ազգաբնակչությամբ։ Երկիրը վրացական անվանելը նրանք հիմնավորում էին լոկ նրանով, որ եկեղեցիներում ժամերգությունը տեղի էր ունենում վրացերեն⁶³։ Մեծանուն ակադեմիկոսը պնդում էր նաև, որ վրացերենը տարածաշրջանում եղել է միայն ու միայն եկեղեցական լեզու և ժողովրդի մեջ լայն տարա-

⁵⁸ Մինչև 10-րդ դ. I-ին կեսը Տայքը թե՛ վարչականորեն և թե՛ քաղաքականապես բաժանված էր Կղարջքի Բագրատունիների կյուրապաղատությունից։ Տե՛ս Եղիազարյան Ա., Տայքի իշխանությունը հայ Բագրատունիների տերության համակարգում, ՊԲՀ, 2008, № 3, էջ 206։ Ըստ Ն. Աղոցի, ողջ IX դ. ընթացքում և X դ. սկզբին՝ մինչև Սմբատ I-ի մահը (913 թ.), Տայքի մեծագույն մասը մնում էր հայոց թագավորության կազմում։ Տե՛ս Աղոց Ն., Դավիթ Կյուրապաղատ, ՊԲՀ, 2002, 3, էջ 19։

⁵⁹ Տե՛ս Տաշեան Հ., Հայ բնակչությունը Ալ ժովեն մինչև Կարին, էջ 70։

⁶⁰ Տե՛ս Խոսրոսյան Հ., Архитектура Древней Армении, էջ 200–201։

⁶¹ Март Н., Ани. Книжная история города и раскопки на месте городища. Л.; М., 1934, с. 131. Վ. Ստեպանենկոյի մեկնարանությամբ, քաղկեդոնականությունն այս դեպքում վրացական տարբերակով ուղղափառության ընդունումն է, որը զուգակցվում է եկեղեցիներում վրացերեն ժամերգությամբ։ Տե՛ս Степаненко В., Чортванели, Торники и Тарониты в Византии (к вопросу о существовании т.н. Тайкской ветви Торникаянов), Античная Древность и Средние века, 1999, № 30, с. 35։

⁶² Տե՛ս Март Н., Аркауи, монгольское название христиан связи с вопросом об армянах халкедонитов, ВВ, XII, СПб., 1906, էջ 6։ Ն. Մառի այս անաչառ դիտարկումներն անխնայ բնագրատության են ենթարկվել վրացագիտության մեջ։ Մասնավորապես. «Ն. Մառի պնդումները առանձնապես ոգևորության են ընդունվում հայ գիտնականների կողմից, որոնք դա օգտագործում են իբրև հայկական աշխարհաբարդարական համելությունների գուշակման միակ էթնկոսով տարբերակ»։ Տե՛ս Յանսյուրաձեյ Զ., յարտաշխարհային պատմության շրջանակում օրնոտային օրնոտային օրնոտային օրնոտային օրնոտային օրնոտային, 2006, թիվ 172։

⁶³ Տե՛ս Март Н., Георгий Мерчуле. Житие Григория Хандзтийского, СПб., 1911, էջ 123։

ծում չունեն⁶⁴: Մնացած գրեթե բոլոր պարագաներում նրանք օգտագործում էին Հայերենը: Օրինակ, Տայքի քաղկեղոնիկ Հայերից Գրիգոր Բակուրեանը⁶⁵, որը 1083 թ. Բուլղարիայում Հիմնադրեց Պետրիցիոնի վանքը, վանքի կանոնադրությունը հեղինակելիս իր անվան գիմաց ստորագրել է Հայերենով և անգամ հունարեն նշել, որ իր ստորագրությունը Հայերենով է արված⁶⁶: Համաձայն Պետրիցիոնի կանոնադրելի 182-րդ հոդվածի, Հայերը քաղկեղոնական եկեղեցիներում պաշտոնական ժամասացությունը պիտի կատարեն վրացերեն⁶⁷: Քանի որ Հայ քաղկեղոնական համայնքի եկեղեցիներում, իր ժամանակի սահմանված կանոնով, արարողությունը կատարվում էր վրացերեն, դրանից ելնելով էլ այդ նույն եկեղեցիների պատերին գրանցվող արձանագրությունները կատարվում էին վրացերենով:

Այսպիսով պարզ է դառնում, որ Տայքի որոշ եկեղեցիների արձանագրությունների լեզուն չի որոշում Տայքի հուշարձանների ոճային և ազգային պատկանելությունը: Առավել ևս, որ որոշ դեպքերում այդ արձանագրությունները կատարվել են ուղղապարհական լուրջ սխալներով: Պետք է նշել, որ Հայ քաղկեղոնականների գլխավոր եկեղեցիների արձանագրությունները գրվել են անթերի, քանի որ այդ եկեղեցիներին կից եղել են զբոսայգի կենտրոններ, որտեղ գրվել են բազմաթիվ վրացական ձեռագրեր: Խոսքը վերաբերում է գյուղական բնակավայրերի եկեղեցիներին, որոնց արձանագրությունները ներկայացված են վրացագիտական աշխատություններում: Այսպես, էքեք (Այգեկ) գյուղի եկեղեցու վրացերեն և հունարեն արձանագրությունները է. Թաղախիչիին բնութագրում է իբրև անգրագետ և ավելացնում, որ այդ արձանագրությունների հեղինակը վատ էր տիրապետում ինչպես հունարենին, այնպես էլ վրացերեն-

⁶⁴ Նույն տեղում, էջ XVI

⁶⁵ Գրիգոր Բակուրեանը վրացական աղբյուրներում հիշատակվում է որպես «արևելքի գորավար», իսկ Աննա Կոմնենոսը նրան համարում է հայ, որը ծագում է հայկական անվանի տոհմից: Տե՛ս Арутюнова-Фиданя В. А., К вопросу о существовании халкидонитской церкви в Армении, Вестник ПСТГУ III: Филология 2010. Вып. 4 (22). էջ 17–18:

⁶⁶ Տե՛ս Мэпп Н., Аркаун ..., էջ 20:

⁶⁷ Տե՛ս Մալուխյան Տ., Հայ դասական ճարտարապետության ակունքներում, Եր., 2003, էջ 244–245:

նին⁶⁸: էքեքյան արձանագրությունը, ըստ Թաղախիչիի՝ պետք է որ կատարված լիներ 1006–1007 թթ., այսինքն այն ժամանակաշրջանում, երբ «Տառ-կարջեթյան Քարթվեկական թագավորությունն» իր մշակութային ծաղկման ժամանակաշրջանում էր: Բնականաբար դժվար է դառնում հավատալ նրան, որ «վրացական ազգային մեծամասնություն ունեցող Տառյում վրացի հոգևորականների կողմից» նման անգրագիտությունը դրսևորվեր տաճարի պատերին: Մեր այս պնդմանը, իհարկե, կցանկանան հակադրվել, պնդելով որ այդ արձանագրությունները կատարողը վրացի չի եղել, և դրանով են բացատրվում այն բազմաթիվ ուղղապարհական սխալները, որոնք առկա են արձանագրության մեջ: Սակայն չմոռանանք, որ վրացագիտություն մեջ գերիշխող տեսակետի համաձայն Տայքի թե՛ բնակչությունը, և թե՛ հոգևորականությունը վրացիներ էին, ուստի դժվար է պատկերացնել, թե ինչպես կարող էին վրացի հոգևորականներն ու բնակչությունը հանդուրժել տառասխալներով արձանագրություններ: Այս ամենն ունի ընդամենը մի բացատրություն, որ ո՛չ էքեքի հոգևորականությունը, և ո՛չ էլ բնակչությունը քաջատեղյակ չէին վրացերենին, այսինքն վրացիներ չէին, այլ քաղկեղոնական Հայեր: Իսկ որ Տայքում Հայերը հնուց ի վեր ապրել և արարել են, վկայում են ինչպես եկեղեցիների վրա հանդիպող Հայատառ թվագրումները (Իշխան, Խախու և այլն), այնպես էլ միջնադարյան հեղինակների աշխատությունները:

Տայքի քաղկեղոնական ազգաբնակչության Հայախոս լինելու վերաբերյալ պահպանվել են մի շարք տեղեկություններ: Դրանցից առաջինը վերաբերում է X դարին: Ականավոր գիտնական Ներսես Ակինյանի կողմից Հայտնաբերվեց «Պղնձե քաղաքի» պատմության վերաբերյալ փաստաթուղթը, որով հավաստվեց Դավիթ Կյուրապաղատի ազգությունը Հայ լինելը, նրա պալատականների և ժողովրդի Հայախոս Հայեր լինելը և, այդպիսով, Տայքի կյուրապաղատության Հայկական լինելը⁶⁹: Մեզ են հասել նաև Տայքում գրված բազմաթիվ ձեռագրեր, որոնք պահպանվում են Մատենադարանում⁷⁰:

⁶⁸ Такайшвили Е., Археологическая экспедиция в южные провинции Грузии 1917 г., с. 76.

⁶⁹ Ներսես վ. Ակինյան, Չրոյց Պղնձե քաղաքի, «Հանդես ամսօրեայ», 1958, 1–4, էջ 30–48:

⁷⁰ Տե՛ս Մատենադարան, Չեռագիր № 3223, էջ 326ր, 8624, էջ 96ր, 8064, էջ 20ր, 22ա:

1947 թ. ակադեմիկոս Ս. Զանաշիայի կողմից, առանց լուրջ հիմնավորման, փորձ արվեց ամբողջ Տայքի ազգաբնակչությունը ներկայացնել իբրև վրացական, իսկ նահանգի պատմությունը դիտարկել՝ Վրաստանի պատմության համատեքստում: Այստեղ հատկանշական է այն մոտեցումը, որ Մամիկոնյանները, ներկայացվում են իբրև վրացական ծագմամբ նախարարական տոհմ, որոնք գերիշխող դերք ունեին հայոց արքունիքում. «Հայ ազնվականության առաջին շարքերն անցած Տառի՛ Մամիկոնյանների իշխանական-ֆեոդալական տոհմը իր ծագումով պատկանում էր վրացական ճան ցեղին, ինչպես այդ խոստովանում և հատկապես հիմնավորում է հայկական նորագույն պատմագրության խոշորագույն ներկայացուցիչ պրոֆ. Ն. Ադոնցը»⁷¹: Իրականում Ադոնցը երբեք չէր պնդել, որ ճաները վրացական էթնոսի մաս են կազմել: Զանաշիայն փորձում էր իրողությունը ներկայացնել այնպես, կարծես թե հենց Ադոնցն էր Մամիկոնյաններին վրացական ծագում վերագրողը: Վրաց գիտնականների կարծիքով՝ հայոց Արշակունյաց պետության կազմում և հետագա շրջանում Տայքը մշտապես եղել է բնակեցված վրացական էթնիկական տարրերով. «Ճշմարիտն այն է, որ բնակչության հիմնական զանգվածը Տառ-Կլարջեթի երկրամասում ի սկզբանե ըստ լեզվի և մշակույթի եղել է վրացական, մինչ հայերը, եթե միայն որևէ տեղ նրանք եղել են, հանդիսացել են վերաբնակիչներ: ... Հարավային Տառ այդ վերաբնակիչները եկել են որպես գաղթողներ, այդտեղ ապահով ապաստան որոնելու: Այդ տեղի է ունեցել հայերի համար անտանելի ծանր ժամանակներում պարսիկների և արաբների տիրապետության օրոք, V-VIII դարերում: Նրանց ձուլմանը վրացիների հետ օժանդակում էր այն հանգամանքը, որ եկողները թվական առումով քիչ էին երկրի բնիկների համեմատ: Այս անվիճելի իրողության համար ենթադրել մի այլ, խելքի մոտ բացատրություն, կատարելապես անհնար է»⁷²:

Տայքի պատկանելության շուրջ բանավիճելը վրացագիտության մեջ անընդունելի է: Ս. Զանաշիայն հետևյալ կերպ էր հիմնավորում Տայքյան հուշարձանների վրացապատկան լինելը, որը դիտական առումով անհիմն է. «Մինչև հիմա հաշվվում էր, որ Տառ-Կլարջեթի

⁷¹ Джанашиа С. Н., Об одном примере искажения исторической правды, Тб., 1947, с. 19.

⁷² Նույն տեղում, էջ 18-19:

նորարարագետությունը հանդիսանում է վրաց ճարտարագետության օրգանական մասը»⁷³: Նմանատիպ փորձեր են արել նաև է. Թաֆալիճիև, Վ. Բերիճևն և Պ. Զաքարյան իրենց հրատարակած աշխատությունների մեջ, որոնցում Տայքի մշակութային հուշարձանները ներկայացվում էին իբրև վրացական հարստություն, թարգմանվում էին տեղանունների անվանումները վրացերեն, որպեսզի մանկեցնեին գոյություն չեն ունեցել, իսկ այն դեպքերում, երբ հնարավոր չէր վրացականացնել հայկական տեղանունները, դրանք ներկայացնում էին իբրև թուրքական: Այս գործում հատկապես մեծ է է. Թաֆալձիլիի «վաստակը»⁷⁴: Տայքի հայկական անցյալի վերաբերյալ յուրաքանչյուր տրամաբանական և փաստարկված պնդում վրաց գիտնականների կողմից ընդունվում է սպիտակումով⁷⁵:

Ինչևէ, X դարում հայկական և վրացական թագավորությունների ու Տայքի կյուրապաղատություն միջև հաստատվել էին լավ հարաբերություններ և սերտ համագործակցություն: Տայքը կարևոր նշանակություն է ստանում Բյուզանդիայի և Այսրկովկասի երկրների համար ինչպես իր դիրքի, այնպես էլ տեղական բավականաչափ զորեղ իշխանության առկայության շնորհիվ, որն իր հզորության գագաթնակետին հասավ Դավիթ Կյուրապաղատի օրոք (960-ականներ - 1001 թթ.): Դավիթ Կյուրապաղատը բարձր գնահատականների է արժանացել ինչպես հայ պատմիչների՝ Ասողիկի, Արիստակես Լաստիվերցու, Մատթեոս Ուռհայեցու, այնպես էլ վրաց տարեգիրների կողմից: Լաստիվերցին նրան անվանում է հզոր, աշխարհաչեն,

⁷³ Նույն տեղում, էջ 31:
⁷⁴ St'u Такайшвили Е., Археологическая экспедиция в южные провинции Грузии 1917 г., էջ 45:

⁷⁵ Երև թաղայշվիլու և Զանաշիայի նմանօրինակ եզրակացություններն ընդամենը փորձեր էին՝ ամրապնդելու վրացական ԽՍՀ «իրավունքներն» Արևմտյան Հայաստանի այն տարածքների նկատմամբ, որոնք ԽՍՀՄ ղեկավարությունը Երկրորդ աշխարհամարտից հետո ակնկալում էր ստանալ Թուրքիայից՝ որպես նրա պրոգնոզմանակա ակտիվ չեզոքության փոխհատուցում, ապա անհասկանալի է որոշ էթիկայից գուրկ վայ-գիտնականների պահվածքը, որոնք գիտական շրջանակներում բանավեճը բողոքում, հարցը տեղափոխում են անձնական վերավարձների մակարդակ: Ահա այսպես է բնութագրում «Սուխումի համալսարանի պրոֆեսոր»՝ տիսրախչակ Գուրամ Մարխուխան, հայ գիտական շրջանակների կողմից Տայքի հուշարձանների պահպանման հարցին նվիրված բննարկումները. «Ամբողջ աշխարհին է հայտնի, որ հայերը մշտապես բաղաձ քորենիներ և շնագայլեր են, որոնք մշտապես հետևում են վրացիներին»: St'u <http://iberiana.wordpress.com/armenia-georgia/tao-klarjeti>

առատաձեռն ու աղքատասեր մարդ, խակապես խաղաղություն սահմանող⁷⁶, Ուռհայեցին՝ Աստու սուրբ մարդ և աստվածասեր⁷⁷, վրացի տարեգիրը՝ զթասիրտ, խաղաղասեր, անհիշաչար, վանականների հովանավոր, եկեղեցիներ հիմնող, մարդասեր⁷⁸: Հենց Դավիթ Կյուրապաղատն է, ըստ վրացի տարեգրի, եղել «միասնական վրացական թաղապարտության» ստեղծման ջատագովներից մեկը, չնայած վրաց պատմագրության մեջ գոյություն ունի մեկ այլ տեսակետ, համաձայն որի՝ Տալբի դերը միասնական վրացական պետության ստեղծման դործում ասորեգիրների մոտ գերազնահատված է⁷⁹:

Համաձայն վրացական աղբյուրների՝ 975 թ. Վիրքի էլիտիվ (ազգագուլուխ) Իվանե Մարուշխ-ձեն (Մարուշի որդի Իվանեն), նեղվելով Կախեթի իշխանների կողմից, իր ղեկավարին ուղարկում է Դավիթ Կյուրապաղատի մոտ, առաջարկում իր զորքով պալ և վերցնել Վիրքը, որպեսզի կամ ինքը տիրի այնտեղ, կամ էլ այն զիջի Բագրատին՝ Տալբի հյուսիսային մասի կառավարիչ Գուրգենի և Աբխազաց Գեորգ թագավորի դստեր՝ Գուրանդուխտի որդուն⁸⁰: Ընդառաջելով Իվանե Մարուշխ-ձենի առաջարկությանը՝ Դավիթը տիրացավ Վիրքի կենտրոն Ուխիսցիսին, քանի որ անժառանգ էր, որդեգրեց Բագրատին, այնուհետև իր մոտ կանչեց Վիրքի ազատներին և պարտադրեց հնազանդվել Բագրատին՝ իբրև «Տալբի, Քարթլիի և Աբխազիայի մասանդորդի»⁸¹: Այս իրադարձություններն ընկան միասնական վրացական պետության ստեղծման արդի հայեցակարգի հիմքում, որի հեղինակն է Ի. Զավախիշվիլին⁸²:

970-ական թթ. վերջերին ծանրացավ Բյուզանդական կայսրության վիճակը: Վասիլ (Բարսեղ) II-ի (976–1025 թթ.) կառավարման

⁷⁶ Տե՛ս Պատմութիւն Արիստակեսայ Վարդապետի Լաստիվերտոյ (այսուհետև՝ Լաստիվերցի), Թիֆլիս, 1912, էջ 3:

⁷⁷ Տե՛ս Մարտիոս Ուռհայեցի, ժամանակագրութիւն (այսուհետև՝ Ուռհայեցի), Վաղարշապատ, 1898, էջ 36:

⁷⁸ Տե՛ս Летопись Картли, էջ 57:

⁷⁹ Գ. Մելիքիշվիլի կարծիքով, Տայքը, գտնվելով մեկ այլ պետությունից վասալական կախվածության մեջ, չէր կարող IX–XI դդ. լինել Վրաստանի քաղաքական միավորման մեջ գլխավոր ուժը: Տե՛ս մեղլոյիմջիլի Գ. Վրացական ժողովրդի պատմությունը և ժողովրդի զարգացումը, Երևան, 1973:

⁸⁰ Տե՛ս Летопись Картли, էջ 57:

⁸¹ Տե՛ս ქართლის ცხოვრება, ტ. 1, თბ., 1955, გვ. 274:

⁸² Տե՛ս Ջաճվանիշվիլի Ի., ქართველი ერის ისტორია, წ. 2, თბ., 1960, გვ. 123–124.

ակզբին նրա դեմ հուժկու ապստամբություն բռնկվեց Վարդ Սկլերոսի՝ փոքրասիական ազնվականության հզորագույն ներկայացուցիչներից մեկի գլխավորությամբ: Սկլերոսն իր կողմը թեքեց կայսրության զինված ուժերի մեծ մասը, ինչպես նաև գրեթե ամբողջ Փոքր Ասիան: Ապստամբությունը ճնշելու համար կայսերական իշխանությունն օգտագործում է իր բոլոր միջոցները: Կայսրության ծանր վիճակից փորձեցին օգտվել արաբական ամիրայությունները: Մրվանյանների Բատ ամիրան գրավեց Մանազկերտը: Այս վճռական պահին Վասիլ II-ը Թոռնիկ Թոռնիկյանի միջոցով⁸³ դիմեց Տալբի տիրակալին՝ օգնական զորք խնդրելով կայսերական արևելյան բանակի համար, որպես հատուցում խոստանալով «ցկյանս» հանձնել նրան նոր հողային տիրույթներ՝ Խաղտո առիճը, Կղեսուրքը, Չորմայրը, Կարինը, Բասենը, Մարդաղի գավառը (կամ Սևուկ բերդը), Հարքն ու Ապահունիքը⁸⁴: Դավիթն ընդունեց առաջարկը և 979 թ. իշխանաց իշխան Զովիկի ու Թոռնիկ Թոռնիկյանի գլխավորությամբ կայսերական բանակին օգնության ուղարկեց 12 հազարանոց մի զորամաս⁸⁵: Այս զորամասն աչքի ընկավ Հալխս գետի ափին՝ Սարավենե դաշտում տեղի ունեցած ճակատամարտում, որտեղ Սկլերոսի բանակը պարտություն կրեց:

Սկլերոսի ապստամբության հետևանքով ծանր վիճակում հայտնված Վասիլ II-ը դիվանագիտական նուրբ քայլի էր դիմել: Դավիթն փաստորեն, «ցկյանս» տրվել էին այնպիսի տարածքներ, որոնք այդ պահին մեծ ցանկության դեպքում անգամ Բյուզանդիան չէր կարող փոխանցել Տայքին, քանի որ Հարքը և Ապահունիքը չէին պատկանում նրան, իսկ Խաղտո Առիճը և Չորմայրին Թոռնիկյանների տիրույթներն էին: Դավիթը կայսրությունից առավելագույնը կարող էր ստանալ միայն Տայքից հարավ ընկած հարևան

⁸³ Ստեփաննոսի Տարոնեցոյ Ասողկան պատմութիւն տիեզերական (այսուհետև՝ Ասողիկ), Սանկա-Պետերբուրգ, 1885, էջ 192:

⁸⁴ Նույն տեղում:

⁸⁵ Տայքը փոքր երկիր էր, որպեսզի կարողանար ուրիշի 12 հազարանոց զորք տրամադրել: Սակայն դիվանագիտական հմտություններով և մեծ հմայքով օժտված Դավիթ Կյուրապաղատն ի հաշիվ հայ և վրացի տիրակալների, կարողացավ օգնել կայսրությանը:

չըջանները, այսինքն Կարինն ու Բասենը⁸⁶: Վասիլ II-ի այս քաղաքականությունը նշանակում էր, որ ոչ հեռու ապագայում այդ հողերը Բյուզանդական կայսրությունը հետ կտտանար: Դավիթ Կյուրապաղատը, որը մանրամասն էր հաշվարկել Բյուզանդական այսպես կոչված «փոխհատուցման» դրական և բացասական կողմերը, երբ փորձեց հաստատվել իր «պարզեական» տիրույթներում, ապա անմիջապես հասկացավ, որ իր ծառայության զիմաց ստացել էր, ոչ թե որոշակի տարածքներ, այլ ընդամենը այդ տարածքները գրավելու իրավունք:

Եթե Կարինի և Բասենի միացումը կյուրապաղատությանը չհետևած լից, ապա Հարքն ու Ապահունիքը Դավիթ Կյուրապաղատին անցան միայն 990 թ., երբ «կիւրապաղատն Հայոց Դավիթ պաշարեալ զՄանազկերտ քաղաք»,⁸⁷ գրավեց այն՝ այնտեղ վերաբնակեցնելով վրացիներին և հայերին:

Հակամարտ ուժերի պայքարը Բյուզանդիայում նոր թափով վերակազմեց 980-ական թթ.: Դավիթն այս անգամ միացավ կայսեր դեմ ապստամբած Վարդ Փոկասին՝ փոքրասիական ազնվականության մեկ այլ ներկայացուցչի: Կյուրապաղատի կողմից Փոկասին օգնելը պայմանավորված էր նրանով, որ վերջինիս հետ բարեկամական հարաբերությունների մեջ էր սկսած այն ժամանակից, երբ Փոկասը «նալգրայի (նաղտիք) դուքսն էր»⁸⁸: Սակայն միայն Չերմ հարաբերությունները չէին, որ ստիպել էին Տայբի տիրակալին միանալ Փոկասին: Դավիթն իրեն խաբված էր զգում, քանի որ Վասիլ II-ից ամբողջովն անջատվել էր ստացել շուրջ տասը տարի առաջ խոստացված փոխհատուցումը և հիմա հարմար պահ էր վրեժ լուծելու համար, առավել ևս, որ իր վաղեմի բարեկամ Փոկասը շուրջ խոստումներով թուլացրել էր Տայբի տիրակալի սթափ դատելու կարողությունը:

Այդ ընթացքում վատացան նաև Դավիթ Կյուրապաղատի և Բագրատ III-ի (975–1014 թթ.) հարաբերությունները: Ըստ վրացի տարեգրի՝ զրա պատճառը Վիրքի էրիսթավներին մեկի՝ Ռատ Բաղ-

⁸⁶ Стів Степаненко В. П., Апахуник в византийско-таоских отношениях в период мятежа Варды Склира (976–979), Античная древность и средние века, вып. 10, 1973, էջ 221:

⁸⁷ Աստիկ, էջ 266:

⁸⁸ Հովհաննես Սկիլիցես, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 10, Բյուզանդական աղբյուրներ, Գ (քարգմանությունը քննարկից, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Բարթիկյանի), Եր., 1979, էջ 64:

վաշի չհնազանդվելն էր «միավորված Վրաստանի թագավոր» Բագրատին: Վրաց թագավորն իր ուժերով մտնում է Վիրք՝ նպատակ ունենալով գերել Ռատին: Վերջինս օգնություն խնդրանքով դիմում է Դավիթ Կյուրապաղատին՝ իր կողմից ավելացնելով, որ Բագրատ III-ի իրական նպատակը Տայբի տիրակալին վերացնելն է⁸⁹: Մ. Լորդօկիպանիձեի կարծիքով՝ Ռատ Բագրատը չէր ստում, և այդ արշավանքն իսկապես ուղղված էր Դավիթ Կյուրապաղատի դեմ⁹⁰: 988 թ. գործը հասնում է բացահայտ ընդհարման և ծանր կացություն մեջ հայտնված Դավիթը օգնություն է խնդրում Հայոց Սմբատ թագավորից և «Հայոց բոլոր թագավորներից»՝ Կարսի, Վասպուրականի, Մյունչյաց թագավորներից և Աղվանից իշխանից: Այս մեծ զորքին Դավիթ Կյուրապաղատն իր ոչ մեծաթիվ ուժերով միանում է Զավախի Դիլվեկ գյուղում: Դավիթի և Բագրատ III-ի հոր՝ Գուրգենի զորքերն իրար են բախվում Գարդաթխիլի⁹¹ կոչվող վայրում (Տայբի և Շևշատի սահմանագլխին), ուր Գուրգենի զորքերը ծանր պարտություն են մատնվում:

Գուրգենի պարտությունից հետո Բագրատ III-ը, տեսնելով ուժերի իրական հարաբերակցությունը, գալիս է Դավիթի մոտ և հայտարարում, որ իր իրական նպատակն է եղել Ռատին պատժելը և «հոր և որդու» միջև տեղի ունեցած այս անախորժությունները լուծելու նպատակով: Զայն միջև տեղի ունեցած այս անախորժությունները, զիջելով թե ոչ, այսուհանդերձ, լսելով նրա բացատրությունները, ազատ արձակեց իր զորքը, սակայն մինչ այդ ստիպելով Բագրատին՝ հօգուտ Հայոց Սմբատ II-ի զիջել Սակուրեթ ամրոցը Զավախում⁹²:

Առնվազն տարօրինակ է թվում Դավիթ Կյուրապաղատի վրա արշավելու Բագրատ III-ի ծրագրերը: Դավիթը վաղուց արդեն երիտասարդ էր, և Բագրատն այսպես թե այնպես ժառանգելու էր Դավիթի տիրությունները: Պատերազմելով կյուրապաղատի դեմ՝ Բագրատն իր հույսը կապում էր իր ձեռնարկի անականակալ լինելու և Դավիթի թուլություն վրա՝ պայմանավորված Փոկասի ապստամբությունը վերջինիս մասնակցությամբ⁹³: Սակայն կա մի հանդամանք, որը, ճիշտ է,

⁸⁹ Стів Летопись Картли, էջ 59:

⁹⁰ Лордкипанидзе М. Д., История Грузии XI-начало XIII века (научно-популярный очерк), Тбилиси, 1974, с. 50.

⁹¹ Նույն տեղում:

⁹² Стів Մելքոնյան Ա., Ջավախքը XIX դ. և XX դ. 1-ին քառորդին, էջ 50:

⁹³ Лордкипанидзе М. Д., նշվ. աշխ., էջ 50:

չի մատնանշվում սկզբնաղբյուրներում, սակայն, մեր կարծիքով, Բագրատի արկածախնդիր քայլերի միակ տրամաբանական բացատրությունն է: Հնարավոր է, որ Բագրատի ելույթը Կյուրապաղատի դեմ կաղնակեղծված էր Վասիլ II-ի կողմից: Գտնվելով ծանր վիճակում, օգնություն խնդրելով նաև Կիևյան Ռուսիայից, Վասիլը կարող էր նմանատիպ խնդրանքով դիմել նաև Բագրատին⁹⁴: Այս վարկածի օգտին է խոսում 1001 թ. Դավիթ Կյուրապաղատի մահից անմիջապես հետո Բագրատի և նրա հոր՝ Վասիլ II-ին ներկայանալը և նախկինում կատարված ծառայությունների դիմաց մեծ պատիվների արժանանալը:

Վասիլ II-ին Հաջողվեց պարտություն մատնել Փոկասին: Դա Դավիթ Կյուրապաղատին դժվարին կացություն մեջ դրեց: Դավիթն ստիպված ներուձով դիմեց Վասիլ II-ին՝ հպատակություն և հնազանդություն խոստանալով: Վասիլ II-ը այստեղ ևս ցուցաբերեց դիվանագետի իր ունակությունները: Կայսրը Դավիթ Կյուրապաղատին է թողնում ինչպես Կարինն ու Բասենը, այնպես էլ Հարքն ու Ապահուենիքը գրավելու և Կյուրապաղատություն սահմանները ընդլայնելու իրավունքը: Վասիլ II-ը Տայքի Կյուրապաղատից պահանջում է միայն Տայքը կտակել կայսրությանը՝ քանի որ Դավիթ Կյուրապաղատն անժառանգ էր, իսկ հավանական ժառանգ Բագրատ III-ի հետ նրա փոխհարաբերությունները հեռու էին լավ լինելուց: Փաստորեն, եթե Բագրատի և Դավթի բախումը «բեմադրված» էր Բյուզանդիայի կողմից, ապա դրանով կայսրությունը մի կողմից ձեռքազատվեց Տայքի ժառանգության իրական հավակնորդ Բագրատից, իսկ մյուս կողմից, իրավաբանորեն ձևակերպեց ու ամրագրեց իր իրավունքները Տայքի նկատմամբ:

Սմբատ II Տիեզերակալի մահից հետո 990 թ. Անիում թագավոր օժված Գագիկ I շահնշահի (990–1020 թթ.) և Տայքի տիրակալի միջև շատ արագ ձևավորվում են ամուր դաշնակցային հարաբերություններ, որոնք զբաղեցրել են ընդհանուր թշնամու՝ արաբական ամիրալությունների դեմ պայքարում նրանց սերտ համագործակցությամբ:

⁹⁴ Նույն տեղում:

* Կա տեսակետ, համաձայն որի Դավիթ Կյուրապաղատը զորք չի տրամադրել Վարդ Փոկասին և Բյուզանդիայի օգտին գրված կտակը ոչ մի կապ չունի Փոկասի ապստամբության հետ (Տե՛ս Նազարյան Լ., Վարդ Սկլերոսի և Վարդ Փոկասի ապստամբություններն ու Դավիթ Կյուրապաղատը, Հայոց պատմության հարցեր, X, Եր., 2009, էջ 34–49):

990 թ. Դավիթ Կյուրապաղատի կողմից Մանազկերտի գրավումից դժգոհ են մտնում այնտեղից արտաքսված արաբները: Դա առիթ է տալիս Ատրպատականի ամիրա Մամլանին հանդես գալու Հայաստանում գտնվող արաբական տարրի պաշտպանության դիրքերից և դուրս գալու Կյուրապաղատի դեմ: Մամլանն իր բանակով գալիս է Մաղկոտն դավառ: Նրա դեմ Դավիթը դուրս է գալիս Հայոց Գագիկ և Կարսի Աբաս թագավորների հետ դաշնակցած: Մամլանի զորքերը, տեսնելով դաշնակիցների թվական գերակշռությունը, դիչերով թողնում են իրենց դիրքերն ու հեռանում Հայաստանից⁹⁵:

Դավիթ Կյուրապաղատը քաջ գիտակցում էր, որ իր մահից հետո Բյուզանդիան, առանց մի կաթիլ արյան, տիրանալու է այն ամենին, ինչ նա ձեռք էր բերել երկարատև պատերազմների արդյունքում: Սակայն նա հույս էր կորցնում, որ կարող է ինչ-որ կերպ փոփոխել Փոկասի պարտությունից հետո իրեն պարտադրված հաշտության համաձայնագրի պայմանները: Այն, որ Բագրատն ու Գուրգենը չէին լինելու Դավթի ժառանգները, այլևս ակնհայտ էր: 987–988 թթ. վերահիշյալ իրագործություններից հետո Դավթի և նրա նախկին ժառանգների միջև շփումները հասցվել էին նվազագույնի: Ստեղծված քաղաքական իրավիճակում՝ իբրև Դավթի տիրությունների ժառանգորդ, կարող էր դիտարկվել նաև Գագիկ I-ը, եթե հաշվի առնենք նաև նրանց միջև ձևավորված դաշնակցային կապերը և Տայքի կյուրապաղատություն՝ գերազանցապես հայկական հողերից կազմված լինելը: Մյուս կողմից, հասկանալով ձևավորված ռազմաքաղաքական իրավիճակի ողջ լրջությունը, կամ միգուցե հրահանգավորվելով Վասիլ II-ի կողմից, Դավթի և Գագիկի ձեռնարկումներին միանալու և ռազմական օգնություն ցուցաբերելու պատրաստակամությամբ է հանդես գալիս Բագրատ III-ը: Դա կարող էր անմիջապես մի քանի առումներով շահեկան վիճակի մեջ դնել Բագրատին. ա) նա անմիջական մասնակից էր դառնում Տայքի կյուրապաղատի և Հայոց թագավորի ձեռնարկումներին, բ) մեծանում էր նրա միջազգային հեղինակությունը, գ) վրաց արքան մոտ էր լինում Հայոց և Տայքի տիրակալների «ներքին խոհանոցին», դ) Բագրատը Տայքի տիրակալի հետ լավ փոխհարաբերությունները վերականգնելու և նրա անմիջական ժառանգը վերստին դառնալու տեսական հնարավորություն էր ստանում, ե) հարկ եղած դեպքում Բագրատը կանխելու էր իր շահե-

⁹⁵ Տե՛ս Լևո, Հայոց պատմություն, հ. 2, Եր., 1947, էջ 626–627:

րի դեմ ուղղված որևէ ձեռնարկում Գագիկ I-ի և Դավիթ Կյուրապաղատի կողմից:

Շարունակելով իր ակտիվ ռազմական քաղաքականությունը՝ 997 թ. ձմռանը Դավիթը զորք ուղարկեց պաշարելու Խյաթը, սակայն պարտություն կրեց, որից օգտվեցին արաբ ամիրաները և փորձեցին վերադարձնել Մրվանյաններից խլած շրջանները, առաջին Հերթին՝ Ապահունիքը: Սակայն այս Հարձակումը ևս գլխավորած Ասրպատականի ամիրա Մամլանը 998 թ. Մուսթ գյուղի մոտ պարտություն կրեց Տայքի, Հայոց և վրաց միացյալ ուժերի կողմից:

Ըստ Ասողիկի՝ Դավիթ Կյուրապաղատը մահացել է Հայոց 449 թ. Ջատկին՝ 1001 թ. մարտի 31-ին: Ըստ Լաստիվերցու և Ուսույանցու, վրաց Իլարիոն արքեպիսկոպոսը⁹⁶, մահաթուլյն խառնելով պատարագի Հաղորդությունը, խմբեցրեց Դավիթ Կյուրապաղատին, սակայն տեսնելով, որ թույնը չի ներդրծում, խեղդամահ արեց նրան Ավագ Հինգչարթի օրը⁹⁷: Իլարիոն արքեպիսկոպոսն իր Հերթին պատժեց Վասիլ II-ի կողմից, «Վասնզի Հայր անուն էր Դաւիթ կիրապաղատ թագաւորին Վասիլն. և վասն այնորիկ կորոյս գնոսս»⁹⁸:

Իրականում, ու՞մ էր ձեռնառն Դավիթ Կյուրապաղատի մահը: Սկզբնաղբյուրների վկայությամբ Կյուրապաղատն արդեն ծեր էր, Հեռեարար կար մի լուրջ պատճառ, որը նրա թշնամիներին ստիպեց արագորեն ձերբազատվելու նրանից: Ցավոք, սկզբնաղբյուրները խոսում են միայն Մեծ Կյուրապաղատի մահվան մասին և լուրջյան են մատնում այդ ոճրագործության Հետ կապված Հանգամանքները: Ի՞նչը կարող էր լինել նրանից ազատվելու Համար առիթ, եթե ոչ քաղաքական այն մեծ խաղը, որը սկսել էր Վասիլ II-ը 970-ական թթ.՝ Վարդ Ալլերոսի ապստամբության ժամանակ: Վերջին տարիների իրադարձությունները, Հատկապես Հայոց շահնշահի և Դավիթ Բագրատունու սերտ փոխհարաբերությունները խառնել էին կայսեր՝ Տայքի Հետ կապված բոլոր ծրագրերը: Կյուրապաղատի մահից Հետո կայրը «օրինական» ճանապարհով ստանալու էր իր տիրույթները, Հեռեարար, ապահովելու Համար Տայքի խաղաղ անցումը Բյուզանդիային, կայսրը Դավթին ճանապարհից Հեռացնելով կապահովա-

զրեր ինքն իրեն ավելորդ քաշքուկներին⁹⁹: Հանգամանքների այսպիսի դասավորության պայմաններում վրացի արքեպիսկոպոս Իլարիոնը ընդամենը գործիք էր Կյուրապաղատի մահը ցանկացողների ձեռքում և անցանկալի վկա, որին շտապեց ասպարեզից Հեռացնել Վասիլ II-ը կամ մեկ այլ ոք՝ թաքցնելու Համար գործած ոճիրը¹⁰⁰:

Դավիթ Կյուրապաղատի մահից Հետո Վասիլ II-ը շտապ եկավ Հայաստան, շրջագայեց նոր տիրույթներով՝ այցելելով Հարք, Ապահունիք, ապա՝ Տայք, տիրացավ ռազմաթիվ գավառների, բերդերի և քաղաքների: Եկեղյաց գավառում նրան դիմավորեցին Տայքի ազատները, ներկայացան նաև Բագրատ III-ը և նրա Հայր Գուրգենը: Վասիլը Գուրգենին շնորհեց մագիստրոսի, իսկ Բագրատին՝ կյուրապաղատի կոչում¹⁰⁰: Բագրատին շնորհվեցին նաև Դավիթ Կյուրապաղատի տիրույթների մի մասը «ցկյանս օգտագործման»: 1001-1002 թթ. ձմռանը, կայսեր կողմից Կյուրապաղատի ժառանգության «անարդար բաժանումից» դժգոհ Գուրգենը, փորձ ձեռնարկեց Բյուզանդիայից խլել նաև Տայքի մյուս շրջանները: Իր գործով նա ռազմակալեց Տայքը, սակայն Հուժկու դիմադրություն ցույց տվեց Ուլթիքը: Գուրգենի դեմ ուղարկվեց Նիկեիորոս Կանիկլեսն իր զորքով: Հակամարտող կողմերը փորձեցին բանակցությունների ճանապարհով լուծել ստեղծված խնդիրը: Բյուզանդական կողմը Համաձայնվեց Գուրգենի տարածքային պահանջներին: Նրա տարածքներն ընդլայնվեցին ի Հաշիվ Դավիթ Կյուրապաղատի նախկին տիր-

⁹⁶ Տես Ուոհայնցի, էջ 38:

⁹⁷ Տես Լաստիվերցի, էջ 3:

⁹⁸ Ուոհայնցի, էջ 38:

* Հնարավոր է նաև, որ Դավիթը հրաժարվել էր Տայքը կայսրությանը բողոքելու իր կտակից և իր համար նոր ժառանգ ընտրել: Չի բացառվում նաև, որ Դավիթ Կյուրապաղատը նոր կտակ էր կազմել հօգուտ հայոց շահնշահի: Այս վարկածի օգտին է խոսում ոչ միայն Տայքի և Հայոց տիրակալների լավ փոխհարաբերությունները, այլ նաև իր գահակալման վերջում «Պղնձե քաղաքի» պատմությունն արաբերենից հայերեն թարգմանելու փորձը: Իրերի նման դասավորության պայմաններում վտանգվում էին նաև Բագրատ III-ի շահերը: Նա Փոկասի ապստամբության ժամանակ գործարքի էր գնացել Վասիլ II-ի հետ, որի հետևանքով արդեն տուժել էր՝ զրկվելով Կյուրապաղատի ժառանգը լինելու մենաշնորհից: Հետևաբար Բագրատը չէր ցանկանա զրկվել Տայքից իր «պատուրը» ստանալու վերջին հնարավորությունից, որն անմիջականորեն կապված էր Տայքը Բյուզանդիային անցնելու հետ:

⁹⁹ Հ. Բարթիկյանի կարծիքով ևս Դավիթ Կյուրապաղատի մահն արագացվել էր բյուզանդացիների կողմից, որոնք շտապում էին տիրանալ Տայքին: Տես Բարթիկյան Հ., Հայաստանի նվաճումը Բյուզանդական կայսրության կողմից, ՊԲՀ, 1970, № 2, էջ 81-92:

¹⁰⁰ Сумбат Давитис-дзе, История и повествование о Багратионах, перевод, введение и примечание М. Лордкипанидзе, Тб., 1979, с. 57, Ասողիկ, էջ 270:

բուլթները, սակայն, քանի որ Հնարավոր չէ հստակորեն սահմանա-
գծել Կյուրապաղատի տիրույթները, հետևաբար անհնար է նաև որո-
շել Գուրգենին զիջած տարածքների չափը¹⁰¹: Հայտնի է, որ Գուրգե-
նի մահից հետո դրանք անցնելու էին Բագրատին, իսկ վերջինիս մա-
հից հետո՝ վերադարձվելու էին Բյուզանդիային: Ըստ Ն. Աղոնցի՝
Գուրգենը ստացավ Տայքի մեծ մասը¹⁰², որը 1008 թ. նրա մահից հե-
տո՝ որպես Հուլային պարզև, հանձնվեց Բագրատ III-ին:

Դավիթ Կյուրապաղատի տիրույթների բաժանման ժամանակ,
սկզբնադրյունների հաղորդմամբ, կայսրին չնեղկայացավ Գագիկ I-ը:
Հայոց թագավորը կայսրին ներկայանալը փոքրագույն էր համա-
րում: Իսկ թե ի՞նչն էր Գագիկ I-ի համար նվաստացուցիչ՝ Վասիլ II-ի
մոտ ղնալը, թե «կյուրապաղատ» կամ «մաղիստրոս» տիտղոսներով
«մեծարվելը», որը սիրով ընդունվեց Բագրատ III-ի, Գուրգենի և մի
քանի հայ մեծամեծների կողմից, այդ մասին մեզ տեղեկություններ
չեն հասել: Հայտնի է նաև, որ 1001 թ. Հայոց շահնշահը զբաղված էր
Տաշիր-Չորագետի թաղավոր Դավիթ Անհողինի ելույթի ճնշմամբ:

Կյուրապաղատության տիրույթների բռնագավթումը մեծ ազդե-
ցություն ունեցավ Այսրկովկասի ճակատագրի վրա, քանի որ Դավիթ
Կյուրապաղատի և Գագիկ I-ի դաշինքը միակ կենսունակ ուժն էր,
որ կարող էր պայքարել Հարավարևմտյան Հայաստանի և Ատրպա-
տականի ամիրայությունների դեմ, ինչպես նաև դիմագրավել Բյուզ-
անդիայի ծավալապաշտական քաղաքականությունը:

1008 թ. Գուրգենի մահից հետո Տայքը, ինչպես և Դավիթ Կյու-
րապաղատի մյուս տիրույթները, պայմանավորվածության համա-
ձայն, անցնում են Բագրատ III-ին: 1014 թ. վերջինիս մահից հետո
Վասիլ II-ը պահանջում է Բագրատի որդի Գիորգի I-ից վերադարձ-
նել իր հորը ցմահ օգտագործման տրված տիրույթները: Գիորգին
«իր մանկական հասակով հպարտացած»՝ հակառակ պատասխան է
տալիս, թե ինչ որ իմ հայրն իշխանությունը ունեցել է, դրանից մի
տուն անգամ չեմ տա մեկին¹⁰³: Այս պատասխանը, բնականաբար,

մարտահրավեր էր Վասիլ II-ի համար, սակայն՝ հեռատես կայսրը
չչտածեց արագորեն լուծելու այս հարցը: Պատճառն այն էր, որ
Գիորգի I-ը՝ Հանձին Հայոց շահնշահ Գագիկ I-ի, հզոր դաշնակից
ուներ, որի հետ կապված էր նաև ազդակցական կապերով: Գագիկ
I-ի հետ բախումից խուսափելը կարևոր պատճառներից մեկն էր, որ
Վասիլ II-ը հետաձգեց Կյուրապաղատի ժառանգությունը տիրանա-
լը: Այսուհանդերձ, Գագիկ I-ի մահից հետո, 1021 թ. կայսրն իր
ուժերը շարժում է Արևելք՝ օրակարգում ունենալով Վասպուրական-
նի և Դավիթ Կյուրապաղատի ժառանգության հարցերը:

Վասիլ II-ը հանգրվանում է Կարնո դաշտում: Գիորգիի մոտ
ուղարկված դեսպանները, որոնք վրաց արքայից հնազանդություն
էին պահանջել, վերադառնում են ձեռնունայն: Ավելին, Գիորգի I-ի
զորքերը կողոպտում և ավերում են Ուղթիքն իր զեղեցիկ դաստա-
կերտներով, սակայն քաղաքի բնակիչներին ֆիզիկական չեն վնա-
սում¹⁰⁴: Ուղթիքից Գիորգի I-ի ուժերը նահանջում են Կոզ, այնտեղից՝
Վանանդ: Կայսրն իր ուժերով հետապնդում է վրաց արքային և
1022 թ. Պաղակացիս (Չլըրը) լճի մոտ և Արշարունիքի Շղփա վայ-
րում ջախջախում նրան: Վրաց արքան հաշտություն է խնդրում,
որի դիմաց նա իր երեք տարեկան որդուն՝ Բագրատին, պատանդ է
տալիս կայսրությանը, Բյուզանդիային զիջում 14 ամրոց և Տայքի,
Ջավախքի, Արդահանի ու Բասենի այն հողերը, որոնք պատկանում
էին Դավիթ Կյուրապաղատին¹⁰⁵:

1022 թ. հաղթական պատերազմից հետո Տայքի տարածքում ձև-
ավորվում է առանձին վարչատարածքային միավոր՝ Իրերիս անու-
նով¹⁰⁶, որը Բյուզանդիայի համար ավելի հեռու զննցող քաղաքա-
կան նպատակներ էր ենթադրում՝ միացնել Վիրքը Բյուզանդական
կայսրությանը: Չի բացառվում նաև, որ Գիորգի I-ին ևս առաջարկ

¹⁰¹ Такайшвили Е., Археологическая экспедиция в южные провинции Грузии 1917 г., Тбилиси, 1952, с. 63.

¹⁰² Տե՛ս Աղոնց Ն., Դավիթ Կյուրապաղատ, ՊԲՀ, 2002, 3 էջ 24:

* Չի բացառվում նաև, որ խուսափելու համար Տայքի հարցում Գագիկ I-ի հնարավոր միջամտությունից, Վասիլ II-ի կողմից ասպարեզ լեռվից երիտասարդ, փառասեր և Հայոց թագավոր դառնալու շատ մեծ ցանկություն ունեցող Դավիթ Անհողինը:

¹⁰³ Տե՛ս Լաստիվերցի, էջ 7:

** Գիորգի I-ի կինը Վասպուրականի Սեմեթերիմ թագավորի և Գագիկ I-ի քրոջ դուստրն էր: Տե՛ս Степаненко В. П., Еще раз о грузинском посольстве в Ани в 1045 г. (к генеологии грузинских и армянских Багратидов и Арцрунидов Васпуракана), Античная древность и средние века, 2003, Вып. 34, էջ 267:

¹⁰⁴ Տե՛ս Լաստիվերցի, էջ 12:

¹⁰⁵ Տե՛ս Летопись Каргли, էջ 63:

¹⁰⁶ Հետազոտողների մի մասի կարծիքով Իրերիս բանակարեմի ձևավորվել էր ավելի վաղ՝ 1001 թ., երբ Դավիթ Կյուրապաղատի ժառանգությանը տիրանալու նպատա-
կով բյուզանդական կայսրը եկել էր Հայաստան: Տե՛ս Арутюнова В., Из истории северовосточных пограничных областей Византийской империи в II-ом веке, ИФЖ, 1972-1, էջ 91-102:

արվեց կտակել Վիրքը Բյուզանդիային: Այդ քայլին, սակայն, վրաց թագավորը՝ չգնաց¹⁰⁷: Այս իրադարձություններից հետո՝ կայսրը Տայքի վրա վերակացուններ է նշանակում, որոնք համաձայն Ա. Լաստիվերցու, դավաւր բաժանում են տուն առ տուն, դյուղ առ գյուղ և ազարակ առ ազարակ¹⁰⁸:

Գաղիկ I-ի մահից հետո սկսված դաճակալական պայքարի ժամանակ Գիորգի I-ը հանդես եկավ թագաժառանգ Հովհաննես-Սմբատի շահերի պաշտպանությունը: Այդ պայքարը համընկավ Տայքի համար Վրաստանի և Բյուզանդիայի միջև սկսված պատերազմի հետ, և Հովհաննես-Սմբատ թագավորը՝ ի փոխհատուցումն Գիորգի I-ի ցուցաբերած աջակցության, իր օգնությունն ուղարկեց վրաց արքային, որը կործանարար հետևանքներ թողեց Անիի Բագրատունյաց թագավորության համար¹⁰⁹:

Վրաստանի պարտությունը վճույց նաև Անիի Բագրատունյաց թագավորության ճակատագիրը, քանի որ Գիորգի թագավորի դաշնակից Հովհաննես-Սմբատն ստիպված էր Անին կտակել Բյուզանդիային: Հայոց թագավորի ներկայացուցիչ կաթողիկոս Պետրոս Գետադարձը Տրապիզոնում գտնվող Վասիլ II-ին ներկայացավ 1021 թ. դեկտեմբերի վերջերին: Բանակցություններն արագ անցան կայսեր համար ցանկալի հունով: Ընդունվում էր այն նույն սկզբունքը, որ մի ժամանակ Գավիթ Կյուրապաղատն էր գործադրել և որով էլ Վասիլ II-ն սկիզբ էր դրել իր արևելյան քաղաքականությանը: Անիի դիմաց Հովհաննես-Սմբատը մագիստրոսի կոչում և Անիի ու Մեծ Հայքի ցմահ արքունտոսի պաշտոն էր ստանում¹¹⁰: Համաձայնության այս կետը պատճառաբանվում էր նրանով, որ Հայոց թագավորն

¹⁰⁷ Օրինակներ ներկայից՝ Ադրբեջանի հանրապետությունը պատմական Ատրապատականի հարևանությամբ, Կարելո-Ֆիննական հանրապետությունը՝ Ֆինլանդիայի կողքին, Նախկին Հարավսլավական Մակեդոնիայի հանրապետությունը հունական Մակեդոնիա ներկայումսի հարևանությամբ: Տե՛ս Бартикан Р., О царском кураторе "МАНЗКЕРТ КАИ ЕСМ ІВНРІАՏ" Михаиле. В связи с восточной политикой Василия II (976–1025 гг.). ՊԲՀ, 2000, № 1, էջ 144:

¹⁰⁸ Տե՛ս Պատմություն Արիստակեսայ Վարդապետի Լաստիվերցույ, էջ 26:

¹⁰⁹ Лорджанидзе М. А., 624, աշխ., էջ 79:

¹¹⁰ Степаненко В. П., Из истории византийской провинциальной администрации, Античная древность и средние века, 2008. Вып. 38, с. 99, Юзбашян К. Р. Армянские государства эпохи Багратидов и Византия (IX–XI вв.). М., 1988, с. 158–160.

անժառանգ էր, ուստի նա իր հոժար կամքով ժառանգ էր կարգում կայսրին¹¹¹:

Այսպիսով, Վասիլ II-ի շուրջ հիսունամյա հետևողական և հեռատես քաղաքականության հետևանքով կայսրությունն առանց լուրջ ջանքեր գործադրելու ոչ միայն կարողացավ տիրանալ Գավիթ Կյուրապաղատի ժառանգությունը, այլ նաև հող ստեղծեց հետագայում Բագրատունյաց Հայաստանի մայրաքաղաք Անին ևս կայսրությանը միացնելու համար, որը և հաջողությամբ իրագործվեց 1045 թ.:

Բյուզանդական արքունիքը Տայքում վարում էր տարիների ընթացքում իրեն արդարացրած քաղաքականություն, այն է՝ գրաված մասնի սահմանակից թագավորություններում պայքարը խոչոր կալվածատիրություն դեմ և կրոնական ու ազգային միաձուլումը¹¹²: Այս ծրագրի իրագործման ճանապարհին Տայքի՝ բյուզանդական տիրապետությունից դժգոհ ազնվականության համար գոյատևման համար խիստ ծանր պայմաններ ստեղծվեցին: Դժվար չէ կռահել, որ երկրի բնական տերերի չեզոքացման նպատակով էր կիրառվում ազնվականության տեղափոխումների այն քաղաքականությունը, որն ի սկզբանե կիրառվելով Տայքում, իր շարունակությունը գտավ նաև Հայաստանի մյուս շրջաններում՝ հետզհետե ստանալով խիստ մեծ ծավալներ¹¹³:

1047–1048 թթ. սկսվում են սելջուկյան արշավանքները Հայաստան: Բյուզանդական արքունիքը ի վիճակի չէր պաշտպանելու կայսրության արևելյան սահմանները, ուստի և Հայաստանը ենթարկվում է սարսափելի ավերածությունների: 1064 թ. սուլթան Ալփ-Արսլանը, ի թիվս այլոց, ասպատակում է նաև ամբողջ Հյուսիսային Հայաստանը՝ Գուգարքի գավառները, ինչպես նաև Տայքը: Սելջուկյան հրոսակները այստեղ ասպատակում են մինչև Փանագլեթը ընկած տարածքները, ապա կողոպտելով և գերելով հասնում մինչև Բաբերդ¹¹⁴:

1071 թ. Մանազկերտի ճակատամարտում թուրք-սելջուկներից պարտություն կրելով՝ Բյուզանդիան ստիպված եղավ ի թիվս այլոց,

¹¹¹ Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, հ. 2, էջ 673–674:

¹¹² Տե՛ս Մանանդյան Հ., Երկեր, հ. Բ, Եր., 1978, էջ 611:

¹¹³ Տե՛ս Մանանդյան Հ., Բնական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Գ, Եր., 1952, էջ 17:

¹¹⁴ Տե՛ս Летопись Карти, էջ 72, Պատմություն Արիստակեսայ Վարդապետի Լաստիվերցույ, էջ 97:

նրանց գիջկ նաև Տայքը: Հետագա տասնամյակների ընթացքում Տայքն անցնում էր մերթ զորոացած վրացական թագավորության, մերթ՝ թուրք-սելջուկների ձեռքը: Այսպես, վրաց Դավիթ IV Շինարար թագավորի օրոք (1089–1125 թթ.) 1116 թ. Տայքում արյունահեղ բախումներ տեղի ունեցան Հայ-վրացական ուժերի և թուրք-սելջուկների միջև, որոնք այնպես էլ չհաջողվեցին դաշնակիցների Հայթիանակով, իսկ թուրքերը Հայաստանին մինչև Բասեն: 1125 թ. Հունիսին Դավիթ Շինարարի ուժերն ազատագրում են թուրքերից Զալախքը, Կողը, Բասենը և Սպինը, Հրի ենթարկում Ուլթիքը (Օլթի)¹¹⁵: Ամենայն հավանականությամբ Ուլթիքը թուրք-սելջուկների կարևորագույն Հենակետերից էր, և այդ Հանգամանքով է կարելի բացատրել նրա հրկիզվելը: Այսուհանդերձ, Դավիթ թագավորի մահից շատ չանցած՝ թուրքերը վերահաստատվում են իրենց նախկին դիրքերում: Ամբողջ XII դ. ընթացքում Տայքը մի քանի անգամ ձեռքից ձեռք է անցնում և միայն XII դ. վերջին և XIII դ. սկզբին սելջուկների նկատմամբ Զաքարե և Իվանե Զաքարյանների տարած Հայթիանակներից Հետո այն անցնում է վրացական թագավորությանը:

XII–XIII դարերում շարունակվում են վրացական էթնիկական նոր խմբերի ներթափանցումները Տայք, որոնք, սակայն, տարածաշրջանի էթնոֆոլիորագրական պատկերի վրա էական ազդեցություն չեն թողնում: Այդ շրջանին վերաբերող Հայ-վրացական ռազմաքաղաքական մերձեցումը չի խանգարում Իվանե Զաքարյանին Հրաժարվել առաքելականությունից և վրաց Իոանե կաթողիկոսի կողմից քաղկեդոնական ծեսով մկրտվել: Եվ ընդհանրապես, մինչև Հայոց և վրաց միացյալ բանակն ազատագրում էր Հայաստանի գավառները և միացնում վրաց տերությունը, վրաց Հոգևորականությունը գուգահեռաբար աշխուժացնում էր իր քարոզչական գործունեությունը և բազմապատկում մարդօրոսությունը¹¹⁶:

XIII դ. 20-ական թվականներից սկսած՝ Տայքը ենթարկվեց նախ միջինասիական տիրակալ Զալախեդդինի, Հետո նաև՝ մոնղոլական ասպատակություններին: Ինչպես երևում է վրացական աղբյուրներից, մոնղոլական զորավար Զարմաղանի զորքերը ասպատակել էին նաև Հետևյալ Հայկական շրջանները՝ Զալախքը, Շեշատը, Կղարջքը, Սամցխեն և Արղահանը, ուր ավերածությունների ենթարկվելով

¹¹⁵ Տե՛ս Վրաց աղբյուրները, հ. 4, էջ 42:

¹¹⁶ Տե՛ս Հակոբյան Պ., Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 2003, էջ 85:

երկիրը, կոտորել էին ու գերել ընակիչներին¹¹⁷: Մոնղոլների կողմից նվաճվելուց Հետո Հայաստանի և Վրաստանի երկրամասերը բաժանվում են երկու մասի՝ Գյուրջիստան և Մեծ Արմենիա: Առաջինն իր մեջ ընդգրկում էր նաև Հայաստանի Հյուսիս-արևելյան շրջանը, այսինքն այն մասերը, որոնք Թամար թագուհու օրոք (1184–1207 թթ.) գտնվում էին վրացական տիրապետության ներքո¹¹⁸:

1266 թ. Թմկաբերդի տեր Սարգիս Զաղեցին, օգտվելով վրաց թագավորի և մոնղոլների հակամարտությունից, կարողացավ Հիմնադրել Սամցխեի ընդարձակ իշխանությունը, որն իր մեջ ընդգրկեց Տաշիրից մինչև Էրզրում ընկած տարածքը¹¹⁹: Ի թիվս այլոց՝ Տայքը ևս ընդգրկվեց այս իշխանության կազմի մեջ, որի կենտրոնն էր Ախալցխան: Սամցխեի իշխանը կրում էր աթաբեկի տիտղոսը, որի համար իշխանությունը Հայտնի էր նաև Սաաթաբազո (վրացերեն՝ աթաբեկի երկիր) անունով:

Սամցխեի իշխանության ստեղծման ժամանակաշրջանին է վերաբերում Կիրակոս Գանձակեցու վկայությունը, որը կարևոր է աթաբեկության պատմության առաջին օրերի ուսումնասիրման համար. «Դեպ եղև, զի Արղունն զորոք բազմօք էր ի կողմանս Վրաց, ընդ նմա էր և Զաքարէ: Եվ զաղտ յԱրղունէն և այլ զորացն գնաց Զաքարէ ի տեսութիւն կնօջ իւրոյ, որ էր առ Հօր իւրում Սարգսի՝ իշխանին Ուխտեաց, որ ապստամբ էր ընդ թագաւորին՝ վրաց Դաւթի»¹²⁰: Հուշավուն իմանալով Զաքարեի այս քայլի մասին՝ հրամայում է սպանել նրան. «...տարեալ թաղեցին գնա ի Քորայրն, զոր առ կին նորա ի Հայոց»¹²¹: Այս իրադարձություններից Հետո մոնղոլները զաղարեցին Զաքարյան տոհմի ներկայացուցիչների նկատմամբ փտաճություն տածել¹²²:

Սարգիս Զաղեցուն իշխանության ղեկին Հաջորդում է նրա որդի Բեքա I-ը (1285–1306 թթ.): Վերջինիս Հաջորդի՝ Սարգիս II-ի օրոք (1306–1344 թթ.) Սամցխեի աթաբեկությունը Հզորացավ, որի վառ ապացույցը վրաց թագավոր Գիորգի V Պայծառի (1318–1346 թթ.)

¹¹⁷ Տե՛ս Վրաց աղբյուրները, հ. Բ, էջ 54:

¹¹⁸ Տե՛ս Փափազյան Ա., Թուրքական վավերագրերը Հայաստանի և հայերի մասին, XVI–XIX դարեր, Եր., 2003, էջ 127:

¹¹⁹ Տե՛ս Մելքոնյան Ա., Զալախքը XIX դ. և XX դ. I քառորդին, Եր., էջ 56:

¹²⁰ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Եր., 1961, էջ 393:

¹²¹ Նույն տեղում:

¹²² Տե՛ս Մուրադյան Պ., Հայաստանի վրացերեն արձանագրությունները, էջ 232:

կողմից Սարգիս II-ին աթաբեկի ժառանգական տիրոջ շնորհումն էր: Բացի այդ, Հենց XIV դ. սկիզբն է դառնում այն բեկումնային ժամանակաշրջանը, երբ աթաբեկությունը ձերբազատվում է մոնղոլական գերիշխանությունից: Հետագա տարիներին աթաբեկերը ստիպված էին իրենց անկախությունը պաշտպանելու համար պայքարել ինչպես կարա-կոյունլու թուրքմենական ցեղերի, այնպես էլ Վրաստանի դեմ, որոնք անընդհատ փորձեր էին ձեռնարկում Սամցխեի իշխանությունն իրենց ազդեցություն ունեցնող քրիստոնյաների կողմից: Տարբեր նվաճողների արշավանքների հետևանքով բնակչության մի մասը կոտորվում է, շատերն արտագաղթում: 1341 թ. Տայքի Վարդնշեն գյուղում զրված ավետարանի գրիչը վկայում է. «Եվ եղև փախուսա ամենայն գաւառին, նա ևս քաղաքին միահաճուս՝ քրիստոնէից և իսմայելաց և ամենայն բնակչացն ի ձեռոց Բ. իշխանաց, որոց ոչ է պարտ գրել զանուն նոցա: Եվ ամենայն ոք փախաւ և չուեցին յերկիր աւաւար»¹²³: Այդուհանդերձ տարաշառքանը շարունակում էր պահպանել իր էթնոկրոնական դիմագիծը: Մահմեդական բնակչությունը նախկինի նման կազմում էր չնչին փոքրամասնություն¹²⁴:

Հ. Տայքանի կարծիքով, Սամցխեի իշխանության կազմի մեջ գտնվող հայկական հողերը համեմատաբար ավելի լավ վիճակի մեջ էին, քան հայկական մյուս տարածքները, քանի որ գտնվում էին քրիստոնյա աթաբեկների ենթակայության ներքո: Չնայած Տայքոյ ամենանշանավոր եկեղեցիները (հատկապես Բանակը, Իշխանը, Օշկը և այլն) քաղկեդոնական եկեղեցուն էին պատկանում և հայ ազգաբնակչության մի մասը հայտնվել էր վրացական եկեղեցու հովանու ներքո, այսուհանդերձ հայությունը չէր մոռացել իր լեզուն, «մինչև որ ժէ դարուն մահմեդականացումն հիմ դրաւ քրիստոնէական ամէն հետքի հետ՝ նաև լեզուի անհետացման»¹²⁵:

Սամցխեի իշխանության տարիներին երկրամասում չհաստատվեց կայուն իրավիճակ: XV դ. սկզբից Տայքը, ինչպես և ամբողջ աթաբեկությունը, հայտնվում են զանազան նվաճողների տեսադաշտում: Լենկ թեմուրի, նրան հաջորդած թեմուրյանների և թուրքմենական

ցեղերի բախումներն ընդգրկեցին նաև Հայաստանի հյուսիսարևմտյան շրջանները: Այդ բախումներն ուղեկցվում էին հայ ժողովրդի համար անասելի ողբերգությամբ, սարսափելի ավերածություններով և թալանով¹²⁶: 1404 թ. Իսպանիայի թագավորի դեսպան Կալիխոն, անցնելով Սպերի և Թորթոսի վրայով, նկարագրել է այնտեղ տիրող իրավիճակը, համաձայն որի տարածաշրջանում ժողովրդագրական նոր տեղաշարժեր էին տեղի ունեցել. «...բնակչությունն ստվար, մեծամասնությունը՝ նախապես եղել են հայեր, բայց վերջին տարիներին շատ քրիստոնյաներ տեղահանվել են և իսլամներ են եկել հաստատվել նրանց տեղը»¹²⁷:

XVI դ. սկզբին սկսվում են օսմանյան թուրքերի և Սեֆյան պարսիկների ասպատակությունները, որոնց արդյունքում նկատվում են ժողովրդագրական նոր տեղաշարժեր:

Այսպիսով, Հին և միջնադարյան աղբյուրների տեղեկությունների համադրությամբ պարզորոշ երևում է, որ հնագույն ժամանակներից Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևմտյան մասը կազմող Տայք աշխարհը, ի թիվս հայկական այլ երկրամասերի, ապրել է բավականին բուռն ու բովանդակալից կյանքով: Տայքը և տայցիները հայ ժողովրդի կազմավորման և հայկական պետականության կայացման մաս են կազմել: Այնտեղ իրենց գործունեությունն էին ծավալել Մամիկոնյաններն ու Դիմաքսյանները: Ավելին, Մամիկոնյանները գլխավոր դեր էին ստանձնել օտար գավթիների դեմ մղվող պայքարում, իսկ Տայքը շատ հաճախ դառնում էր հայկական զինված ուժերի ապաստարանը: VIII դ. վերջին Տայքը հայտնվում էր դավանաբանական երկրնտրանքի առջև: Հակաքաղկեդոնականների հաղթանակն այնտեղ ճանապարհ էր բացում հայերի տիրապետության համար, իսկ քաղկեդոնականների հաղթանակը՝ վրացիների¹²⁸: Այսուհանդերձ, մեծամասամբ հարելով քաղկեդոնականությանը՝ տայցի հայը չի աստիճնալից վրացական էթնոսին: Ընդհակառակը, Տայքում առկա վրացական փոքրամասնությունն առօրյալում ընդօրինակել է հայերենը՝ հայերին փոխանցելով վրացերենը միայն ու միայն իբրև եկեղեցական ժամերգությունների լեզու: Քաղկեդո-

¹²³ Ժ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկյանը. Եր., 1950, էջ 327:

¹²⁴ Տե՛ս Մելքոնյան Ա., Չավախքը XIX դ. և XX դ. I քառորդին, էջ 62:

¹²⁵ Տե՛ս Տաշեան Հ., Տայք, դրացիք և Խոտորջուր, ՀԱ, 1971, 1-3, էջ 35:

¹²⁶ Տե՛ս Կիրակոսյան Գ., Հայաստանը Լանկ-Թամուրի և թուրքմեն ցեղերի արշավանքների շրջանում, Եր., 1997, էջ 72:

¹²⁷ Տե՛ս Клянико Р. Г., Дневник путешествия в Самарканд ко двору Тимура (1403-1406); пер. со старосл., предисловие и комментарии И. С. Марковой, М., 1990, էջ 159-160.

¹²⁸ Տե՛ս Март Н., Аркаун..., էջ 6:

նիկ հայերի կողմից իրենց իսկ համար կառուցված հուշարձանները
չեն կարող որակվել իբրև վրաց ազգի ձեռքերբուսներ, իսկ Տայքի
պատմության ուսումնասիրությունը Վրաստանի պատմության
համատեքստում գիտականորեն սխալ է և անընդունելի:

բ) *Տայքն Օսմանյան կայսրության վարչաքաղաքական համա-
կարգում (XVI—XIX դարեր)*

XIV դ. ընթացքում կատարելով մի շարք նվաճումներ Փոքր Ասի-
այի ծովափնյա շրջաններում և Բալկաններում՝ նորաստեղծ Օսման-
յան կայսրությունն ակտիվացրեց իր զավթողական քաղաքականու-
թյունը նաև Արևելքում և 1473 թ. Երզնկայի և ապա Դերջանի ճա-
կատամարտերում հաղթելով ահ-կոյունլու Ուղուն-Հասանի զորքե-
րին՝ ներխուժեց Հայաստանի արևմտյան գավառներ: XVI դ. սկզբից
Հայաստանի և Անգրեկոկասի համար կատաղի մրցակցություն
սկսվեց Օսմանյան կայսրության և Սեֆյան Պարսկաստանի միջև¹²⁹:
Թուլացած և մասնատված Վրաստանի թագավորները պարսկա-
թուրքական վտանգի դեմ ընդհանուր ճակատ կազմելու փոխարեն
պայքար ծավալեցին Սամցխեի աթաբեկության հյուսիսարևելյան
գավառներին տիրելու համար: 1535 թ. Սամցխեի աթաբեկի զորքերը
Ջավախքի Մուրջախեթ գյուղի մոտ պարտություն կրեցին Իմերեթի
Բագրատ III և Քարթլիի Լուարսաբ I թագավորների միացյալ ուժերի
կողմից, որոնց օժանդակում էր նաև Գուրիայի տիրակալը: Աթաբե-
կության կենտրոն Ախալցխան և նրա շրջակա տարածքները ժամա-
նակավորապես անցան Իմերեթիին¹³⁰: 1545 թ. տարածաշրջանում
հայտնվում են թուրքերը: Հպատակեցնելով երկրամասը՝ նրանք
իշխանությունը հանձնում են Քայխուրոյին, որը հավանաբար սե-
րում էր տեղի իշխանական տներից: 1547 թ. Քայխուրոն ապստամ-
բում է թուրքերի դեմ և նրանց թշնամի Սեֆյան Պարսկաստանի
օգնությամբ վերականգնում Սամցխեի անկախությունը: 1548 թ.
Քարթլիի Լուարսաբ I թագավորն արշավում է Սամցխեի վրա և
Քարթլիին է միացնում Ջավախքը, Կոլան և Արդահանը: Քայխու-
րոյին օգնության է հասնում պարսից շահ Թահմասպը, որն ստիպում

է Քարթլիի թագավորին նահանջել: 1549 թ. սկսվում է Օսմանյան
բանակի արշավանքը Սամցխե: Մի քանի շաբաթվա ընթացքում
թուրքերը գրավում են շուրջ 20 բերդեր¹³¹: Նախ, մի քանի օր տևած
պաշարումից հետո նրանք տիրում են Թուրթումի բերդին, այնու-
հետև իրար հետևից թուրքերը հպատակեցնում են Ակչա կալեն,
Քնիկերդը, ինչպես նաև Բերդազրակի բերդը¹³²: Չարգանջելով
իրենց հաջողությունները՝ 1552 թ. թուրքերը կարողանում են տիրել
նաև Արտանուջին և Արդահանին:

1555 թ. Ամասիայում կնքված պարսկա-թուրքական հաշտու-
թյան առաջին պայմանագրի համաձայն՝ Սամցխեի աթաբեկությունն
անցնում է Օսմանյան կայսրությանը և միայն աթաբեկության մի
մասը կազմող Ջավախքը՝ Սեֆյան Պարսկաստանին:

1578 թ. թուրք-պարսկական պատերազմը վերսկսվեց: Թուրքերը
Լալա Մուստաֆա փաշայի գլխավորությամբ կրկին ներխուժում են
Սամցխե: Չլիբը լճի մոտ տեղի ունեցած արյունալի ճակատամար-
տում նրանք պարտության են մատնում պարսկական ուժերին և
ապա ամբողջությամբ տիրում Սամցխեի իշխանապետությանը.
«Թուրին Ռ-Թ (1590) էր Արդուում քաղաք այլազգի որդիքն ի պատիւ
կոչեցին զքրիստոնեայ... և մեծ սուլդ եղև քաղաքին, քանզի զԹուր-
դումու ձորերն տիրեցին...»¹³³: Օսմանցիները ձեռք են ընկում նաև
Թիֆլիսն ու Գանձակը: Նոր գահ բարձրացած շահ Աբասն ստիպված
էր 1590 թ. կնքել թուրքերի հետ Պարսկաստանի համար խիստ
աննպաստ մի պայմանագիր, որով թուրքերին էր զիջում Վրաստան-
ը, Հայաստանը և Ատրպատականի մի մասը՝ Թավրիզ քաղաքով:
Հետագա իրադարձությունների արդյունքում պարսիկներին հաջող-
վում է թուրքերից հեռ խլել ինչպես Ատրպատականը, այնպես էլ
Վրաստանի և Հայաստանի արևելյան շրջանները, սակայն Տայքն ու
հարակից շրջանները մնում են Օսմանյան կայսրության կազմի մեջ:
1639 թ. Կասրե-Շիրինի պայմանագիրն ամրագրում է տարածքային
այսպիսի բաժանումը թուրքիայի և Պարսկաստանի միջև, որը հիմ-
նականում պահպանվում է հետագա հարյուրամյակների ընթաց-
քում:

¹²⁹ Տե՛ս Անայան Հ., Թուրքական տիրապետությունը Հայաստանում XVII դարում,
«Տեղեկագիր», ՀՍՍՌ ԳՍ Իրատ., Եր., 1951, № 5, էջ 51:

¹³⁰ Տե՛ս Մելքոնյան Ա., Ջավախքը XIX դ. և XX դ. I րատորոյին, էջ 62:

¹³¹ Տե՛ս Տաշեան Հ., Տայք, դրացիք և Խոտորոյուր, ՀԱ, 1971, 1-3, էջ 36:

¹³² Տե՛ս Թուրքական աղբյուրները, հ. Ա, էջ 31:

¹³³ Գլխան Հայոց պատմութեան, կազմնց Գիտ քահանայ Աղանանց, գիրք Ժ,
Թիֆլիս, 1912, էջ 102:

Արևմտյան Հայաստանում իրենց տիրապետությունը հաստատելու և հետ մեկտեղ օսմանցիներն անմիջապես սկսում են տարածաշրջանի յուրացումը, որի ամենագլխավոր նախապայմանն էր տեղի բնակչության և իշխանավորների մահմեդականացումը: Արդեն XVII դ. սկզբին սկսում են կրոնափոխ լինել մեսիսերը¹³⁴: 1625 թ. սպանվում է Սամցրեի վերջին քրիստոնյա աթարեկը՝ Մանուշար III-ը (1614–1625): Նրան հաջորդած աթարեկ Բեքա III-ն իր իշխանությունը պահպանելու համար ստիպված էր մահմեդականություն ընդունել (1626 թ.)՝ վերջնելով իր համար Սաֆար փաշա անունը¹³⁵: Վրացագետների մեծ մասի կարծիքով Սաֆար փաշայից սկսած մինչև Յուսուֆ փաշայի մահը՝ 1744 թ., Սամցրեի աթարեկության տարածքում իշխանությունը գտնվել է վրացական ծագում ունեցող, մահմեդականացած Ջաղեյի (Ջաղեցի) տոհմի ձեռքին և իշխանությունը փոխանցվել է ժառանգաբար, իսկ 1744 թ.-ից հետո կառավարումն անցել է թուրքական զանազան տոհմերի ներկայացուցիչներին¹³⁶:

Խնդրո առարկա հիմնահարցի համակողմանի լուսարանման նպատակով այժմ փորձենք ներկայացնել Օսմանյան կայսրության սոցիալ-քաղաքական վիճակը և այդ հենքի վրա քննության առնել Տայքի և հարակից շրջանների վարչաքաղաքական պատկերը:

XVII դ. սկզբին Օսմանյան կայսրությունը մի հսկայածավալ տերություն էր: Նրա կազմի մեջ էին ընդգրկված Փոքր Ասիա թերակղզին, Սև ծովի առափնյա շրջանները, Բալկանյան թերակղզին, Իրաքը, Սիրիան, Պաղեստինը, Հյուսիսային Աֆրիկան, Արևմտյան Հայաստանը և այլ շրջաններ:

XVII դ. կեսերից սկսած Օսմանյան կայսրությունն այլևս ի վիճակի չէր շարունակելու «փառավոր» պատերազմների պատմությունը: Նա սկսել էր վայրէջք ապրել, որը հետևանք էր կայսրության ծանր սոցիալ-տնտեսական կացության: Ռազմական հարածուն ծախսերը ծածկելու նպատակով կայսրությունն անցել էր դրամի արժեզրկման և հարկային ծանր քաղաքականությանը¹³⁷: Տնտեսական շահույթի

նվազումը և երկարատև պատերազմները կայսրությանը կանգնեցնում են նաև տարածքային կորուստների իրողության առջև: Պատահական է, որ չուտով Թուրքիայից անջատվում են մի շարք երկրներ¹³⁸:

Օսմանյան կայսրության ենթակա երկրներն ու ժողովուրդները գտնվում էին զարգացման տարբեր մակարդակների վրա թե՛ քաղաքական, թե՛ սոցիալ-տնտեսական, և թե՛ մշակութային ասպարեզներում: Իր տարածքները պահպանելու համար Օսմանյան կայսրությունը դիտարկում էր մի միջոց. այն է՝ ռազմական ուժը: Լեոն գրում է. «Եթե հռոմեացիները ձգտում էին ծաղկեցնել իրենց նվաճած հեռավոր երկրները, սիրաշահել տեղական ազգաբնակչությանը՝ տալով նրանց հարմարություններ զարգանալու իբրև առանձին ժողովուրդ և զարգացնելու իր արդյունաբերությունն ու առևտուրը, ապա թուրքերն ընդհակառակը՝ պետական իմաստություն էին համարում անմարդացնել, քարուքանդ անել դավառը»¹³⁹: Նվաճված երկրամասերի հարստությունն ու մարդաշատ լինելը վտանգավոր էին համարվում մի քանի պատճառներով: Առաջին հերթին դրանք կարող էին ռեսուրս դառնալ տեղական իշխանավորների համար, եթե նրանք որոշեին ապստամբություն բարձրացնել կենտրոնական կառավարության դեմ: Մյուս կողմից, ձեռնտու չէր նաև այլ երկրների դեմ պատերազմների ժամանակ, եթե թշնամին ներխուժեր կայսրության տարածք և այնտեղ հայտնաբերեր հարուստ պաշարներ¹⁴⁰:

Երկրի ներսում ևս առկա էր դժգոհությունը: Երկարատև պատերազմներից հոգնած զինվորականները հետզհետե հեռանում էին զինվորական գործից և դառնում հողատերեր: Նրանք հողերն ստանում էին կամ պետությունից, կամ հողերը դասից, քանի որ Թուրքիայում բոլոր հողերը հայտարարված էին հենց այս երկու դասերի սեփականությունը: Այդ հողերն օգտագործելու համար օգտագործողները պարտավոր էին հարկ վճարել կամ զինվորական ծառայություն կատարել:

Երկրի ընդհանուր ճգնաժամի պայմաններում Օսմանյան կայսրության ծայրամասային շրջանների կառավարիչները, քրդական ցեղերը՝ աշիրեթները, սկսեցին հրաժարվել կենտրոնական իշխան

¹³⁴ Տե՛ս Տաշևան Հ., Տայք, դրացիք և խոսրոքուր, ՀԱ, 1971, 1–3, էջ 37:

¹³⁵ Տե՛ս Центральный государственный исторический архив Грузии (այսուհետև՝ ЦГАГ), ф. 1438, оп. 1, л. 408, л. 4.

¹³⁶ Տե՛ս Մելքոնյան Ա., Չավախքը XIX դ. և XX դ. I քառորդին, էջ 63–64:

¹³⁷ Տե՛ս Գառապարյան Ա., Օսմանյան կայսրության սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը ըստ Երեմիա Չելեբի Քյոմուրճյանի (XVII դար), ԳԱԱ Շիրակի

հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 11, Գյումրի, 2008, էջ 109:

¹³⁸ Տե՛ս Մելքոնյան Ա., Չավախքը XIX դ. և XX դ. I քառորդին, էջ 65:

¹³⁹ Լեո, Հայոց պատմություն, հ. 3, գիրք Ա, Եր., 1969, էջ 57:

¹⁴⁰ Նույն տեղում:

նության ենթակայությունից և ձեռք բերեցին կիսանկախություն: Նրանց հպատակեցնելու կենտրոնական կառավարութեան ջանքերը մեծամասամբ ապարդյուն էին անցնում: Նման իրավիճակ էր նաև Արևմտյան Հայաստանում, որը փաստորեն դարձել էր մի կողմից՝ կառավարական գործերի ու քրեների, մյուս կողմից՝ միջնդային բախումների թափարարում¹⁴¹:

Թուրքահայաստակ քրիստոնյաները՝ հայերը, հույները, ասորիները, բուլղարները և այլք, գտնվում էին մարդկային տարրական իրավունքների անտեսման, ազգային հալածանքների, արժանապատվության ռունահարման, ֆիզիկական բնաջնջման մշտական վտանգի պայմաններում: Արևմտյան Հայաստանում հայերը պարտավոր էին երկարատև ձմռան ընթացքում սննդով և կացարանով ապահովել ինչպես քրդերին, այնպես էլ նրանց մեծաքանակ հոտերին: Ուշագրավ է, որ թուրքական պատմադրության մեջ գերակա է այն բացահայտ կեղծ և շինծու տեսակետը, համաձայն որի «Օսմանյան կայսրության հպատակ բոլոր հայերը ապրում էին խաղաղ և ապահով կյանքով՝ մեծամասամբ զբաղված լինելով առևտրի և արդյունաբերության ոլորտում, իսկ գինձորական ծառայությունից ազատված լինելը հնարավորություն էր տալիս նրանց ցուցաբերելու շարունակական զարգացում բոլոր բնագավառներում»¹⁴²:

Արևմտյան Հայաստանը, ինչպես և ամբողջ Օսմանյան կայսրությունը, տրոհվում էր վարչատարածքային մեծ և փոքր միավորների: Խոշորագույն միավորները կոչվում էին էյալեթներ (վիլայեթներ, հայկական աղբյուրներում՝ նահանգներ), որոնց գլխավորում էին սուլթանի նշանակած կառավարիչները՝ բեյլերբեյիները կամ միրմիրանները (հետագայում նաև վալիներ)¹⁴³: էյալեթները բաժանվում էին լիվաների կամ սանջակների (գավառ), որոնց կառավարիչները կոչվում էին սանջակբեյեր կամ միրլիվաներ: Սրանք ևս նշանակվում էին սուլթանի կողմից, սակայն նրա հետ հարաբերությունները իրականացնում էին նահանգապետների միջոցով¹⁴⁴: Սան-

ջակները բաժանվում էին կազանների (գավառակ), որոնք ղեկավարվում էին կազինների կողմից: Կազաններն իրենց հերթին բաժանված էին նահիենների, որոնց գլխին կանգնած էին կայմակամները կամ մյուղիրները (գեղջավազ):

Նվաճված երկրամասերում թուրքական վարչաժողովրդագրական քաղաքականությունը, պայմանավորված մահմեդական վերնախավի ազգային-քաղաքական և տնտեսական շահերով, աչքի էր ընկնում անկայունությամբ և մշտապես փոփոխություններով¹⁴⁵: Տարբեր ժամանակներում նահանգների թիվը տատանվում էր 30-ի սահմաններում: Ըստ թուրք. հեղինակ Ֆերիդուն բեյի՝ XVI դ. 80-ական թվականներին Օսմանյան կայսրության տարածքն ընդգրկում էր 31 էյալեթ, ինչպես նաև Ղրիմի խանությունն ու Սրբազան Մեքքայի շերիֆությունը¹⁴⁶: XVII դարում Օսմանյան կայսրության վարչական բաժանումն էական փոփոխությունների է ենթարկվում, սակայն XVIII-XIX դարերում, կապված անկման ու քայքայման գործընթացի հետ, կայսրության վարչական բաժանման մեջ լուրջ փոփոխություններ են տեղի ունենում¹⁴⁷:

XVI-XVII դարերում Օսմանյան կայսրության հայկական շրջանները բաժանվել են հետևյալ վարչամիավորների՝ էյալեթների. 1. էրզրումի, 2. Վանի, 3. Կարսի, 4. Ջղզրի, 5. Ռումի (Սեբաստիայի), 6. Գիարբեքի: Արևմտյան Հայաստանի նահանգներում հաշվվող գավառների թիվը մի քանիսից հասնում էր երկու-երեք տասնյակի¹⁴⁸:

Օսմանյան կայսրության արևելյան վարչամիավորումների մեջ իր ընդարձակ տարածքով և ռազմաքաղաքական նշանակությամբ առանձնանում էր էրզրումի նահանգը: Նրա վալին, որը համատեղում էր կայսրության արևելյան մարզերի գործերի հրամանատարի՝ սերասկյարի պաշտոնը, կրում էր Հայաստանի կառավարչի տիտղոսը և օգտվում էր բազմաթիվ արտոնություններից: Շատ ղեպներում էրզրումի վալի-սերասկյարին էր վերապահված արևելյան նահանգների կառավարիչների նշանակման իրավունքը¹⁴⁹:

¹⁴¹ Տե՛ս Սեյրոնյան Ա., Ջավախքը XIX դ. և XX դ. I քառորդին, էջ 66:

¹⁴² Uras E., The Armenians in history and the Armenian question, Istanbul, 1988, p. 370.

¹⁴³ Տե՛ս Մաֆրաստյան Ա. Խ., Օսմանյան կայսրության վարչական բաժանումը XVII դ., Արևելագիտական ժողովածու, հ. 1, Եր., 1960, էջ 285:

¹⁴⁴ Ա. Դոյի կարծիքով սանջակն ավելի մեծ շրջան է իրենից ներկայացնում բան գավառը, այդ իսկ պատճառով իր՝ «Լանի, Բիրիսի և Էրզրումի վիլայեթները»

աշխատության մեջ օգտագործում է միայն սանջակ տերմինը: Տե՛ս Ա. Դոյ, Վանի, Բիրիսի և Էրզրումի վիլայեթները, էջ 5:

¹⁴⁵ Տե՛ս Սեյրոնյան Ա., Ջավախքը XIX դ. և XX դ. I քառորդին, էջ 67:

¹⁴⁶ Տե՛ս Թուրքական աղբյուրները, հ. Բ, էջ 212-222:

¹⁴⁷ Տե՛ս Մուրադյան Հ., նշվ. աշխ., էջ 19:

¹⁴⁸ Տե՛ս ՀԺՊ, հ. 4, Եր., 1972, էջ 275-276:

¹⁴⁹ Տե՛ս Սեյրոնյան Ա., Ջավախքը XIX դ. և XX դ. I քառորդին, էջ 68:

Հայաստանում վարչամիավորների ստեղծման առաջին փուլում XVI դարում ստեղծված նահանգների մեջ իր կարևոր տեղն ու դիրքն ունեւր Գուգարքը և Տայքը նահանգների մասերից կազմված և զլխավորապես հայերով ու վրացիներով բնակեցված սահմանամերձ Չլղբրի էյալեթը¹⁵⁰: 1625 թ. վարչամիավորի կենտրոնը Չլղբր բերդաքաղաքի ավերումից հետո էյալեթի կենտրոնը դարձավ Ախալցխան և դա է պատճառը, որ այս վարչամիավորը «Չլղբրի էյալեթ» անվանը զուգահեռ սկսեց կրել նաև «Ախալցխայի էյալեթ» անվանումը:

Օսմանյան կայսրութեան արևելյան վարչամիավորների մեջ իր ռազմաքաղաքական նշանակութեամբ ուրույն տեղ էր զբաղեցնում նաև Կարսի նահանգը: Այս վարչամիավորը, սահմանակից լինելով Չլղբրի և էրզրումի նահանգներին, նրանց հետ միասին ընդգրկել էր պատմական Հայաստանի Տայք նահանգի տարածքները: Կարսի էյալեթին էր պատկանում Կուր գետի ակունքների շրջանում գտնվող պատմական Կող գավառը՝ իրրև Գյուլեի լիվա:

Տայքի մեծագույն մասը՝ Բերդացիոր, Պարտիզացիոր, Արսյացիոր, Ճակք գավառները և Բողխա գավառի մեծ մասը, մտան Ախալցխայի էյալեթի մեջ: Բերդացիոր գավառի տարածքում և Ճակք գավառի արևելյան հատվածում՝ Օլթի գետի Փանակ՝ (Բանակ) և Փանազկերտ վտակների, ինչպես նաև Օլթի գետի միջին հոսանքի ավազաններում, տարածվում էր Փանակի լիվան: Սրան արևմուտքից սահմանակից էր Թավուսքարի լիվան (Ճակք գավառի կենտրոնական և արևմտյան հատված՝ Օլթի գետի ստորին հոսանքի շրջան), որից բաժանվում էր Թավուսկեր և Փանազկերտ վտակների շրջան լեռնաշղթայով: Թավուսկերի լիվայի արևմտյան սահմանը հասնում էր մինչև Ճորոխ: Բողխա գավառի հյուսիսային և կենտրոնական հատվածում, ինչպես նաև Պարտիզացիոր գավառի ամբողջ տարածքում (Օլթի Բարդուզ գետերի ավազան) տարածվում էր Օլթիի

¹⁵⁰ Տե՛ս Անապյան Հ., XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, էջ 19:

* Բանակ, Բերդագրակ, Տայցքար, Կող և Մամրվան տեղանունները սկզբնաղբյուրներում տարբեր ձևերով են ներկայացված: Այսպես, Բանակ անվան փոխարեն մենք շատ հաճախ հանդիպում ենք Փանակ, Փենեք, Փենյակ ձևերին, Բերդագրակի փոխարեն՝ Փերթբերք, Փերթբերք, Բերմեքեք, Տայցքարի փոխարեն՝ Թավուսկեր, Թավուսքար, Թավսկեր, Կողի փոխարեն՝ Գյուլե, Զոլե, Մամրվանի փոխարեն՝ Նարիման: Մեր կողմից տեղանունները կիրառվել են կոնկրետ սկզբնաղբյուրի տարբերակով:

լիվան: Արսյացիոր գավառի տարածքին (Ճորոխ գետի միջին հոսանքի շրջան) էին համապատասխանում Բերդագրակի և Պարտալի (Պարտար) լիվաները, որոնք տարածվում էին մինչև Պոնտական լեռները՝ հյուսիս-արևմուտքից ու արևմուտքից և Ճորոխի աջ ափի բարձունքները՝ արևելքից: Բողխա գավառի հարավային հատվածում՝ Օլթի գետի վերնագավառում և Սիվրի-չայի ավազանում տարածվում էր Մամրվանի (Նարիման) լիվան, որը XVI-XVII դարերում պատկանել է էրզրումի, իսկ XVIII դարում և XIX դ. առաջին երեսնամյակին՝ Ախալցխայի էյալեթին:

Տայքի Ոքաղև և Ազորդացիոր գավառների տարածքում՝ Թորթում գետի ավազանում, տարածվում էր էրզրումի էյալեթի հյուսիսային մասը կազմող Թորթումի լիվան: Այն էրզրումի նահանգի այն եզակի գավառներից էր, որ խնդրո առարկա ժամանակաշրջանում վարչական փոփոխությունների չի ենթարկվում:

Այժմ գիտարկենք այն վարչատարածքային փոփոխությունները, որոնց ենթարկվել է Տայքը թուրքական տիրապետության ժամանակաշրջանում՝ XVI-XIX դարերում:

Թուրք հեղինակ Ֆերիդուն բեյի հաղորդման համաձայն՝ XVI դ. 80-ական թվականներին Տայքի տարածքը բաժանված էր էրզրումի, Չլղբրի և Կարսի էյալեթների միջև: Էրզրումի նահանգի կազմում ընդգրկված էին Թորթումի և Մամրվանի լիվաները: Չլղբրի էյալեթի կազմի մեջ էին ընդգրկված էրլիի (Օլթի) և Բերմեքեքի (Փերթբերք, Բերդագրակ) լիվաները, իսկ Կարսի նահանգի կազմում՝ որպես առանձին լիվա, Բուլեն (Գյուլե, Կող)¹⁵¹: Այն հանգամանքը, որ Ֆերիդուն բեյը հիշատակում է Տայքի ոչ բոլոր շրջանները, թույլ է տալիս ենթադրելու, որ Տայքի մնացած մասերն ընդգրկված էին վերը նշած լիվաների կամ էլ հարևան վարչական միավորների կազմի մեջ:

Տարածաշրջանի վարչատարածքային բաժանման, ժողովրդագրական իրավիճակի ու տնտեսական կյանքի մասին կարևորագույն տեղեկություններ է հայտնում «Գյուլեթխտանի վիլայեթի մեծ դավթարը»: Ի տարբերություն Ֆերիդուն բեյի վկայության՝ «Գյուլեթխտանի վիլայեթի մեծ դավթարի» մեջ Չլղբրի էյալեթի կազմում բացակայում էր Բերդագրակի լիվան, սակայն նշվում է որպես լիվա Փանակը: Չլղբրի էյալեթի գավառների շարքում Բերդագրակի, ինչպես նաև Լիվանեի, Նրսֆի Լիվանեի և Շեշատի լիվաների բա-

¹⁵¹ Տե՛ս Թուրքական աղբյուրները, հ. Բ, էջ 219-220:

ցակայությունը «Գյուրջխտանի վիլայեթի մեծ դավթարի» մեջ, ամենայն հավանականութեամբ բացատրվում է այն հանգամանքով, որ վերջիններս կառավարվում էին իրեն ժառանգական կալվածքներ՝ յուրզուլեկի և օջաքլըքի կարգով¹⁵²:

Համաձայն «Գյուրջխտանի վիլայեթի մեծ դավթարի»՝ Փանակի լիվան ուներ 3 նահիե՝ Փանակի, Քիամիսի և Փանազկերտի¹⁵³: Աղբյուրում հիշատակվում է նաև Օլթիի լիվան, սակայն այնտեղ առկա շուրջ 90 բնակավայրերի մեծ մասի անունը թուրքական բնագրում անընթեռնելի է: Ըստ Ա. Մելքոնյանի՝ այս հանգամանքը հիմք է տալիս ենթադրելու, որ Օլթիի որպես լիվա լիարժեքորեն կազմավորված էր, իսկ նրա բնակավայրերը ղեռես մանրամասն հաշվառման ենթարկված չէին¹⁵⁴: Այսուհանդերձ, Օլթիի լիվայի կազմում հիշատակվում էին Քեթխուլթի, Մզվարի (Արևահայաց), Ջրդիլի (Մավերոս), Բարդուսի, Անձավի, Արսազի, և Չանուշուրի նահիեները¹⁵⁵: «Գյուրջխտանի վիլայեթի մեծ դավթարը» թարգմանած և հրատարակած Ս. Ջիբխայի կարծիքով՝ Կոլան Փոքր Արզահանի լիվայի կազմի մեջ էր, որը պատկանում էր Կարսի նահանգին¹⁵⁶: Ա. Մելքոնյանի կարծիքով, Կող դավառի տարածքն ընդգրկված է եղել Մեծ Արզահանի լիվայի կազմի մեջ, քանի որ Մեծ Արզահանի լիվան զբաղեցնում էր նաև Կուր գետի վերին հոսանքի շրջանը¹⁵⁷: Մենք ես հակված ենք կարծելու, որ Կուր գետի սկունքները շրջանում գտնվող Կող գավառը XVI դ. վերջին դուրս էր եկել Փոքր Արզահանի լիվայի կազմից և միացվել էր Մեծ Արզահանի լիվային:

XVII դարում Օսմանյան կայսրությունում նոր փոփոխություններ տեղի ունեցան: Բյաթիբ Չելեբիի հաղորդման համաձայն,

¹⁵² Տե՛ս Աջաճոճ Թ., Նախորդող-Օսմանյան շրջանում Օսմանյան կայսրության օրագրերը հատկապես էին սահմանապահ և բերդապահ գիւղերին: Այդ հողերի աշարի եկամտը ևս պատկանում էր դրանց տերերին, որի փոխարեն նրանք պարտավորվում էին պաշտպանել պետական սահմանները և դեպի սահման բանակ ուղարկվելու դեպքում՝ ծառայել սերսուկյարի բանակում: Տե՛ս հողի տերը մահանար, հողը ժառանգաբար անցնում էր նրա որդիներին: Տե՛ս Մաֆրատյան Ա.Խ., Օսմանյան կայսրության վարչական բաժանումը XVII դ., էջ 290:

¹⁵³ Տե՛ս Զուրադեանի շուրջ Օսմանյան շրջանում, Գ. 3, թ. 558-559:

¹⁵⁴ Տե՛ս Մելքոնյան Ա., Չավախքը XIX դ. և XX դ. I քառորդին, էջ 76:

¹⁵⁵ Տե՛ս Զուրադեանի շուրջ Օսմանյան շրջանում, Գ. 3, թ. 595-603:

¹⁵⁶ Նույն տեղում, էջ 499:

¹⁵⁷ Տե՛ս Մելքոնյան Ա., Չավախքը XIX դ. և XX դ. I քառորդին, էջ 76:

XVII դ. առաջին կեսին Տայբի տարածքն ընդգրկված էր Օսմանյան կայսրության հետևյալ վարչամիավորների մեջ. 1) Ախալցխայի էյալթի 18 լիվանների շարքում Տայբին էին պատկանում Սոքեն (Օլթիի ենթակա), Փենեքը (Փանակ), Մամրվանը, Փերթքերքը (Բերդազրակ) և Արզահան Բյուզուլի (փոքր) մի մասը կազմող Բուլեն (Բյաթիբ Չելեբու վկայությամբ Փերթքերքը սեփականության կարգով էր կառավարվում՝ դառնալով ժառանգական կալվածք՝ օջաքլըք¹⁵⁸): 2) Էրզրումի էյալթի 11 սանջակի շարքում Տայբի տարածքում էին գտնվում Թորթումը և Մամրվանը¹⁵⁹: Ուշագրավ է, որ Մամրվանը հիշատակվում է և՛ Էրզրումի, և՛ Ախալցխայի էյալթիների կազմում: Համազրեկով Բյաթիբ Չելեբիի և Էվլիա Չելեբիի հաղորդումները՝ պարզ է դառնում, որ Մամրվանի գավառն Ախալցխայի էյալթի մեջ գտնվում էր Բյաթիբ Չելեբին թույլ է տվել ժամանակագրական վրիպակ (Մամրվանի միացումն Ախալցխայի էյալթին մի փոքր ավելի ուշ ժամանակաշրջանի իրողություն է):

Էվլիա Չելեբիի հաղորդած տեղեկությունները ցույց են տալիս, որ XVII դ. երկրորդ կեսին տարածաշրջանում նոր վարչական փոփոխություններ էին տեղի ունեցել: Նախ՝ Ախալցխայի էյալթում նախկին 18 լիվայի փոխարեն այժմ տեսնում ենք ընդամենը 13 լիվա: Տայբին վերաբերող տարածքներն այստեղ ընդգրկվել էին հետևյալ վարչամիավորների մեջ՝ Օլթիի, Փանակի, Փերթքերքի լիվաններ, ինչպես նաև Արտանուշ և Լիվան գավառների հարավային մասերը՝ Թավուսքարը (պատմական ձախք գավառը)¹⁶⁰: Միաժամանակ շարունակում էին Էրզրումի էյալթի կազմի մեջ մնալ Թորթումն ու Մամրվանը¹⁶¹: Տայբ աշխարհի Կող գավառը Փոքր Արզահանի լիվայի կազմում կրկին ընդգրկվել էր Կարսի նահանգի կազմի մեջ¹⁶²:

Ախալցխայի էյալթի վարչատարածքային իրավիճակն ավելի հանգամանորեն ուսումնասիրելու համար դիմենք Օսմանյան մեկ այլ հարկացուցակի՝ 1694-1732 թթ. ընկած ժամանակահատվածի իրավիճակը ներկայացնող «Չլգրի էյալթի ջաբա դավթարի» օգնությամբ, ըստ որի՝ Ախալցխայի էյալթն այժմ ուներ շուրջ 21 լիվա:

¹⁵⁸ Տե՛ս Թուրքական աղբյուրներ, հ. Բ, էջ 27:

¹⁵⁹ Նույն տեղում, էջ 41:

¹⁶⁰ Տե՛ս Թուրքական աղբյուրներ, հ. Գ, Էվլիա Չելեբի, էջ 26:

¹⁶¹ Նույն տեղում, էջ 27:

¹⁶² Նույն տեղում, էջ 26:

Տալքի բոլոր շրջանները, բացառությամբ Թորթուսի լիվայի, որն առաջվա նման շարունակում էր մնալ Էրզրուսի էյալեթի կազմում, այժմ ընդգրկված էին այս վարչամիավորի մեջ: «Չլզըրի էյալեթի ջարա դավթարի» մեջ թվարկվում են բոլոր լիվաները, նրանց մեջ մտնող բոլոր նահիեները և բնակավայրերը: Տալքին վերաբերող վարչական միավորներն էին. 1) Օլթին, որը բաղկացած էր 5 նահիեներից՝ Բարդուսի, Անձավի, Արևահայաց (Մզվարի), Սավերոտ (Չրդիլի), Միսրասորի (Մասրաձոր), 2) Փանակի, որի վարչատարածքային բաժանման մեջ 1595 թ. համեմատությամբ փոփոխություններ գրեթե տեղի չէին ունեցել և նախկինի նման առկա էին 3 նահիեներ՝ Փանակի, Բիսմիսի և Փանազկերտի, 3) Մամրվանի, որն այդ շրջանում արդեն դուրս էր եկել Էրզրուսի էյալեթի կազմից և միացվել էր Ախալցխայի նահանգին, ուներ 2 գյուղատեղամբ՝ Մամրվանի և Ախայի, 4) Բերդազրակի, որի կազմում ևս հիշատակվում են 2 գյուղատեղամբ՝ Բերդազրակի և Խոտորջրի (Խոգիջորի): Տալքին էին պատկանում նաև Արտանուջի լիվայի 2 հարավային գյուղատեղամբերը՝ Իշխանի և Թավուսքարի¹⁶³:

XVII–XVIII դարերի սկզբնադրյունները զգալի նյութ են պարունակում յուրաքանչյուր նահանգի տարածքում առկա հողատիրությունների վերաբերյալ: Պարզվում է, որ թե՛ Էրզրուսի, և թե՛ Ախալցխայի էյալեթներում գոյություն են ունեցել Օսմանյան կայսրությունում առկա հողատիրության ձևերի մեծ մասը՝ թիմարներ, գեամեթներ, խասեր և այլն: Ըստ Էվլիա Չելեբիի՝ Տալքում խասերը հիմնականում բաժին էին ընկնում Օլթիի, Թորթուսի, Բերդազրակի, Փանակի և Մամրվանի միրլիվաներին: Օլթիի միրլիվայի խասը 200.017 ահչե էր, Թորթուսի միրլիվայինը՝ 237.000, Մամրվանում խասը կազմում էր 203.000 ահչե, Փանակում՝ 400.000, Բերդազրակում՝ 1.462.190, ընդ որում Բերդազրակը շարունակվում էր կառավարվել՝ օջաքլըքի կարգով¹⁶⁴: Էվլիա Չելեբին հաղորդում է նաև գեամեթների և թիմարների մասին: Այսպես Թորթուսում կային 5 գեամեթ, 49 թիմար, Մամրվանում՝ 4 գեամեթ, 92 թիմար, Օլթիի լիվայում՝ 3 գեամեթ, 183 թիմար, Փանակում՝ 8 գեամեթ, 54 թիմար, Բերդազրակում՝ 4 գեամեթ, 98 թիմար¹⁶⁵: Էվլիա Չելեբիի հաղոր-

¹⁶³ Տե՛ս Բուլղոնիս յոսլոյտոս չձձձ ճձձձձձ, թջ. 100–204.

¹⁶⁴ Տե՛ս Թորթուսյան աղբյուրները, հ. Գ, Էվլիա Չելեբի, էջ 28–29:

¹⁶⁵ Նույն տեղում, էջ 32:

գրաններից մենք չենք կարող հստակ պատկերացում կազմել Իշխանի, Թավուսքարի և Գյոլեի խասերի, գեամեթների և թիմարների վերաբերյալ: Հեղինակն իր տեղեկությունները հաղորդում է միմիայն լիվայի մասշտաբով. վերոհիշյալ շրջաններից Իշխանն ու Թավուսկերը՝ Արտանուջի լիվայի, իսկ Գյոլեն՝ Փոքր Արդահանի լիվայի կազմում էին: Սրանց խասերը կազմում էին համապատասխանաբար 280.000 և 290.300 ահչե¹⁶⁶:

«Չլզըրի էյալեթի ջարա դավթարի» համաձայն՝ XVIII դ. սկզբին տարածաշրջանում նախորդ ժամանակաշրջանի համեմատությամբ հողային տիրույթներում խոշոր տեղաշարժեր չէին եղել: Նախկինի նման թուրք մահմեդական հողատերերի դասը շարունակում էր բացառապես իր ձեռքում պահել նահանգի արտադրական գլխավոր գործոնը՝ հողը, որից ստացված եկամուտների հաշվին պահվում էին գինված ուժերը: Ըստ «Ջարա դավթարի»՝ Ախալցխայի էյալեթի միրմիրան Ծուսուֆի խասը կազմել է 900.110 ահչե¹⁶⁷: Խասեր կային նաև լիվաներում: Այսպես Օլթիի միրլիվա Իսհակ փաշայի որդու՝ Ալիի անունով դրանցված խասը կազմել է շուրջ 196.000 ահչե, Մամրվանի միրլիվա Սեիփուլլահի խասը՝ 277.000 ահչե, Բերդազրակի և Նըսֆի Լիվանի միրլիվա Իբրահիմի խասը՝ 519.000 ահչե¹⁶⁸: Բերդազրակի և Օլթիի միրլիվաներն իրենց խասերին տիրել են յուրզուլի և օջաքլըքի կարգով:

XVIII դ. երկրորդ կեսին Օսմանյան կայսրության արևելքում խիստ աճել էր Ախալցխայի էյալեթի դերն ու նշանակությունը: Նախ բավականին ընդլայնվել էին նահանգի սահմանները, որով նա դարձել էր սահմանային շրջան: Դրա հետ մեկտեղ մեծացել էր նաև Ախալցխայի վալիի քաղաքական ազդեցությունը կայսրության արևելքում¹⁶⁹: Ղ. Ինճիճյանի հաղորդմամբ՝ XVIII դ. վերջին Ախալցխայի էյալեթը տրոհվում էր 24 սանջակի: Հեղինակը 2 ցուցակ է մեջբերում, ընդ որում դրանցից առաջինը ներկայացնում էր նահանգի վարչական բաժանումը XVIII դարում, իսկ երկրորդը վերաբերում էր աշխատության գրելու ժամանակաշրջանին (XVIII դ. վերջ): Առաջին ցուցակում նշված գավառներն էին՝ 1. Ախալցխա, 2. Լիվանե, 3.

¹⁶⁶ Նույն տեղում, էջ 28–29:

¹⁶⁷ Տե՛ս Բուլղոնիս յոսլոյտոս չձձձ ճձձձձ, թջ. 199.

¹⁶⁸ Նույն տեղում, էջ 199, 204:

¹⁶⁹ Տե՛ս Չուպլյան Մ., Արևմտյան Հայաստանը XVI–XVIII դարերում, էջ 182:

ԱրդաՀան մեծ և ԱրդաՀան փոքր, 4. Շեչաա, 5. Արտանուջ, 6. Օլթի, 7. Սուքե (կցորդ Օլթիին), 8. Ճիրճեր, 9. Ճեպելիրեք, 10. Թափսիկեր, 11. Բերդագրակ, 12. Նալիֆե, 13. Մաճխել, 14. Բինեք, 15. Բուդխու (Փոցխով), 16. Պետրե, 17. Քյուլթաթիս, 18. Մամերվան, 19. Չըլազը, 20. Ախալքեյեք, 21. Պաճրեք (Կյուլե), 22. Պաթթուս, 23. Թերալեթ, 24. Էճրե (Աճարա) վերին և Էճրե Ստորին: Երկրորդ ցուցակում թվարկված դավառներն են՝ 1. Ախալցխա, 2. Մամրվան, 3. Օլթի, 4. Փենեք կամ Բանակ, 5. Թավուսթար, 6. Չըլազը, 7. Ջավախք, 8. Աղզոր, 9. Քուրխան, 10. Ախալքալաք, 11. Փոցխով, 12. Շավչեթ (Շեչաա), 13. Վերին և Ստորին Իմերխեններ, 14. Արտանուջ, 15. ԱրդաՀան, 16. Արդվին, 17. Մինգոթ, 18. Մախճել, 19. Վերին և Ստորին Աճարա, 20. Թերալեթ (Հավանաբար Թրիալեթ), 21. Պարխալ, 22. Կիսկիմ, 23. Բերդագրակ և 24. Լիվանե¹⁷⁰: Անվանի Հայագետը Հայանում է, որ նա այդ տվյալները քաղել է արքունի դիվանագրերից: Այդ իսկ պատճառով Ինճիճյանի կողմից ներկայացված վարչական բաժանումը պետք է Հավասարի Համարել: Ինչպես տեսնում ենք, XVIII դ. վերջի դրուժյամբ Տայքի բոլոր շրջանները, բացառությամբ Թորթումի և Գյուլեի, գտնվում էին Ախալցխայի էյալեթի կազմում: Թորթումը շարունակում էր առաջվա նման մնալ էրզրումի էյալեթի կազմում, իսկ Գյուլեն, որ XVIII դ. ընթացքում բավականին երկար մի շրջան գտնվելիս էր եղել Ախալցխայի էյալեթի կազմում, XVIII դ. վերջի և XIX դ. սկզբի դրուժյամբ կրկին անցել էր Կարսի նահանգի կազմի մեջ: Ախալցխայի էյալեթի կազմում էին գտնվում Տայոց Հետևյալ շրջանները՝ Մամրվանը, Օլթին, Փանակը (Փենեք), Թավուսթարը (Թավուսկեր), Կիսկիմը, Բերդագրակը: Տայքի տարածքում էր Պարխալի գավառը՝ Պարխար գետի ավազանն իր Արջիվան, Քորակ և Բազլ օժանդակներով: Ղ. Ինճիճյանի Հաղորդմամբ, Տայքին էր պատկանում նաև Արդվինի լիվայի Հարավային Հատվածը, քանի որ Հեղինակն այնտեղ է տեղադրում Իլխան գյուղաքաղաքն իր հռչակավոր եկեղեցիով: «Իլխան: Գիւղաքաղաք Հին Տայոց նահանգին ի Հարաւակողմն Արդուինոյ, Հեռ ի նմանէ և մերձ յԱրտանուջ»¹⁷¹: Ինչպես կտեսնենք Հետագայում, Թավուսթարի սահմանը դրվում էր ուղղակի ձորոխ գետի վրա: Այսինքն Իլխանը Հետագայում անցնում է Թավուսկերի գավառի կազմի մեջ: Լիվանեի մասին

¹⁷⁰ Տե՛ս Ինճիճեան Ղ, Աշխարհագրութիւն..., էջ 124:
¹⁷¹ Նույն տեղում, էջ 130:

խառնելով Ղ. Ինճիճյանը նշում է, որ «Այս վերջին գաւառ ոչ է ուրոյն ի վերոգրեալ գաւառաց, այլ ընդ իւրե փակէ գչորս գաւառս, այսինքն՝ զԱրդուին, զՄինգոթ, զՊարխալ և զԿիսկիմ»¹⁷²: Հ. Տաշյանն այս առթիվ գրում է. «Հոս էական և Հետաքրքրական կէտն այնէ, որ Կիսկիմ Արդուինի վերաբերած պիտի ըլլայ: Այս յամենայն դէպս վաղանցուկ բան մ'էղած ըլլալու է, որովհետև քիչ մ'ետքը Քոխ երկրախոյզն զԿիսկիմ ոչ միայն Բերդագրակի գաւառի մեջ գիտէ, այլ նոյն իսկ այն գաւառն Կիսկիմի անուամբ կը կոչուէր ալ: Ճիշդ խառնելով նոյնիսկ Ինճիճեան ուրիշ բան ըրած չէ նկարագրութեան մեջ՝ Կիսկիմ ու Բերդագրակ միասին դնելով. ինչպես պիտի տեսնենք, նման և այլուստ շատ Հետաքրքիր պարագայ մը կը յիշէ. ձեռագիր յիշատակարան մը՝ Օսմանեանց տիրելէն քիչ մը յառաջ՝ զԿիսկիմ «յիշխանութեան Սպերու» դնելով 1512-ին»¹⁷³:

XIX դ. սկզբներին բարդ իրադրություն էր ստեղծվել Անդրկովկասում: Ռուսական կայսրությունը, ի գեմս Հայերի և վրացիների, էր քաղաքականությունն իրականացնելու Համակիրներ էր տեսնում: 1801 թ. Արևելյան Վրաստանը խաղաղ ճանապարհով միացավ Ռուսաստանին: Դա Ռուսաստանի արևելյան քաղաքականության հաջող սկզբնաքայլն էր, և նրա առաջխաղացումը տարածաշրջանում արմատական փոփոխությունների է ենթարկում Անդրկովկասի ամբողջ վարչական պատկերը:

1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմում թուրքերը ջախջախիչ պարտություն են կրում: Ռուսական զորքերը նվաճում են Ախալցխայի նահանգի ամբողջ տարածքը, Կարսը, Էրզրումը, Խնուսը, Դերջանը, Բաբերդը: Սակայն Ռուսաստանը չկարողացավ օգտվել Հաղթանակի պտուղներից: Անգլիան, Ֆրանսիան և Ավստրո-Հունգարիան, որոնք դեմ էին Ռուսաստանի դիրքերի ամրապնդմանը Արևմտյան Հայաստանում, ռազմական և դիվանագիտական ճանապարհով ստիպեցին՝ Հաղթանակած կողմին Համաձայնվել թուրքերի Համար անհամեմատ ձեռնտու Հաշտության: 1829 թ. սեպտեմբերի 2-ին Ադրբանուպոլսում կնքված ռուս-թուրքական Հաշտության պայմանագրով Անդրկովկասում Ռուսաստանին անցան սևծովյան մի քանի նավահանգիստներ, Ախալցխա և Ախալքալաք քաղաքները: Արևմտյան Հայաստանի ազատագրված մյուս տարածքները վերա-

¹⁷² Նույն տեղում, էջ 124:
¹⁷³ Տաշեան Հ., Տայք, դրացիք և Խոտորքոյ, ՀԱ, 1971, 4-6, էջ 179-180:

դարձվեցին Թուրքիային: Թուլլատրվում էր նաև թուրքազպատակ Հայերի վերաբնակեցումը ուսական պետություն տարածք:

Ախալցխան Ռուսաստանին անցնելով՝ վերջ դրվեց Օսմանյան կայսրության Ախալցխայի էյալեթի գոյությունը¹⁷⁴: Ախալցխայի էյալեթի այն տարածքները, որոնք չանցան Ռուսաստանին, միացվեցին Էրզրումի էյալեթին: Վերջինիս էին անցել Կիսկիմի, Օլթիի, Թավուսքարի, Նարիմանի և Փենեքի գավառները: Թորթումի գավառն առաջվա նման մնում էր Էրզրումի էյալեթի անբաժան մասը, իսկ Գյուլի գավառը Հայտնվում է Ջղզրի սանջակի Արդահանի կադայի կազմում¹⁷⁵:

Վարչատարածքային այսպիսի բաժանումը պաշտպանվում է մինչև 1877—1878 թթ. ուսումնական պատերազմը: Ռուսական զորքերը 1877 թ. ապրիլի 12-ին Կովկասյան ռազմաճակատում Հարձակման են անցնում 3 ուղղություններով՝ Ալեքսանդրապոլ-Կարս, Իզդիր-Բայազետ, Ախալցխա-Արդահան: 1877 թ. մայիսի 20-ին ուսաները գրավում են Օլթին և Փանակը, որով սկսվում է Տայքի ազատագրումը¹⁷⁶: Բոլոր ուղղություններով ուսաների տարած համոզիչ Հաղթանակը ստիպում է թուրքական կառավարությանը Հաշտություն խնդրելու: 1878 թ. փետրվարի 19-ին Սան-Ստեֆանոյում կնքված նախնական Հաշտության պայմանագրի համաձայն, ի թիվս այլոց, Ռուսաստանին է անցնում Տայքի մեծագույն մասը (բացառությամբ Կիսկիմի և Պարխարի գավառների): Սակայն անգլիացիների ճնշման ներքո Բեռլինի կոնգրեսում Ռուսաստանն Էրզրումի, Ալաշկերտի, Բայազետի Հետ մեկտեղ Թուրքիային վերադարձրեց նաև Թորթումի գավառն ամբողջությամբ և Մամրվանի ու Թավուսքարի գավառների մի մասը¹⁷⁷:

Ռուսաստանին մնացած շրջաններից Կարսը, Արդահանը և Օլթին ընդգրկվեցին նորաստեղծ Կարսի մարզի մեջ: Գյուլին Հայտնվում է Արդահանի օկրուգի կազմում՝ իբրև Գյուլի տեղամաս: Ռուսաստա-

նին անցած Տայքի մյուս շրջանները՝ Օլթին, Մամրվանը, Փանակը, Բարդուսը, Փանագկերտը և Թավուսքարը, ընդգրկվում են Օլթիի օկրուգի մեջ: Առաջին չորսը միավորվում են Օլթիի տեղամասի, իսկ Փանագկերտը և Թավուսքարը՝ Թավուսքարի տեղամասի մեջ:

Այսպիսով, Օսմանյան կայսրության կազմում Տայքում նկատելի էին այն նույն միտումներն ու ուղղվածությունը, ինչ Արևմտյան Հայաստանի մյուս շրջաններում: Օսմանյան կայսրության վարչական համակարգում Տայքի գավառները բաժանվում են Էրզրումի (Թորթումի լիվան, ինչպես նաև մինչև XVII դ. վերջը՝ Մամրվանի լիվան), Ախալցխայի (Կիսկիմի, Պարխարի, Թավուսքարի, Օլթիի, Փանակի լիվանները, իսկ XVII դ. վերջից՝ նաև Մամրվանի լիվան) և Կարսի (Գյուլի շրջանը) նահանգների միջև: 1828—1829 թթ. ուսումնական պատերազմի հետևանքով, երբ Ախալցխայի նահանգի մի մասն անցավ Ռուսաստանին, վարչական նոր փոփոխությունների ենթարկվելով՝ Տայքն ամբողջությամբ ընդգրկվեց Էրզրումի նահանգի կազմի մեջ:

¹⁷⁴ Ադրիանապոլի պայմանագրով ձևավորված ռուս-թուրքական սահմանագծի մասին տես՝ Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, կազմողներ՝ Ջ. Ս. Կիրակոսյան, Ռ. Գ. Մահակյան, Եր., 1972, էջ 75:

¹⁷⁵ Տես Малама Я. Д., Описание Эрзерумского вилайета, էջ 5:

¹⁷⁶ Տես Погосян А. М., Карсская область в составе России, Եր., 1983, էջ 46:

¹⁷⁷ Տես Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, էջ 127:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՏԱԵՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄՆ ՈՒ ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ (XVI–XIX դարեր)

Փողովրդագրության կարևորագույն հիմնախնդիրներից է բնակավայրերի տեղաբաշխման և տեղագրության ուսումնասիրությունը, որը կսկսենք Տայքի արևմտյան գավառներից: Գավառների դյուղերի թվաքանակին վերաբերող XVIII–XIX դ. հայ հեղինակների աշխատություններից, ուսս զինվորականների զեկուցադրերից բացի, մենք նկարագրել ենք նաև այն բնակավայրերը, որոնք հայտնի են մեզ տարբեր աղբյուրներից: Ցավոք, մեր ձեռքի տակ եղած աղբյուրները թույլ չեն տալիս նկարագրել դյուղերի ճնշող մեծամասնությունը ըստ էթնիկական կազմի, ծխերի, շնչերի և այլ հատկանիշների: Շատ դեպքերում անգամ լուրջ դժվարության ենք հանդիպում, երբ փորձում ենք վերականգնել այդ բնակավայրերի հայեցի արտասանաձևերը, քանի որ XI–XV դդ. ընթացքում Հայկական լեռնաշխարհում հայտնված թյուրքական ցեղերը, հետագայում էլ՝ Օսմանյան իշխանությունները նորանվաճ տարածքները յուրացնելու նպատակով բնիկ տեղանուներ կամ թարգմանում էին թուրքերեն, կամ էլ տեղական բարբառի ազդեցությամբ նախկին ձևից որոշ չափով հեռացած տեղանուներ բաղադրության սկզբունքով նմանեցնում էին թուրքերեն այս կամ այն բառին: Տարածված մեթոդներից էր նաև հին բնակավայրերին նոր անուններ տալը՝ ձգտելով մոռացության տալ նրանց էթնիկական պատկանելությունը: Անվանափոխվում էին անգամ քրիստոնեական սրբավայրերը¹:

Հայկական տեղանունների յուրացման ձև էին նաև թուրքերենով դրանք ստուգաբանելու փորձերը, որոնք ստուգաբանական անմեղ ճամբարտակումներ էին, այլ հետապնդում էին նոր գրավված տարածքների թուրքականությունը հաստատելու հեռագնա նպատակներ, հետևաբար նաև՝ աշխարհաբաղադրական զրդապատճառները²:

¹ Տես Մահակյան Լ., Տեղանունների բուրբացումն Օսմանյան կայսրությունում և հանրապետական թուրքիայում, Մոնրեալ–Արոդ, 2010, էջ 28–29

² Նման կեղծ վարժանքներով առանձնապես աչքի է ընկել XVII դ. քուրք պատմաբան Էվլիյա Չելեբին, որի մեկնությունները հաճախ հիմք են դարձել բուրբ մասնագետների համար: Տես Մահակյան Լ., նշվ. աշխ., էջ 29–30:

Աղբյուրների համադրումից պարզ երևում է, որ XVI–XIX դ. առաջին կեսերին Տայքը ընթանում էր զարգացման այն ճանապարհով, ինչ Արևմտյան Հայաստանի մյուս շրջանները: Տայքի մոտ 400 բնակավայրերն ընկած էին ծովի մակարդակից 500–2000 մ բարձրության վրա: Երկրամասին բնորոշ էր գյուղական բնակավայրերի գծային կամ շղթայաձև տարաբնակեցումը, երբ տարբեր մեծություն բնակավայրերը շարված են գետահունիսի զուգահեռ՝ լեռնաշղթաներով սեղմված նեղ գետահովիտներում:

ա) Արևմտյան գավառներ

Կիսկիմի (Բերդազրակի) լիվա: Կիսկիմի լիվան տեղագրվում է Տայքի Արսեացիոս գավառի հարավային և կենտրոնական շրջաններում, երբեմն իր մեջ ընդգրկելով նաև հյուսիսային հատվածը, ուր, սակայն, գոյություն ունեն մեկ այլ վարչամիավոր՝ Պարխարի լիվան: Կիսկիմի լիվան ընկած էր Ճորոխ գետի երկու ափերին՝ իր մեջ ընդգրկելով Ճորոխի բազմաթիվ վտակների ավազանները: Գավառը, որ գտնվում էր «առ Պարխար լեռամբ», համարվում էր «...յետին սահմանք Հայոց ընդ արևմտեանն հիւսիս և սահմանակիցք Պոնտոսի...»³: Կիսկիմի սահմաններն արևմուտքում հասնում էին մինչև Սպերի հովիտ, հարավից և հարավ-արևելքից՝ Թորթում, հյուսիսից՝ Պարխար և հյուսիս-արևմուտքից՝ Համշեն: Կիսկիմի և Թորթումի բնական սահմանը Խախամին, Եկեղյաց (Աղաջքիլիսա), Մեղրբեր, Հարկեոր և Աշմուշենի լեռներն են, որոնք նաև Ճորոխ և Թորթում գետերի ջրբաժան լեռներն են, Պարխարի լիվայի հետ բնական սահման են Պարխար գետի ջրբաժան լեռները, իսկ Համշենից Կիսկիմի բաժանված է Պոնտական բարձր լեռնաշղթայով և նրա Քաջքար լեռնազագաթով:

Կիսկիմի լիվայի դիրքն այսպիսին է. հարավում այն սկսվում է երկու Հունտ–Հնուտ դյուղերով հոսող համանուն առուների ձորերից, երկարում մոտ 40 կմ և վերջանում Պարխար և Ճորոխ գետերի խառնուրդի մոտ: Ճորոխի կենտրոնական մասը զբաղեցնող այս հովիտն ունի համեմատաբար ընդարձակ դաշտեր, սարահարթեր և ծայրեծայր մշակված ագարակներ ու հանդեր⁴: Այս հողատարածություն

³ Ալիշան Ղ., Տեղագիր հայոց մեծագ, էջ 38:

⁴ Տես Ամրպետ, նշվ. աշխ., էջ 111:

յուճենները ժամանակին ոռոգվում էին ջրանցքներով, սակայն XIV–XVI դարերի պատերազմների՝ ժամանակ դրանք ավերվել են և այլևս չեն վերականգնվել:

Տայքի մյուս գավառների նման, Կիսկիմի լիվան Հարուստ էր ջրային պաշարներով, որոնք անտառապատ տարածքները հետ մեկտեղ նրա կլիմայապատկերը գլխավոր գործոններն էին: Բազմաթիվ առվակներ սկիզբ առնելով Ճորոխի երկու ափերի լեռների անտառապատ լանջերից՝ հոսում են դեպի Ճորոխը՝ ճանապարհին ոռոգելով գավառի գյուղերի դաշտերն ու արոտավայրերը: Հողի առատությունն ու կլիմայի բարենպաստ լինելը խթանում էին գավառի գյուղատնտեսության զարգացմանը, հատկապես երկրագործությանն ու այգեգործությանը: Զարգացած խաղողագործության շնորհիվ էր, որ Կիսկիմի գինին մեծ համարում ուներ ինչպես Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Բարեբեք դաշտերում աճեցվում էր նաև բրինձ, իսկ Կուրդաշենի և Տանձուռի բարձունքները տալիս էին բարձրորակ ծխախոտ⁵: Սակայն բնակչության պարզեցած պարարտ ու արդասաբեք հողը գավառի բնակչության իսլամական մասի կողմից ռացիոնալ չէր օգտագործվում: Մտավոր խաղաղի հետևանքով մահմեդական բնակչության մեծագույն մասը չէր տքնում ընդլայնելու հասունթըր, ուստի արտադրված բարիքը գլխավորապես բավարարում էր տեղի բնակչության կարիքները և արտասահման գրեթե չէր ուղղորդվում⁶:

Որպես վարչական միավոր՝ Կիսկիմի լիվան ձևավորվել է XVI դ. վերջին՝ ի սկզբանե կրելով Բերդազրակի լիվա անունը (գավառի կենտրոն Բերդազրակ ավանի անունով) և ընդգրկվելով Չլդրբի (Ախալցխայի) նահանգի մեջ: Այն Շեշատի, Նսֆի Լիվանների և Լիվանների հետ մեկտեղ կառավարվում էր յուրզլուկի, օջաքլքի և սեփականության կարգով: Համաձայն էվլիա Չելեբիի, Բերդազրակի (Փերթքերք) միրլիվայի խասը կազմում էր 1.462.190 պկչե⁷:

Աղբյուրներում Կիսկիմի լիվան երբեմն հիշատակվում էր նաև «Գյուրջիստան» (Վրաստան) ձևով: Երբ թուրքերը Ճորոխի գծով Սպերից այն կողմ մտնում էին Բերդազրակ, նրանց կարծիքով ոտք էին դնում «վրացական» հող, քանի որ Բերդազրակը պատկանում էր

Սամցխեի աթաբեկությունը: Նրանց համար քաղաքականապես հենց այստեղ էր սկսվում «Գյուրջիստանը»: Մյուս կողմից, Կարնո դաշտի մայրից՝ Հինձքի մոտից սկսվող կիրճը, որը թորթում տանող ամենաահարմար ուղին էր, այդ նույն ժամանակահատվածում (ցայժմ) հայտնի էր «Գյուրջի բողաղ» (Վրացական կիրճ) անունով⁸: Թուրքերի աչքում Սամցխեի աթաբեկությունը վրացական էր նաև այն պատճառով, որ նրա տարածքում տիրապետող էր վրացական եկեղեցին: X դարից սկսած Հայ աղբաբնակչության մի ստվար հատված թեպետ պահպանել էր մայրենի լեզուն, սակայն ընդունել էր քաղկեդոնականություն, որի հետևանքով անգամ առաքելական հայերը նրանց անվանում էին «վրացիներ»: Սրանք էին այն հիմնական պատճառները, որ Կիսկիմի գավառը հայտնի էր նաև «Գյուրջիստան» անունով:

Կիսկիմի լիվայի բնակչության մասին խոսելիս Հարկ է մեջբերել Ղ. Ինճիճյանի խոսքերը. «...բնակիչք նոցա առհասարակ էին յազգէս Հայոց, այլ ապա ըստ մեծի մասին դարձան ի տանկուլթիւն. և տակաւ մնացին ի քրիստոնէից»⁹: Այսինքն, Բերդազրակի գավառի Հայ աղբաբնակչության մեծ մասի մահմեդականացումը տեղի է ունեցել XVIII դ. վերջին: Դա անուղղակիորեն ապացուցում է նաև Ղ. Ինճիճյանի այն հաղորդումը, համաձայն որի գավառն ուներ առատ և ընտիր գինի, ինչը դժվար թե լիներ ամբողջապես մահմեդական բնակչության առկայության պարագայում¹⁰:

XVI–XVII դարերում գավառի կենտրոնը Ճորոխի ձախ ափին գտնվող Բերդազրակ (Փերթքերք, Փերթէքերք) ավանն էր: Այն Մամիկոնյանների սեփականությունն էր, այնուհետև անցել էր Տայքի Բագրատունիներին և ի սկզբանե կոչվել էր ուղղակի Ազարակ (Ազրակ): XVII դ. հեղինակ Հ. Կարնեցու մոտ այն ևս հիշատակվում է Ազրակ ձևով. «Եվ ունի ձորս այս բերդս անառիկս թորթում, որ պարոնանիստ է և իշխող է մինչև ի բերդն Ազրակ առ ափն Ճորոխ գետոյն»¹¹: Փաստորեն բնակավայրի Բերդազրակ անվանումը ուղղակիորեն կապված էր այնտեղ առկա բերդի անվան հետ, ինչպես դա երևում է Հ. Կարնեցու մոտ:

⁵ Նույն տեղում, էջ 116–117:

⁶ Նույն տեղում:

⁷ Տե՛ս Թուրքական աղբյուրները, հ. 9, Էվլիա Չելեբի, էջ 29:

⁸ Տաշեան Հ., Տայք, դրացիք և Խոտորցուր, ՀԱ, 1973, 1–3, էջ 30:

⁹ Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն..., էջ 132:

¹⁰ Տե՛ս Տաշեան Հ., Տայք, դրացիք և Խոտորցուր, ՀԱ, 1973, 1–3, էջ 36:

¹¹ Յակովբ Կարնեցի, նշվ. աշխ., էջ 17:

XVIII դ. երկրորդ կեսից դավառի վարչական կենտրոնն է դառնում Ճորոխի՝ աջ ափին գտնվող Հայաշատ Կիսկիմը: Սակայն դա արտացոլվում էր միայն պաշտոնական դրագրություն մեջ: Իրականում, թուրքերը վարչական մարմինները տեղափոխել էին Կիսկիմի մերձակայքում գտնվող Արսիս (Էրսիս) գյուղը մի պարզ պատճառով, որ այն ավելի մեծ թվով մահմեդական բնակչություն ուներ:

Կիսկիմի լիվայի բնակավայրերի տեղագրությունն սկսենք Հյուսիս-արևելքից՝ Թորթումի, Թավուսարի և Պարխարի լիվաների սահմանից: Այստեղ՝ Ճորոխ գետի երկու ափերին էին ընկած հետևյալ գյուղերը. Ճորոխի աջ ափին էին գտնվում Ամգիտը և Լազուզետը, իսկ նրանց դեմ գիմաց՝ Ճորոխի ձախ ափի բարձրագույն վայրում՝ Դորդքիլիսան (Չորդվանք) և Սակութը:

Այստեղ հարկ ենք համարում մի փոքր անդրադառնալ Դորդքիլիսա գյուղի անվան պատմությանը՝ պարզաբանելու համար նաև դյուղի բնակչությունն էթնոկրոնական պատկանելությունը: Դորդքիլիսա անունը բնակավայրը ստացել է թուրքական տիրապետության հաստատումից հետո: Մինչ այդ այն կրել է Չորդվանք անունը, որը բառացիորեն թարգմանվել է թուրքերի կողմից (չորս-գորդ, վանք-քիլիսա): Գյուղը հայտնի է IX դ. իր եռանավ բազիլիկ տաճարով, որը X դարում վերանորոգվում է Դավիթ Կյուրապաղատի պատվերով: Գյուղը Չորդվանք է անվանվել հուշարձանի կառուցմանը ժամանակակից տեղի Հայ բնակչության բարբառով¹²: Է. Թաղախչիլիու համաձայն, հուշարձանը Չորդվանք է կոչվում ոչ թե այն պատճառով, որ այնտեղ չորս եկեղեցի է կառուցված եղել, այլ այն պատճառով, որ Օչկից, Խախուից և Իշխանից հետո այն չորրորդ հրաշակերտ եկեղեցին է¹³: Հուշարձանը նկարագրելիս է. Թաղախչիլիին, ելնելով քաղաքական դրագրատաներից, չի նշում նրա իսկական Հայկական անունը: Դրա փոխարեն նա օգտագործում է բնակավայրի Հայկական անվան ուղղակի վրացերեն թարգմանությունը՝ Օթխթա-էկլեսիա, փորձելով նաև ապացուցել, որ դա բնակավայրի և հուշարձանի հնագույն անվանումն է: Իրականում Չորդվանքը քաղկեդոնիկ Հայերի եպիսկոպոսական նստավայրն էր, որը Մամիկոնյանների շառավիղներից Թոռնիկյանների ժառանգական գրառությունն էր¹⁴: Թոռնիկյան եպիսկոպոսները կրել են «Չորդվանքի» պատվանուն տիրույթը: «Չորդվանքի» անվան մեջ «ելի» վերջավորությունը վրացերեն է և համապատասխանում է Հայերեն «եցի» վերջածանցին (Չորդվանեցի): Սա բացատրվում է Հենց այն իրողությունով, որ բնակավայրը և հուշարձանը պատկանելիս են եղել քաղկեդոնիկ Հայերին և ոչ մի դեպքում վրացիներին, ինչպես պնդում է Է. Թաղախչիլիին: Հակառակ դեպքում Չորդվանքի տիրույթի փոխարեն մենք, ամենայն հավանականությամբ, կհանդիպեինք վրացերեն «Օթխթաէկլեսիա» տիրույթին: Բացի այդ «Չորդվանք» տիրույթից առաջացել են բազմաթիվ անձնանուններ, որոնք հանդիպում են Հատկապես Թոռնիկյանների մոտ: Պատմությանը հայտնի են մի շարք «Չորդվանքներ», որոնք X դարից սկսած մեծ դեր են ունեցել Տայքի քաղաքական կյանքում¹⁵:

Անդրադառնալ Կիսկիմի լիվայի բնակավայրերի տեղագրությանը: Այսպես, Լազուզետ գյուղից հարավ՝ համանուն առվակների ափերին էին գտնվում Գիվնաս, Ջիլի և Փեչկով գյուղերը: Գիվնասից մի փոքր հարավ՝ Ճորոխի աջ ափին էր Կոջեթը, որից արևմուտք՝ Ճորոխի ձախ ափին էր ընկած Բերդագրակը: Բերդագրակի անմիջական հարևանն էր Իրխսբերդը (Երիցբերդ), որը սկսվում էր Ճորոխի ափից և ձգվում լեռան լանջին ի վեր: Գյուղի տարածքում պահպանվում են միջնադարյան դղյակի և միջնաբերդի ավերակները¹⁶: Իրխսբերդից հարավ ընկած էր Մարաշ գյուղը, որից հարավ-արևմուտք գտնվում էր Չամքերթանը¹⁷:

Չամքերթանից արևելք՝ Ճորոխի աջ ափին էր գտնվում Արսիս (Էրսիս) գյուղը, որից հարավ ընկած էին Կիսկիմը՝ ս. Աստվածածին

¹² Տե՛ս Մարտիրոսի Տ., Հայ ճարտարապետության հուշարձաններ. Խորագույն Հայք, էջ 155:

¹³ Տե՛ս Такайшвили Э., Археологическая экспедиция 1918 года в Южные провинции Грузии, էջ 82: Ի Դ դեպ, Չորդվանքի հանդիպակաց սարի լանջին՝ դժվար հասանելի վայրում, կարելի է տեսնել ոչ մեծ եկեղեցու մնացորդներ: Եկեղեցու պատերը կանգուն են մոտ 1,5 մ բարձրությամբ: Վրաց հետազոտողներն այս եկեղեցին անվանում են «Մուխլաթիլիսա» և հուշարձանը քվարդում VI-VII դարերով: Տե՛ս Закарая П., Золчество Тао-Кларджет, Тбилиси, 1990, էջ 18-20:

¹⁴ Տե՛ս Երեմյան Ս., Մամիկոնյաններ, ՀՍՀ, հ. 7, էջ 193:

¹⁵ Տե՛ս Դանիելյան Է., Տարոնի և Սասունի Մամիկոնյաններ-Թոռնիկյանները, ՊԸՀ, 1979, № 2, էջ 140-141: Մագիստրոս Չորդվանքը մասնակցել է Վախյ II-ի դեմ Վարդ Փոկասի ապստամբությանը, Լիպարիտ գործակալի քրոջ որդի Չորդվանքը 1021 թ. զինակցել է սելջուկների դեմ դուրս եկած Վահրամ Պահլավունուն:

¹⁶ Տե՛ս Ասրապետ, նշվ. աշխ., էջ 113:

¹⁷ Տե՛ս Карта Кавказского края с показанием густоты армянского населения, Баку, 1908.

եկեղեցով¹⁸ և Կիսկիմբերդը: Սրանց մերձակայքում էին գտնվում Կյանգնիս և Ղազերնիս (Ղազարենց) բնակավայրերը: Ղազերնիսն ընկած էր Բեջիդլին լեռան լանջին և ժողովրդի կողմից անվանվում էր Կազերենց: Այս գյուղից հարավ-արևմուտք՝ ձորոխի հոսանքն ի վեր, գտնվում էին Նիխադ-աջ, Չարկոնց (Ջորկանց) և Որջնհազ (Օրջոխ, Օշնխ) գյուղերը: Այս գյուղերից հասկապես Չարկոնցը գտնվում էր Թորթումի լիվայի սահմանագլխին՝ Սիվրի-գաղ լեռնաշղթայի լեռներից մեկի լանջին, որից արևելք արդեն Թորթումի լիվան էր: Որջնհազ գյուղն իր հերթին հայտնի էր դեռևս Մամիկոնյանների ժամանակ կառուցված ամրոցով, որոնք Թուրքական տիրապետության ժամանակահատվածում վերածվել էին ավերակների կույտի: Որջնհազը հայտնի էր նաև նրանով, որ Ալարայրի ճակատամարտից հետո Վարդան Մամիկոնյանի եղբայր Հմայակը զոհվում է այստեղ՝ պարսիկների հետ մղած մարտի ժամանակ¹⁹:

Չամբերթան գյուղից հարավ-արևմուտք՝ ձորոխի հոսանքն ի վեր ընկած էին Լնգամբ (Խնգեմբ), Իծածոր (Իսածոր, Օծածոր), Ծալա և Քարեկամուրջ (Փարմիջ-կիրճ) գյուղերը, որոնց դաշտերն ու այգիները ուռազվում էին նույնանուն առվակների կողմից²⁰: Քարեկամուրջից հյուսիս-արևմուտք գտնվում էին հայ կաթողիկ Վերին և Ստորին Մոխրկուտ գյուղերը: Այս գյուղերը երանավող լեռով բաժանված են Խոտորջուրի գյուղախմբից: Ամենայն հավանականությամբ Մոխրկուտներն, ինչպես նաև շրջակա հայ կաթողիկ մյուս գյուղերն ընդգրկված են եղել միևնույն նահիեի մեջ:

Համաձայն Հ. Տաշյանի՝ բացի Վերին և Ստորին Մոխրկուտներից, նրանց միջև ընկած Գորգանց գյուղը (Թաղը) և ձորոխի ափին ընկած Արեգին գյուղը ևս պատկանում էին Մոխրկուտին²¹: Ղ. Ինճիճյանը թվարկելով Կիսկիմբի գավառի հայաբնակ գյուղերը, Մոխրկուտի մասին գրում է. «Քարեկամուրջ, Վերի և Վարի Մոխրկուտ, որք են՝ 2 գիւղորէք Հայոց»²²: Ղ. Ինճիճյանը չի հիշատակում այս գյուղի բնակիչների թվում մահմեդականների, ուստի հետևում է, որ մահմեդական ազգաբնակչության հաստատվելը Մոխրկուտում

անդի է ունեցել XIX դարից ոչ շուտ: Կ. Կոխը, նկարագրելով Մոխրկուտը, գրում է, որ այդ մեծ գյուղն ունի 200 տուն, ուր բնակվում են 1000—1200 մահմեդականներ, հայեր և մի քանի հույներ²³:

Մոխրկուտից հարավ՝ ձորոխի աջ ափին էին հայաշատ Մեափուսց, Կուզրաշեն, Տանձուտ և Կարմիրք գյուղերը: Այս գյուղերի հայ ազգաբնակչությունը ևս կաթողիկ էր: Համաձայն Ղ. Ինճիճյանի. «Կուտրաշեն, Մեափուսց, գիւղորէք բնակեալ ի Հայոց»²⁴: Ի տարբերություն Կուզրաշենի և Կարմիրքի, Մեափուսցն ավելի փոքր գյուղ էր և «սեպհական քահանայ չըլլալով՝ մերձակայ Կարմիրքէ կը հոգացուի»²⁵: Առհասարակ, Տաշի բոլոր հայ կաթողիկ եկեղեցիներում ծիսակատարությունները անց էին կացվում հայերենով²⁶: Կարմիրք գյուղի մասին Ղ. Ինճիճյանը գրում է. «Կարմիրք, գիւղ յարեւելս կոյս ձորոխի գետոյն բնակեալ ի Հայոց ի յարեւմուտս Թորթումայ և ի յարեւելս Խոտորջուր, և է վերջին սահման Սպերոյ ի հիւսիսոյ»²⁷: Իրականում Կարմիրքը չէր կարող լինել Խոտորջուրի արևելյան և Սպերի հյուսիսային կողմում, այլ այն ընկած էր Խոտորջուրից հարավ-արևելք և Սպերից հյուսիս-արևելք²⁸: Ինչ վերաբերում է Կարմիրքի Սպերի գավառին պատկանելուն, ապա, ինչպես երևում է հետագա հեղինակների աշխատություններում, Կարմիրքը, միանշանակ, Կիսկիմբի գավառի տարածքում է: Ջրացառելով Ղ. Ինճիճյանի հաղորդած տեղեկության ոչ ստույգ լինելը՝ նշնք նաև, որ հնարավոր է, որ XVIII դ. վերջին Կարմիրքը կարճ ժամանակով հայտնվել էր Սպերի լիվայի կազմում:

ձորոխի ձախ ափին Կիսկիմբի գավառը հասնում էր մինչև Խոտորջուր կոչվող գյուղախումբը: Սպերի և Կիսկիմբի գավառների միջև բաժանման գիծն ընկած էր Խոտորջուրի և Հունուտ գյուղի միջև ընկած ոչ բարձր լեռներով՝ Հունուտը թողնելով Սպերին, իսկ Խոտորջուրը՝ Կիսկիմբին: Խոտորջուրն ընկած էր նույնանուն գետակի և նրա փոքր վտակների ափերին: Խոտորջուր գետակը (Մեծ գետ) սկիզբ է առնում Քաջքար լեռան լանջերից և ձախից թափվում ձորոխի մեջ: Գյուղախումբը բաղկացած էր ինը հիմնական գյուղերից

¹⁸ Տե՛ս Կոստանդյան Է., Արևմտյան Հայաստանի հայաբնակ վայրերի վերաբերյալ գ. Սրվանձտյանի կազմած փճակագրություններից, ԲՀԱ, 1983, № 2, էջ 85:

¹⁹ Տե՛ս Լեռ, Հայոց պատմություն, հ. 2, էջ 82-83:

²⁰ Տե՛ս Копия турецкой карты Анатолии, Тифлис, 1915.

²¹ Տե՛ս Տաշյան Հ., Տայք, դրացիք և Խոտորջուր, ՀԱ, 1973, 1-3, էջ 43:

²² Ինճիճյան Ղ., Աշխարհագրություն..., էջ 133:

²³ Տե՛ս Koch K., Reise im Pontischen Gebirge und Türkisch Armenien, s. 81.

²⁴ Ինճիճյան Ղ., Աշխարհագրություն..., էջ 133:

²⁵ Տաշյան Հ., Տայք, դրացիք և Խոտորջուր, ՀԱ, 1973, 1-3, էջ 47:

²⁶ Տե՛ս Արձագանք, 1885, 31 դեկտ., էջ 367:

²⁷ Ինճիճյան Ղ., Աշխարհագրություն..., էջ 95:

²⁸ Տե՛ս Копия турецкой карты Анатолии.

(Թաղերից)՝ Գեղուտ, Խանդավազ, Կաղմխուտ, Կիսակ, Կրման, Ճիճապաղ, Միջին թաղ, Վահան և Սուեննց: Գյուղախմբին էին պատկանում նաև 33 բարեկենս ամառանոցները և 10 ձմեռանոցները²⁹:

Խոտորչրի տարածքը մինչև VIII դարը պատկանել է եղել Մամիկոնյաններին, այնուհետև՝ Բագրատունիներին, իսկ XIII—XVI դարերում ընդգրկված է եղել Սամցիեի աթաբեկության կազմի մեջ: Ղ. Ինճիճյանն այսպես է նկարագրում Խոտորչուրը. «Ցրտուի օղոյ սրա ի լեռնային վայրս, գրեթե նման է գաւառին Էրզրուումայ. իսկ ի ձորավայրս առաւել ջերմ է քան զնորայն: Երկիրն լեռնային և ապառաժուտ, ունի և ձոր բազում և լերինս Հողայինս, յորս բազում աղբերակունք գտանին քաղցր և պատուական ջուրց. այլ և խոտաւէտ արօտս անասնոց. ի տեղիս տեղիս ունի և անառ գանազան ծառոց: Բայ ի Հայոց օտար ազգ ոչ գտանի ի Խոտորչուր. ո՛չ օսմանեանք, ո՛չ քորդք և ո՛չ լազք. միայն ի դարնան ժամանակի ընդ այս ճանապարհորդան լազք ի գնալն յէրզրուում. բայց բնակիչք ամի ամի տան իրբև 200 կամ 300 զուոււշ լազ տերեպեյիին՝ որ բունացեալ է այն կողմանս»³⁰:

Իրենց կենցաղով խոտորչուրցիները շատ ավելի բարձր էին կանգնած, քան նրանց շրջապատող գյուղերի բնակիչները. «Տները գեղեցիկ են, մեծ մասամբ երկյարկանի և ծառազարդ, ապրուստով և հագուստով վայելուչ, հաւատալիքների մէջ՝ խստապահ. իւրաքանչիւր թաղ ունի իր եկեղեցին և մատուռը. տարուայ մէջ մի քանի անգամ տօնական հանդէսներ են կատարում և կեր ու խում անում և շնորհիվ այս բոլորի Խոտորչուրը շրջակայ բնակիչների կողմից արժանացել է «Պղտիկ Հռոմ» կոչման»³¹: Խոտորչրի հողը գյուղական հանգիստ կյանք վարելու համար հազիվ կբավարարեր 200 տուն բնակչության համար, սակայն Խոտորչրի բնակչությունը կրկնակի անգամ գերազանցում էր այդ թվին: Ուստի գոյատևման միջոցների անհրաժեշտությունը խոտորչուրցիների կյանքը բաժանում էր երկու մասի՝ գյուղական և քաղաքային: Գրեթե բոլոր խոտորչուրցի տղամարդիկ, պատանեկությունից սկսած մինչև ծերություն, կյանքի մեծագույն մասն անցկացնում էին պանդխտության մեջ. «Քսան խոտորչուրցուց հազիւ մէկը բաղդ կ'ունենայ իւր ընտանեաց մէջ

²⁹ Տե՛ս Գևորգյան Թ., Խոտորչուր, ԲԵՂ, 1971, 3, էջ 205:

³⁰ Ինճիճյան Գ., Աշխարհագրութիւն..., էջ 133:

³¹ Ա.Պո, նշվ. աշխ., էջ 199:

գլուխը հանգիստ բարձին վրայ դնել, և իւր սկզբները իւր հարցմանաւանդ մարց սկիւրց հետ խառնուելու»³²:

Խոտորչրի գյուղերի սեղագրությունը սկսենք առավել բարձրագույն շրջաններից, որոնք ավելի մոտ էին գտնվում Խոտորչուր գետակի ակունքներին: Այստեղ ամենահեռավոր գյուղերն էին Գեղուտն ու Վահանն: Խոտորչուր գետակի հոսանքն ի վար հաջորդ գյուղը Կաղմխուտն էր: Մյուս թաղերն ընկած էին իրար ավելի մոտ. Կաղմխուտից հարավ-արևելք Սուեննցն էր, որին հաջորդում էին Կիսակը, Միջին թաղը և Կրմանը*: Կիսակից արևմուտք ընկած էր Խանդավազը, իսկ հարավից Կիսակին սահմանակից էր Ճիճապաղը: Համաձայն Ղ. Ալիշանի, XIX դ. կեսին Խոտորչուրն ուներ շուրջ 400 տուն բնակիչ, ուր ապրում էին 2000-ից ավելի հայեր³³:

XVI—XVIII դարերում թուրքերի վարած ներքին և արտաքին քաղաքականության հետևանքով Կիսակիմի գավառի հայ ազգաբնակչության զվիսին կախվում է ֆիզիկական բնաջնջման օրբստօրե ահաբեկող վտանգը: Գավառի հայությունն ընտրության շատ քիչ տարբերակներ ուներ: Հայության մի մասը փորձեց ազատվել բնաջնջման վտանգից՝ մտնելով կաթոլիկ եկեղեցու հովանու ներքո: XVIII—XIX դարերում հայ բնակչության մի ստվար զանգված ընդունեց մահմեդականություն: Սակայն իսլամի տարածվելուն հայության մեջ, Ատրպետի համոզմամբ, նպաստում էր «Ղուրանի աշարը (տասնորդական հարկը), քան թէ Մահմեդի խոտաացած դրախտի մշտնջենական խրախճանքը»³⁴:

Բազմաթիվ հալածանքների, կոտորածների ու բռնի իսլամացման ենթարկվելուց հետո անգամ Կիսակիմի գավառում, համաձայն Գ. Սրվանձաթյանի, XIX դ. վերջին 18 հայաբնակ գյուղեր գոյություն ունեին³⁵, ուր հայությունն զրազված էր խաղաղ ու ստեղծագործ աշխատանքով:

Պարխարի լիվա: Պարխարի լիվան գտնվում էր Տայքի Արտեացիոր գավառում՝ ընդգրկելով նրա Հյուսիսային կեսը: Այն հարա-

³² Տեղագրութիւն Խոտորչուր, Բագմալիպ հանդիսարան, Խ. Լ.Գ., էջ 334:

* Կրմանը կարելի էր համարել նաև քաղաքական ու մշակութային կենտրոն: Այստեղ 1914 թ. լույս էր տեսնում «Աղավնի Տայց» թերթը:

³³ Տե՛ս Ալիշան Գ., Տեղագիր հայոց մեծաց, էջ 39:

³⁴ Ատրպետ, նշվ. աշխ., էջ 118:

³⁵ Տե՛ս Կոստանյան Է., նշվ. աշխ., էջ 85:

վից սահմանակից էր Կիսկիմի (Բերդազրակի) գավառին, որից բաժանվում է Պոնտական լեռներից սկսվող Բավոտ-դաղի լեռնաշղթայով, որը նաև Հանդիսանում է Ճորոխ գետի Խոտորջուր և Պարխար վտակների ջրբաժանը: Պարխարի գավառին արևելքից սահմանակից էր Թավուսքարը, որի Հես սահմանն անցնում էր Ճորոխ գետով, Հյուսիս-արևելքից՝ Լիվանեն, որից բաժանվում էր Դիզուրե-դաղով: Պարխարի լիվայի Հյուսիսարևմտյան սահմանն անցում էր Պոնտական լեռներով, որից այն կողմ Համշենն էր: Իր այս սահմաններով Պարխարի գավառն ամբողջությամբ դառնում էր Տայքի կազմում և Կիսկիմի գավառի Հես կազմում էր Մեծ Հայքի Հյուսիսարևմտյան սահմանը:

Որպես վարչական առանձին միավոր՝ Պարխարի լիվան առաջացել է բավականին ուշ՝ XVIII դ. վերջին: Մինչ այդ այն ընդգրկված էր հարևան վարչամիավորների՝ մերթ Կիսկիմի, մերթ Լիվանի կազմի մեջ: Համաձայն Ղ. Ալիշանի՝ XLX դ. կեսերին Պարխարի լիվան նորից Լիվանի կազմում էր. «Են Արդուխնայ իբրև 100 գեօղք, ընդ որս և ավանն Պարխար՝ Համանուն լեռանց յորոց միջի կայ և գետակին, որ խառնի ի Ճորոխ»³⁶: XLX դ. կեսին գերմանացի Նշանավոր ճանապարհորդ Կ. Կոխը Պարխարի գավառի մեծագույն մասը դնելով Լիվանի կազմի մեջ, Պարխար ավանից Հյուսիս ընկած Խեակ գյուղն իր շրջակայքով դիտում էր Կիսկիմի լիվայի կազմում³⁷:

Պարխարի լիվան հարուստ է գետային ցանցով: Գավառի կենտրոնով Հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք հոսում է Պարխար գետը, որը սկսվում է Պոնտական լեռներից և թափվում Ճորոխի մեջ: Նրանից աջից և ձախից միանում են բազմաթիվ վտակներ: Պարխարի աջակողմյան վտակներից առավել խոշորներն են Մերեխեի, Բալխար-Մացրայի, Յալլայի, Վանիցգեղի (Վանիսխև), Կիսպարոզի (Կիցիորոտ), Վաչանկերտի (Վժանգետ) առուները: Զախակողմյան վտակներն ավելի խոշոր են: Բաջբարի մերձակայքից (Ալթրփարմագ լեռնաշղթայից) սկիզբ է առնում Աթթի (Էթթի) առվակը, որը միանում է Քոբակ առվակին: Քոբակն իր հերթին սկիզբ է առնում Մարցիս լեռնաշղթայից և մինչև Աթթի առվակն ընդունելը, աջ կողմից ընդունում է Խեակի առուն, որը ևս սկիզբ է առնում Պոնտական լեռներից: Մինչև Պարխարին միանալը Քոբակը միանում է Սա-

նացրիս լեռներից իջած Բահլ առվակին: Պարխար գետի աջակողմյան խոշորագույն վտակն է Արջիվանը, որն իջնում է Քյուլքուրդ (Քվախիդ) և Գուլիխանի լեռներից³⁸: Սա իր մեջ է ընդունում Սովիցկալ, Վակե և Խամրուտ առվակները, ինչպես նաև մի քանի ավելի փոքր առվակներ: Արջիվանի առվակը Պարխարին է միանում վերջինիս Ճորոխի Հես միանալու վայրից 4 կմ վերև:

Բացի Պարխարից և նրա քառասունի Համնոդ վտակներից, Պարխար լիվայի տարածքում է նաև Պարխար գետի ակունքների շրջանում գտնվող Այդը (Հովտակ) լիճը, որի մերձակայքում կան նաև ճահճուտներ: Գավառը հարուստ էր երկաթի Հանքերով: Տարածված էր նաև այծի մի տեսակ, որը կոչվում էր չեփիդ³⁹:

Պարխարի ամբողջ գավառը նման է մի վիթխարի այգեստանի, որն Ախալցխայի նահանգում առանձնանում էր իր աննկարագրելի գեղեցկությամբ: Այգեստանները ոռոգվում էին ինչպես բազմաթիվ առվակներով, այնպես էլ միջնադարյան ջրանցքով, որը սկսվում էր Ութավ գյուղի մոտից և հասնում մինչև Զավրիթ գյուղը: Ուշագրավ է, որ ջրանցքի մի հատվածը կառուցված էր ժայռի մեջ⁴⁰:

Պարխարի լիվայի կենտրոնը Պարխար գյուղն էր (ավան): Այն գտնվում էր Ճորոխ և Պարխար գետերի միախառնման վայրից մոտ 25 կմ վերև: Ղ. Ինճիճյանը գրում է. «Ունի գրեզ գլխաւոր նոյնպես Պարխալ կոչեցեալ. արևմուտս հարաւոյ Արդուխնոյ, հեռ ի նմանէ և էրզիտումայ իբր 4 աւուրք: Յառաջն էր քաղաք, այլ ի բազմաց հետէ անմարդացեալ եղև դիւղ. բնակիչք նորա տաճիկք...»⁴¹: Պարխար գյուղը զարգարված էր ընդարձակ պարտեզներով ու այգեստաններով, ուներ 3-5 կմ երկարություն և 3-4 կմ լայնություն: Այս գեղատեսիլ բնակավայրը XIX դ. վերջին ուներ 200 տուն բնակիչ, «...ուր մարդիկ շատ քիչ էին իրար հանդիպում, ուր կանայք զարդարված իրար չեն դիմավորում փողոցներում, ազոթարաններում կամ բաղնիքներում, այլ միայն կարիք եղած ժամանակ իրար այգի են մտնում որևէ ուտելիք կամ գործիք փոխ վերցնելու»⁴²: Պարխար գյուղը բաժանված էր 11 շրջանների, որոնք թուրքերեն կոչվում էին «մեհլե»: Դրանք էին Կեչուտ (Գոչվաստ), Կիլիոն, Փիզվոտ, Բուղա-

³⁶ Ալիշան Ղ., Տիղագիր հայոց մեծագ, էջ 39:

³⁷ Տե՛ս Koch K., Reise im Pontischen Gebirge und Türkisch Armenien, էջ 98-99:

³⁸ Տե՛ս Ատրպետ, նշվ. աշխ., էջ 121-122:

³⁹ Տե՛ս Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն..., էջ 131:

⁴⁰ Տե՛ս Такашвасян Э., նշվ. աշխ., էջ 90:

⁴¹ Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն..., էջ 131:

⁴² Ատրպետ, նշվ. աշխ., էջ 120:

կերտ (Բուղակետ), Բուղեթլար, Ջատկար, Փերսեթ, Անանիսկետ (Անանիակերտ), Միզինգիլ, Լազինգիլ և Սուլթանդիլ⁴³: Այս վերջինի տարածքում էր գտնվում Պարխարի նշանավոր եկեղեցին, որը կառուցվել էր 973 թ. Դավիթ Կյուրապաղատի կողմից և պատերին պահպանվում են վրացերեն արձանագրություններ⁴⁴: Մի քանի մեհ-լեներ (Դոլոս, Քելենիս, Բուլսիս, Բոտավան, Կոսպար) գտնվում էին գյուղի տարածքից դուրս՝ մի փոքր դեպի Հյուսիս⁴⁵: Պարխար գյուղի բնակչությունը, բացի այգեգործությունից, զբաղվում էր նաև անասնապահությամբ: Նրանց հիմնական արտադրանքները գտնվում էին Աթրփարմազ (վեց մաս) լեռան լանջերին:

Գավառի բնակավայրերի տեղագրությունը սկսեց Հյուսիսարևմուտքից՝ Քաջքարի լանջերին գտնվող բնակավայրերից: Այստեղ է Աթթի գյուղը, որից հարավ-արևելք՝ համանուն առվակի ափին էր Աուգասիս (Սուրդաս) գյուղը: Այս երկու գյուղերի միջով հոսող առվակների ուղղությունը արևմուտքից արևելք է: Սրանք աջից միանում են Քորակ առվակին: Վերջինիս ակունքների մոտ է Պարխարի լիվայի Հյուսիսային շրջանում գտնվող Քորակ գյուղը: Քորակից հարավ՝ մինչև Աթթի առվակի հետ միախառնվելը, ընկած էր Խևակի ձորը՝ իր երբեմնի հայաշատ Խևակ գյուղով: Խևակը բավականին ուրույն գիրք էր զբաղվում շրջակա գյուղերի նկատմամբ: Չնայած այն հանգամանքին, որ Խևակը գտնվում էր Պարխարի լիվայի կազմում, նրա բնակիչները հիմնականում շփվում էին Կիսկիմի լիվայի և մասնավորապես Խոտորջուրցիների հետ, ուր ամռանը խեակցիները գնում էին աշխատանք որոնելու: Խևակցիները Խոտորջուր էին ուղևորվում հիմնականում լեռնային ճանապարհով՝ այն է Քաջքար լեռան լանջերով, քանի որ Քաջքարի Հյուսիսարևելյան ոտքը Խևակն էր, իսկ հարավայինը՝ Խոտորջուրը: Խևակի մասին Ղ. Ինճիճյանը գրում է. «Խևակ. գեղը իբր 8 ժամաւ հեռի ի Համշէնէ, և իբր 3 ժամաւ ի Խոտորջուր ի հիւսիսակողմն նորա, կառուցեալ ի լանջակողմն բարձր լերին: Բնակիչք նորա առհասարակ տաճիկք իբրև 200 տունք զարձեալ ազգէս հայոց. և իբր 5 կամ 6 տունք մնացեալք ի հայոց»⁴⁶: Ղ. Ինճիճյանից կես հարյուրամյակ անց Խևակի մասին է հիշատակում

⁴³ Տե՛ս Такайшвили Э., նշվ. աշխ., էջ 90:
⁴⁴ Տե՛ս Պատիկեան Յ., Տայք: Բարձր Հայք: Վրացական, քե՞ հայկական, էջ 93
⁴⁵ Տե՛ս Такайшвили Э., նշվ. աշխ., էջ 90:
⁴⁶ Ինճիճյան Ղ., Աշխարհագրորին..., էջ 397:

Ք. Կոխը, համաձայն որի Խևակը տարածքային առումով ենթարկվում էր Բերդագրակի (Կիսկիմի) լիվային, կազմված էր 5 գյուղաձառերից և ուներ 1000–1200 բնակիչ՝ 200 տնով⁴⁷: Ինճիճյանի և Կոխի հաղորդած տեղեկությունները Խևակ գյուղի բնակչության թվի վերաբերյալ, հասկանալի է, որ մոտավոր են, սակայն ուշադրության է արժանի այն իրողությունը, որ, չնայած մեծաթիվ մահացական բնակչության առկայությանը, նրանց կողքին շարունակում էր ապրել ու արարել թեպետև սակավաթիվ, բայց այսուհանդերձ հա՛յ բնակչությունը:

Քորակ վտակի ստորին հատվածում՝ Պարխար ավանից 4–5 կմ հեռավորության վրա էր գտնվում Հուգասիս գյուղը, որին հարավից հարևան էր Աթթավը: Հուգասիսից արևելք ընկած էին Բահլ գյուղը և նրա այգեստանները, որոնք համարյա թե միացած էին Հուգասիս և Պարխար գյուղերին ու նրանց այգեստաններին: Բահլից հարավ-արևելք՝ նույնանուն առվակի ափին էր Ցատլիցքար (Մաթլիսկար) գյուղը⁴⁸: Պարխար ավանից հարավ-արևմուտք գտնվում էր Մերեխեի (Մորեխի) յայլան, որից սկիզբ առնող առվակը Պարխարի մեջ է թափվում գավառի կենտրոնից ոչ հեռու: Մինչև Պարխար գետի և նրա Արջիվան վտակի միախառնվելը՝ Պարխարի ձախ ափին՝ իրար գրեթե կողք կողքի, ընկած էին Օրթիրաղ, Դեթիսա և Սարիգյուլ (Դեղին լիճ) գյուղերը: Սարիգյուլ գյուղից ոչ հեռու Պարխարի մեջ է թափվում Արջիվան վտակը, որից այն կողմ համրույթ և Վժանգետ (Վաչանկերտ) գյուղերն էին: Վերջինիս հարևանությունում շորթի ափին էր գտնվում Կծոխուր (Կոզխուր, Գոցախոո) գյուղը:

Պարխարի աջ ափին ընկած էին հետևյալ գյուղերը. գավառի կենտրոնից մոտ 5 կմ հարավ գտնվում էր Բալխար-Մացրա գյուղը, որից արևելք Շալովարն էր: Սարիգյուլից հարավ-արևմուտք Վանից գեղն էր (Վանիսիս), իսկ Վժանգետի անմիջական հարևանությամբ Պարխարի հակառակ ափին՝ Կիսպարոզը (Կիցփորուտ):

Պարխար գավառի Հյուսիսարևելյան և արևելյան հատվածում էր Արջիվանի նահիեն՝ համանուն վտակի ավազանում: Արջիվանի ակունքների շրջանում՝ բարձրադիր վայրում, գտնվում էր Արջիվան գյուղը, որին հարավ-արևելքից սահմանակից էր Սովիցկալը: Այս

⁴⁷ Տե՛ս Koch K., Reise im Pontischen Gebirge und Türkisch Armenien, էջ 98:
⁴⁸ Տե՛ս Ասրապետ, նշվ. աշխ., էջ 121–122:

երկու գյուղերից հարավ ընկած էր Մոխրար գյուղը, որին սահմանակից էր Վահե գյուղը: Վերջինս հայտնի է իր տարածքում պահպանվող բերդի մնացորդներով: Վահեի հարավարևելյան հարևաններն էին Արմաշեն և Կոչնարիա գյուղերը, որոնք ընկած էին համանուն առվակների ափերին: Սրանցից հարավ ընկած էին Օկդեմ և Բաշկարեթ գյուղերը, որոնցից արևմուտք ընկած էր Շագում (Շագում) գյուղը:

Պարխարի դավառը, իր վրա կրելով վրացականացման, ապա նաև բունի մահմեդականացման հետևանքները, մինչև XIX դարը գրեթե լիովին փոխեց իր էթնոկրոնական կազմը՝ հայկական հետքը թողնելով միայն որոշ բնակավայրերի և աշխարհագրական մի շարք այլ վայրերի անվանումներում:

բ) Կենտրոնական դավառներ

Թորթումի լիվա: Թորթումի լիվան տեղագրվում է Տալքի Ոջաղե և Ազորդացիոր դավառներում: Այն ընկած է Թորթում (Հնում Ազորդ) գետի և նրա բազմաթիվ վտակների ավազանում: Թորթումն իր կլիմայական և աշխարհագրական պայմաններով մի հետաքրքիր շրջան է: Այն պատված է ձորերով ու լեռներով: Բազմաթիվ մեծ ու փոքր վտակներ՝ մայր գետով հանդերձ, աջ ու ձախ աղոտում են երկիրը՝ իրենց գետաբերաններում հյուսիսայնից ավազատու պարտեզներ և խաղողի այգիներ⁴⁹: Անատոսպատ լեռները, գետերով ակոսված ձորերն ու գետահովիտները դավառին տալիս են մի առանձին ու յուրահատուկ գեղեցկություն, իսկ Թորթում գետի միջին հոսանքում պոչացած բնական լճակը լեռների մեջ սեղմված հայելու տեսք ունի:

Թորթումի լիվան արևմուտքից սահմանակից է Սպերի, Հյուսիսարևմուտքից՝ Բերդաբրակի, Հյուսիսից՝ Թավուսբարի, արևելքից՝ Օլթիի և Մամրվանի, հարավից՝ Էրզրումի և Վերին Բասենի դավառներին: Օլթիի դավառի հետ Թորթումի լիվայի ջրբաժան գիծը կազմում են Դավրեա-Կուլկուլ, Ակասա, Զիարեթ, Ազորդեն, Գուլի-Բազդադ, Ակ, Կախիլբերգ, Ատմեկ և Արավետի լեռները: Բերդաբրակի շրջանից Թորթումը բաժանվում է Աշմուշեն, Գերվանց, Հարկ-

ևոր, Բեջիգին, Մեղրբեր, Խախամին, Աղաջբլիսե (Եկեղյաց), լեռներով: Թորթումն Սպերից բաժանվում է Կազան-Բալի, իսկ Էրզրումից՝ Կուչկուչլար և Դումլու լեռներով: Թավուսբարի հետ սահմանն անցնում է Օլթի գետով, որն ընդունելով Թորթում գետը՝ թափվում է ձորոխի մեջ⁵⁰:

Որպես վարչական միավոր՝ Թորթումի լիվան ձևավորվել է XVI դ. երկրորդ կեսին: Թորթումի լիվան այն եզակի վարչական միավորներից էր, որը XVI–XIX դարերի ընթացքում գտնվել է Էրզրումի էյալեթի կազմի մեջ և գրեթե փոփոխությունների չի ենթարկվել: Եթե Բասենն Էրզրումի հացի շտեմարանն էր, ապա Թորթումը հանգիստում էր մրգեղենի շտեմարան⁵¹: Գավառի վարչական կենտրոնը Թորթում ավանն էր: Այն գտնվում էր Թորթում գետի վերին հոսանքի շրջանում, նրա ձախ վտակի ստորին հատվածում՝ Հարկևոր լեռան ջրառատ ձորահովտում: Գյուղից ոչ հեռու՝ մի բարձր ժայռի վրա գտնվում էր նույնանուն բերդը. «Մեծատարած է բերդս այս քան դալս և ահեղ, հիմնացեալ յեզր քարափանն, որ առ գետոյն արկեալ պարսպացն ըստ խոտորնակձևոյ քարածայռին»⁵²: Բերդի հարավային կողմից դեպի ներքև պահպանվում են տարատեսակ քարե շինությունների ավերակներ, ինչպես նաև մի մատուռ: Բերդի հյուսիսային կողմում պահպանվում են երկու հնաշեն բաղնիքների ավերակները⁵³:

Թորթումի լիվայի բնակավայրերը մեծապես տուժել էին թուրքերի վարած ներքին և արտաքին քաղաքականությունից: Միջնադարյան ավերի ու թալանի, ամայացման ու արտադաղթի վառ վկայությունն են Թորթումի դավառի տարածքում պահպանված 120 եկեղեցիների և 10 վանքերի ավերակները⁵⁴: Չնայած թուրքերի հայտնիորձան համաձուլար քաղաքականությունը՝ այսուհանդերձ XIX դ. սկզբի դրությամբ Թորթումի բազմաթիվ բնակավայրեր հայաբնակ էին: Դա ավելի ցայտուն երևում է Ղ. Ինճիճյանի հետևյալ հաղորդումից. «...ունի վիճակ նորայ գերդորէս իբրև 30. ըստ մասին բնակեալ ի հայոց, և ըստ մասին ի տաճկաց»⁵⁵: Մահմեդականացած

⁵⁰ Տե՛ս Ատրպետ, Եջվ. աշխ., էջ 156–157:

⁵¹ Տե՛ս Ա-Դո, Վանի, Բիբլիսի և Էրզրումի վիլայեթները, էջ 201:

⁵² Մարգիսեան Ն., Եջվ. աշխ., էջ 85:

⁵³ Նույն տեղում:

⁵⁴ Տե՛ս Մեղրոյան Ա., Էրզրում, էջ 78:

⁵⁵ Ինճիճյան Ղ., Աշխարհագրութիւն..., էջ 93–94:

⁴⁹ Տե՛ս Ա-Դո, Վանի, Բիբլիսի և Էրզրումի վիլայեթները, էջ 200:

Հայութեան մի մասն էլ առերես էր ընդունել իսլամը: Նմանատիպ Հայերին Հաճախ անվանում էին կեսկեսներ կամ Հայ-լազեր: Վերջիններին մասին ավելի մանրամասն կիսուսի ստորև:

XIX դ. կեսի դրութեամբ դավառի բնակավայրերի թիվը հասնում է 70-ի⁵⁶: Ա-Դոյի Հազորդած տեղեկութունների համաձայն XIX դ. վերջի գրութեամբ Թորթումի գավառն ուներ 73 գյուղ, որից 13-ը Հայաբնակ էին⁵⁷: Սակայն այդ գյուղերի մի մասը փոքրիկ յայլաներ, կամ կիսավեր ու լքված բնակատեղիներ էին⁵⁸:

Գյուղերի տեղագրութունն սկսենք գավառի Հարավ-արևելքից՝ Թորթում գետի աջակողմյան ակունքների շրջանից: Այստեղ էր գտնվում Պար գյուղը, որի մերձակայքում առկա էին աղի հանքեր⁵⁹: Պար գյուղից ոչ հեռու գտնվում էին Վերին և Վարին Խնձորիկ գյուղերը: Սրանցից դեպի Հյուսիս ընկած էր Աղասեր (Աղասար) գյուղը: Վարին Խնձորիկ գյուղից արևմուտք տեղագրվում են Ղազարենց և Բեթղար գյուղերը: Պար գյուղից մի քանի կմ արևմուտք գտնվում էր Շիփեկ գյուղը: Բեթղար գյուղից Հյուսիս իրար են միանում Պար և Շիփեկ գյուղերից իջնող առվակները: Մոտ 5 կմ Հյուսիս Հոսելով այս վտակին է միանում Վերին և Վարին Լսկավ գյուղերից իջնող Համանուն առվակը: Միացման այս վայրում ընկած էին 2 գյուղեր՝ Հարավում՝ Նիխաղը, Հյուսիսում՝ Ղալետրակի գյուղը: Մի քանի առվակներից միացումից առաջացած այս վտակը, մոտ 10 կմ արևմուտք հոսելով, գավառի կենտրոնի մոտ միանում է Թորթում գետի ձախակողմյան վտակին՝ միասին կազմելով Թորթում գետը:

Թորթում գետի ձախակողմյան վտակը սկիզբ է առնում Կուչկուչլար լեռներից: 7 առվակներ դրեթե միևնույն բարձրությունից և հեռավորությունից դուրս են գալիս, մի քանի կմ հոսելով միանում են և կազմում Թորթում վտակը: Այս վտակի ակունքներից մեկի շրջանում է գտնվում Տանքար գյուղը: Այստեղից վտակն ուղղվում է դեպի արևելք՝ իր ձախ ափին թողնելով Կարս (Սարս, Հարս) գյուղը: Մի քանի կմ արևելք հոսելով՝ Քարընկոց (Քարընկեց, Գառընկոց) գյուղի մոտ գետը կտրուկ փոխում է իր ուղղությունը դեպի Հյուսիս: Քարընկոց գյուղի մերձակայքում Թորթում վտակին է

միանում Խոզբրիկ գյուղից իջնող Համանուն առվակը: Քարընկոց գյուղից մի քանի կմ Հյուսիս՝ Թորթումի ափին գտնվում էր Գոչենց գյուղը: Այս գյուղից արևմուտք ընկած էր Մեղուս գյուղը, որին սահմանակից էր դեռևս վաղ միջնադարից Հայսնի Գեղիկը: Գեղիկից ոչ շատ հեռու՝ Հյուսիսարևմտյան ուղղությամբ ընկած էր Վախթիկանց գյուղը:

Գոչենց գյուղից մոտ 5 կմ արևելք ընկած էր մեծամասամբ կաթուղիկ Հայերով բնակեցված Ռաբաթ գյուղը: Այս գյուղը ևս Հայսնի էր իր մերձակայքում գտնվող աղի հանքերով⁶⁰: Ռաբաթ գյուղից Հարավ՝ Թորթում վտակի հակառակ ափին, գտնվում էր Մեղուջուր գյուղը: Ռաբաթից մոտ 2 կմ Հյուսիս գտնվում էր Սաղեր գյուղը, որից Հյուսիս-արևելք ընկած էր գավառի կենտրոնը՝ Թորթում ավանը: Նրանից Հյուսիս ընկած Թորթում ամրոցը, փաստորեն, ավելի մեծ բնակավայր էր, XVIII դ. վերջին ուներ 400 ծուխ Հայ և Հայ-կեսկես բնակիչ⁶¹:

Թորթում ավանից Հյուսիս-արևմուտք ընկած էր Մեղրագոմ գյուղը: Մեղրագոմ, Մեղուջուր և Մեղուս գյուղերի անվան մեջ առկա «մեղու» արմատը վկայում է այն մասին, որ շրջանն ունեցել է մեղվաբուծության հարուստ ավանգույթներ:

Թորթումից 5 կմ Հյուսիս՝ նեղ կիրճում, գտնվում էր Սխտորուտ գյուղը: Գյուղի տարածքում պահպանվում են եկեղեցու և՛ նրան շրջապատող պարսպի ավերակները: Եկեղեցին ուներ շուրջ 10 մ երկարություն և 6,6 մ լայնություն: Ցավոք, եկեղեցու վրայի Հնագույն արձանագրությունները չեն պահպանվել, իսկ եկեղեցին վեր է ածվել մզկիթի⁶²:

Սխտորուտ գյուղից բարձրանում էր դեպի Էքեք (Այգեկ) գյուղը տանող ճանապարհը: Էքեքը գտնվում է Սխտորուտից 1,5–2 կմ հեռավորության վրա, Թորթումի կիրճի վերին հատվածում: Գյուղին էր պատկանում մերձակայքում գտնվող խաչաձև Հիմքով կենտրոնազմբեթ եկեղեցին, որը ևս XIX դարում վերածվել էր մզկիթի: Եկեղեցու վրա պահպանվում են Հունարեն և վրացերեն արձանագրություններ: Արձանագրությունների հատկապես վրացական հատվածը

⁵⁶ Տես Ալիշան Ղ., Տեղագիր Հայոց մեծաց, էջ 37:

⁵⁷ Տես Ա-Դո, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, էջ 201:

⁵⁸ Տես Մայրոնյան Ա., Էրզրում, էջ 79:

⁵⁹ Տես Սարգիսեան Ն., նշվ. աշխ., էջ 85:

⁶⁰ Տես Սարգիսեան Ն., նշվ. աշխ., էջ 85:

⁶¹ Տես Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն..., էջ 93:

⁶² Տես Такайшвили Э., նշվ. աշխ., էջ 79:

կոպիտ տառապխալներով է գրված⁶³: Սա մեզ հիմք է տալիս ենթադրելու, որ եկեղեցու վրայի արձանադրութիւնները չեն կատարվել եկեղեցու կառուցման ժամանակաշրջանում, այլ արվել են ավելի ուշ՝ Տայոց աշխարհի բուռն քաղկեդոնականացման շրջանում:

Ախտորուստ գյուղից արևմուտք՝ իրարից մոտ երկուսական կմ հեռավորութեան վրա ընկած էին 481—484 թթ. հակապարսկական ապստամբութեան շրջանից հայտնի Վարդաշենը⁶⁴, ինչպես նաև Խաչուսար և Նորշենը⁶⁵: Նորշենում XIX դ. կեսերին բնակվում էր 40 տուն հայ կաթողիկներ⁶⁶: Այս գյուղը, ինչպես նաև հայ կաթողիկ մյուս գյուղերը, ստանալով ֆրանսիական հյուպատոսների և կաթողիկ քայրղիչների որոշ աջակցութիւնը, կարողանում էին մասամբ հեռու մնալ բռնի մահաբազանացումից և բնակչութեան շրջանում նկատվող արտադաշթի ընդհանուր միտումից:

Մինչև Թորթումի լիճը՝ Թորթում գետն աջ կողմից ընդունում է Զկնաջուր, Ագրակ (Էգրեք)⁶⁸, Բչնկոց, Աղբաձոր (Աղբըձոր), Ապրնես, Ագորդ, Աղուշեն (Աղաշեն), Օսեթ, Էշկիձոր, Օթղա առվակները, որոնք ողողում են համանուն գյուղերը, ինչպես նաև նրանց շրջակա յայլանները, ձմեռանոցները, բերդերը, ամրոցները, վանքերն ու այրերը⁶⁷: Նշված առվակները հոսում են իրար զուգահեռ, իսկ նրանց միջև առկա են ոչ այնքան բարձր ջրբաժան լեռներ: Վերոհիշյալ գյուղերից իրար հատկապես մոտ էին գտնվում Ագորդ, Աղաշեն և Օսեթ գյուղերը: Ագորդը պատմական Ագորդացիոր գավառի կենտրոնն էր, գտնվում էր անտառազուրկ և տափարակ վայրում: Գյուղում պահպանվում են հայկական հին բերդի ու եկեղեցու ավերակները: Օթղա գյուղի մոտից սկիզբ առնող նույնանուն առվակը, բացի Օթղայից ողողում էր նաև Թորթում լճի հարավային ափից ոչ հեռու գտնվող Իս գյուղի դաշտերն ու հանդերը: Իս գյուղն ընկած էր Օթղայի աջ ափին, գյուղի ծայրին պահպանվում են եկեղեցու

ավերակներ, որոնք XX դ. սկզբին, համաձայն է. Թաղաիշվիլու, ծառայում էին իբրև հարդանոց⁶⁸:

Թորթում գետը գավառի կենտրոնն անցնելուց հետո ձախից ընդունում է Նալթյոքյան և Օղեկ-Ողեկ լեռներից բխող առվակները⁶⁹: Դրանք են Գեոյտերե (Գյոք), Աղջրիկ, Չանկրես, Մաքիձոր և Քցխա (Քիսխա) առվակները, որոնք անցնում են համանուն գյուղերի միջով, ապա միանալով թափվում են Թորթում գետի մեջ: Այս գյուղերից առավել բարձրագույն էր Գեոյտերեն, որը շրջակա գյուղերի նկատմամբ իշխող դիրք էր գրավում: Սրանից հարավ-արևելք գտնվում էին Աղջրիկ և Չանկրես գյուղերը: Չանկրեսից հյուսիս-արևելք ընկած էին Մաքիձոր և Քցխա գյուղերը⁷⁰: Քցխա գյուղից ոչ շատ հեռու Թորթում գետի աջ ափին ևս մեկ Քցխա կամ Քցխազուռ գյուղ է գոյություն ունեցել: Աջակողմյան Քցխա գյուղի գոյությունը մատնանշում են այնտեղ հայտնաբերված ավերակները: Քցխա գյուղերի վերաբերյալ Ատրպետը գրում է. «Թորթումի արևելյան և արևմտյան այս կրկնակի Քսխաները հին ժամանակում մեծ մրցում են ունեցել, որոնք տքնել են իրար գերազանցել: Չախակողմյան Քսխան երկրորդական դիրք է գրավել, աջակողմյանը՝ բարձր հռչակ, որին մինչև այսօր Քիչ ոստան են անուանում բնիկները»⁷¹:

Նալթյոքյան լեռան հյուսիսային լանջերից սկիզբ է առնում Օղեկ առվակը, որի ակունքի շրջանում գտնվում էր հայաբնակ Վերինգյուղը: Մ.Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող ձեռագրերից մեկը, որը գրվել էր 1663 թ. Վերինգյուղում Աբրահամ քահանայի կողմից, վկայում է այնտեղ կաթողիկե եկեղեցու առկայություն մասին⁷²: Օղեկ առվակը ոռոգում է նաև Օղեկ (Էոզեք) գյուղը, որից արևելք ընկած էր Բարգոսանց գյուղը: Վերին գյուղից հյուսիս-արևելք ընկած էին Կոնդ և Չաթախ գյուղերը, որոնց արևելքից սահմանակից էր Սուրբ Օհան գյուղը: Սուրբ Օհանից հյուսիս-արևելք ընկած էր Խախուի կիրճը, ուր գտնվում էր համանուն գյուղն իր հռչակավոր վանքով: Խախու գյուղը տարածվում էր մրգատու ծառերով հարուստ կիրճի ամբողջ երկարությամբ՝ Խախու առվակի երկու ափերին: Վանքը, որը կառուցված էր կիրճի կենտրո-

⁶³ Նույն տեղում, էջ 76:

⁶⁴ Աագար Փարպեցի, էջ 352:

⁶⁵ Նորշենցիների մի մասը 1830 թ. հաստատվեց Ալալցխայի գավառում:

⁶⁶ Տե՛ս Ալիշան Բ., Տեղագիր Հայոց մեծաց, էջ 38:

⁶⁷ Ագրակ գյուղի վանքը ևս եղել է Տայքի հայ գրչության կենտրոններից մեկը: Այդ մասին վկայում է Մ. Մաշտոցի անվան մատենադարանում պահվող ձեռագրերից մեկը: Տե՛ս Մատենադարան, Ձեռագիր № 3223, էջ 326բ:

⁶⁸ Տե՛ս Ատրպետ, նշվ. աշխ., էջ 166—167:

⁶⁸ Տե՛ս Такашвелян Э., նշվ. աշխ., էջ 80:

⁶⁹ Տե՛ս Ատրպետ, նշվ. աշխ., էջ 168:

⁷⁰ Տե՛ս Մարգիսեան Ն., նշվ. աշխ., էջ 82:

⁷¹ Ատրպետ, նշվ. աշխ., էջ 168:

⁷² Տե՛ս Մատենադարան, Ձեռագիր № 8624, էջ 96բ:

ոնական մասում, շրջապատված էր 8 փոքր եկեղեցիներով⁷³: Վանքի շուրջը պահպանվում են պարիսպները: Շրջակայքում կան վիշապների արձանիկներ և լճակներ: Վանքի դռների վրա պահպանված հայերեն արձանագրությունների մնացորդները վկայում են այն մասին, որ վանքի Սուրբ Աստվածածին եկեղեցին կառուցվել է LX դարում, իսկ վանքի համալիրը հիմնադրել է Դավիթ Կյուրապաղատը X դարում: Խախուրի Սուրբ Աստվածածին եկեղեցին ևս այսօր գործում է իբրև մզկիթ:

Խախուրի հյուսիս ընկած էին Վխիկ, Ընկուզեք, Բլուր (Բուլուլ) և Ճալա գյուղերը⁷⁴: Սրանցից հյուսիս՝ Հարկևոր լեռան բարձունքից իջնող առվակի ափին՝ Թորթումի լճի հարավային հատվածից 8 կմ արևմուտք, գտնվում էր Օշկ (Աշունք, Թուրք.՝ Էոշք) գյուղը: Գյուղից 2 կմ հեռավորության վրա պահպանվում է Օշկի նշանավոր վանքը: Վանքի անունով էլ հաճախ Օշկ գյուղն անվանվում էր ուղղակի Վանք կամ Օշկվանք: Իր ճարտարապետությունը այն լավագույններից էր Տայոց աշխարհում և համարվում էր «Տայքի յոթ հրաշալիքներից մեկը»⁷⁵: Վանքի շրջակայքում կան մատուռանման դամբարաններ, որոնք մահմեդական ազդեցության համար ծառայել են որպես բնակատեղի: Չնայած ժամանակն ու մահմեդականների բարբարոսությունները քայքայել ու փչացրել են վանական համալիրի հոյակերտ քանդակները, սակայն պահպանված եզակի նմուշներն ապացուցում են ճարտարապետների յուրառոճ և բարձր ճաշակը: Հակոբ Կարնեցին խոսելով Օշկի և Խախուրի վանքերի, ինչպես նաև Տայքի մյուս հրաշակերտ կառույցների մասին՝ գրում է. «...յար և նման ոչ գոյ նոցա, բայց թէ լինի միայն սուրբ Սոփի ի Կոստանդինուպոլիս»⁷⁶:

Օշկից արևելք Թորթումի լիճն է: Թորթումի լճի մեջ արևմուտքից թափվում են Խարս և Մխիկ (Ջխեկ) առվակները, որոնք անցնում են համանուն գյուղերի միջով՝ ոռոգելով դաշտերն ու այգիները: Մխիկ գյուղի դիմաց գտնվում է Թորթումի լճի ամենախորը տեղը: Թորթում գետը լճից դուրս գալով մոտ 1,5 կմ հոսելով հյուս-

իս-արևելք՝ Թև գյուղի մոտ առաջացնում է աշխարհի ամենագեղեցիկ ջրվեժներից մեկը:

Թորթում գետի ստորին հոսանքի շրջանում՝ Օլթի գետի հետ միախառնվելու վայրի մոտ, Իշխան գյուղից ոչ հեռու, գտնվում էին Օսխա և Աշմուշեն գյուղերը⁷⁷: Աշմուշենի մոտ պահպանվում են նաև բերդի և եկեղեցու ավերակները:

Թորթումի գավառը թերևս ամենաշատն էր տուժել միջնադարյան ավերածություններից, բունի մահմեդականացումից և բնակչության մասսայական արտագաղթներից: Այսուհանդերձ, մինչև XX դ. սկիզբն այստեղ գեոևս շարունակում էր ապրել և իր գործունեությունը ծավալել փոքրաթիվ հայ ազգաբնակչությունը:

Թավուսքարի լիվա: Թավուսքարի լիվան տեղագրվում էր Տայքի նահանգի ճակք գավառում՝ ընդգրկելով նրա կենտրոնական և արևմտյան շրջանները: Այն ընկած էր Օլթի գետի վտակ Թավուսքար գետակի և նրա վտակների ավազանում, ինչպես նաև հարակից շրջաններում: Թավուսքարի լիվան արևմուտքից սահմանակից էր Բերդազարակի (Կիսկիմի) և Պարխարի գավառներին, հարավից՝ Թորթումի և Օլթիի, հարավ-արևելքից և արևելքից՝ Փանակի, հյուսիսից՝ Արտանուշի և Լիվանեի գավառներին:

Թավուսքարի լիվայի բնական սահմանները արևմուտքում հասնում էին Ճորոխ գետին, հարավում՝ Օլթի գետին, արևելքից՝ Թավուսքարի և Փանակի բնական սահմանն է Օլթի գետի Թավուսքար և Փանազկերտ վտակների ջրբաժան լեռնաշղթան, հյուսիսից՝ Արտանուշի գավառի հետ բնական սահման են հանդիսանում Թոփ-Յուլու և Մեսրադաղի լեռները, որոնք նաև Թավուսքարի և Արտանուշի ջրբաժան լեռներն են:

Լիվան իր անունն ստացել էր վարչական կենտրոնի՝ Թավուսքար գյուղի անունով: Այստեղ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ գավառի Թավուսքար, Թավուսկյար, Տայոցքար և Տառակարի անվանումների առաջացմանը: Առաջին երեքը խնդրո առարկա գավառի թրքալեզու արտասանության ձևերն են և առաջացել են գավառի հին անվանաձևերից: Կ. Կոխի մոտ գավառը անվանվում է Տառակերտ, որը նա մեկնել է իբրև «քաղաք Տայոց»: Հ. Տաշյանի կարծիքով՝ գավառի այս անվանաձևը հայ-վրացական մի խարնուրդ

⁷³ Տե՛ս Такаштунли Э., ցվ. աշխ., էջ 68:

⁷⁴ Տե՛ս Մարգիսեան Ն., ցվ. աշխ., էջ 82:

⁷⁵ Ատրպետ, ցվ. աշխ., էջ 171:

⁷⁶ Յակովբ Կարմեցի, ցվ. աշխ., էջ 17:

⁷⁷ Տե՛ս Գլորիոսեանի Յուլայոյոս լուծու լուծու, ք. 3, ք. 599-600.

է⁷⁸: Տառն Տայքի վրացական տարրերակն է: Սեռական հոլովում Տառ արմատն ընդունում է «ս» վերջավորութիւնը՝ Տառ-Տառս: Սա Համապատասխանում է Հայերենի Տայք-Տայոց ձևին: «Կերտ» վերջավորութեան պարագայում Հ. Տաշյանի կարծիքով «... Հարկ չկայ անպայման քաղաք իմանալ: Հայերեն կերտ կցուցնէ, որ վրականին ալ հիմն էր Հայ Տայոցկերտ, և այս զարմանալի չէ աշխարհի մը Համար ուր ճիշդ սեռականաձև բարդութիւնք յաճախ են (Բերդացփոր, Պարտիզացփոր)»⁷⁹: Ղ. Ալիշանն իր «Տեղադիր Հայոց մեծաց» աշխատութեան մեջ գաժառն անվանում է «Թավուսկերտ», գաժառն կենտրոնը՝ «Թավուսկերտ», «ս» է հին իշխանանիստ ազգին Տայոց»⁸⁰, իսկ «Այրարատի» քարտեզի վրա գաժառն անվանում է «Տայոցքար»: Այստեղ մի փոքր ուշադրութիւն է անհրաժեշտ դարձնել լիվայի «Տայոցքար» անվանաձևին: Ըստ էութեան, այն այսպես կարող էր կոչվել միջնագարում, քանի որ «քար» (ժայռ) արմատով բնակավայրերի անվանումներն առավել բնորոշ են Հենց այս ժամանակաշրջանին (օր. Ազոսափաքար, Արկեքար և այլն): Հ. Տաշյանի կարծիքով, «Տայոցքար» կարող էր անվանվել միայն բերդը, որից էլ անունը տարածվել է ամբողջ գաժառնի վրա⁸¹:

Անդրադառնանք գաժառնի վրացական՝ «Տառսկարի» ձևին, որը Թարգմանվում է իբրև «Տայքի դուռ» (վրաց. կարի-յո՞՞ դուռ): Այս անվանաձևը ևս բնորոշ է Տայքին, քանի որ այստեղ մենք Հանդիպում ենք բազմաթիվ այսպես կոչված «դռներին», որոնցից առավել Հայտնի են Քցխայի դուռը, Վխիկի դուռը և Ապրնեսի դուռը, որը ևս Ատրպետի կողմից Համարվում է «Տայքի յոթ հրաշալիքներից մեկը»⁸²: Վրացական «Տառսկարի» անվանաձևն, այսուհանդերձ, շատ ավելի ուշ շրջանի իրողութիւնն է: Հ. Տաշյանն այն կապում է կյուրապաղատութեան և նրան Հաջորդող շրջանի հետ. «Գաւառս իւր ամբողջ հիւսիսային սահմանագծով սահմանակից է Կղարջաց և Արտանուչէ եկող բոլոր լեռնուղիք կու գան միանալու ի Տայոցկերտ, անով Հասնելու արդի Օլթի-Ջրոյ ձորին»⁸³: Վրաց պատմագիրները «Տառ» անվան տակ հասկանում էին Բանակի, Պարտեզի, Օլթիի և

Մամրվանի շրջանները: Թորթումի և ձորոխի ձախ ամի Համար նրանք մեկ այլ անուն էին կիրառում՝ «Կլարջեթի», որը տարածքային առումով Գուգարքի Կղարջե գաժառնի հետ առնչութիւն չունենէր: Նրանք այդ մտացածին վարչամիավորի մեջ էին ընդգրկում նաև Սպերը (Իսպիրի) և Բարբերը: Վրաստանն այդ շրջանների հետ կապող օղակը՝ «դուռը», Հենց «Տառսկարին» էր: Այդ իսկ պատճառով խնդրո առարկա գաժառնն առավել նպատակահարմար էր տալ Հենց «Տայքի դուռ» անվանումը, առավել ևս, որ տարածաշրջանի բնակավայրերի Համար նման անվանաձևը խորթ էր:

Թավուսքարի լիվան կազմված էր 2 նահիեններից՝ Թավուսքարի և Իշխանի: Առաջինն ընդգրկում էր Օլթի գետի Թավուսքար վտակի ավազանը և զբաղեցնում էր լիվայի արևելյան հատվածը: Երկրորդն զբաղեցնում էր լիվայի արևմտյան մասը:

Թավուսքարի լիվայի բնակավայրերի տեղագրութիւնը սկսենք նրա վարչական կենտրոն Թավուսքար (Տայոցքար) ավանից: Այն գտնվում էր Համանուն գետակի վրա՝ վերջինիս Օլթի գետի հետ միախառնվելուց 5 կմ հյուսիս⁸⁴: Ավանում պահպանվում են եկեղեցու մնացորդները: Կա կարծիք, Համաձայն որի Թավուսքար ավանի եկեղեցին ոչ միայն եղել է գլխավորնոցատիպ, այլ նաև կառուցվել է ներսես Գ Տայեցի կաթողիկոսի կողմից⁸⁵: Թավուսքար գետակը գաժառնի կենտրոնից անցնելով մի քանի կմ՝ ողողում է այդպեստանները, ուղղվելով Հարավ՝ անցնում Կրան ամբոցի մոտից և Կարատոթ (Կարատուղ) գյուղի մոտ միանում Օլթի գետին⁸⁶:

Թավուսքար գաժառնի հյուսիսային բարձրագույն Հատվածում՝ Թավուսքար գետակի ձախակողմյան ակունքների շրջանում, նույնանուն լեռան լանջին գտնվում էր Խոզկերտ (Խասկերտ) գյուղը, որի անմիջական Հարեանութեամբ էր Իդլուր գյուղը: Սրանցից Հարավ ընկած էր Կամք (Կոմ) գյուղը⁸⁷: Կամք գյուղից Հարավ-արևելք գտնվում էր Խայնիս գյուղը, որի մերձակալից սկիզբ առնող Համանուն առվակն անցնում է Ակուրտիս գյուղով, միանում է Կամք գյուղից իջնող առվակին, ապա ուղղվում գետի արևմուտք: Այս առվակին ալից միանում է նաև Խոզկերտից իջնող առվակը, որն իր

⁷⁸ Տե՛ս Տաշեան Հ., Տայք, դրացիք և Խոտորքոյր, ՀԱ, 1971, 4-6, էջ 185:

⁷⁹ Նույն տեղում:

⁸⁰ Ալիշան Ղ., Տեղագիր հայոց մեծաց, էջ 39:

⁸¹ Տե՛ս Տաշեան Հ., Տայք, դրացիք և Խոտորքոյր, ՀԱ, 1971, 4-6, էջ 185:

⁸² Տե՛ս Ատրպետ, նշվ. աշխ., էջ 194:

⁸³ Տաշեան Հ., Տայք, դրացիք և Խոտորքոյր, ՀԱ, 1971, 4-6, էջ 186:

⁸⁴ Տե՛ս Ատրպետ, նշվ. աշխ., էջ 192:

⁸⁵ Տե՛ս Մարտիրոսյան Տ., Տայքի ճարտարապետական հուշարձանները, էջ 115:

⁸⁶ Տե՛ս Ատրպետ, նշվ. աշխ., էջ 192:

⁸⁷ Տե՛ս Карта Кавказского края с показанием густоты армянского населения.

ճանապարհին ընդունում է նաև Խոզկերտից Հարավ-արևմուտք գտնվող Սիլթ (Սալթ) և Որի գյուղերի միջով Համանուն առվակները: Թավուսքար գետակին ձախից միանում է նաև Կյախ (Կեսխ) առվակը, որն անցում է Համանուն գյուղով և դավառի կենտրոնից շուրջ 10 կմ արևելք էր գտնվում՝ Փանակի լիվայի Հարևանությամբ:

Թավուսքար գետակի արևմտային ափակների շրջանում՝ Սալթուր լեռան լանջին գտնվում էր Սալթուր գյուղը, որից 1,5–2 կմ Հարավ ընկած էր Փոս գյուղը: Սրանցից մի քանի կմ Հարավ՝ Համանուն վտակի ափին ընկած էր Նիագոս գյուղը: Նիագոսից Հարավ-արևմուտք՝ իրարից մի քանի կմ հեռավորության վրա գտնվում էին Քիվ և Մալակեզ գյուղերը: Սրանց մերձակայքից սկիզբ առնող նույնանուն առվակները միախառնվում են Թավուսքար գետակին, որտեղից մի փոքր Հյուսիս ընկած էր Փերիձոր (Փարիսոր) գյուղը⁸⁸:

Օլթի և Թավուսքար գետերի միախառնումի վայրից արևմուտք սկսվում է Իշխանի նահիեն: Այստեղ Օլթի գետն արևելք ընդունում է Օխորբերդի առվակը, որն անցնում է Համանուն գյուղով, Իլիս, Միլնեգոր, Սուղբեչ (Սուրբխաչ), Մսուր-Յայլա, Իշխան առվակները և Գելուտի առուն: Այս առվակները հոսելով Հյուսիսից Հարավ՝ ուղղում են Համանուն գյուղերը, որոնք ընկած են իրարից ոչ շատ հեռու:

Օլթի և Թորթում գետերի միախառնման վայրի մոտ էր գտնվում Հանրահայտ Իշխան գյուղը: Այն երեք կողմից շրջապատված էր լեռներով⁸⁹: Իշխանը, որը համապատասխանում է միջնադարյան աղբյուրներում հիշատակվող Իշխանաց գյուղին, եղել է Մամիկոնյանների նստավայրը: Իշխանը նաև Ներսես Գ Տայեցի կաթողիկոսի ծննդավայրն էր: 650-ական թվականներին, երբ Թեոդորոս Ռշտունու հետ ունեցած տարաձայնությունների պատճառով Ներսես Գ կաթողիկոսը գտնվում էր Հայրենի Տայքում, աչքի է ընկնում եկեղեցաչինական գործունեությունը, որի շրջանակներում Իշխան և Բանակ գյուղերում կառուցվում են Հայտնի տաճարները: Արաբական արշավանքների ընթացքում վնասված Իշխանի տաճարը IX դ. սկզբին վերանորոգվում (վերականգնվում) է Գրիգոր Խանձթեցու աշակերտ Սաբա (Սաբան) Իշխանցու կողմից. «Աստծո կամոք Սաբանը եպիսկոպոս դարձավ Իշխանում, որը կառուցել էր երանելի

կաթողիկոս Ներսեսը և որը երկար տարիներ այրի էր: Երկրորդ անգամ կառուցվեց եկեղեցին մեր երանելի Սաբայի կողմից, աստվածապաշտ թագավորների նյութական օջակցությամբ»⁹⁰: Իշխանի տաճարի պատերին պահպանված գրեթե բոլոր արձանագրությունները վրացերեն են, բացի մի քանի հայկական տարեթիվերից⁹¹: Այդ արձանագրությունները կատարվել են վերահիշյալ վերանորոգումներից հետո՝ Տայքի քաղկեդոնականացման ժամանակաշրջանում:

Իշխանի տաճարն իր կենտրոնական զմբեթով և խաչաձև հիմքով նման է Տայքի մյուս հրաշալիքներին՝ Օշկի և Խախուի տաճարներին: Որպես եկեղեցի՝ Իշխանը դադարել է գործել XVII դ. երկրորդ կեսից, Տայքի բուռն մահմեդականացման գործընթացի և էթնոտոլովրդագրական տեղաշարժերի արդյունքում: Թուրքերը, չկարողանալով բարձրանալ տաճարի զմբեթի վրա, «...ամբաձգություններ կուրացուցին զխաչն»⁹², որով և շինությունը ենթարկել են նոր ավերածությունների:

Թավուսքարի գավառի արևմտյան Հատվածը, որը գտնվում էր Ճորոխի աջ ափի վրա, անհամեմատ նոսր էր բնակեցված: Այստեղ էր գտնվում Իրխան գյուղը, որը, ամենայն հավանականությամբ, համապատասխանում է Մամիկոնյանների ժամանակաշրջանի Էրախանի կոչվող բերդին⁹³, ինչպես նաև Ավարես գյուղը:

Թավուսքարի գավառը, չնայած բավականին ընդարձակ տարածք էր զբաղեցնում, խնդրո առարկա ժամանակաշրջանում, ի տարբերություն իր հարևան Փանակի լիվայի, ուներ ընդամենը 24 գյուղ⁹⁴, որոնք ի տարբերություն Փանակի գյուղերի՝ բավականին բազմամարդ էին:

Օլթիի վիվա: Օլթիի լիվան զբաղեցնում էր Տայքի կենտրոնական շրջանները: Այն տեղագրվում է Տայքի Բողխա գավառի Հյուսիսային և կենտրոնական, Բերդագիտը գավառի Հարավային շրջան-

⁸⁸ Նույն տեղում:

⁸⁹ Տե՛ս Такайшвили Э., նշվ. աշխ., էջ 23:

⁹⁰ Март Н., Георгий Мерчуле, Жизнь Григория Хандзтийского, с. 107. Տ. Մարտիանի կարծիքով Սաբանի շինարարական գործունեությունն Իշխանում սահմանափակվում է վերանորոգումներով, որից հետևում է, որ տաճարի տեսքի արմատական վերափոխում չի եղել (տե՛ս Մարտիան Տ., Հայ դասական ճարտարապետության ակունքներում, էջ 268–275):

⁹¹ Տե՛ս Մարգիսեան Ն., Տեղագրությունը ի Փոքր և ի Մեծ Հայք, էջ 100:

⁹² Ինճիճեան Ղ., Աշխարհագրություն..., էջ 130:

⁹³ Տե՛ս Հյուբշման Հ., Հին հայոց տեղոյ անունները, Վիեննա, 1907, էջ 244:

⁹⁴ Տե՛ս Ալիշան Ղ., Տեղագիր հայոց մեծաց, էջ 39:

ներում և Պարտիզացիոնը գավառում: Որպես Օսմանյան կայսրության վարչական միավոր Չլզըրի էյալեթի կազմում՝ Օլթիի լիվան սկսել է ձևավորվել XVI դ. վերջերին: Այն հյուսիսից սահմանակից էր Թավուսքարի, հյուսիս-արևելքից՝ Փանակի, հարավ-արևելքից՝ Կարսի նահանգի Թախտայի, հարավից՝ Մամրվանի, հարավ-արևմուտքից և արևմուտքից՝ Թորթումի լիվաններին: Թավուսքարի գավառի հետ Օլթիի լիվանի սահմանն անցնում էր Օլթի գետով, Թախտայի գավառից բաժանվում էր Սողանլուղի (Մեծրաց) լեռներով, Թորթումի լիվանից՝ Սիվրի-դաղ լեռնաշղթայի հյուսիսային հատվածով, որտեղ էին Ազորգեն, Գուլլի-Բազդադ, Ակ, Կախլըբերդ, Ատմեկ և Արավեստ լեռները: Հարավում՝ Մամրվանի լիվանի հետ բնական սահմանը հստակ է: Ծղզրտորեն սահմանադատելու համար Մամրվանի և Օլթիի լիվաները, տեղադրեցինք թուրքական դավթարներում առկա բնակավայրերի ցուցակները: Դա թույլ տվեց մեզ պարզելու, որ վերահիշյալ լիվաների բաժանման գիծն անցնում էր Թոփրակ-կալե Քեսուկ-Քյոփրի գյուղերով՝ վերջիններս թողնելով Մամրվանի լիվանի տարածքում:

Օլթիի լիվան հարուստ էր գետային ցանցով: Նրա տարածքով էին հոսում Ճորոխի խոշորագույն վտակ Օլթի գետն իր վտակներով: Օլթի գետը սկիզբ էր առնում Մամրվանի լիվանի տարածքում՝ Կանդիլ և Դավրեա-Կուլկուլ լեռներից: Գավառի կենտրոն Օլթի քաղաքից ոչ հեռու Օլթի գետն ընդունում է իր ամենախոշոր վտակներից մեկը՝ Սիվրի-գետը, Օլթի քաղաքից մոտ 30 կմ հյուսիս՝ Բարդուս (Պարտեզ) և Փանակ (Բանակ) գետերից կազմված միացյալ վտակը: Արևմուտք թեքվելուց առաջ՝ Օլթի գետն աջից ընդունում է Փանազկերտ վտակը, այնուհետև՝ Թավուսքարը: Մինչև Ճորոխի մեջ թափվելը՝ Օլթի գետին է միանում Թորթում գետը, որի հետ մոտ 7 կմ գեպի արևմուտք հոսելով, թափվում է Ճորոխի մեջ:

Օլթի գետի հետ զուգընթաց հարավից հյուսիս է հոսում Բարդուս գետը, որը սկիզբ է առնում Կիրասլի և Ալակեր լեռներից, սկզբից հոսում հարավ, հարավ-արևմուտք, ապա ուղղվում հյուսիս-արևմուտք և հյուսիս-արևելք՝ թափվելով Փանակ գետի մեջ: Օլթի գետի ձախակողմյան փոքրիշատե խոշոր վտակներից է նաև Անձավը, որը Օլթիին է միանում՝ մինչև վերջինիս Թորթում գետի հետ միախառնվելը:

Օլթիի հայտնի էր օգտակար հանածոների բազմազանությունը: Դրանց մեջ աչքի էին ընկնում վառելիքայտի և ածխի հարուստ

պաշարները, որոնք բավարարում էին նաև շրջակա գավառների պահանջները⁹⁵:

Օլթիի լիվան XVI դ. վերջի դրությամբ բաղկացած էր հետևյալ նահանգներից՝ Բարդուսի, Անձավի, Արևահայաց, Սուվերուտ, Քեթիլութի և Չանուչուրի, որոնցում հաշվվում էր շուրջ 90 բնակավայր⁹⁶: XVIII դ. առաջին քառորդի դրությամբ Օլթիի լիվան ուներ 2 անգամ ավելի քիչ բնակավայր՝ պայմանավորված Օսմանյան կայսրության վարած ներքին դաժան քաղաքականությունով, ինչպես նաև կործանարար պատերազմներով:

XIX դ. կեսի դրությամբ Օլթիի լիվանում հաշվվում է շուրջ 60 գյուղ⁹⁷: Գավառի վարչական կենտրոնը Օլթի (Ուղթիք) քաղաքն էր: Օլթիի մասին կարևոր վկայություն ենք հանդիպում Վարդան Արևելյուց մոտ. «Յայնմ ժամանակի վախճանեցավ կիրապաղատն Դավիթ, անժառանգ գոլով. և տայ անդարձազրով զհայրենիս իւր ի Վասիլն, զՈւխթիսն և զՆամրուան (Մամրվան-Ա.Ա.), զքաղաքն Ապահոունեաց՝ զՄանձկերտ, և զամենայն ինչս»⁹⁸: Արիստակես Լաստիվերցին Ուղթիքի մասին խոսելիս այն մի դեպքում անվանում է «քաղաք Ուխտեաց», մյուս դեպքում՝ «Մեծ ավան Ուխտեաց»⁹⁹: Այստեղ մի կողմ զննելով բնակավայրի անվանաձևերը (Ուխտիք, Ուղթիք), որոնք առկա են XI–XII դարերի աղբյուրներում, նշենք, որ ամեն դեպքում այն քաղաքատիպ բնակավայր է եղել, այլապես գժվար է բացատրել այն կարևորությունը, որը տրվում էր Ուղթիքին XI դ. առաջին քառորդին, երբ մի կողմից վրացական թագավորությունը և մյուս կողմից Բյուզանդական կայսրությունը՝ հանձին կայսր Վասիլ II Բուլղարասպանի, փորձում էին իրենց տիրապետությունը հաստատել այնտեղ:

Հետագա դարերում Ուղթիքը շարունակում էր մնալ գերազանցապես հայաբնակ: Գավառը նկարագրելիս՝ Ղ. Ինճիճյանը գրում է. «Ունի քաղաք մեծ պարսպապատ ի համանուն գաւառի, ի մէջ Արտանուչի և Էրզրուումայ... կառուցեալ առ ստորոտով լերին ի դաշտավայրի, անցանէ առ նովաւ և ջուր, որ յանուն նորա կոչի: Ունի և

⁹⁵ Տե՛ս Գազարյան Հ., Արևմտահայերի սոցիալ-տնտեսական ու քաղաքական կացությունը 1800–1870 թթ., էջ 217:

⁹⁶ Տե՛ս շրջադրված Յոզեֆ Կոլարի, Գ. 3, ՅՅ. 595–603.

⁹⁷ Տե՛ս Ալիշան Գ., Տեղագիր հայոց մեծաց, էջ 39:

⁹⁸ Հատարումն պատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 93:

⁹⁹ Պատմութիւն Արիստակեսայ Վարդապետի Լաստիվերցոյ, էջ 7:

արուարձանեայս արտաքոյ պարսպին. բնակիչք նորա տաճիկք և հայք»¹⁰⁰: Ղ. Ինճիճյանի պնդմամբ քաղաքի կլիմայական պայմանները խիստ են՝ «յամարայնի ջերմ սաստիկ, և ձմերայնի ցուրտ անհնարին, յորմէ յաճախ են առ բնակիչս կոյր, կաղ և բորոտ»¹⁰¹: Պետք է նշել, որ Օլթիի կլիմայի այսօրինակ նկարագրությունը պիտի վերաբերեր ոչ թե քաղաքին, այլ գավառի առաջիկ բարձրագույն շրջաններին, ինչպես հաղորդում է Գ. Բաքրաձեն¹⁰², քանի որ Օլթի քաղաքը հայտնի է իր մեղմ կլիմայով, իսկ Վախուշտի արքայադն Բազրատիոնն Օլթին անվանում էր բարեկարգ և լավ օդով օժտված քաղաք¹⁰³: Ինչ վերաբերում է դավառի բնակչության մեջ հանդիպող «կոյր, կաղ և բորոտ» մարդկանց, ապա հետագա հաղորդումներում Օլթիի լիվայի վերաբերյալ նմանատիպ տեղեկությունների այլևս չենք հանդիպում:

Լիվայի և քաղաքի այժմյան Օլթի անվանաձևը Հ. Հյուբերմանի կարծիքով վրացական-թուրքական է¹⁰⁴: Վրացական աղբյուրներում հանդիպող անվանաձևը «Օլթիսի» է: «Մի» վերջավորությունը բնորոշ է քաղաքների վրացական անվանաձևերին (Թրբիսի, Բուխայսի, Անիսի և այլն): Այնինչ, «Օլթի» ձևը «Ուլթիբի» հնչյունափոխված տարբերակն է (Ուլթիբ - Օղթիբ - Օլթի):

Օլթի քաղաքը գտնվում է նույնանուն գետի ափին՝ ակունքից մոտ 50 կմ հեռավորության վրա: Մինչև ուստական տիրապետության տակ անցնելն Օլթին փոքրիկ հայկական քաղաք էր: Օլթի քաղաքն ուներ միջնադարյան երկու հայկական եկեղեցի՝ ս. Գևորգ և ս. Հովհաննես¹⁰⁵: Ինչպես Օլթի քաղաքի մոտ, այնպես էլ գետի ավազանում հանդիպող բազմաթիվ բերդերի, ամրոցների, դղյակների և տաճարների ավերակները գավառի փառավոր անցյալի կենդանի վկաներն են¹⁰⁶:

¹⁰⁰ Ինճիճյան Ղ., Աշխարհագրութիւն..., էջ 126:

¹⁰¹ Նույն տեղում:

¹⁰² St'ın Bakıralze D., Историко-этнографический оврак Карсской области, էջ 5: Գ. Բաքրաձենի հաղորդման համաձայն Օլթիի շրջանում ամառնը սաստիկ տոթեր են լինում և 40°C ջերմաստիճանը սովորական է Օլթիի համար:

¹⁰³ St'ın Վրաց աղբյուրները, հ. Գ, էջ 85:

¹⁰⁴ St'ın Հյուբերման Հ., Հին հայոց տեղոյ անունները, էջ 245:

¹⁰⁵ St'ın ПГНАГ, փ. 415, օտ. 1, ձ. 21, լ. 15:

¹⁰⁶ St'ın Ատրպետ, նշվ. աշխ., էջ 179-180:

Օլթիի լիվայի բնակավայրերի տեղագրությունը սկսենք հարավ-արևելքից՝ Բարդուսի նահիեից: Բարդուս գետի ակունքից մինչև Բարդուս ավանը 20 կմ երկարության և 10 կմ լայնության վրա շուրջ 30 բերդերի և ամրոցների մնացորդներ են պահպանվում, որոնց առկայությունը վկայում է այն մասին, որ միջնադարում Վախուշտի ու Բասենի կողմից այս գավառը խիստ սպառնալիքի տակ է եղել, և այն պաշտպանելու համար մեծ ուժեր են կուտակվել: Այս շրջանում էին գտնվում հետևյալ բնակավայրերը. Բարդուսի ակունքների մոտ էին գտնվում Կուռչի և Վարդանուս (Վարդանեկ) գյուղերը, որոնցից արևելք ընկած էր Բաշքոյ յայլան, որտեղից սկիզբ առնող Կուրթենի առվակը միանում էր Բարդուս գետին՝ Վարդանուս գյուղի մոտ¹⁰⁷: Վարդանուսից հարավ ընկած էին Գյորաշկեան և Զակիմ (Զակեմ) բնակավայրերը: Սրանցից հարավ-արևելք ընկած էր Զերմուկ գյուղը, որի միջով անցնող առուն սկիզբ է առնում Սողանյուղի Գելին Թաշ, Կրզըլ-Ղայա, Չամար և Խըրեյլաղ լեռներից իջած Կրզըլ-Բիլիսա (Կարմիր եկեղեցի) և Կրզըլ-Բիլիսա (Կոտրված եկեղեցի) առվակների միացումից: Զերմուկի հարևանությունում էին գտնվում Բաշգեղ, Վերանբերդ և Տուրի գյուղերը:

Բարդուսի այն հատվածում, որտեղ գետն իր ուղղությունը հարավ-արևմուտքից փոխում է արևմուտք, Օլթի քաղաքից մոտ 50 կմ հեռավորության վրա գտնվում էր Բարդուս ավանը¹⁰⁸: Ավանում և նրա մերձակայքում պահպանվում են հայկական ս. Հովհաննես եկեղեցու¹⁰⁹ և Զարթման բերդի (Զարթման կայե) ավերակները¹¹⁰: Բարդուսից հարավ՝ համանուն առվակի ափին էր գտնվում Չիլսուրոզ գյուղը, որից մի փոքր հյուսիս-արևմուտք ընկած է Գայմաս գյուղը: Գայմասից հյուսիս՝ Բարդուսի աջ ափին էր գտնվում Լուստնք (Նուստնք) գյուղը: Մինչև գետի ուղղությունը հյուսիս-արևմուտքից հյուսիս-արևելք փոխվելը, Բարդուսին աջից միանում են նույնանուն գյուղերի միջով Հոսող Ջիլոտ, Ջանջիսուր (վրացական աղբյուրներում՝ Չանուչուրի) առվակները, իսկ ձախից՝ Փորշունի, Զաղրազոմ, Ոսկիհատ և Ակ-Բիլիսե (սպիտակ եկեղեցի) առ-

¹⁰⁷ Նույն տեղում, էջ 182:

¹⁰⁸ St'ın Երջոնեճանոս ջոռաոյտոս ճոճո ճոճոճո, ք. 3, թ. 596:

¹⁰⁹ St'ın ПГНАГ, փ. 415, օտ. 1, ձ. 21, լ. 15:

¹¹⁰ St'ın ПГНАГ, փ. 1438, օտ. 1, ձ. 116, լ. 3:

վակները¹¹¹: Ալ-Բիրիսե գյուղից մի փոքր Հյուսիս Բարգուսին է միանում նրա խոշորագույն վտակը՝ Դումբուլին, որը սկիզբ է առնում Դելիբլի լեռան Օյուզ-Թաշ ապառաժից: Դումբուլին անցնում է Ջաթախ, Կաջարթի, Սուլեյման, Նիգիջուկ, Ուուլթ, Ջանիկ, Ջրոտ, Դադեր (Դադիր), Դարբանք (Թերփենք) գյուղերի միջով և ձախակ բերդի մոտ թափվում Բարգուսի մեջ¹¹²: Ձախակ բերդից Հյուսիս դառնվում էր Արուսար լեռը, որի ստորոտին՝ Օլթիից 19 կմ արևելք, ընկած էր Բերգուս (Փերթուս) գյուղը: Վերջինիս մոտ պահպանվում են Մզեճապուկ աթաբեկի օրոք (XVI դ. սկիզբ) կառուցված ս.Նով-Հաննես եկեղեցու մնացորդները¹¹³: XIX դ. երկրորդ կեսին, ուսասկան տիրապետության հաստատումից հետո, այնտեղ բնակվում էին 50 առև հայեր, որոնք դադարեցին Օսմանյան կայսրությունից¹¹⁴: Բերգուսից Հյուսիս ընկած էր Գոսիք գյուղը, որի մոտից սկիզբ առնող առվակը միանում է Բերգուսի առվակին և թափվում Բարգուսի մեջ: Գրեթե նույն հատվածում՝ աջ կողմից գետի մեջ է թափվում Փոսիք առվակը, որն անցնում է Համանուն գյուղի միջով: Վերջինս գտնվում էր Օլթի քաղաքից 38 վերստ (40 կմ) հեռավորության վրա¹¹⁵: Փոսիքից Հյուսիս-արևելք ընկած էին Դիլբան-Գոմ, Թոփրակ, Էզրիս, Էրզումեկ, Որգուլի և Մթնդեր գյուղերը, որոնք գտնվում են նույնանուն առվակների ափերին: Մթնդեր գյուղից Հյուսիս ընկած տարածքներն արդեն պատկանում են Փանակի լիվայի նույնանուն նահիեին (Ազրակ և Ազիտկոմ գյուղերը):

Բարգուսի նահիեից արևմուտք տեղադրվում են Օլթիի լիվայի 2 նահիեները՝ Ստվերոտը և Արևահայացը: Աղբյուրներում առկա տվյալները տեղադրելով՝ խառնաշփոթ մի պատկեր է ստացվում: Ուստի անճշտություններից խուսափելու նպատակով առավել ճիշտ ենք համարում այս 2 նահիեների բնակավայրերի տեղադրությունը կատարել միասին՝ հաշվի առնելով բնակավայրերի աշխարհագրական դիրքը: Արևահայաց և Ստվերոտ նահիեները տեղադրվում են Օլթի գետի միջին հոսանքի շրջանում՝ իրենց մեջ ընդգրկելով Օլթի գետի ձախակողմյան և աջակողմյան մեծ և փոքր վտակների ավա-

զանները ևս: Հյուսիսում սրանց սահմանը հասնում էր մինչև Փանակ և Օլթի գետերի միախառնման վայրը:

Մամրվանի լիվայի հետ սահմանից Հյուսիս ընկած էր Տաճարիկ գյուղը, որին Հյուսիս-արևմուտքից սահմանակից էր գավառի ուստան Օլթին: Օլթիից 5 կմ արևմուտք՝ նույնանուն առվակների ափերին էին գտնվում Պալեբրողազ և Ջարթենիս (Ջարգանես) գյուղերը, որոնցից Հյուսիս-արևմուտք ընկած էր Փեսասփոք գյուղը: Օլթիից Հյուսիս-արևելք՝ գետի աջակողմյան օժանդակների շրջանում, որոնք զուգահեռաբար հաջորդում են իրար, տեղադրվում են Բադբաշք, Բոջուքլի, Դարբենք և Ավտոստ գյուղերը: Նրանցից մի փոքր հեռու՝ Օլթիից 12 վերստ հեռավորության վրա էր գտնվում Ցրտածոր (Սեգդասոր) գյուղը, որից 5 կմ Հյուսիս-արևելք ընկած էր Սամիրգոն (Ձմեռատուն) գյուղը¹¹⁶, իսկ մի փոքր արևելք՝ Էրուկ գյուղը, որը գրեթե ամբողջովին հայաբնակ էր¹¹⁷: Փանակի լիվայի հետ սահմանի մոտ էր գտնվում Դովլիտ գյուղը:

Օլթիից 7-8 կմ Հյուսիս-արևմուտք ընկած էին Ջուջուրիս և Թամրուտ (Թամոտոտ) գյուղերը: Թամոտոտ անունով մեկ այլ գյուղ գտնվում էր սրանցից մոտ 10 կմ արևմուտք: Ջուջուրիսից Հյուսիս ընկած էին Սեխձոր և Սեխձիք գյուղերը: Սրանցից Հյուսիս-արևելք էին գտնվում Լուսփակը (Լեսփեք), Իսածորը և Ջարմոզը: Ջարմոզը բաժանում է Օլթի գետի ավազանը Լուսփակ, Կեռչեք և Հոգամ առուների ավազաններից: Ջարմոզի ավերակների մոտ էին Փերիցք, Դիցգոմ և Փերնիկ գյուղերը¹¹⁸:

Վերոհիշյալ գյուղերից արևմուտք Անձավի (Անզով) նահիեն է: Այն զբաղեցնում է Օլթիի լիվայի Հյուսիսարևմտյան հատվածը: Նահիեի անունը կապված է նախ և առաջ կլիմայական պայմանների հետ: Հայտնի է, որ Անձավի ձորը սաստիկ տոթ է և չոգ: Դա նաև բնակչության նոսր լինելու պատճառներից զխտավորն է:

Այստեղ ևս բնակավայրերը հիմնադրվում տեղաբաշխված են տափարակ վայրերում, առվակների ափերին, որոնք մեծամասամբ կրում են բնակավայրերի անունները: Նահիեի Հյուսիս-արևելքում՝ Ջարմոզից ոչ շատ հեռու, գտնվում էին Խորմիկ, Մուկյավ և Ջարգով

¹¹¹ Տե՛ս Ատրպետ, նշվ. աշխ., էջ 183-184:

¹¹² Տե՛ս Ատրպետ, նշվ. աշխ., էջ 184-185:

¹¹³ Տե՛ս Գյուրջևիսյանի Յուրախյանի և Գյուրջևիսյանի Յուրախյանի խառնաշփոթ մի պատկեր է ստացվում: Ուստի անճշտություններից խուսափելու նպատակով առավել ճիշտ ենք համարում այս 2 նահիեների բնակավայրերի տեղադրությունը կատարել միասին՝ հաշվի առնելով բնակավայրերի աշխարհագրական դիրքը: Արևահայաց և Ստվերոտ նահիեները տեղադրվում են Օլթի գետի միջին հոսանքի շրջանում՝ իրենց մեջ ընդգրկելով Օլթի գետի ձախակողմյան և աջակողմյան մեծ և փոքր վտակների ավա-

¹¹⁴ Տե՛ս Գյուրջևիսյանի Յուրախյանի խառնաշփոթ մի պատկեր է ստացվում: Ուստի անճշտություններից խուսափելու նպատակով առավել ճիշտ ենք համարում այս 2 նահիեների բնակավայրերի տեղադրությունը կատարել միասին՝ հաշվի առնելով բնակավայրերի աշխարհագրական դիրքը: Արևահայաց և Ստվերոտ նահիեները տեղադրվում են Օլթի գետի միջին հոսանքի շրջանում՝ իրենց մեջ ընդգրկելով Օլթի գետի ձախակողմյան և աջակողմյան մեծ և փոքր վտակների ավա-

¹¹⁵ 1 վերստը հավասար է 1066 մ:

¹¹⁶ Տե՛ս Գյուրջևիսյանի Յուրախյանի խառնաշփոթ մի պատկեր է ստացվում: Ուստի անճշտություններից խուսափելու նպատակով առավել ճիշտ ենք համարում այս 2 նահիեների բնակավայրերի տեղադրությունը կատարել միասին՝ հաշվի առնելով բնակավայրերի աշխարհագրական դիրքը: Արևահայաց և Ստվերոտ նահիեները տեղադրվում են Օլթի գետի միջին հոսանքի շրջանում՝ իրենց մեջ ընդգրկելով Օլթի գետի ձախակողմյան և աջակողմյան մեծ և փոքր վտակների ավա-

¹¹⁷ Տե՛ս ԱՊՊԱԳ, փ. 415, օտ. 1, մ. 21, ս. 15, 20. 1878 թ. ավայրերով Էրուկ գյուղի 81 բնակչից 71-ը հայեր էին:

¹¹⁸ Տե՛ս Ատրպետ, նշվ. աշխ., էջ 183-184:

գյուղերը: Նրանցից արևելք գտնվող Բարնավազ գյուղը պատկանում է Փանակի լիվային: Չարգովից արևմուտք ընկած էր Հոգամ գյուղը: Սրանից հարավ Տիրիդենց և Կամձոր գյուղերն էին, որոնց հարևանությունը էր գտնվում Կիչիկ (Բյուչուկ, Թուրքերեն՝ փոքր) գյուղը, որը հետո էր Օլթիից 26 վերստ¹¹⁹: Հոգամից արևմուտք Օլթի գետի ավին, Թավուսար և Օլթի գետերի միախառնման վայրից հարավ գտնվում էր Խորձոր գյուղը: Խորձորից հարավ Կինեպուսն (Գինեփոս) էր, որին հարավից սահմանակից էին Իձաձոր, Կելզիբ (Քելզեբ) և Անձավ գյուղերը: Սրանցից Կելզիբը Օլթիից 23 վերստ հեռավորություն վրա էր գտնվում¹²⁰, իսկ մյուս երկուսը՝ մի փոքր ավելի հեռու: Կելզիբից հարավ-արևելք էրուկ (Անձավի էրուկ) և Գամէզբեկ (Գոմազբակ) գյուղերն էին: Սրանցից մոտ 10 կմ արևմուտք գտնվում էր Կոսիք գյուղը, որն Օլթիից 25 վերստ հեռավորության վրա էր¹²¹: Կոսիքից արևմուտք՝ Թորթումի լիվայի հարևանությամբ էր գտնվում Խուվախ գյուղը (Խուվախբերդ): Գյուղով էր անցնում Ոսխիանի առվակը, որը սկիզբ առնելով Լեանշի լեռներից անցնում է Խուվախ գյուղով, ապա ընդունում համանուն գյուղերից իջնող Մեչենեք և Ագուզ գյուղա առվակները: Ապա այն անցնում է Ոսխիան գյուղով, որից հյուսիս-արևելք Ասիեք (Ասիակ) գյուղն էր: Անձավի նահիի հյուսիսային բնակավայրը Դիվաձոր գյուղն էր, որը գտնվում էր Օլթի գետից մի փոքր հեռու: Համանուն առվակի ավին:

Չնայած այն իրողությունը, որ XIX դ. ընթացքում Օլթիի գավառում բնակչության մեծ տեղաշարժեր եղան, մասնավորապես գաղթականներ եկան Արևմտյան Հայաստանի մյուս շրջաններից, այսուհանդերձ XVII–XVIII դարերի բռնի մահմեդականացումը թողնելով իր կնիքը գավառի էթնոկրոնական պատկերի վրա. գավառի բնակչության մեծ մասը կազմում էին մահմեդականներ¹²²:

Մամրվանի լիվա: Մամրվանի լիվան զբաղեցնում է Տայքի Բողխա գավառի կենտրոնական և հարավային շրջանները: Արևմուտքից այն սահմանակից էր Թորթումի գավառին, հյուսիսից և հյուսիս-արևելքից՝ Օլթիի գավառին, իսկ հարավից՝ Վերին Բասենին: Որպես վարչական միավոր՝ այն ձևավորվել է XVI դ. երկրորդ

կեսին՝ ի սկզբանե լինելով էրզրումի էյալեթի կազմում¹²³: XVII դ. վերջին Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած վարչական փոփոխությունների հետևանքով Մամրվանի լիվան հայտնվում է Ախալցխայի (Չղըրի) էյալեթի կազմում, որտեղ մնում է մինչև 1829 թ:

Մամրվանի լիվայի բնական սահմանները հարավում Դավրես Կուլիուլ և Կանդիլ լեռներն էին, արևմուտքում՝ Թորթումի գավառի հետ սահմանն անցնում էր Միվրի-դաղ լեռնաշղթայով: Օլթիի լիվայի հետ հյուսիսում բնական սահման չկար, իսկ հյուսիս-արևելքում և արևելքում այդ սահմանն անցնում էր Դելիբլի-դաղի լեռներով:

Մամրվանի լիվան ընկած էր Օլթի գետի վերին հոսանքի շրջանում՝ Օլթի գետի ափուսները ներառյալ և Միվրի-չայի ավազանում՝ իր մեջ ընդգրկելով նաև սրանց մեծ և փոքր վտակները: Օլթիի լիվայի նկատմամբ այն գերիշխող դերք էր զբաղեցնում շնորհիվ իր բարձրությունը, քանի որ Օլթիից հարավ դադարում են ցածր բլուրները և սկսվում են լեռները:

Հնագույն հիշատակումը Մամրվանի վերաբերյալ, ինչպես և Օլթին, կապված է Դավիթ Կյուրապաղատի կտակի պատմության հետ¹²⁴: Թուրքական տիրապետության շրջանում Մամրվանի լիվան բաժանվում էր երկու նահիեի՝ Մամրվանի և Ախայի, որոնցից առաջինն զբաղեցնում էր լիվայի հյուսիսային և հյուսիս-արևելյան, երկրորդը՝ հարավային և հարավ-արևմտյան մասը:

Լիվայի վարչական կենտրոնը Մամրվան գյուղն (ավան) էր, որը գտնվում էր գավառի հյուսիսում՝ Օլթիի լիվայի հարևանությամբ, սահմանից ոչ հեռու: Ինչպես լիվայի կենտրոնի, այնպես էլ լիվայի ու նրա բնակչության վերաբերյալ մանրամասնություններ է հաղորդում Հակոբ Կարնեցին. «Եվ անդի շրջեալ ի կողմն յարևելից է գաւառ մի մեծ, և բազում գիւղք. և բնակիչք երկրին Հայք և Վրացիք... և ունի բերդ մի բարձր և անառիկ, որ այժմ Մամրվան կոչեն, և ի մէջ բերդին վանք մի փառաւոր յանուն Սրբոյն Գէորգայ է կառուցեալ, որ այժմ Ուլեթ ասեն. և ինքն է պարոնանիստ և հացալից երկիր... և է ի մէջ մայրի անտառացն, որ փիճի ասեն և Ագաւ մայրի կոչեն, որ ոչ սկիզբն տեսեալ ոք կայ և ոչ ծայրն հասեալ... և երկիրս այս լի է պաճարեղինօք և ամենայն բարութիւն և ունի սինօս մինչև

¹¹⁹ Տե՛ս ԶՄՐՉՆԵՆԻՆՆԻՆ ԶՈՒՆՈՅԵՍԻ ՆՈՒՆՈՅԵՍԻ, Բ. 3, 33, 597.

¹²⁰ Նույն տեղում, էջ 598.

¹²¹ Նույն տեղում, էջ 599:

¹²² Տե՛ս ШНАГ, փ. 1438, օր. 1, ձ. 323.

¹²³ Տե՛ս Թուրքական աղբյուրները, Է. Բ. էջ 219:

¹²⁴ Տե՛ս Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, էջ 93:

Օլստիք քաղաք, և միև կողմն՝ մինչև Բասեն»¹²⁵: Իր Հերթին էվլիա Չելեբին այսպես է նկարագրում Մամրվանի բերդը. «Էրզրումի էյալեթում է և սանջաքի բեյի կենտրոն է: Բեյի խասը 203.000 ահչե է... Ունի բերդակալ, աղաբ-աղասի և բերդապահ գինվորներ: Բերդը ամրակուռ և քառակուսի ձևով է կառուցված: Դեպի Հարավ նայող դարպասներ ունի»¹²⁶:

XVII դ. երկրորդ կեսին և XVIII դարում Օսմանյան կայսրության ժողովրդագրական քաղաքականության հետևանքով խիստ փոխվում է Մամրվանի լիվայի ժողովրդագրական պատկերը: Սա առավել ակնհայտ երևում է Ղ. Ինճիճյանի մոտ. «Ունի բերդ փոքր Նառիման անուն՝ շինեալ յոսոս ապառաժուտ լեռին ի փոքր ձորավայրի, յորում են տունք իրր 100 առհասարակ տաճիկք... անդ նստի և պյն գաւառին և անդ դատի... Ի վերայ լեռինս ի վեր քան զբերդն է մատուռ յանուն սրբոյ ուրուք, որոյ անուն այժմ անյայտ է ի բնակչաց, ոմանց կարծեցեալ նոյնիսկ անուն գաւառիս՝ յանուանէ սրբոյն կամ մատրան կոչեցեալ, ուր ամի ամի ի տոնին Վարդավառին խուռն ընթացիւք յաճախեն ուխտաւորք»¹²⁷: Այս անծանոթ ուխտատեղին, ամենայն հավանականությամբ, Հ. Կարենցու նկարագրած ս. Գևորգ վանքն էր, որի անունը մեկ ու կես հարյուրամյակի ընթացքում մոռացվել էր, սակայն, այն շարունակում էր պահպանել իր նշանակությունը իբրև ուխտատեղի:

Համաձայն «Չլզըրի էյալեթի ջարա դավթարի»՝ XVIII դ. առաջին կեսին Մամրվանի լիվան ուներ 37 գյուղ՝ 2 նահիեով (Մամրվանի և Ախայի): Սակայն դավթարում առկա տեղեկությունները, որոնք վերաբերում էին Մամրվանի գավառին, զերծ չէին անճշտություններից: Այսպես, օրինակ Մամրվանի լիվայի կազմում հիշատակվում են Քիամխիս և Մերինես գյուղերը, որոնք XVIII դ. առաջին կեսին և հետագայում էլ, գտնվում էին Փանակի լիվայի Քիամխիսի և Փանակի նահիեների կազմում, իսկ Ախայի նահիեի կազմում հիշատակվող Իս և Խախու բնակավայրերը պատկանում էին Ախայի նահիեի արևմտյան հարևանին՝ Էրզրումի էյալեթի Թորթումի լիվային:

¹²⁵ Յակովբ Կարենցի, նշվ. աշխ., էջ 18:

¹²⁶ Թորթական աղբյուրները, հ. Գ, Էվլիա Չելեբի, էջ 114:

¹²⁷ Ինճիճյան Ղ., Աշխարհագրութիւն..., էջ 126:

XIX դ. կեսերին, Համաձայն Ղ. Ալիշանի՝ Մամրվանի գավառը «ի Հարաւոյ Թավուսկեարայ և յարևելից Թորթումայ ձգի. են նորա քեօղք 30»¹²⁸:

Գավառի բնակավայրերի տեղագրությունը սկսենք հարավից՝ Օլթի գետի ափունքների շրջանից: Այստեղ էին գտնվում դեռևս վաղ միջնադարից հայտնի Մկնատինճ գյուղը և Բողբերդը (Բուղա-կալա): Խնդրո առարկա ժամանակաշրջանում Մամրվանի գավառի ծայր հարավային գյուղը Կարմրիկն էր, որից հյուսիս ընկած էր Բաշկալա գյուղը: Բաշկալայից արևմուտք գտնվում էր Չիվլի-ղայա գյուղը, իսկ արևելք՝ Ջանձորը: Վերջինից հարավ-արևելք գտնվում էր Պարտանոց գյուղը, իսկ հյուսիս-արևելք՝ Խորխորը: Խորխորից հյուսիս ընկած էր Ագրակ գյուղը, որից արևելք Վերինթաբ և Կարչին (Բարչեն) գյուղերն էին: Ագրակից հյուսիս-արևելք ընկած էին Շեքերլի (Շահալի)¹²⁹, Գեղանի և Կըղըլքիլիսա գյուղերը, որոնցից արևելք Լավձոր և Միխկար գյուղերն էին:

Ագրակից արևմուտք՝ Օլթի գետի ձախակողմյան վտակների շրջանում, գտնվում էին Էնգաուր, Խեչո և Թողոր (Թագոն) գյուղերը, Շեքերլիից արևմուտք՝ Բելգաջուր (Պլտաջուր), Սուրբսարգիս և Սաբանի գյուղերն էին, որոնց հարևանությամբ՝ բարձրադիր և տափարակ վայրում գտնվում էր նույնանուն նահիեի կենտրոն Ախա գյուղը¹³⁰: Բելգաջուրից մի քանի կմ հյուսիս-արևելք ընկած էր Իդ գյուղը, որը հնում բերդ և ամրոց ունենալով՝ XIX դարում թշվառ ու քայքայված ընտանիքներ էր պատսպարում իր ավերակներում: Էվլիա Չելեբին Իդ գյուղի մասին գրում է, որ այն «մուսուլմանական և հայկական գյուղ է»¹³¹: Համաձայն Ալիշանի, Իդ գյուղը կազմված էր մոտ 60 մեծ տներից¹³²: Նմանատիպ վիճակում էր նաև Փերթևան (բերդ և վանք՝ Բերդվանք) գյուղը, որտեղ պահպանվում են ոչ միայն հնագույն ամրոցի, այլ նաև տաճարի մնացորդները: Սրանց

¹²⁸ Ալիշան Ղ., Տեղագիր հայոց մեծաց, էջ 39:

¹²⁹ Այն, որ XIX դ. կեսերին Շեքերլիում շարունակում էին ապրել հայեր, երևում է Մատենադարանի ձեռագրերից մեկում՝ գրված 1835 թ.: Տե՛ս Մատենադարան, Չեռագիր № 8064, էջ 20բ, 22ա:

¹³⁰ Տե՛ս АВЕХ Г., Геология армянского нагорья. Западная часть, Пятигорск, 1899, էջ 171: Արխիսի հաղորդած տեղեկությունների համաձայն Ախա գյուղը գտնվում էր մոլի մակարդակից 5882 ֆուտ (1792,3 մ) բարձրության վրա:

¹³¹ Թորթական աղբյուրները, հ. Գ, Էվլիա Չելեբի, էջ 114:

¹³² Տե՛ս Ալիշան Ղ., Տեղագիր հայոց մեծաց, էջ 39:

չըջակայքում գտնվում են մի քանի պահակատների մնացորդներ: Փերթեանի բերդը տիրապետող դիրք էր գրավում Հարեան Սուրմակ (Սուրմեք) բերդի նկատմամբ և թվում է, թե «Հսկում» էր նրան¹³³: Սուրմակ բերդից մի փոքր Հյուսիս-արևմուտք ընկած էր Սամրիկարի (Վրացերեն՝ Երեք գուռ) գյուղը¹³⁴:

Ի դեպ Գեղանի գյուղերի միջև ընկած էր Վեքիխաս (Վեղիխան) գյուղը: Նրանից Հյուսիս ընկած էր Շոշ (Շոշա) գյուղը: Այն տարածվում էր Օլթի գետի աջ ափին: Նրանից արևելք գտնվում էին Սորիկ, Գորնիս և Արիստիս գյուղերը: Արանցից Հյուսիս՝ գավառի կենտրոն Մամրվանից արևելք, ընկած էին Գոմփոր, Փեակիր և Զաիրդյուղի գյուղերը: Գավառի կենտրոնից Հյուսիս-արևելք՝ Օլթիի լիվայի հետ սահմանի մոտ էր գտնվում Թոփրակ-կալս գյուղը: Շոշից Հյուսիս-արևմուտք՝ Օլթի գետի ձախ ափին էր Կաղի-քոյ գյուղը: Արանից Հյուսիս ընկած էին Վեշկի-ձոր, Գերեզմանոց և Սաղարա գյուղերը: Արանցից մի փոքր Հյուսիս՝ Օլթիի լիվայի հետ սահմանի մոտ էին Քեսուկ-Քյոփըի և Նիխազ գյուղերը: Նիխազը գտնվում էր Օլթի գետի և նրա վտակ Սիվրի-չայի ջրբաժան հատվածում: Արանից արևմուտք արդեն Սիվրի-չայի ավազանն է, որը կազմում էր Ախայի նահիեի մի մասը: Այստեղ՝ Սիվրի-չայի աջ ափին էր գտնվում Գոցախու (Կոզախար, Կոնսուր) գյուղը: Արանից մոտ 10 կմ - արևմուտք՝ Սիվրի-չայի ձախ ափին էր Օրջոխը: Այս գյուղի մոտ պահպանվում են միջնադարյան բերդ-ամրոցի ավերակները: Ի տարբերություն ձորոխի ափին գտնվող Օրջոխի (Որջնհազ, Օշնախ), որի ամրություններն ու դիրքը ամենի ու անմերձենալի են, սրա դիրքն աչքի չէր ընկնում իր անառիկությանը¹³⁵: Օրջոխից մոտ 7 կմ հարավ-արևմուտք ընկած էր Արտոստ (Արդուզ) գյուղը¹³⁶: Արտոստի դիմաց՝ Սիվրի-չայի աջ ափին, իրարից փոքր հեռավորության վրա գտնվում էին Քեոփրի-յալլա և Գեղիկ գյուղերը: Արտոստից մոտ 10 կմ արևմուտք՝ Սիվրի-չայի հոսանքն ի վեր, ընկած էին Կոթիկ (Կութակ) և Մեշետուր գյուղերը, որոնցից հարավ՝ Կըզըլ-դաղ լեռան լանջին փռված էին Թուքմաշ և Քրբբաշ գյուղերը: Արանից Հա-

բավ-արևելք՝ Սիվրի-չայի աջ կողմում՝ նույնանուն առվակների ասփերին, փռված էին Ուրուս-Կափափի և Շամխոյ գյուղերը:

XVII դ. կեսերին մեծամասամբ Հայկական բնակչությունը ունեցող Մամրվանի գավառը, թուրքական ներքին և արտաքին քաղաքակա- նության հետևանքով, մեկ ու կես հարյուրամյակի ընթացքում կարուկ փոխեց ինչպես իր ժողովրդագրական, այնպես էլ էթնիկական պատկերը: Այդ ընթացքում ամայացան բազմաթիվ գյուղեր, որոնց անունները սակայն շարունակում էին պահպանվել քարտեզների վրա: XIX դ. 30-ական թթ. Մամրվանի գավառում մնացել էին մի քա- նի Հայաբնակ գյուղեր՝ Շեքերլին, Պրտաջուրը, Փետկիրը, Կըզըլ-քիլի- սան, Վեղիխանը և Ագրակը¹³⁷: Մնացած բոլոր գյուղերը բնակեցված էին մահմեդականներով՝ զլխավորապես թուրքերով և քրդերով:

գ) Արևելյան գավառներ

Փանակի լիվա: Փանակի լիվան տեղագրվում է Տայքի Բերդաց- փոր գավառում, ինչպես նաև իր մեջ ընդգրկում Ճակք գավառի արևելյան հատվածը: Այն ընկած է Օլթի գետի վտակներ Բարդուզ (Պարտեզ, Բարդուզ-չայ), Փանակ (Բանակ, Փենեք-չայ) և Փանազ- կերտ գետակների ավազաններում: Խնդրո առարկա ժամանակաշրջա- նում այն արևմուտքից և հարավից սահմանակից էր Օլթիի լիվային, Հյուսիս-արևելքից՝ Գյոլեին, Հյուսիս-արևմուտքից՝ Թավուսբարին:

Փանակի լիվան՝ որպես վարչական միավոր, ձևավորվել է XVI դ. երկրորդ կեսին, երբ պարսկա-թուրքական պատերազմների արդյուն- քում Օսմանյան կայսրությունը կարողացավ տիրել Սամցխեի աթ- արեկությունը, որի կազմի մեջ էր Տայք աշխարհն սկսած XIII դարից: Սամցխեի աթարեկության տարածքը գրեթե ամբողջությամբ ընդգրկվում է նորաստեղծ Չլդրի էյալեթի կազմի մեջ: Ըստ «Գյուր- ջիսասանի վիլայեթի մեծ դավթարի», Չլդրի նահանգի 9 լիվա-գա- վառներից մեկը եղել է Փանակի լիվան: Խնդրո առարկա ժամանա-

¹³³ Տե՛ս Ատրպետ, նշվ. աշխ., էջ 175:

¹³⁴ Տե՛ս Ջըրջոնեճեոս Յոլադոյոս ձուզո ձաջտարո, ք. 3, 33, 594.

¹³⁵ Տե՛ս Ատրպետ, նշվ. աշխ., էջ 178:

¹³⁶ Տե՛ս Копия турецкой карты Анатолии.

¹³⁷ Տե՛ս Գ.ԱԹ, Թ.Ազատյանի ֆոնդ, քաժին IV, վավ. 224, էջ 147-148: XIX դ. կեսերին Հ. Տայքանը Մամրվանի հայաբնակ գյուղերից ինչատակում էր միայն Վեղիխանը և Ագրակը՝ 75 տնով (Տե՛ս Տաշեան Հ., Տայք, դրացիք և Խոտորոջուր, ՀԱ, 1971, 4-6, էջ 168):

կաշրջանում Փանակի լիվան ունեցել է երեք նահիե՝ Փանակի, Քիամխիսի և Փանագիկերտի ու հարկման ենթակա 109 բնակավայր¹³⁸:

Փանակի նահիեի 55 բնակավայրերը, որոնք ընկած էին Փանակի, Բարդուզ գետակների և նրանց վտակների շրջանում, գրավում էին Փանակի լիվայի հարավարևելյան մասը: Համեմատաբար փոքր Քիամխիսի նահիեն ընկած էր Փանակի նահիեից հյուսիս, գրավում էր լիվայի կենտրոնական մասը, ուներ 16 բնակավայր: Փանագիկերտի նահիեի 38 բնակավայրերը գլխավորապես ընկած էին Օլթի գետի վտակ Փանագիկերտ գետակի և նրա առուների ափաջանում: Փանագիկերտի նահիեն զբաղեցնում էր Փանակի լիվայի հյուսիսարևմտյան մասը¹³⁹:

Փանակի նահիեի և ամբողջ լիվայի վարչական կենտրոնը Փանակի (Փենեք, Բանակ) գյուղն էր (ոտրաթ): Այն ընկած էր Փանակ գետակի աջ ափին՝ Օլթիից 33, իսկ Արղահանից 79 վերստ հեռավորության վրա¹⁴⁰: Այնտեղ է գտնվում VII դարում կառուցված «գվարթնոցատիպ» տաճարը, որը կառուցվել է հայոց Ներսես Գ Տայեցի կաթողիկոսի կողմից, վերջինս երբ 652–658 թթ. գտնվում էր հայրենի Տայքում*:

Փանակ գետակը սկսվում է Կարճկան լեռներից, անցնում Ակչա-Կալա և Փազեր ամառանոցների (յալլա) մոտով¹⁴¹: Այնտեղից դեպի հյուսիս գտնվում էր Արսենիկ (Արսենակ) գյուղը: «Գյուրջիստանի վիլայեթի մեծ դավթարում» հիշատակվում են 3 Արսենիկներ՝ Վերին, Միջին և Ստորին¹⁴²: Արսենիկից հյուսիս՝ Փանակի աջ ափին

էր գտնվում Վաղավեր գյուղը, նրանից արևմուտք՝ Զատգերակ (Մաթազրակ, քաղվեդոնիկ հայերի՝ ծաթերի ազրակ, Զեղկարեկ) և Նազիրվան (Լազարվանս) գյուղերը: Մրանցից հարավ և Արսենիկից հյուսիս-արևմուտք գտնվում էին Թխսցքուրք և Էգնաք (Իդնաքի) գյուղերը: Էգնաքից արևմուտք Փանակ գետակին է միանում Այգունտեր վտակը, որն իջնում էր Փանակի նահիեի հյուսիսային հատվածում ընկած Մուշեղ գյուղի մոտից: Մուշեղից արևմուտք՝ Արմաշեն առվակի ափին, գտնվում էր համանուն գյուղը: Արմաշեն առվակը միանալով Եզնոց (Էզնոխ, Էգնոս) վտակին, որի ափին գտնվում է համանուն գյուղը, թափվում է Փանակի մեջ¹⁴³: Արմաշենից հարավ-արևմուտք ընկած էին Գեղվանքը, Բարիքն ու Չարձորը: Փանակ գյուղից արևելք՝ Փանակ և Բարդուզ գետակների միախառնման վայրից ոչ հեռու, ընկած էր Կոնձոր (Կոսոր, Կոսուր) գյուղը, նրանից արևելք՝ Մուխրուզ գյուղը¹⁴⁴:

Փանակի մերձակայքում էր գտնվում Քարագլուխ (Կարգլուխ) գյուղը: Փանակից հարավ՝ Բարդուզ գետակի ձախ ափին, ընկած էր Կոփ (Կոպի, Կոպս) գյուղը: Նրանից դեպի հարավ-արևմուտք՝ Մերենես վտակի ափին էր գտնվում Մերենես գյուղը: Մերենեսից արևելք գտնվում էր Ազրակ (Ակրիակ) գյուղը, որից արևելք՝ Աղիտ-Գոմ կոչվող գյուղը¹⁴⁵: Ազրակ առվակը սկիզբ է առնում Կերասի լեռներից, իր մեջ է ընդունում Աղիտ-Գոմ առվակը, ապա անցնելով Ազրակ գյուղը՝ թափվում է Փանակի մեջ՝ Բարդուզի հետ միախառնվելու վայրից 2 կմ ցած¹⁴⁶:

Մերենես գյուղից արևմուտք գտնվում էր Էգաձոր (Ագեձոր, Էկեսոր) գյուղը, որն ընկած էր համանուն վտակի ափին: Էգաձորից արևմուտք ընկած էր Կոտիք գյուղը, որի միջով անցնող համանուն վտակը, ինչպես նաև Էգաձոր վտակը, ձախից թափվում էին Փանակ գետակի մեջ: Փանակի նահիեի արևմտյան հատվածում է գտնվում Բարնակ կոչվող գյուղը: Այն գտնվում էր Օլթի գետի երկու ափերին, այն հատվածում, որտեղ Փանակ գետակը միախառնվում է Օլ-

¹³⁸ Տե՛ս Զյւրճոսէանի Յոլաոյցոտիս ձոճո տոճո, ք. 2, ճճ. 332-392.

¹³⁹ Տե՛ս Զյւրճոսէանի Յոլաոյցոտիս ձոճո տոճո, ք. 3, ճճ. 559.

¹⁴⁰ Նոյն տեղում, էջ 561:

* Մեծ ցանկութեան դեպքում անգամ Փանակի գավառում անհնար է հանդիպել վրացական տեղանունների կամ բնակավայրերի: Հակառակ դրան, ամենուր հանդիպում ենք գավառի հայկականութեան անհերքելի ապացույցների, որոնցից ամենանշանակալորը, ինարկե, Բանակի եղակավոր տաճարն է: Փանակի «վրացական» անցյալի վերաբերյալ ուշագրավ վկայությունների ենք հանդիպում ՎՊԿՊԱ թիվ 1438 ֆոնդի (Էսաձե եղբայրների անձնական ֆոնդ) 116-րդ վավերագրում: Այսպես, Քիամխիս գյուղից բացվում է «վրացական» Մոլոմոն-կալա բերդի տեսարանը, Ավդոս գյուղից մեկ վերստի վրա է Չերմուկ տաք հանրային ջրի աղբյուրը և Օլոր գյուղից 15 վերստի վրա են «վրացական վանք վանական համալիրի» ավերակները (ընդգծումները մերն են – Ա. Ա.): Տե՛ս ԱՊՊԱԳ, ֆ. 1438, օր. 1, ձ. 116, լ. 5-7.

¹⁴¹ Տե՛ս Ատրպետ, նշվ. աշխ., էջ 185-186:

¹⁴² Տե՛ս Զյւրճոսէանի Յոլաոյցոտիս ձոճո տոճո, ք. 2, ճճ. 347.

¹⁴³ Տե՛ս Ատրպետ, նշվ. աշխ., էջ 186:

¹⁴⁴ Տե՛ս Զյւրճոսէանի Յոլաոյցոտիս ձոճո տոճո, ք. 3, ճճ. 562-564.

¹⁴⁵ Նոյն տեղում, էջ 568-569:

¹⁴⁶ Տե՛ս Ատրպետ, նշվ. աշխ., էջ 185:

թի գետին¹⁴⁷: Բարնակ գյուղի մոտ, համաձայն Հ. Արիխի, գտնվում էին հին հայկական մենաոտանի ավերակները¹⁴⁸:

«Գյուրջիստանի վիլայեթի մեծ դավթարում» հիշատակված Ջաղքոս (Մաղկոց), Թարիք, Գարդողիս, Կինեպոս, Թաղթ, Իսրայել և Կարխուլ գյուղերի տեղագրության վերաբերյալ տեղեկություններ չկան: Ամենայն հավանականությամբ Ջաղքոսը համապատասխանում է հետագայում հիշատակվող Ջաղքոս բնակավայրին և գտնվել է Օլթիի լիվայի հարևանությամբ՝ Օլթի քաղաքից 22 վերստ հեռավորության վրա¹⁴⁹, իսկ Կինեպոսը՝ Օլթիի լիվայի Անձափի նահիեի կազմում հիշատակվող Կինեպոսն է:

Բացի վերը թվարկված բնակավայրերից, համաձայն «Գյուրջիստանի վիլայեթի մեծ դավթարի», Փանակի նահիեին են պատկանում թվով 7 գյուղեր, որոնց անվանումներն անընթեռնելի են, 8 դաստակերտներ (երեքը Փանակի տարածքում են, մեկը՝ Մուշեղի, մեկը՝ Ջատգերակի, մեկը՝ Թխասբուրքի, մեկն էլ՝ անընթեռնելի անունով գյուղերից մեկի), 4 առանձին ցանքատարածքներ և 2 ձկնային տնտեսություններ, որոնք ևս բնակեցված էին ու ենթակա էին Հարկման:

Քիամխիսի նահիեն ընկած էր Փանակի լիվայի կենտրոնական շրջանում՝ հիմնականում Կաթի-ջուր (Բանջրուտ) վտակի երկայնքով: Կենտրոնը Քիամխիս (Քամխիս, Չամխուս) գյուղն էր (ուարթթ), որը գտնվում էր Փանակից հյուսիս-արևմուտք՝ Օլթիից 37 վերստ, իսկ Արդահանից 69 վերստ հեռավորության վրա¹⁵⁰: Կաթի-ջուր վտակի շրջանում են ընկած Բանջրուտ, Խաբան, Տաճարիկ (Տաջերեք), Փերթևան (Պարթևան) և Սողոմոն գյուղերը¹⁵¹: Բանջրուտը գտնվում էր Քիամխիսի նահիեի հյուսիսային հատվածում՝ Բանջրուտ լեռան մոտ՝ Կաթի-ջուր վտակի ակունքների շրջանում: Այն գտնվում էր Օլթիից 45 վերստ, իսկ Արդահանից 60 վերստ հեռավորության վրա¹⁵²: Բանջրուտի հարևանությամբ է գտնվում Տաճարիկ գյուղը: Տաճարիկ անունով ևս մեկ գյուղ կար Մամրվանի լիվա-

յում¹⁵³: Բանջրուտից արևմուտք ընկած է Փերթևան գյուղն իր երկու ամառանոցներով (յալլա)՝ Ակ-գյուլ (Սպիտակ լիճ) և Ակ-փինաբ (Սպիտակ աղբյուր)¹⁵⁴: Քիամխիսի նահիեի հարավային շրջանում էր Սողոմոն գյուղը, որը կառուցված է մի ոչ բարձր սարի վրա: Գյուղի մոտ պահպանվում են նույնանուն բերդի (Սողոմոն-կալա) ավերակները¹⁵⁵: Այս գյուղից երկու կմ հեռավորության վրա հայտնաբերվել է ժայռափոր եկեղեցի¹⁵⁶:

Քիամխիսի նահիեի արևմտյան մասում՝ Փերթևան գյուղից ոչ շատ հեռու, ընկած է բավականին մեծ Խաբան (Կաբան) գյուղը, նահիեի հարավարևելյան շրջանում՝ Փանակի Արմաշեն գյուղից հյուսիս-արևմուտք, ընկած է Գաղ (Գող, Գվաղի) գյուղը: Նահիեի ծայր արևելյան հատվածում՝ Գաղ և Փանակի Արմաշեն գյուղերից արևելք, Գյուլեի հարևանությամբ գտնվում էր Աղունդիբ գյուղը, որը, սակայն, խնդրո առարկա ժամանակաշրջանում դարձել էր անմարդաբնակ¹⁵⁷:

Բացի վերը թվարկված բնակավայրերից, համաձայն «Գյուրջիստանի վիլայեթի մեծ դավթարի», Քիամխիսի նահիեին են պատկանում ևս երեք գյուղեր, որոնց անունները սակայն անընթեռնելի են, բայց բերված է նրանցում առկա ծխերի քանակը, չորս դաստակերտներ (Քիամխիսի, Գաղի և Փերթևանի տարածքներում), որոնց թվում է նաև ոմն Մկրտչի պատկանող դաստակերտը¹⁵⁸:

Փանազկերտի նահիեն ընկած է Օլթի գետի Փանազկերտ վտակի ավազանում: Փանազկերտ վտակը սկիզբ է առնում Յասամալ և Թոփ-Յոլու լեռնաշղթաներից, որոնք Արտանուջ գավառի հետ ջրբաժան գիծն են կազմում: Փանազկերտ գետակն ընդունում է Գերմուջեքի լեռներից իջած Սամծելեքի, Դուրնա-Գյուլի, Ենիգեղի, Կոլթաշի, Փիրդանոսի (Բրտանոց), Գեչմանի (Գեսմալ), Կապլի (Քափ), Քարաշուլթի (Քեալաշուտ), Մեհանքի (Մեգենք), Օղթաթաբի (Ողթաթաբ), Ջուլակերտի (Ջուլակար), Հայդոսի (Ավդոս), Ուրեկի,

¹⁵³ Նույն տեղում, էջ 576:

¹⁵⁴ Նույն տեղում, էջ 578:

¹⁵⁵ Տնս IIIHAГ, փ. 1438, օր. 1, ձ. 116, ձ. 4.

¹⁵⁶ Տնս ԳՄՐՋԻՍՏԱՆԻ ՎԻԼԱՅԵՏԻ ՍՈՂՈՄՈՆԻ ԳՅՈՒԼԻ ԵՎ ԳՅՈՒԼԻ ԳՅՈՒԼԻ, էջ 577:

¹⁵⁷ Նույն տեղում, էջ 579-580:

¹⁵⁸ Նույն տեղում, էջ 575-580:

¹⁴⁷ Տնս ԳՄՐՋԻՍՏԱՆԻ ՎԻԼԱՅԵՏԻ ՍՈՂՈՄՈՆԻ ԳՅՈՒԼԻ ԵՎ ԳՅՈՒԼԻ ԳՅՈՒԼԻ, էջ 568.

¹⁴⁸ Տնս Аsаx Г., նշվ. աշխ., էջ 175:

¹⁴⁹ Տնս ԳՄՐՋԻՍՏԱՆԻ ՎԻԼԱՅԵՏԻ ՍՈՂՈՄՈՆԻ ԳՅՈՒԼԻ ԵՎ ԳՅՈՒԼԻ ԳՅՈՒԼԻ, էջ 569.

¹⁵⁰ Նույն տեղում, էջ 576:

¹⁵¹ Տնս Ասոբան, նշվ. աշխ., էջ 186-187:

¹⁵² Տնս ԳՄՐՋԻՍՏԱՆԻ ՎԻԼԱՅԵՏԻ ՍՈՂՈՄՈՆԻ ԳՅՈՒԼԻ ԵՎ ԳՅՈՒԼԻ ԳՅՈՒԼԻ, էջ 577.

Փարթանոցի, ինչպես նաև Քեամիսի (Քամրիս), Ոլորի (Օլոր) և Այազի առուները¹⁵⁹:

Փանազկերտի նահիեի կենտրոնը համանուն գյուղն էր (ուաբաթ): Այն գտնվում էր նույնանուն գետակի ափին, կազմված էր երկու գյուղերից՝ Փանազկերտ և Վերին Փանազկերտ, ընկած էր նահիեի արևելյան հատվածում¹⁶⁰: Փանազկերտում կան բազմաթիվ նկեղեցիների ավերակներ, որոնցից ամենալավ պահպանվածը հայկական եկեղեցին էր¹⁶¹:

Փանազկերտի նահիեի ծայր արևելյան հատվածում է գտնվում Կարմրաձոր (Քամրասոր) գյուղը: Կարմրաձոր անունով գյուղ կար նաև Հարեան Մեծ Արդաշանի լիվայի Ջրդիլի (Ստվերոտ) նահիեում¹⁶²: Նահիեի ծայր հյուսիսում ընկած էր Փերդանոս գյուղը, որն Օլթիից 68 վերստ, իսկ Արդաշանից 61 վերստ հեռավորություն վրա էր գտնվում: Նրանից հարավ գտնվում էր Գեսմալ (Գեշման) գյուղը: Գեսմալից հարավ-արևելք ընկած էր Կապք գյուղը, նրանից հարավ՝ Կարմիրը (Կիզիլ-քոյ): Կարմիր գյուղից հարավ ընկած է Քարաշուբ գյուղը (Քյալաշուտ): Կարմիրից արևմուտք գտնվում էր Ջուլակերտ գյուղը: XVI դ. երկրորդ կեսին այն բաղկացած էր երեք առանձին մասերից՝ Վերին, Միջին և Ստորին Ջուլակերտերից: Սակայն XIX դ. աղբյուրներում մատնանշված է ընդամենը մեկ Ջուլակերտ¹⁶³: Դրա պատճառն այն է, որ թուրքական տիրապետության ժամանակաշրջանում այս շրջանի բնակչությունը նոսրացավ: Արդեն իսկ XVI դ. վերջին Միջին Ջուլակերտը դարձել էր անմարդաբնակ¹⁶⁴:

Ջուլակերտից հյուսիս՝ Ջուլակերտի և Գեսմալի միջև ընկած էր Մեհանք գյուղը: Ջուլակերտից և Մեհանքից արևմուտք գտնվում էին Օղթաթաբ (Ոգնարադ) և Կարխիս գյուղերը: Օղթաթաբից ոչ հեռու՝ նրանից հարավ-արևմուտք, գտնվում էր Հայդոս (Հավդոս) գյուղը, որը հայտնի էր իր ջերմուկով: Հայդոսից հարավ-արևելք՝ համանուն առվակի վրա, ընկած էր Ուրեկի գյուղը, նրանից հարավ-արևմուտք՝ Օլոր (Ոլոր) գյուղը: Օլորից հյուսիս-արևմուտք և Հայ-

¹⁵⁹ Տե՛ս Ասրապետ, նշվ. աշխ., էջ 189-190:

¹⁶⁰ Տե՛ս Գլորջևիտանի շոլադոյտի ճոճոճ, ք. 3, թ. 581:

¹⁶¹ Տե՛ս Մարտոյան Տ., Տայի ճարտարապետական հուշարձանները, էջ 111:

¹⁶² Տե՛ս Գլորջևիտանի շոլադոյտի ճոճոճ, ք. 3, թ. 587:

¹⁶³ Տե՛ս ПГИАГ, ք. 415, օր. 1, ձ. 21, ձ. 18:

¹⁶⁴ Տե՛ս Գլորջևիտանի շոլադոյտի ճոճոճ, ք. 3, թ. 586:

գոսից հարավ-արևմուտք ընկած էր Քեամիս (Քամրիս) գյուղը¹⁶⁵: Օլորից հարավ՝ Փանազկերտի նահիեի հարավարևմտյան շրջանում էր գտնվում Նորբերդ գյուղը, որից արևմուտք՝ Սեքար գյուղը: Նորբերդ և Սեքար գյուղերը գտնվում են համանուն առվակների վրա, որոնք թափվում են Օլթի գետի մեջ այն շրջանում, ուր վերջինս Փանազկերտ գետակի հետ միանալով ուղղվում է արևմուտք: Սեքարից հարավ՝ Օլթի գետի հանդիպակաց ափին, գտնվում էր Քարնավազ գյուղը՝ համանուն առակի վրա¹⁶⁶:

«Գյուրջիստանի վիլայեթի մեծ դավթարում» հիշատակվում են Պետրոս, Մամուռ և Աղվանիք գյուղերը, որոնք թեև պատկանում էին Փանազկերտի նահիեին, սակայն XVI դ. երկրորդ կեսին այս բնակավայրերն արդեն անմարդաբնակ էին¹⁶⁷: Բացի այդ, անընթեռնելի են երեք գյուղի անուններ: Փանազկերտի նահիեին էր պատկանում նաև Բերդուս գյուղը, որի տեղագրության վերաբերյալ աղբյուրը տեղեկություններ չի հաղորդում: Նշվում են նաև Հարկման ենթակա երեք արտոտավայրեր և հինգ դաստակերտներ, որոնք գտնվում էին Վերին Փանազկերտ, Ներքին Ջուլակերտ, Բերդուս և Օլոր գյուղերի տարածքում, ինչպես նաև Փանազկերտ գյուղի մոտ մեկ ձկնային տնտեսություն:

XVI-XIX դարերի ընթացքում, թուրքերի վարած ներքին և արտաքին քաղաքականության հետևանքով, Փանակի լիվայի բնակչությունը ոչ միայն նոսրացավ, այլև ամայացան բազմաթիվ բնակավայրեր:

Գյուլեի լիվա: Գյուլեի լիվան, որը տեղագրվում է Տայքի Կոչ գավառի սահմաններում, ընկած էր Կուր գետի ակունքների լեռնահովտային շրջանում: Այն իր կլիմայական և աշխարհագրական պայմաններով մի ուրույն շրջան է: Չնայած այն հանգամանքին, որ Կոչը Տայքի արևելյան գավառն է և «Աշխարհացոյց»-ի մեջ հիշատակվում է որպես Տայքի առաջին գավառ, այն առավել հաճախ չունեն զարգացման այն ուղղվածությունը, որոնք բնորոշ էին Տայքի մյուս՝ ձորոտի ավազանում գտնվող գավառներին: Դա կարելի է բացատրել մի քանի գործոններով, որոնցով և պայմանավորված

¹⁶⁵ Տե՛ս Special Karte des Türkischen Armenians, von H. Kiepert, Berlin, 1877:

¹⁶⁶ Տե՛ս Ասրապետ, նշվ. աշխ., էջ 191:

¹⁶⁷ Տե՛ս Գլորջևիտանի շոլադոյտի ճոճոճ, ք. 2, թ. 391-392:

էր Կողի ուրույն տեղն ու զերը տարածաշրջանային զարգացումներում: Կրիակունք գյուղի մոտ գտնվող ճահճուտներից (2025 մ բացարձակ բարձրությունից) սկիզբ է առնում Անդրկովկասի խոշորագույն գետը՝ Կուրը: Այս իրողությունը է պայմանավորված Կողի բնակչության ավելի շատ կապված լինելը Կուր և Արաքս գետերի ավազաններին պատկանող դաշտանների բնակչության հետ: Երկրորդ, աշխարհագրական համեմատաբար բարձր դիրքն է Տալքի մյուս դաշտանների նկատմամբ, որով և պայմանավորված է կլիմայական պայմանների խիստ լինելը՝ ցուրտ ձմեռով և շոգ ամառով: Կլիման մեղմացնելու նպատակով հայոց Վաղարշակ Թադավորը Կողում այգիներ և պարտեզներ է աճեցնում¹⁶⁸: Արդեն մյուս վկայություն մեջ Խորենացին Կողն անվանում է «յարգաւանդ և հացաւէտ»¹⁶⁹:

XVI դարում Կողը նվաճվում է թուրքերի կողմից և ընդգրկվում Կարսի նահանգի կազմի մեջ իբրև Գյուլեի լիվա: Օսմանյան կայսրության բազմաթիվ վարչական փերաձևումների հետևանքով Գյուլեի լիվան XVI—XVIII դարերի ընթացքում երբեմն վերածվում էր կազախի Ախալցխայի էյալեթի Մեծ Արգահանի կամ Կարսի նահանգի Փոքր Արգահանի լիվանների կազմում:

Գյուլեի լիվան հյուսիսից սահմանակից էր Ախալցխայի նահանգի Մեծ Արգահանի լիվային, արևելքից՝ Կարսի նահանգի Զարիշատի դավառին, որին միանում էր Բուղարլի լեռնանցքով, հարավ-արևելքից և հարավից՝ Թախտայի դավառին: Արևմտյան ուղղությամբ Գյուլեին սահմանակից էր Ախալցխայի էյալեթի Փանակի լիվան, որի հետ բնական սահմանը հանդիսանում էր Արյան լեռը (Գանլը-դաղ)¹⁷⁰: Փանակից Գյուլե հասնելու համար պետք էր անցնել Բանջրուտի և Աղունդիրի ոլորապտույտ լեռնանցքներով: Գյուլեի լիվայում XVI—XVIII դարերում բնակավայրերի թիվը տատանվում էր 2—3 տասնյակից մինչև 4 տասնյակ: Համաձայն Ղ. Ալիշանի. «Են վիճակին 40 գեօղք, որուն գլխավոր ավանն Ուրուտ, առ միով ի վտակացն գետոյն, ի բարձու 6500 կամ ավելի...»¹⁷¹:

Գյուլեի դավառի բնակավայրերի տեղագրությունը սկսեց հյուսիս-արևելքից՝ Արգահանի լիվայի սահմանամերձ հատվածից:

Այստեղ էր գտնվում Գյուլեի ամենահեռավոր գյուղը՝ Գելգելը: Սրանից հարավ ընկած էին Խեմիցքար և Խասքոյ գյուղերը: Խասքոյից մոտ 5 կմ հարավ ընկած էր Զալորաշ գյուղը, որից 10 կմ արևմուտք գտնվում էր Ուչքիլիսա (երեք եկեղեցի) գյուղը: Ուչքիլիսայից հարավ ընկած էին Գյուլիստան և Զորանքոյ գյուղերը, որոնց արևելքից սահմանակից էր Արփաշեն գյուղը: Արփաշենից հարավ-արևելք՝ Զարիշատի դավառի հարևանությամբ, բարձրադիր վայրում ընկած էին Չատախ և Ղըրխ-Փունգար գյուղերը¹⁷²:

Ուչքիլիսայից արևմուտք գտնվում էր Օրաքիլիսա գյուղը, որից հյուսիս-արևմուտք՝ ոչ շատ հեռու, ընկած էին Ուգուրլի և Փուլագուկ գյուղերը: Սրանցից հարավ՝ Կուրի ափերին էին Գուրկաշեն, Մամգալեք և Ուրուտ գյուղերը: Ուրուտը XVI—XIX դարերում Գյուլեի վարչական կենտրոնն էր: Նրանից արևելք ընկած էր Խնա գյուղը, որից ևս 7—8 կմ արևելք և Արգահանից 26 կմ հարավ-արևմուտք Գելլ-օղլին (Գյուլե) էր: Սրա մերձակայքում էր գտնվում բերդը, որն էվլիա Չելքեի մոտ հիշատակվում է Քոլե (Գյուլե) ձևով. «Ախալցխայի տերիտորիայումն է և կառուցել է Վրաստանի բեյ Լևենդ խանը: Չըլգըրի էյալեթում է և սանջաքի բեյի կենտրոնն է: Փաղեշահական կանոնով բեյի խասը 300.000 աղչե է... Բերդը գրավվել է Սելիմ խանի կողմից : Գտնվում է անմատուց ժայռի վրա: 150 աղչեով կազա է: Ունի ջամի, խան և բաղնիք»¹⁷³: Խնա գյուղից հարավ գտնվում էր հիմնականում հույներով բնակեցված Թախտիկրան գյուղը, որից հարավ-արևելք՝ Կարս-Օլթի ճանապարհին, ճահճաշատ հարթավայրում ընկած էր Օկամ գյուղը: Նրա բնակիչները գրավվում էին երկրագործությամբ և անասնապահությամբ: Գյուլեն ուներ հայկական թաղ և եկեղեցի, որոնք ավերվել և ոչնչացվել են առաջին աշխարհամարտի տարիներին:

Օկամից արևելք ընկած էին Ամբոր, ինչպես նաև Վերին և Ներքին Դեմոլրկապի գյուղերը, որոնք ունեին խայտաբղետ ազգաբնակչություն (թուրքեր, ջրդեր, հայեր, հույներ), իսկ գետի հարավ-արևելք տարածվում էին Սալուտ և Շարաֆ գյուղերը: Շարաֆից հարավ՝ Կարս-Օլթի ճանապարհին ընկած էր Մերգենիկ ավանը, որը Գյուլեի շրջանի ուսական կայսրությանն անցնելուց հետո դառնում է Գյուլեի տեղամասի վարչական կենտրոնը: Մերգենիկից հարավ

¹⁶⁸ Խորենացի, II, 9, էջ 101:

¹⁶⁹ Նույն տեղում, էջ 112:

¹⁷⁰ Տե՛ս Տաշեան Հ., Տայք, դրացիք և Խոսրոբոյ, ՀԱ, 1972, 7—9, էջ 294:

¹⁷¹ Ալիշան Ղ., Տեղագիր հայոց մեծաց, էջ 40:

¹⁷² Տե՛ս Карта Кавказского края с показанием густоты армянского населения.

¹⁷³ Տե՛ս Թուրքական աղբյուրները, հ. Գ, Էվլիա Չելքի, էջ 113—114:

ՅՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ
ՏԱՅՔՈՒՄ (XVI ԴԱՐԻ ՎԵՐՋ – XIX ԴԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ԵՐԵՄՆԱՄՅԱԿ)

ա) Ժողովրդագրական գործընթացները Տայբում XVI–XVIII դ.դ.

Արևմտյան Հայաստանի, այդ թվում Տայբի ժողովրդագրությունն լուսումնասիրությունը պահանջում է անդադադանալ արևմտահայերի թվաքանակի հարցին: Ըստ օսմանյան վեզիր Ռեհա էֆենդիի՝ XVIII դ. վերջին քառորդին կայսրության ոչ թուրք ժողովուրդներից հայերը եղել են ամենաբազմաթիվը¹: Հայերի՝ Արևմտյան Հայաստանում մեծամասնություն կազմելու վերաբերյալ կարևորագույն տեղեկություններ է հաղորդում նաև Ֆրանսիացի ճանապարհորդ Ժան-Բատիստ Տավերնիեն²: Ցավոք, այդ աղբյուրներն աղքատիկ տեղեկություններ են հաղորդում Օսմանյան կայսրությունում ապրող ժողովուրդների և Արևմտյան Հայաստանի հայերի թվաքանակի մասին: Աղքատիկ են նաև սալնամենների՝ թուրքական պաշտոնական այմանախնների տվյալները, որոնք, բացի այդ, անկատար են և անճիշտ: Թերություններով լի էին նույնի դարասիի գրքերը՝ մարդահամարներն ըստ սեռի, որոնք հաշվի չէին առնում կրոնական պատկանելությունը: Անկատար էին նաև եկեղեցական մատյանները կամ ծխամատյանները, որոնք ծառայում են պատրիարքական տեղեկագիր կազմելու համար: Վերջիններս էլ երբեք չէին հրատարակվում և կառավարության հաղորդած մասերում էլ ժողովրդի կամ ծխականների իսկական թիվը նվազեցվում էր հարկերը թեթևացնելու նպատակով: Օրինակ, պարտադիր զինվորական տուրքը հարկահանները վերցնում էին բոլորից, անգամ հղիներից՝ պատճառաբանելով, թե տղա է ծնվելու: Ընդգրկում էր կարելի համարել նաև պաշտոնական տվյալները, որոնցում հաշվարկները կատարված են ծխերի թվի համեմատ, քանի որ հարեմական ռեժիմը չափահաս որդուն ամուս-

Մեհկերեք գյուղն էր, որից մոտ 10 կմ Հյուսիս-արևելք ընկած էին Շաքի և Կնդրսու գյուղերը: Մերզենիկից Հյուսիս-արևելք, Շաքիից 5 կմ Հյուսիս-արևմուտք և Շարաֆից 10 կմ արևելք գտնվում էր մեծամասամբ քրդերով բնակեցված Ալթուն-Բողազ (Ալթունբուլազ) գյուղը: Շաքիից և Կնդրսուից Հյուսիս-արևելք՝ Թախտայի գավառի սահմանակցություններ էր Կարատաուխը¹⁷⁴: Մերզենիկից Հյուսիս-արևմուտք՝ Փանակի լիվայի Բիամխիսի նահիիի սահմանամերձ հատվածում էր գտնվում Տեաներկուտ գյուղը: Սրանից մի քանի կմ Հյուսիս-արևելք ընկած էին Սիզնոտ և Չուփանենկ գյուղերը: Չուփանենկից մոտ 5 կմ Հյուսիս-արևմուտք Խորովինքն էր, որի անմիջական հարևանը քրդաբնակ Կյումուշլուրն էր (երկրորդ Խեմիցքար): Գյուղը կառուցված էր բարձրագույն վայրում, գտնվում էր Օլթի քաղաքից մոտ 57 կմ Հյուսիս-արևելք: Գյուղից Հյուսիս տարածվում են անտառներ¹⁷⁵: Կյումուշլուր և Սամզալեք գյուղերի միջև ընկած էր Դորդքիլիսա գյուղը, որտեղ, ի տարբերություն Կիսկիմի Դորդքիլիսա (Չորգվանք) գյուղի, հնում իսկապես եղել են 4 գործող եկեղեցիներ, որոնցից երկուսի ավերակները շարունակվում են պահպանվել¹⁷⁶: Խնդրո առարկա ժամանակաշրջանում Դորդքիլիսա գյուղը բնակեցված էր հիմնականում հույներով:

Ի տարբերություն ավելի վաղ շրջանի՝ XVI–XIX դարերում Գյուլեի լիվայի հայությունը մահմեդականների համեմատություններում նվազեց: Քրիստոնյա ազգերից բնակչության թվով երկրորդ տեղում հույներն էին: Մեծամասնությունը «իսլամացած հին ժողովուրդն էր, որոնց վարքն ու բարքը չէր տարբերվում հայ ժողովրդի վարքից ու բարքից. միակ տարբերությունը կրոնն է»¹⁷⁷:

¹⁷⁴ Տե՛ս Карта Кавказского края с показанием густоты армянского населения.
¹⁷⁵ Տե՛ս Հայաստանի և Խարակի շրջանների տեղանունների բառարան, հ. 2, էջ 717:
¹⁷⁶ Տե՛ս Տաշեան Հ., Տայբ, դրացիք և Խոտորքուր, ՀԱ, 1972, 7–9, էջ 294, Koch K., Reise im Pontischen Gebirge und Türkisch Armenien, s. 230-231.
¹⁷⁷ Ասրպլան, նշվ. աշխ., էջ 196:

¹ Տե՛ս Թուրքական աղբյուրները, Կ. Ա, էջ 239:
² Տե՛ս Бегларян Е.А., Города и население Армении по Ж.Б.Тавернье, ԲԵՂ, 1991, N 3, էջ 119:

նության օրից հայրական տնից հեռացնում է, որի պատճառով մահճեղական բնտանիքը 5 հոգուց ավել հաղվաղեպ է՝ լինում, մինչդեռ հայ բնտանիքներն ավելի բազմամարդ են³: Բացի այդ, պաշտոնական տվյալներում գրեթե միշտ պակասեցվում էր հայերի թիվը: Սրան ավելացրած, պաշտոնյաները բավականանում էին մահճեղական բնակչության մասին տանուտերերի հաղորդած չափազանցված տվյալներով⁴: Դրանք ոչ միայն անաչառ չէին, այլ ավելին, ներկայացնում էին Արևմտյան Հայաստանի բնակչության էրական ազգային կազմից բավականին հեռու մի պատկեր:

Ինքնին պարզ է, որ նյութերը խիստ սահմանափակ են, կամ ընդհանրապես բացակայում են առանձին վարչամիավորների մասին, առավել էս, որ անկայուն վարչական բաժանումն անհնարին էր դարձնում զանազանելու յուրաքանչյուր թվական տվյալի տարածքային շրջանակը: Եյալեթներում, գրեթե առանց բացառության, հայերի թիվը մեծամասնություն էր, իսկ երբ XIX դարում ձևավորվեցին վիլայեթները, ապա հայահոծ շրջաններին կցվեցին թուրքաշատ և մուսուլմանաշատ սանջակներ, որի պատճառով փոփոխվեց վարչամիավորների էթնիկական կազմը⁵: Դա իր հերթին բարդացրեց վարչամիավորների ժողովրդագրական պատկերը վեր հանելու խնդիրը: Ուստի վարչական առանձին միավորների բնակչության վիճակագրության միակ և գիտական մեթոդը մնում է գյուղերի անվանական հաշվառումն ըստ գավառների և նահանգների: Այնուհետև հաշվի առնելով յուրաքանչյուր բնակավայրում բնտանիքների և բնտանիքներում՝ անդամների միջին մեծությունը, հնարավոր կլինի պարզել յուրաքանչյուր վարչական միավորի բնակչության միջին թվաքանակը⁶:

Սկզբնաղբյուրներում պահպանված բազմաթիվ վիլայությունների համաձայն՝ Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներում հայ բնտանիքների անդամների թիվը եղել է տարբեր: Սակայն բազմանդամ բնտանիքներով ապրելը եղել է հայ բնտանիքի ամենաբնորոշ գծերից մեկը: Համաձայն Ալ.Երիցյանի՝ քաղաքաբնակ հայերն իրենց ավելի ապահով էին զգում, այդ իսկ պատճառով շտապում

էին բաժանվել: Դրա հետևանքով քաղաքներում խիստ հազվագյուղացի էին 15–20 հոգանոց բնտանիքները, այսինչ գյուղերում շատ էին 30, 40, մինչև անգամ 50 հոգանոց հայ տները, քանի որ նրանք իրենց ապահովությունը տեսնում էին բազմանդամության մեջ⁷: Բազմանդամ բնտանիքն Արևմտյան Հայաստանի հայերի համար հողը չմասնատելու միջոց էր և անձնական ու գույքային անվտանգություն ապահովող եզակի հնարավորություն⁸:

Արևմտյան Հայաստանի ժողովրդագրության առանձնահատկություններն ուսումնասիրելով՝ Ա. Մելքոնյանն իր «Էրզրում. էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը XIX դ. առաջին երեսնամյակին» աշխատության մեջ հանգել է այն եզրակացության, որ գյուղական հայ բնտանիքների անդամների թիվը բաղադատելիս՝ միջինը պետք է ընդունել 8-ը, թուրքերինը՝ 6-7, քրդերինը՝ ավելի պակաս⁹: Տայքում ևս կիրառելի է բնակչության բաղադատման այն բանաձևը, որը բնորոշ է Արևմտյան Հայաստանի մյուս շրջաններին և միայն այս եղանակով է, որ հնարավոր է դառնում հաշվել Տայքի բնակչության մոտավոր թիվը:

Ինչպիսի՞ն էր ժողովրդագրական իրավիճակը Տայքում օսմանյան տիրապետության հաստատման շրջանում՝ այսինքն XVI–XVII դարերում: Տարբեր աղբյուրների համադրությունից հստակ երևում է, որ չնայած նախորդ ժամանակաշրջանում երկրամասում տեղի ունեցած ոչ հայանպաստ էթնոժողովրդագրական գործընթացներին, Տայքի գավառներում մեծամասնություն էր կազմում տեղաբնիկ հայ տարրը (առաքելական և ուղղափառ), որի կողքին օրըստօրե հայտնվում էին եկվոր էթնիկական այլ խմբեր: Սուլթանական կառավարության հրամանով թուրք պաշտոնյաների կազմած «Գյուլըլիստանի վիլայեթի մեծ դավթարի» համաձայն՝ հարկման են ենթարկվել ավելի քան 1250 բնակավայր ու եկամուտ ապահովող այլ վայրեր՝ լճերի ու գետերի ձկնային տնտեսություններ, այգիներ, արոտավայրեր, դաստակերտներ ու ջրաղացներ: Ինչպես երևում է սկզբնաղբյուրի համակողմանի ուսումնասիրությունից, Տայքում գյուղատնտեսությունը բավականին բարձր զարգացման մակար-

³ Տես Վիճակագրական տեղեկություններ տաճկահայերի մասին, աս.տ., 1902, էջ 10–13:

⁴ Տես Երիցյան Ա., Թե Տաճկական Հայաստանում որքան հայ կա, Փորձ, 1880, հունիս–հուլիս, էջ 216–217:

⁵ Տես Վիճակագրական տեղեկություններ տաճկահայերի մասին, աս.տ., էջ 17–18:

⁶ Տես Մելքոնյան Ա., Էրզրում, էջ 105:

⁷ Տես Երիցյան Ա., Թե Տաճկական Հայաստանում որքան հայ կա, Փորձ, 1880, հունիս–հուլիս, էջ 218:

⁸ Տես Մելքոնյան Ա., Էրզրում, էջ 110:

⁹ Տես Մելքոնյան Ա., Էրզրում, էջ 111–112:

դակի վրա էր գտնվում: Դա պայմանավորված էր տեղի բնակչու-
թյան անխոնջ աշխատանքով, որի հիմքում ընկած էր բազմադարյա
փորձն ու բնական պայմաններին հարմարվելու կարողությունը¹⁰:
Հարկացուցակում նշված են բոլոր մարդարնակ և անմարդարնակ
բնակավայրերի անվանումները, դրամական և բնամթերքային հար-
կի տեսակները և չափը, բնակավայրերի ծխերի քանակը, նրանց
նահապետների անվանացանկերը, որոնք բացառիկ նյութ են տարա-
ծաշրջանի ժողովրդագրական պատկերը վեր հանելու համար:
Հարկման ենթակա բնակավայրերի անվանացանկերից հստակ
երևում է, որ Տայքի բնակավայրերի մեծ մասում բնակիչները
քրիստոնյա էին և կրում էին հայկական ու վրացական կամ հայերի
և վրացիների մեջ մեծ տարածում գտած անուաններ: Հայերի շրջա-
նում լայնորեն դործածվող անուններ Հանդիպում ենք Տայքի Փա-
նակի լիվայի գրեթե բոլոր բնակավայրերում: Ստորև ներկայացվում
է Փանակի լիվան իր Հարկման ենթակա 109 բնակավայրերով¹¹:

Աղյուսակ 1

№:	Բնակավայրի անվանումը	Հարկի չափը (ակն)	Ընտանիքների քիվը	Հիշատակվող հայկական կամ հայերի շրջանում մեծ տարածում ունեցող անձնանունները	Էջն ըստ հարկացուցակի
1	2	3	4	5	6
Փանակի նահիե					
1	Փանակ (ուքաք)	30000	36	Եղիա Ջաքարի որդի, Փիր Նազարի, Աշոտ, Միրաք Ջաքարի, Գրիգոր, Շահմն-	332-333

¹⁰ Տե՛ս Նգանոյե Յ., Տաճրոտ-ճահաջլոտ Տաճրոտջլոտ Տոջլոտ մլոյրնեյոճա XVI
Տալլոյնեյո, ճջ. 140.

¹¹ Տե՛ս Գլորչիճանի յոլոլոյոտի ճոճո ճաջոարո, թ. 2, ճջ. 332-392.

				իք, Թաքոս, Գրիգոր Ամրո- սի, Մտեփան, Ավանես, Թաքոս Մկրտչի, Հակոբ Փիրայի	
2	Դաստակերտ (Փանակ)	500	6	Տերտեր Աբրամի, Մուլբան Խաչիկի	335
3	Դաստակերտ (Փանակ)	600	8	Շերմազան, նրա եղբայր Պարոնվարդ, Բաղդասար, Մարտիրոս	335
4	Դաստակերտ (Փանակ)	400	6	Աբաբեկ, Օնան Գրիգորի, նրա որդի Օհան	336
5	Բարիք	14000	42	Անդրանիկ, Մուրադ, Մի- րան, Վարդպարոնի որդի, Ջաքար, Խաչատուր, Համ- բարձում, նրա որդի Օզան, նրա եղբայր Հովսեփ, Խաչատուր Մտեփանի	336
6	Կոնճոր (Կուտոր)	20000	39	Ամիրխան Գրիգորի, Ամիր- վարդ, Ավանես Պարոնի, նրա եղբայր Նուրազիգ, Սարգիս Շահնազարի, Ափրիանոս, նրա եղբայր Մկրտչի, Եղիազ- ար, Խաչատուր, Ավանես Մուլբանի, Յարալ, նրա որ- դիներ Մկրտչի և Սարգիս, Գուլազիգ Օհանեսի, Փիր- նազար, Կակոս Արտաշեսի	337-338
7	Արմաշեն	10000	30	Վասիլ Աբրամի, Տերտեր Գուլազիգի, նրա եղբայր Կիրակոս, Մյսիքար, Ման- աս	338
8	Չարձոր (Չարսոր)	11500	37	Մոսիկ, Հազարպետ Մոսի- կի, Փարազիգ Վարդիկի, Նուրազիգ Վարդիկի, Կա- րապետի որդիներ, Ջոնրաք, նրա եղբայր Ջանիրեկ, Ա- վանես, Միիրան	339
9	(անընթեռնելի) Վերին Շալա ցանքատարած- քով	12598	19	Գրիգոր, նրա եղբայր Ջա- միրեկ, Եղիա	340
10	Մուշեղ	13700	18	Ջոջիկ, Մելիք, Եղիա, Դա- վիթ Շահնազարի	340

11	Դաստակերտ (Մուշեղ)	200	3	Սկրտչի որդիներ Մուրադ-լան և Թեմուր	341
12	Մոխրապ	16000	25	Սկրտչի, Ջարասայ, Հովհաննես	341
13	Լուխ	9000	40	Մարտիրոս Վարդանի, նրա եղբայրներ Վարդան և Դուրբեկ, Փիրագիզ, նրա որդի Մկրտչի, Կիրակոս Սողոմոնի, Ավա/ծա/տուր Փիրիսանի, նրա եղբայրը, Կարապետ, Մարգար, Ավագ, նրա եղբայր Պավել, Սկրտչի որդի	342
14	Քելիվանք	13000	-	-	343
15	(անընթեռնելի)	5000	7	-	343
16	Թաղք	5000	8	Ջարարի բոռ	343
17	Թխասբուրք	13000	28	Շահում, Խաչատուր Ազարբեկի, նրա եղբայր Օզան, Քրիստոս Ասլանի, Սարգիս Մուրադշահի, Գրիգոր Ջանագիզի, նրա եղբայր Կիրակոս, Շերվան Գարրիելի, նրա եղբայր Տերհանես, Վարդապարտ, Տերտեր Գուլմազի	344
18	Դաստակերտ (Թխասբուրք)	330	4	Բայանդուր Ջարարի, նրա եղբայր Փիրալ	344
19	Ջատգերակ (Ջեղկարեկ)	14500	50	Մարգիս Օհանի, Գրիգոր Օհաննեսի, նրա եղբայր Նորսես, Մարիրեզ Տերհակոբի, Մելիք Ջոհրաբի, Փիրիսան Նազարի, Կարապետ, Մարգիս Դազարի, Մարտիրոս, Եղիազար Վարժեկի, Գալուստ Խաչատուրի, նրա եղբայր Դուրբեզ, Կարապետի որդի, Դանիել, Ազատ, նրա եղբայր Ասլան, Սկրտչի, Առաքելի որդի, Կիրակոսի բոռ, Խաչատուրի որդի, նրա եղբայր Վարդան, Ալեքսան Վարդազիզի, նրա որդի Ստեփան, Ջոհրաբ Ներսեսի, Օհանես	345

				Ավա/ծա/տուրի	
20	Դաստակերտ (Ջատգերակ)	330	3	-	346
21	Էզնաք	11000	40	Շահնագար, Բագրատ, Մանվել, Անդրեաս	346-347
22	Վերին, Ստորին և Միջին Արսե-նիկներ	13500	138	Կիրակոս, Մեհրիվան Կիրակոսի, Սողոմոն Մահակի, Մարգիս Ազիզի, նրա եղբայր Խաչատուր, Օհանես, Ամիրզարդ, Սկրտչի Մահակի, Կիրակոս Օզանի, նրա եղբայր Սուրբան, Հազարբեկ, Կիրակոսի եղբայր Միրիսան, Սկրտչի, Մանվել քահանա, Եղիազար քահանա	347-349
23	Չկնային տնտես (Արսենիկ)	200	-	-	349
24	Էզրիշուար (ցանքատարածք)	1000	-	-	349
25	Եզնոց (Էզնոխ)	11000	15	Մանուկ, Բայանդուր	349-350
24 ²	(անընթեռնելի)	9000	3	Արտաշես Փիրագիզի, նրա եղբայր Ալիխան, Ջատիկ, Վարազ	350
25 ²	Դաստակերտ (անընթեռնելի անվանք գյուղի մոտ)	350	8	-	350-351
26	(անընթեռնելի)	9300	անթմակ	-	351
27	Նազիրվան (Լազարվան)	7000	14	Ամիրզարդ, նրա որդիներ Խաչատուր և Մարտիրոս, Նորսեսի բոռ, Ահանես, Սկրտչի	351
28	Դաստակերտ (Նազիրվան)	250	3	-	351
29	Ազրակ (Ալրիակ)	8000	6	Ջատիկ Մուրադի	352
30	Բարնակ	10000	24	Մարգիս Ջարարի, Վարդազիզ, Վարդան Վարդազիզի	352-353
31	Մերենես	8500	26	Մանուկ, Վարդազիզ Մտեփանի, Մարգիս	353

32	Էզածոր (Այգեծոր, Էկեւոր)	8000	15	Գարսեան, Անդրեաս Ռոտոմի	354
33	Ձաղթա	11000	6	Գիրոր, նրա եղբայր Հովսեփ	354
34	Կարիսու	4500	17	Հովհան, Նազար Դավիթի, նրա եղբայր Գիգոյ, Եղիա- զար Սկրտչի, Պետրոս Խաչատուրի, Վարդազիզ Ստեփանի, Մուրադահ Ջարարի	355
35	Կոսիք	12000	54	Արիսոն Գրիգորի, նրա եղ- բայրներ Ավանես, Յասոն և Իսրենդեր, Մինաս, Ամիր- վարդ, Մատիկ Հովհաննեսի, նրա եղբայր Կիրակոս, Խաչատուր, Ներսես, Կիրակոս Հովհաննի	355-356
36	Քարագոյի	7000	24	Ալեքսան Օզանի, Լիսյա- րիտ, Արտաշես Ջուրապի	357
37	Կինեպոս	5500	12	Գրիգոր Մարտիրոսի, Խա- չիկ Գրիգորի, Գրիգորի որդի, Կարապետի որդի	357-358
38	Վաղավեր	7500	23	Մարգիս, Մարկոս	358
39	(անընթեռնելի)	5500	անընթեռնելի	-	358
40	Աղիտ-Գոմ (Աղիտգոմի)	10000	7	Նովրոս Գրիգորի	359
41	Կոնք (Կեզիրման Գերես)	11200	անընթեռնելի	-	359
42	(անընթեռնելի)	3000	անընթեռնելի	-	359
43	Բերդիկ (Բարդիկ)	-	անընթեռնելի	-	359
44	Իսրայել	6000	4	Ավանես Հանեսի, նրա եղ- բայրներ Գրիգոր և Հանես	359
45	Գարդողի	11000	7	Կիրակոս Մկրտչի, Նովրոս Մարտիրոսի, Խոսրոյ Հով- հաննեսի, Ասիա/ժա/տուր Ասլանի, Կարապետ Մուրադի	360
46	(անընթեռնելի)	3000	անընթեռնելի	-	360
47	Չկնային տունես. (Բերդիկ)	5000	-	-	360

48	Թարիք (Բարիք)	5000	11	Ասիա/ժա/տուրի որդի, Միսոն Բայանդուրի, նրա եղբայրներ Մկրտչի և Մարտիրոս, Գալուստ Հովհաննեսի, Շահողայի Մկրտչի, Մկրտչի որդի	361
49	Ցանքատարածք (Փանակ)	7000	-	-	361
50	Խոշ (ցանքատ- արածք)	-	-	-	361
51	(անընթեռնելի) Կոնճորի մոտ	1000	-	-	351
52	Օկեթ (Աղիտգոմի մոտ)	500	անընթեռնելի	-	361
53	Տաշ (ցանքատ- արածք, Աղիտգ- ոմի մոտ)	500	-	-	361
54	Ցանքատարածք	4900	-	-	362
55	Իսրայել (Դիլիմջիկոյ)	2000	անընթեռնելի	-	362
Քիամիսի նախն					
1	Քիամիսի	28000	55	Ջարար, Մուրադ, Նազար, Մատիկ, Հազարսեղ	362-363
2	Դաստակերտ (Չիփիլիկ) ¹²	376	3	Դավիթ Մոսի, Հազար, նրա եղբայր Հայկաբոզ	363
3	Տանարիկ (Տաչեքեք)	22000	29	Կիրակոս Մարադանի, նրա եղբայր Խաչատուր, Արտաշես Ջեմշիքի, Ավանեսի որդի	363-364
4	Մկրտչի դաստակերտ	380	5	Իսրայել, նրա եղբայր Վահան	364
5	Բանջորտ (Փանջորեք)	12900	26	Արտաշես, Գալուստ, Վասիլ Հակոբի, նրա եղբայր Մուրադ	365
6	Մողմոն	14000	13	Կիրակոս Հովհաննեսի, նրա որդի Մարտիրոս	365
7	Փերթեան	7000	29	Գալուստ, նրա եղբայր Վարդան, Գալուստ Մուրադահի, Մկրտչի որդի, Կարապետ Դավթաբեկի	366

¹² XVI դ. վերջից մասնավոր կալվածք թուրքիայում:

8	Դաստակերտ (Փերրևան)	200	3	-	367
9	Խաքամ	16000	45	Փիրնազար Մանասի, նրա եղբայր Կիրակոս, Գույրել Կահանի, Մինաս, նրա որդի Ազարբեկ, Վարդազիզ, Կարապետի որդի, Վարդազիզի որդի	367-368
10	Վերին (անընթեռնելի)	5000	18	Ազատ, Գրիգորի թոռ, նրա որդի Մարգիս, Գուլար Մարտիրոսի	368
11	Գաղ (Գվաղի)	8500	8	-	368-369
12	Դաստակերտ (Գաղ)	270	3	Լևոն Ներսեսի	369
13	(անընթեռնելի)	4500	անընթեռնելի	-	369
14	Աղունդիր	8500	անընթեռնելի	-	369
15	Մտորին (անընթեռնելի)	14998	անընթեռնելի	-	369
16	Ցանրատար-ածքներ (անընթեռնելի)	20000	-	-	369
Փանազկերտի ցահիյե					
1	Փանազկերտ (ուրբար)	16000	40	Սկրտիչ, նրա եղբայրներ Սիմոն և Հազար, Մուրադ Ստեփանի, նրա եղբայր Մարգար, Հովհաննես Մուրադի, նրա եղբայրներ Վասիլ և Մարգիս, Մուրադ, Մուրադ Կիրակոսի, Մարգար	370
2	Չկնային տնտես (Փանազկերտ)	500	-	-	370
3	Ուրեկի	21000	48	Մուրադի որդի, նրա եղբայր Ստեփան, Ավա/ժա/տուրի որդի, Հանես, նրա որդի Վարնաս, Ալեքսան Մարգիս	371
4	Վերին Փանազկերտ	15000	36	Սկրտիչ Նովրուզի, նրա եղբայրներ Հովհաննես և Մարխոշ, Մարկոսի թոռ, Գաբրիել, Մանվել	372
5	Վերին և Ներքին Օղբարաբեր	22000	88	Ազատ, Վարդ, Աուսբեկ, նրա եղբայր Փիրան, Կարապետի որդի, նրա որդիներ	373-374

					Սահակ և Վարդազիզ, Բուդախ Աբրահամի, նրա եղբայր Մելիքներ, Ավանես, նրա եղբայր Վարդազիզ, Կիրակոսի որդի, նրա եղբայր Մարգիս, Կարապետ Գրիգորի, Մելիքներ Կարապետի, Դավիթբեկ Ջաքարի, Աբրահամ Ջաքարի, Խոսիկ Կարապետի, Սկրտիչ Ծահազիզի, Մանվել Եղիազարի, Վարդազիզ Նովրուզի, Ավագ, Հակոբ Դազարի, Բուդախ Մելիքի, նրա եղբայր Սահակ, Պարոնվարդ Մարուխանի	
6	Դաստակերտ (Փանազկերտ)	200	4	-	372	
7	Գեամալ	14500	26	Գրիգոր Միրիջանի, նրա եղբայր Վարդան, Ավանես Մարտիրոսի, Արտաշես Մելիքի, Մելիք Մուրադի, Դազար Մինասի, Մարիթեկի որդի, Մոխտար Սարիբեկի, Խաչատուր Գրիգորի, Կարապետ Կիրակոսի, Կիրակոս Ավաղանեսի, Հովսեփ	374-375	
8	Փիրդանու	10000	20	Սկրտիչ, Պողոս, Կարապետ Չոխրաբի, Գրիգոր Վարդազիզի	375	
9	Մեհանք	15433	22	Պետրոս, Վարդան, Ջաքար, Ծահապարոն	375-376	
10	Փոքր (անընթեռնելի)	18500	4	-	376	
11	Զարաշուտ	11000	8	-	376	
12	Կասք	10000	23	Վարդազիզ, նրա որդիներ Ամիրազիզ և Հազարբեկ, Դազար, Մելիք, Կիրակոս, Մարտիրոս, Մարգիս Մուրադի, Վարդան, Մելիք Հազարբեկի	377	
13	Միջին Ջուլակ-	3000	անընթեռնելի	-	377	

	երս				
14	Կիսադաստակերտ	275	6	Միրան Օհանի	378
15	Կիսադաստակերտ	193	3	-	378
16	Ներքին Ջուրակերտ	8000	36	Մյուսիչ Ղարազոզի, Գորգն Մարադի, Ավագ, Կիրակոս Ավագի, նրա եղբայր Ստեփան, Ավանես, Հանես Հովհաննեսի, Ավա/ծա/տուր Ազարբեզի, Մարգիս, Կիրակոս, նրա եղբայր Ղարաիզի, Ավա/ծա/տուր Ղարաիզի, Գալուստ, Մարգիս Խոսիկի, նրա եղբայրներ Ամիրսարգիս և Ամիրվարդ	378-379
17	Ցանրատարածք (Ներքին Ջուրակերտ)	600	-	-	379
18	Բերդուս	500	8	Ամիրնազար, Կիրակոս Օհանեսի, Վարդան, Ղազանփեր Գրիգորի, Ստեփան Ավա/ծա/տուրի	379
19	Դաստակերտ (Բերդուս)	200	4	Խոսիկ Վարդապարտի, Առաքել, Վարդապարտ	380
20	Քամրխի (Քեամխ)	25000	58	Օրսբեզ Շահամիրի, նրա որդիներ Ամիրազիկ և Խաչատուր, Նուրազիկ Խաչատուրի, Մահակ, Դանիել, Հովսեփ, Ավա/ծա/տուր, Պարոնպետ, Ամիրբեզ, Մինասի որդի Մարարս, Շահմուրազ Ղարապետի, նրա եղբայրներ Մուրադխան, Մելիքսեթ և Ղայրմաս, Աբսարել, նրա եղբայր Ջանդար, Գրիգոր Մարկոսի, նրա եղբայրներ Ասլամաս և Գևորգ, Գալիքի, Եղիազար, նրա եղբայր Մահակ, Կարապետ Մաստուրի, Մուրազ Փարվանի, Եղիա Ավագի, Դեպրան	380-381

21	Կարմրածոր (Քամրասոր)	14000	18	Գրիգոր Ամիրապետի, նրա եղբայրներ Հակոբ և Կիրակոս, Հովհաննես Խաբենդերի, նրա եղբայր Կիրակոս, Ջանիքել Աբրահամի, Մելիք	381-382
22	Կարմիր	8000	21	Փիրայի Առաքելի, նրա եղբայր Հակոբ, Մարիբեզ Հակոբի, Ազիզ Ամիրայի, նրա որդի Վահան, Պարոնսեր Սարմուզի, Գալուստ Նաթանի, Նուրազիկ Միրանի, Դուրմիշխան, Ենոք Վարդանի, նրա որդի Մաթոս, Եղիազար Բայանդուրի, Հովհաննես Ամիրազիկի	382
23	Վերին Ջուրակերտ	5000	8	-	383
24	Օլոր (Ոլոր)	20000	60	Մինաս, Մանասի որդի՝ քահանա, նրա որդի Հոհան, Մինաս Գուգորի, Մինաս Սուլբանի, նրա որդի Ալեքսան, Հակոբ Փարսանի, Կարապետ Հակոբի, Մարտիրոս, նրա եղբայր Թաթոս, Ամիրնազար, Ամիրնազար, նրա եղբայրներ Շահմուրազ և Փիրնազար, Մինաս Եղիայի, Ջաքար, Խահակ Մարկոսի, նրա եղբայր Եղիա, Մարգիս Ջուրայի, Խաչիկ Մովսեսի, նրա եղբայրներ Ստեփան և Դուրմիզի, Մինաս, նրա եղբայր Թուրա, Հայրապետ, Կիրակոսի թոռ, Կիրակոս Թաթորի	383-384
25	Դաստակերտ (Օլոր)	340	1	-	384
26	Հայդուս	13000	28	Բայանդուր Ջաքարի, նրա եղբայր Բաղիկ, Վարդազիկ Ջավիկ, Վարդան Վարդազիկի, Գուրազիկ Ղազարի,	385

				նրա եղբայր Եղիազար, Մանուկ, նրա եղբայր Մարկոս, Մելիքսեր նրա եղբայր Նորագիգ, Հովսեփ, Հագարպետ, Եղիա Հագարպետի, Եմոք Ազարի	
27	Նորբերդ	20000	53	Գրիգոր Մինասի, Եղիա Գրիգորի, Մարտիրոս Անտոնի, Մելիքսեր, նրա եղբայրներ Փանոս և Ամիրբեկ, քահանայի որդի Հովսեփ, նրա եղբայր Սարա, Մկրտիչ	386-387
28	Մեքար	8000	23	Զոհրաբ Վարազի, Ազարբեկ Միրահի, նրա եղբայր Եմոք, Հովհան, Վարձել Մելիքի	387-388
29	Կարնավաս	12000	152	Հարություն, Գալուստ, Եղիա Մարկոսի, Արզար, Փանոս Ամիրմագարի, Ավալ Փարոսի, Ալիխան Աղամազի, Զարասպ, Հագարպետ, Մելիք, նրա եղբայր Աբարբեկ, Զոհրաբ Գրիգորի, Զաքար, Մարկոս Դավթի, նրա եղբայր Մուսիկ, Հովսեփ, նրա եղբայր Վարդագիգ, Զալիկ, Մանգել Մարտիրի, Օհան, Մինաս, Միրան, Զաքար, Զոհրաբ, նրա եղբայր Մարկոս, Մկրտիչ, Ումիկ, Լևոն Ումիկի, Մինաս, Լևոն Ավալի, Խոսաքեղ Կիրակոսի, Սարա Պարոնի, Ումիկ Խառնդամասի, Մոս	389-391
30	Աղվանիք	7000	անբնակ	-	391
31	Մանտոբ	6000	անբնակ	-	391
32	Խոշվանք	2000	3	Արտաշես, նրա եղբայր Մուրթան	391-392
33	(անընթեռնելի)	2000	անբնակ	-	392
34	(անընթեռնելի)	2000	12	Վարիր, Մաթևոս, Մինաս, Պողոս Մարտիրոսի, նրա	392

				եղբայր Ամիրալ, Մաթևոսի որդի, Մինասի որդի	
35	Պետրոս	1000	անբնակ	-	392
36	Յանքատարածք (Պետրոս)	500	-	-	392
37	Յանքատարածք (Կապր)	100	-	-	392
38	Կարխիսի	2000	-	-	392

Փանակի լիվան ըստ Գյուրջիստանի վիլայեթի մեծ դավթարի

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ վերը թվարկված բնակավայրերում հանդիպում ենք նաև քիչ քանակությամբ վրացական անձնանուններին: Այսպես, Փանակ գյուղում հանդիպում ենք Գոգիչայի, Չարձորում (Չարզով)՝ Գիրգրիի, Կոփում՝ Գիրգրիի և Գրիգորի, Խարանում՝ Զաղայի, Փանագլեբրտում՝ Գոճիայի և Իլարիոնի, Ուրեկում՝ Գոգիչայի, Բաղուչայի, Գեսմալում՝ Իվանեի, Կարնավասում՝ Գիրգրիի, Գոգիչայի և այլն: Հաճախ կարելի է հանդիպել դեպքերի, երբ Հայրն ունեցել է վրացու, որդին՝ Հայի, կամ եղբայրներից մեկը Հայի, մյուսը՝ վրացու անուն: Օրինակ Թխասքուրք գյուղի բնակիչ Բեքայի որդու անունն Ազատ էր, Նորբերդ գյուղի քահանայի որդիներից մեկի անունը Հովսեփ էր, մյուսինը՝ Սարա, Բեամիս գյուղի բնակիչ Գրիգորի որդիներն էին Ասլամազը և Գիրգրին¹³: Նման փաստերը վկայում են խառը բնակչություն ունեցող գյուղերի գոյություն, նրանցում երկու ազգությունների միջև ոչ միայն հանդուրժողական, այլ նաև բարյացակամ վերաբերմունքի առկայության մասին: Այսպիսի իրավիճակը ձևավորվել էր նախորդ Սամցխեի աթաբեկության շրջանում և կարող էր լինել նաև Հայության շրջանում քաղկեդոնականության տարածման հետևանք¹⁴:

«Գյուրջիստանի վիլայեթի մեծ դավթարում» հազվագեպ ենք հանդիպում թուրքական և քրդական անուններին: Սա պայմանավորված էր այն հանգամանքով, որ տարածաշրջանում օսմանյան տիրապետությունը դեռևս թույլ էր:

Չլզրբի էյալեթի կազմում Տայքի գավառներից Հայ բնակչությունը բացարձակ մեծամասնություն էր կազմում Բերդագրակի լի-

¹³ Տե՛ս Զյւրճոնեանի շոկոլոցոտի ճոճո, Գ. 2, շՅ. 344, 381, 387.

¹⁴ Տե՛ս Մեյրոնյան Ա., Չավախք XIX դ. և XX դ. I քառորդին, էջ 82-83:

վաճառում. «...բնակիչք նոցա առհասարակ էին յազգէս Հայոց»¹⁵: Սահայն իբրև յուրդրուկ և օջաքլըք կառավարվելու պատճառով «Գյուրջխատանի վիլայեթի մեծ դավթարում» Բերդագրակի լիվան, ինչպես նաև նման կարգավիճակ ունեցող Ախալցխայի էյալեթի մյուս գավառները՝ Լիվանեն, Նըսֆի Լիվանեն և Շեշատը, չեն հիշատակվում: Հարկահանութեամբ այդ գավառներում զբաղված էին գրանց ժառանգական սեփականատերերը:

Հայաշատ էր նաև Թորթումի լիվան: XVII դ. առաջին կեսին Թորթումի գավառի էթնոթոգովրդագրական պատկերի մասին արժեքավոր տեղեկութիւններ է հաղորդում ժամանակաշրջանի հնդիսակ Հակոբ Գարնեցիին, համաձայն որի, «Եւ էին բնակիչք երկրիս կես հայ ազգաւ և կեսն կրօնիւք վրացի, բայց հայի լեզուաւ խօսէին»¹⁶: Այս առիթով Հ. Տաշյանը գրում է. «Հայ ազգաւ և կրօնիւք վրացի՝ հակադրութիւն են կրօնական տեսակէտով, ոչ թէ ազգային, ինչպէս արգէն «Հայի լեզուաւ» կը ցուցընէ: Ասոնք «վրացի» էին այնպէս՝ ինչպէս այսօր «Firengi» կամ «Փրանկ» Հայեր: Ինչպէս Բիւզանդեանց իշխանութեան ներքև ունեցած ենք նաև շատ բազմաթիւ «հոռոմ» Հայեր, որոնցմէ այսօր ալ կան յունածէս, բայց տակաւին հայախօս Հայ-Հոռոմներ, նոյնպէս պատմութեան բերմամբ ունեցած ենք «կրօնիւք վրացի» Հայեր — չհաշուելով լիովին վրացած՝ ինչպէս նաև յունացած ու կորսուած Հայերու բազմութիւն մը»¹⁷:

Տայքի բնակչության թվաքանակը պարզելու համար անհրաժեշտ ենք համարում դիմել մոտավոր հաշվարկի մեթոդին: Իսկ որ այդ մեթոդը կիրառելի է նաև Տայքի համար, ցույց տանք հետևյալ պարզ հաշվարկով. այսպես Փանակի լիվայի գյուղական բնակավայրերը, չհաշված գաստակերտներն ու անմարդարնակ մնացած գյուղերը, թվով 61-ն են, իսկ այդ բնակավայրերում առկա ծխերի թիվը հավասար է 1790-ի: Ստացվում է, որ Փանակի լիվայի գյուղական բնակավայրերը միջինը կազմված են շուրջ 30 ծխից: Տայքի բնակչության թիվը որոշելու համար միջինը յուրաքանչյուր ընտանիքում պետք է ընդունել 8 անգամ, հաշվի առնելով, որ բնակավայրերում բացի հայ ազգաբնակչությունից ապրում էին նաև

մահմեդականներ: Այս հաշվարկը կիրառելով Տայքի բոլոր գավառների համար, կստանանք հետևյալ պատկերը.

աղյուսակ 2

Հ/հ	Գավառը	բնակավայրերի թիվը	ծխերի թիվը	բնակչության թիվը
1	Բերդագրակ (Կիսկիմ)	60	1800	14400
2	Պարխար	40	1200	9600
3	Թորթում	53	1590	12720
4	Թավուսկեր	24	720	5760
5	Օլթի	81	2430	19440
6	Մամրվան	30	900	7200
7	Փանակ	109	1906	15248
8	Գյոլն	40	1200	9600
Ընդամենը		446	12016	93968

Այսպիսով, Տայքի բնակչության ընդհանուր թիվը մոտավոր տվյալներով XVI դ. վերջին հասնում էր շուրջ 94 հազարի: Հաշվի առնելով Ղ. Ինճիճյանի հաղորդումները հայության թվի վերաբերյալ, գրեթե առանց բացառության հայանուն բնակավայրերի առկայությունը, ինչպես նաև «Գյուրջխատանի վիլայեթի մեծ դավթարում» հանդիպած հայկական բազմաթիվ անձնանունները, պետք է ընդունել, որ հայկական էր Տայքի բնակչության մոտ երկու երրորդը:

Արևմտյան Հայաստանի և մասնավորապես Տայքի հայ բնակչության համար իսկական պատուհաս էին նաև թուրք-պարսկական պատերազմները, որոնց արդյունքում բռնի տեղահանվում էր հայ ժողովուրդը: Այս գործընթացի արդյունքում տեղի էր ունենում Արևմտյան Հայաստանի հայաթափում: 1604 թ. իրադարձություններին անդրադառնալով՝ Զաքարիա Վանեցիին գրում է. «Ձի ել հրաման յարքայէն, զի երթիցէն և գերեսցէն գտունս հայոց: Եվ գնացեալ գերեցուցին զԿարս, զՇիրակունիս, զԲասեն, զԿաղզըւան, զԱղջաղայեն, զԱլաշկերտ, զԳաւգ(սու), զԱրբիս, զՏոււմանիս, զՉլզըր, զԱրտախան, զԿուլայ, զՇաքի, զՇրւան, զՇամախի, զԲանակ, զՓասկեր (Փանազկերտ), զՅուլախիք, զՄամրվան, (ընդգծումը մերն է — Ա. Ա.) զԹարխուն, զՍեպեր, զԵրեւան, զՆախչըվան, զՋուղայ, զԱղբակ, զՍալամաստ և այլ բազում գեաւղ և քաղաք, զոր ոչ կարեմք

¹⁵ Ինճիճյան Ղ., Աշխարհագրութիւն..., էջ 132:
¹⁶ Յակոբ Կարնեցի, նշվ. աշխ., էջ 18:
¹⁷ Տե՛ս Տաշյան Հ., Հայ բնակչութիւնը Սև ծովէն մինչև Կարին, էջ 68-69:

ընդ գրով արկանել: Ձի Դավրեժոյ մինչև ի Թէսղորոյ պաւլիս, որ Արգրուում կոչեն անմարդարնակ արարի, և Երեւանայ մինչև Թարվեզ ԿՄ (60 հազար) գերի արարին»¹⁸: Բունագաղթից դերժ չեն մնում նաև Տայքի մյուս շրջանները: Մասնավորապէս 1629 թ. նոր բռնադաղթ է տեղի ունենում, որի ժամանակ «եկեալ Խալիլ փաշան վազիր ի վերայ Ապազին, չկարաց առնուլ, ապա աշխարհս աւերեաց ի թալան, ի սուր սուսերի, ի գերութիւն վարեց՝ գերզնկան, Ազգրում, Բասեն, Թորթում* և այլ դաւառք, և դնաց ի Թաւխատ»¹⁹:

Հպատակ ժողովուրդների նկատմամբ լիակատար գերիշխանութիւնն հաստատելու նպատակով սուլթանական կառավարութիւնն սկսեց նվաճված երկրամասերը բնակեցնել թուրքալեզու և իրանալեզու (գերագանցապես քրդեր) ցեղերով: Ընդառաջելով գաղթել ցանկացող քրդական ցեղերի ցանկութեանը՝ 1635 թ. սուլթան Մուրադը կազմակերպեց զանգվածային ներհոսք դեպի Էրզրումի նահանգի Հյուսիսային դափառները²⁰: Եթե սկզբնական շրջաններում քրդերը Հյուսիս էին տեղափոխվում ամառվա ամիսներին՝ յայլաներում իրենց մեծաքանակ հոտերն արածեցնելու համար, ապա այժմ նրանք անցան մշտական բնակութեան հայկական բնակավայրերում, իսկ հայ բնակչութիւնը պարտավոր էր ամբողջ ձմեռ պահել ինչպես քրդերին, այնպես էլ նրանց անասուններին: Ձեռնարկված այս քայլերի հետևանքով աստիճանաբար փոփոխվեց Արևմտահայաստանի էթնիկական դիմագիծը²¹: Պետք է նշել նաև, որ քրդական տարրը Տայքում մեծ դեր չի խաղացել: Քրդաշատ բնակավայրեր կային Հատկապես Գյոլեում և Փանակում, իսկ Կիսկիմը, Խոտորջուրը և Թորթումը զուրկ էին քրդական տարրից:

1639 թ. Կասրե-Շիրիների հաշտութեան պայմանագրի կնքումից հետո թուրքական կառավարութիւնը ձեռնամուխ եղավ նվաճված ժողովուրդների մահմեդականացման գործընթացին: Հակոբ Կարնեցին գրում է. «Ի բազմանալն Հագարացոցն ի ժամանակս մեր ի թու-

ականիս Ռ.Ղ.Բ. (1643) ամին եղև հրաման մեծ կայսերէն Ստամբուլայ ի վերայ մոլլայի միոջ, որ էր յոյժ անուանի և առաջակայ էր քաղաքիս Արգրումայ և փաշաներաց՝ Ջաֆար անուն ժանտաբարոյ և քրիստոնեից թասիպ, յաշխարհագիր առնել զբոլոր շրջակայ երկիրս Արգրումայ: Եվ ելեալ արար դաւտար և կապեաց ծանր խարած, և ելին մեծ և փոքր ի թագաւորական դաւտարն. և երկրիս վրացիքն ամենայն յերկուցեալք ի յահէ խարածին յորէնս Մահմետի. ապա ազգս Հայոց մնացին ի վերայ հաւատոցն ողորմութեամբն Քրիստոսի և աղօթիւք սուրբ Լուսաւորչին»²²: Մեկ այլ զանգվածային մահմեդականացման մասին է վկայում XVIII դ. վերջի XIX դ. սկզբի պատմաբան-աշխարհագիր Ղ. Ինճիճյանը: Ըստ նրա. «...զնախկին հայկագուն բնակչաց Թորթումայ, թե ձանձրացեալք ի բռնութենն և ի գրկանաց, դարձան առ հասարակ ի կրօնս տաճկաց», չնայած պլուղերը շարունակում էին մնալ «ըստ մասին բնակեալ ի հայոց և ըստ մասին ի տաճկաց»²³: Բերդագրակի բնակչութիւնը ևս «ըստ մեծի մասին դարձան ի տաճկութիւն և սակալ մնացին ի քրիստոնեից»²⁴: Մահմեդական դիմագիծ ստացան նաև Պարխարի ու Թափուքարի դափառները:

Բունի մահմեդականացումը թուրք կառավարող շրջանակների կողմից այնպիսի փութով առաջ տարվեց, որ շատ քիչ ժամանակ անց ամբողջ Տայքում քաղկեդոնիկ եկեղեցին դադարեց գոյութիւն ունենալուց: Խոսելով Տայք աշխարհի նշանավոր հոգևոր կենտրոնների մասին (Իշխան, Փանակ, Օշկ, Խախու և այլն)՝ Վախուշտի արքայազն Բագրատիոնը շեշտում էր դրանց թափուր լինելը²⁵: Բնականաբար, դա կործանարար ազդեցութիւն թողեց ինչպես մեսիների ու վրացացած հայերի, այնպես էլ հայութեան այն մի ստվար հատվածի վրա, որն արդեն մի քանի դար է, ինչ ընդունել էր քաղկեդոնականութիւն: Հ. Տաշյանն այս առիթով գրում է, որ կղզիացած, առանց գլխավոր կենտրոնի նվիրապետութեան մնալով, հայախոս վրացացածն այս հայութեանը մի առիթ էր ընդամենը պահպանում,

¹⁸ Հայերնն ձեռագրերի ԺԷ դ. հիշատակարաններ, հ. Ա, (1601–1620), կազմեցին Վ. Հակոբյանը և Ա. Հովհաննիսյանը, Եր., 1974, էջ 411–412:

* Մեջբերումներում մեր կողմից ընդգծված են միայն Տայքի բնակավայրերը (եղ):

¹⁹ Հայերնն ձեռագրերի ԺԷ դ. հիշատակարաններ, հ. Բ, (1621–1640), կազմեցին Վ. Հակոբյանը և Ա. Հովհաննիսյանը, Եր., 1978, էջ 327:

²⁰ Տե՛ս Մեղրոյան Ա., Ժողովրդագրական գործընթացների միտումները Էրզրումի նահանգում (XVI դ. – XX դ. սկիզբ), ՊԲՀ, 1999, № 2–3, էջ 124:

²¹ Նույն տեղում:

²² Յակովբ Կարնեցի, նշվ. աշխ., էջ 18:

²³ Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն..., էջ 93–94:

²⁴ Նույն տեղում, էջ 132:

²⁵ Տե՛ս Վրաց աղբյուրները, հ. Գ, էջ 84–85:

որպեսզի զանգվածաբար մահամեղականանային: Եվ այդպիսի առիթ նրանց համար դարձավ 1643 թ. «ծանր խարաճը»²⁶:

Իշխանությունների սպառնալիքի տակ մահամեղականացած հայություն մի զգալի մասն առերես էր ընդունել իսլամը: Նրանք ցերեկով էին միայն մահամեղական, իսկ գիշերը դառնում էին քրիստոնյաներ՝ գաղտնի հաճախելով եկեղեցիներ, կատարելով քրիստոնեական պանազան ծիսակատարություններ: Այդօրինակ բնակչությունը հայտնի էր «կեսկեսներ» անունով՝ այսինքն կես հայ-քրիստոնյա և կես թուրք-մահմեդական: Կեսկեսները սովոր թիվ էին կազմում Տայքի գավառներում: Թորթումի դավառի կեսկեսների զգալի մասը գրեթե ոչնչով չէր տարբերվում մնացած հայ բնակչությունից: Նրանցից շատերն անգամ անվարժ էին խոսում թուրքերեն, իսկ նրանց թուրքերենի մեջ հսկայական թիվ են կազմում հայերեն բառերը: Նրանց մեջ հաճախ էին հանդիպում հայկական անուններ, որոնց ավելացված էր թուրքական «օղլի» վերջավորությունը՝ Կոստան-օղլի, Կիրակոս-օղլի, Գասպար-օղլի և այլն: Հայկականը և քրիստոնեականը հատկապես լավ էր պահպանված կեսկես կանանց շրջանում²⁷:

Տայքի այն շրջաններում, ուր բացակայում էր բուրդ տարրը (Կիսկիմ, Պարխար և Թորթում), լազերն էին կատարում այն դերը, ինչ քրդերը՝ Արևմտյան Հայաստանի մյուս մասերում²⁸: Կարևոր է նշել նաև, որ Տայքի այդ շրջանների հայ բնակչության մի մասը լազերի բռնություններից ազատվելու համար հաճախ իրեն ներկայացնում էր ոչ միայն մահամեղական, այլև լազ: Պատահական չէ, որ նրանց հաճախ անվանում էին ոչ թե կեսկեսներ, այլ հայ-լազեր²⁹:

XVII դ. վերջերից Տայքի հայաբնակ բնակավայրերը հայտնվում են կաթոլիկ քարոզիչների հետաքրքրության ոլորտում: Քարոզչության ասպարեզ փնտրելու նպատակով 1698 թ. սեպտեմբերին Կ. Պոլսից վարդապետ Մխիթար Սեբաստացին ուղևորվում է Օլթի և Նարիման գավառները: Շուրջ մեկ տարի Կարմիր վանքում մնալուց հետո Մխիթար Սեբաստացին վերադառնում է Կ. Պոլիս, քանզի արդ-

յունքները չեն դոճացնում վարդապետին³⁰: Այսուհանդերձ, հետագա տարիներին կաթոլիկ քարոզիչները որոշակի հաջողություններ են արձանագրում՝ կապված Կիսկիմի և Թորթումի գավառների հայություն մի հատվածում կաթոլիկության տարածման հետ:

XVIII դ. առաջին կեսին վերակազմ թուրք-պարսկական պատերազմները կրկին պատուհաս դարձան հայ ժողովրդի համար: Կարսի, Բայազետի, Կաղզվանի, Կարինի և այլ գավառների ավերումից հետո Նազիր շահը պարսկական զորքով ներխուժեց Հյուսիսային Հայաստան, որտեղից գերված 6000 հայ բնակիչների գաղթեցրեց Պարսկաստան: «Եվ անտի կրկին արձակեաց ասպատակս, որ գնացեալ Հասին մերձ Թեոդուպոլսոյ, և գերեցին զՆարիմանու նահանգան, զՋաւախէթու, զՉլսրու, և զՋալիղուլու, որք էին բովանդակ ի մեր ազգէ,-գրում է Արրահամ Կրետացին, և քշեցին գայր և գկին, զծեր և զտղայ և տարան ի Խորասան՝ թուով Զմի (6000), որպէս և լսեմք»³¹: Շարունակելով ասպատակությունները Հյուսիսային Հայաստանում, Նազիրի հրամանով 1742 թ. պարսկական զորքերը ավերեցին Կարսը, Ջավախքը և Կոլան³²:

Թուրքական տիրապետության առաջին փուլում (մինչև XVIII դարը) Տայքում ժողովրդագրական նոր փոփոխություններ տեղի ունեցան: Դա հստակ երևում է, երբ բազմատում ենք «Գյուրջիստանի վիլայեթի մեծ դավթարի» ու XVII դ. վերջի և XVIII դ. սկզբի իրավիճակն արտացոլող թուրքական մեկ այլ հարկացուցակի՝ «Չլզըրի էյալեթի ջարա դավթարի» նյութերը: Անմիջապես աչքի է զարնում այն իրողությունը, որ մեկ հարյուրամյակի ընթացքում կտրուկ նվազել է Տայքի, ինչպես նաև Չլզըրի նահանգի բնակավայրերի թիվը³³: Բերնք տվյալներ Փանակի և Օլթիի լիվանների օրինակներով: Փանակի լիվան 1595 թ. տվյալներով ուներ 109 բնակավայր, որից 55-ը Փանակի նահանգում, 16-ը՝ Քիամխիսում, 38-ը՝ Փանակի կերտում: «Չլզըրի էյալեթի ջարա դավթարի» տվյալներով Փանակի լիվայի կազմում մնացել էր 46 բնակավայր, որից Փանակի նահանգում՝ 23 բնակավայր, Քիամխիսում՝ 5 բնակավայր, Փանակի կերտում՝ 18

²⁶ Տաշեան Հ., Տայք, դրացիք և Խոտորջուր, ՀԱ, 1970, 7-9, էջ 292:

²⁷ Տե՛ս Տաշեան Հ., Հայ բնակչությունը Աս. ժովէն մինչև Կարին, էջ 80-82, Լուսի Ք. Փ. Բ., Արմենիա. Ստեղծված պատկերներ և էպոս, Թիֆլիս, 1910, ս. 537:

²⁸ Տե՛ս Ալպոյանցան Ա., Պատմական Հայաստանի սահմանները, Գահիրե, 1950, էջ 466:

²⁹ Տե՛ս Մեղունյան Ա., Էրզրում, էջ 80:

³⁰ Տե՛ս Օրմանյան Մ., Ազգապատում, հ. Գ, էջ 3125:

³¹ Արրահամ կաթոլիկոսի Կրետացոյ պատմագրություն անցիցն իւրոյ կը Նասիր-Շահին պարսից, Վաղարշապատ, 1870, էջ 22-23:

³² Տե՛ս Վրաց աղբյուրները, հ. Գ, էջ 74:

³³ Տե՛ս Բոլլեդորնի յոլաշրջանի չիճա ճոճար, թ. 100-204:

բնակավայր: Նմանատիպ էր նաև վիճակը Օլթիի լիվայում: 1595 թ. մոտ 90 բնակավայրի փոխարեն մենք այժմ հանդիպում ենք 45 բնակավայրի: Այս երկու լիվանների մոտ 200 բնակավայրից կանգուն մնացել էր ընդամենը 91-ը: Եթե նախկինում հանդիպում ենք միևնույն անունը կրող մի քանի գյուղերի՝ Վերին, Ներքին, Մեծ, Միջին և Փոքր, ապա այժմ՝ նրանց մի մասն առհասարակ չի հիշատակվում, մյուսներն էլ նշվում են իբրև մեկական գյուղեր: Այս գործընթացը բնորոշ էր նաև Տայքի մյուս գավառներին, ինչպես նաև Ախալցխայի նահանգի մյուս շրջաններին:

XVIII դ. 40-ական թվականներից Վրաստանն ու Հայաստանի Հյուսիսը հայտնվեցին Հյուսիսկովկասյան լեռնականների՝ լեզգիների հարձակումների թիրախում: Օսմանյան կառավարությունը չէր խոչընդոտում լեզգիական տարրի առաջխաղացմանը, այլ փորձում էր նրանց ներուժն օգտագործել տարածաշրջանում օրբստօրե իր դիրքերն ամրապնդող Ռուսաստանի դեմ: Լեզգիները Կարսի և Ախալցխայի (Չլդրբի) փաշաների կողմից վերջում էին գինավորական ծառայության՝ խրախուսելով նրանց տեղաշարժերը դեպի Ախալցխայի էյալեթ և այնտեղից նրանց հարձակումները Վրացական թագավորության վրա: Լեզգիների ասպատակումները, որոնք ուղեկցվում էին Ախալցխայի էյալեթի բնակավայրերի ավերումով և կողոպուտով, վրաց թագավորների կողմից չէին մնում անպատասխան: Ինչպես երևում է 1770 թ. ապրիլի 30-ի իշխան Մուրավովի կոմս Տոտլբենին հղած զեկուցագրից, ապրիլի 20-ին Կուր գետի ափունքների մոտ վրացական ուժերի և Ախալցխայի փաշայի զորաջոկատի բախման ժամանակ վերջինս ծանր կորուստներ էր ունեցել: Մասնավորապես սպանվել էին Կիսկիմի, Նարիմանի սանձակբեյերը, թավուսքարի սանձակբեյ Մուսալիմ Ռաչան, ինչպես նաև լեզգիական զորապետ Մալաչիլը, որին սուլթանը 200 հազար ռուբլի էր տրամադրել Վրաստանի դեմ հարձակում ձեռնարկելու նպատակով՝ խոստանալով նրան տալ նաև Թիֆլիսը³⁴:

Լեզգիական ներխուժումները ծանր հետևանքներ էին թողնում նաև Ախալցխայի էյալեթի հարևան Կարսի էյալեթի վրա: Սակայն լեզգիական գործունե այս նահանգում այդքան էլ մեծ դեր չունեցավ և նահանգի էթնոկրոնական պատկերի վրա գրեթե հետք չթողեց:

³⁴ Տե՛ս Грамоты и другие исторически документы XVIII столетия относящиеся Грузии, под редакцией А. А. Цагарели, т. 1, С.-Петербург, 1891, էջ 105–108:

Կարսի նահանգի Հյուսիսային փոքր մասը կազմող Գյուլեի գավառում XVIII դ. վերջին քառորդին շարունակում էին բնակվել բազմաթիվ հայեր, որոնք հոգևոր առումով ենթարկվում էին Ամենայն Հայոց կաթողիկոսությանը: XVIII դ. ընթացքում Ախալցխայի նահանգում բնորոշ էթնիկ գործընթացների առանձնահատկություններն էին հայերի վրացադավան դառնալն ու վրացացումը, ինչպես նաև կաթոլիկացումը: Այս երկրորդն ավելի շատ բնորոշ էր Ախալցխա քաղաքին և շրջակա գյուղերին³⁵: Այդ իսկ պատճառով Հայ առաքելական եկեղեցու նվիրակ կարսեցի Գրիգոր վարդապետը արդահանցի Գրիգոր վարդապետին խորհուրդ էր տալիս հեռու մնալ չարափառ ախալցխացիներից և չգնալ այնտեղ, այլ մեռն և «գիր» տալով նրան՝ ուղարկել «ի Գէօրայու և յԱրտահանու կողմունս և յԱխրքեալաք, և այլ ևս ուր որ ձեռնտու լիցի գնալն, և տացէ գարբալոյս Մեռոնն մերազնեայ ժողովրդոցն, և աոցէ ի նոցանէ գնուկիրակութիւնն»³⁶: Գյուլեի գավառում հայերի գոյությունը մասին է վկայում նաև Ղուկաս Կարսեցի կաթողիկոսի այնտեղ հղած նամակն «ի Հօթամ դիւղն առ Աստուածատուրն, Մարգարն, Մկրտիչն և Յարութիւն, որք ի գալն իւրեանց յուխտ ի սուրբ Աթոռս, խոստացեալ էին զիրս ինչ, զորս և յղեալ էին այժմոյս»³⁷:

1780 թ. բախումները լեզգիների ու վրացական թագավորության միջև նոր թափ ստացան: Լեզգիական և թուրքական ավերածություններից խուսափելու համար Վրաստանի Հերակլ II թագավորը փորձում էր ավելի մերձենալ Ռուսաստանին: Ի հակադրություն ռուս-վրացական մերձեցման՝ սուլթանի կողմից Ախալցխայի վալի Սուլեյման փաշային հստակ հրահանգ է տրվում լեզգիներին սիրաշահելու համար նրանց պարագլուխներին փաղիշահական նվերներ և կայսերական շնորհագրեր հանձնել, ինչպես նաև Զիհադի կոչ անել: Հիշարժան են նաև 1785 թ. իրադարձությունները. «Այ-

³⁵ Տե՛ս Մեյրոնյան Ա., Չավախքը XIX դ. և XX դ. I քառորդին, էջ 100–101:

³⁶ Դիվան հայոց պատմութեան, գիրք Ը, Թիֆլիս, 1908, էջ 457, Мартиросян В., Чобаян П., Документы по истории армяно-грузинских отношений и общественной жизни Грузии (вторая половина XVIII века), Кавказ и Византия, вып. 3, Ереван, 1982, с. 238.

³⁷ Տե՛ս Սատենադարան, Չեռագիր № 2803, էջ 25բ-26ա, հմմտ., Դիվան հայոց պատմութեան, Նոր շարք, գիրք Ա, Դուկաս Կարսեցի, հ. Ա, աշխատասիրությանը Վ. Գրիգորյանի, Եր., 1984, էջ 344:

սոսիկ աւուրս մովպետն Տայոց* Հաքարացի ունենալով թշնամութիւն ինչ ընդ արքայն վրաց, խնդրեալ հրաւիրեաց յօգնութիւն ինքեան զՈւմման խան Լէզկեայ, որոյ էլեալ բազմութեամբ զօրաց զայ անցանէ ընդ յերկիր վրաց, և առնէ զյոշով աւերութիւնս և գերութիւնս ի քրիստոնեայս՝ ի Հայս և ի վիրս. և այնպէս մտանէ ի Տայս. ի վերայ Հասանել սառնամանեաց ցրտութեան, ձմերէ անդէն ի Տայս»³⁸: Լեզգիների նոր խմբեր եկան Ախալցխայի նահանգ և իրենց «ընական հակումների բերումով սկսեցին թալանով և կողոպուտով գրավել»³⁹, որը նոր դիտացականք դարձավ տարածաշրջանի ժողովուրդների համար: 1788 թ. վրաց արքայի և Տայոց մովպետի միջև խաղաղություն է հաստատվում: Ավելին, նրանք Համատեղ դաշինք են կնքում Ֆաթալի շահի հետ և զորքեր ուղարկում Գանձակի վրա: Սակայն Հայ մելիքներ Մեջլումի և Աբովի Համարժեք Հակահարվածից հետո սրանք ստիպված են լինում Գանձակից հեռ գառնալ՝ կանխավ կողոպտելով նրա շրջակայքը: Հաջորդ տարի Տայոց մովպետը քանդում է Հերակլի հետ կնքված դաշինքը, վերսկսում ռազմական գործողությունները: Այդ բախումներից առավելագույնս տուժում էին Տայքի և Կարնո դաշտի գյուղերը, քանի որ վրացական բանակն այստեղ ավելի շատ զբաղվում էր ավարով և ավերով⁴⁰:

XVIII դ. II կեսին տեղի ունեցավ նաև Խևակի մահմեդականացումը: 1776 թ. Խևակ այցելած կաթոլիկ Հայ հոգևորական Պողոս վրդ. Մեհերյանը հայտնում է, որ գյուղի մոտ 200 տուն բնակիչները նոր էին ընդունել մահմեդականություն, քանի որ մնացել էին առանց հոգևոր առաջնորդի: Մահմեդական խեղճները խոսում էին հայերեն: Ավելին, Հայ հոգևորականին տեսնելով՝ ծնկի էին իջնում նրա առաջ, Համբուրում աջը, խնդրում, որ ավետարանից հատվածներ ընթերցի հիվանդներին համար: Սակայն Հայ հոգևորականը շատ չի մնում Խևակում, քանի որ «եւ զի երկնչէի, թէ դուցէ մատնեցեն զիս յայլազգեաց, թէ վարդապետս այս եկեալ է հայացուցանել զխէվակցիք»⁴¹: Ուշագրավ է նաև այն տեղեկությունը, որ Խևակի

Հարևան գյուղի վրացածես եկեղեցու քահանա տեղ Իսրայելը դիմում է Պողոս վարդապետին՝ խնդրելով թույլ տալ իրենց գյուղում ծիսակատարությունը կատարել հայերենով՝ կաթոլիկական ծեսով, ստիպյալ մերժում է ստանում, քանի որ «թէ դու կամիս զգիւղացիս քա ուղղել և մուժանել յեկեղեցին Բրիստոսի. և ի փոխելն քա դժէս յունական, այլևս ոչ կարես ուղղել զժողովուրդս զեղջ քո»⁴²: Նորահավատ մահմեդականներից շատերը, հատկապես ծնրերը «ողբային զանհաւատութիւնս իւրեանց և խոստովանել խնդրէին»⁴³: Ուշագրավ է նաև այն, որ տարեց կանայք պահպանել էին քրիստոնեությունը⁴⁴:

Այսպիսով, XVI–XVIII դարերում օսմանյան լուծք խիստ կործանարար հետևանքներ ունեցավ օսմանահպատակ ազգային մշակութամասնությունների համար: XVI դ. վերջին Տայքի բնակչության մոտ երկու երրորդը կազմող հայությունը XVII–XVIII դարերում իր մի սովոր հատվածի բուն մահմեդականացման, պարբերաբար կիրառվող բռնագաղթների և մահմեդական էթնիկական դանդաղումների ներթափանցման հետևանքով նվազեց: 30–40%-ով կրճատվեց նաև Տայքի բնակավայրերի թիվը: Ցավոք, այս գործընթացները հետագայում՝ չղաղարեցին, այլ շարունակվելով XIX դ. առաջին քառորդին՝ ի վերջո հանգեցրին Արևմտյան Հայաստանի և մասնավորապես Տայքի ժողովրդագրական պատկերի արմատական փոփոխման:

բ) Ժողովրդագրական գործընթացները Տայքում XIX դ. առաջին երեսնամյակին

XVIII դ. ընթացքում Ախալցխայի նահանգի և մասնավորապես Տայքի քրիստոնյա բնակչության մի մասը, հատկապես լեռնականների ներխուժումների և XIX դ. սկզբին միջցեղային ընդհարումների, ինչպես և 1806–1812 թթ. ռուս-թուրքական պատերազմների ժամանակ խաղաղ բնակչության կոտորածների, արտագաղթների ու բռնագաղթների, Համաճարակների, զանգվածային մահմեդականացմ-

* Տայոց մովպետ՝ նույն ինքը Տայքի մահմեդականների հոգևոր առաջնորդ:
³⁸ Դիվան Հայոց պատմութեան, գիրք Ա, Թիֆլիս, 1893, էջ 10:
³⁹ Թուրքական աղբյուրները, հ. Ա, էջ 264:
⁴⁰ Տե՛ս Դիվան Հայոց պատմութեան, գիրք Ա, էջ 14:
⁴¹ Տե՛ս Վարդանյան Ս., Կարևոր սկզբնաղբյուր մահմեդականացված հայերի մասին, ՊԲՀ, 2004, № 3, էջ 168:

⁴² Նույն տեղում:
⁴³ Նույն տեղում, էջ 169:
⁴⁴ Նույն տեղում:

ան Հետևանքով զգալիորեն նվազեց⁴⁵ (տե՛ս աղյուսակ 3): Ուղղափառ վրացիներն ու կաթոլիկացած հայերը դարձան փոքրամասնություն, ամայացան բաղամթիվ բնակավայրեր. «Այս փառալուծյան ընակչությունը նախկինում ավելի զգալի էր, որն ապացուցվում է ամենուր հանդիպող դուռերի և ամրոցների ավերակներով, անմշակ ու ամայացած դաշտերով»⁴⁶:

աղյուսակ 3

Հ/հ	Գավառը	բնակավայրերի քիվը	ծխերի քիվը	բնակչության քիվը
1	Կիսլին	42	1260	7560
2	Պարխար	27	810	4860
3	Թորթում ⁴⁷	53	1590	16960
4	Թավուսար*	14	420	2520
5	Օլքի	45	1350	8100
6	Մամուլան	37	1110	6660
7	Փանակ	46	1380	8280
8	Գյոլե	30	900	5400
Ընդամենը		294	8820	60340

Տայքը XVIII-XIX դարերի սահմանագլխին

XIX դ. սկզբին Ախալցխայի թեմի առաջնորդությունը կաթոլիկներին անցնելուց հետո Տայքի ոչ մեծամթիվ հայ առաքելական ազգաբնակչությունը (բացառությամբ Գյոլեի սանջակի) հոգևոր առումով դրվեց էրզրումի թեմական առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունու իրավասության ներքո⁴⁸:

XIX դ. սկզբին Արևելյան Վրաստանում հաստատվելը հնարավորություն տվեց ռուսական դիվանագիտությանը մանրակրկիտ նախապատրաստել իր սահմանների ընդլայնման ծրագիրը ինչպես

ազգաքաղաքական, այնպես էլ էթնոհոգեբանական տեսանկյուններով: Այդ շրջանակներում հատուկ ուշադրություն հատկացվեց տարածաշրջանում ժողովրդագրական քաղաքականության հիմնախնդրին: 1800 թ. հունվարի 23-ին Վրաստանում ռուսական զորքերի գլխավոր հրամանատար Կ. Ֆ. Գնորինգին տված հրահանգում Պավել I ցարը պահանջում էր երկրամասերին տիրելու գործում նախապատվությունը տալ ոչ թե բռնամիջոցներին, այլ կամավոր հպատակություն ընդունելուն: Դա նշանակում էր, որ ցարական պաշտոնություններից պահանջվելու էին մեծ ջանքեր կողմնորոշիչ աշխատանք տանելու ուղղությամբ: Հատկանշական է, որ Ալեքսանդր I-ը ևս այդ քաղաքականության մեջ հատուկ զգուշություն էր պահանջում թուրքերի հարցում և ընդգծում էր հայերին վստահելու անհրաժեշտությունը: Ցարական արքունիքը խրախուսում էր Ախալցխայի էյալեթից քրիստոնյաների ներգաղթը Վրաստան, իսկ սուլթանական կառավարության ղեգոհությունը չառաջացնելու համար այդ ձեռնարկումները ներկայացնում իբրև Վրաստանից Օսմանյան կայսրություն փախած նախկին բնակիչների վերադարձ իրենց հայրենիք⁴⁹: Այսուհանդերձ, ցարական կառավարությունը շատ հաճախ հաշվի էէր առնում Ռուսաստանի հանդեպ սահմանամերձ տարածքներում ապրող ազգերի ունեցած իրական տրամադրությունները՝ չարդարացված համահարթեցման վերաբերմունք դրսևորելով և առաջնորդվելով զուտ հպատակներ ձեռք բերելու ձգտումով, անվերապահորեն համաձայնելով մահմեդականների առաջադրած պայմանների հետ: Ռուսական իշխանությունների կողմից որդեգրած ժողովրդագրական այս քաղաքականությունն առաջին հերթին պայմանավորված էր ռազմաքաղաքական կոնկրետ իրավիճակով և թեկադրված էր նվաճված տարածքները հպատակ ազգերով բնակեցնելու հետամուտ նպատակով: Մյուս կողմից, ռուսական իշխանություններն ամեն կերպ աշխատում էին վերադարձվող տարածքների բնակչությանը գաղթեցնել ռուսական սահմաններ: Իհարկե, այդ ջանքերը միշտ էէ, որ հաջողությամբ էին պսակվում և առանձին դեպքերում կայսրության որդեգրած ժողովրդագրական այս քաղաքականությունն ուղղակի ձախողվում էր⁵⁰:

⁴⁵ Stéu Գրамоты и другие исторически документы XVIII столетия относящиеся Грузии, под редакцией А.А.Цагарели, т. 2, выпуск 1, грузинские тексты, С.-Петербург, 1898, էջ 8:

⁴⁶ История военных действий в Азиатской Турции 1828–1829 годах, ч. 1, с. 57.

⁴⁷ Stéu Մեղրոնյան Ա., էրզրում, էջ 116:

* Աղյուսակում ընդգծված են Տայքի այն գավառները, որոնց բնակավայրերի քիվ վերաբերյալ տվյալները վերցրել ենք Չլդրի էյալեթի ջարս դավթարից:

⁴⁸ Stéu Մատենադարան, Կարապետ արք. արխիվ, թղթ. 163թ. վավ. 747, ք. 1–2:

⁴⁹ Stéu Մեղրոնյան Ա., Ջավախքը XIX դ. և XX դ. I քառորդին, էջ 155:

⁵⁰ Մուրադյան Հ., Գլխ. աշխ., էջ 157:

XIX դ. առաջին քառորդին Տայքի ժողովրդագրական պատկերի վրա լուրջ հետևանքներ են թողնում ինչպես ներքին միջադեպերն՝ գործընթացները Օլթիի գավառում⁵¹, այնպես էլ 1820–1823 թթ. թուրք-պարսկական պատերազմը: Այս պատերազմի արգյունքում, ի թիվս Արևմտյան Հայաստանի հյուսիսային այլ գավառների, սարսափելի ավերածություններ են թափարկվեց նաև Թորթումի գավառը⁵², ինչը Հանդեցընց ազդարանակցության նոր խմբերի հեռանալուն այս գավառից:

1826–1828 թթ. ուսուցարսական պատերազմում Հաղթանակ տանելուց հետո, երբ Արևելյան Հայաստանի զգալի մասը կազմող Երևանի ու Նախիջևանի խանություններն անցան Ռուսաստանին, Օսմանյան կայսրության և Ռուսաստանի Հարաբերություններն ավելի սրվեցին, որը 1828 թ. ապրիլին Հանդեցընց ուսուցարսական նոր պատերազմի: Այս անգամ սուլթանը պատերազմին կրոնական նշանակություն տալով՝ քրիստոնյաներին ոչնչացնելու նպատակով գեներալ էր կոչում բոլոր մահմեդականներին⁵³: Ռազմական գործողությունները կովկասյան ռազմաճակատում սկսվեցին 1828 թ. Հունիսին, երբ գեներալ-ադյուտանտ Ի. Յ. Պասկևիչը 12 հազարանոց զորքով և 70 թնդանոթով⁵⁴ Հունիսի 14-ին Գյումրու մոտ անցավ Ախուրյան գետը և շարժվեց Կարսի վրա: Պատերազմի սկզբում նփրեմ կաթողիկոսը հանդես եկավ կոնդակով՝ ուղղված Կարսի, Ախալցխայի և Բայազետի Հայ բնակչությանը՝ խնդրելով նրանց զորավիգ լինել ուսական բանակին, որի Հաղթանակներով էր պայմանավորված Հայ ազգի ազատագրումը թուրքական լծից⁵⁵: Սպասված օժանդակության փոխարեն Պասկևիչը սահմանն անցնելու առաջին իսկ օրից Հանդիպեց միայն լքված Հայկական գյուղերի: Թուրքերը, խուսափելով Հայերի հնարավոր ուսամենտ վարքագծից, նրանց տեղահանել, քշել էին դեպի Բասեն⁵⁶:

⁵¹ Евцикш О., ցվ. աշխ., էջ 174:

⁵² Մատենադարան, Կարապետ արք. արխիվ, քոթ. 163թ, վավ. 486, ք. 1:

⁵³ Երիցևանց Ա., Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի հայք XIX դարում, մաս Ա, էջ 395:

⁵⁴ Նույն տեղում, էջ 400:

⁵⁵ Մեղրոնյան Ա., Ջավախքը XIX դ. և XX դ. I քառորդին, էջ 172:

⁵⁶ Երիցևանց Ա., Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի հայք XIX դարում, մաս Ա, էջ 399:

Հունիսի 23-ին ուսական զորքը ներխուժեց Կարս: Այնուհետև, հակառակ թուրքական հրամանատարության սպասումների, Պասկևիչը զորքը շրջեց դեպի Հյուսիս: Հուլիսի 24-ին ուսաները գրավեցին Ախալքալաքը, օգոստոսի 15-ին՝ ռազմավարական կարևորագույն նշանակություն ունեցող Ախալցխան, իսկ օգոստոսի 28-ին՝ Արդահանը: Ռուսները նկատելի առավելություն են հասնում նաև Բայազետի կողմերում:

1828 թ. հոկտեմբերին սառնամանիքների պատճառով պատերազմական գործողությունները Կովկասյան ռազմաճակատում ընդհատվեցին: Ռազմական գործողությունների դադարեցումը թուրքերը փորձեցին օգտագործել ամրացնելու և համալրելու իրենց ուժերը: Նախ և առաջ փոփոխության ենթարկվեց բարձրագույն հրամանատարական կազմը: Սերասկյար Ղալիբ փաշան հեռացվեց պաշտոնից⁵⁷, իսկ նրա փոխարեն սերասկյար նշանակվեց Հաջի Սալիհ փաշան: Վերջինիս օգնելու էին Սվազի (Սերաստիայի) Հաքքը փաշան և Բյոսա Մուհամմադ փաշան: Նախկին բանակի մնացորդներ՝ մոտ 10 հազար մարդ, կանգնած էին Տայքի սահմանին՝ Սոդանլուղում: Նրա հիմքի վրա ձևավորվող նոր թուրքական բանակն ակնկալվում էր գարնանը Հասցնել 80 հազարի: Այս միջոցառումները բարենհաջող կերպով ավարտելուց հետո սերասկյարը ծրագրում էր գարնանը ուսաներից հետ վերցնել թուրքերի համար առանձնահատուկ կարևոր ռազմամարտավարական դիրք ու նշանակություն ունեցող Կարսն ու Ախալցխան⁵⁸: Երևանյան ուղղությամբ թուրքերը նախատեսել էին օգտագործել Վանի և Մուշի փաշաների քրդական աշխարհագրորային ջոկատներին⁵⁹:

1829 թ. փետրվարի 17-ին սուլթանի զրգամամը Աջարիայի Ահմեդ փաշան իր զորքերով ներխուժում է Ախալցխայի էյալեթի տարածք: Փետրվարի 19-ին մահմեդականների հրոսակները ներխուժում են Ախալցխա, սակայն բերդում պատսպարված ուսական կայազորը՝ իշխան Վ. Բեհրուլթովի գլխավորությամբ, համառ դիմադրություն է ցույց տալիս: Մարտի 4-ին Վրաստանից Ախալցխային օգնության է

⁵⁷ Лукьянович Н., ցվ. աշխ., էջ 19:

⁵⁸ Chesney F. R., The Russo-Turkish campaigns of 1828 and 1829: with the view of the present state of affairs in the East, New York, 1854, p. 200–201.

⁵⁹ Аверьянов П. И., ցվ. աշխ., էջ 58.

Հասնում Ի. Բուրցովի ջոկատը, որից հետո թուրքերը դադարեցնում են Ախալցխայի բերդի պաշարումը և նահանջում:

1829 թ. մայիսի 20-ին թուրքական զորքերը Հրաման ստացան գրավելու Գյուլեի սանջակը: Թուրքական հեծելազորի անընդմեջ հարձակումները Գյուլեի վրա ընդհատում են կապը Կարսի և Արղահանի միջև՝ ծանր կացություն մեջ գցելով ուսսական բանակին⁶⁰: Այդ նույն ժամանակահատվածում Գյուլեի և Բասենի սանջակներից թուրքական իշխանությունների կողմից Հայ բնտանիքներ առևանգելու փորձեր էին կատարվում, ինչպես պարզվում է Մարտիրոս Վեբլյանի՝ կաթողիկոսին հղած նամակից⁶¹: Այսպիսի պայմաններում ստանալով Անգլիայի, Ֆրանսիայի և Ավստրիայի կառավարող շրջանների աջակցությունը՝ թուրքերն անցնում են լայն ճակատով հարձակման: Թուրքական մաս 30 հազարանոց մի բանակ՝ սերասկյար Հաջի Սալեհ փաշայի գլխավորությամբ, ուղղվելու է վերցնում Ախալցխայի վրա, մեկ այլ զորախումբ՝ Հաքքը փաշայի գլխավորությամբ, Սողանլուղի կողմից ուղղվում է դեպի Կարս, իսկ Վանի փաշան պատրաստվում է Բայազետի վրա արշավելու: Սակայն հունիսի 2-ին Ախալցխայի վրա արշավող ուժերը Դիլուր գյուղի մոտ պարտություն են կրում⁶²: Սերասկյարի ջախջախված բանակը հետ է շարժվում Սողանլուղից այն կողմ, իսկ ինքը՝ սերասկյարը, փախչում դեպի Էրզրում⁶³:

Հունիսի 16-ին Բարդուսի մոտ Կարսի Հայերից կազմված հեծյալ ջոկատը գրավում է թուրքական ճամբարից 9 կմ հեռավորության վրա ընկած Օսման փաշայի առաջապահ դիրքերը, իսկ հունիսի 18-ին ուսսական զորքը ջախջախում է Օսման փաշայի հիմնական ուժերին: Թուրքերը լուրջ կորուստներ են ունենում. 1200 հոգանոց հետևակից և 400 հոգանոց հեծյալ ջոկատից սպանվում և վիրավորվում է 300 մարդ⁶⁴:

Հունիսի 19-20-ին Սողանլուղում պարտություն են կրում նաև Հաքքը փաշայի զորքերը: Ինքը՝ Հաքքը փաշան, 1500 զինվորների հետ գերի է ընկնում: Հունիսի 24-ին գրավվում է նաև Վերին Բաս-

ենի վարչական կենտրոն Հասան կալան: Տեսնելով իրավիճակի անելանելիությունը՝ սերասկյար Հաջի Սալեհ փաշան որոշում է անձնատուր լինել և հունիսի 27-ին ուսսական բանակն առանց մարտի մտնում է Էրզրում: Պասկևիչի կարգապարտությամբ Էրզրումում կազմվում է նահանգային ժամանակավոր վարչություն, որի կառավարիչ է նշանակվում գեներալ Ն. Պանկրատևը:

Էրզրումը նվաճելուց հետո Պասկևիչը ձեռնամուխ է լինում Շևշատի, Աջարիայի, ինչպես նաև Տայբի՝ գավառներից Օլթիի ու Նարիմանի հնազանդեցմանը: Նրա հրամանով Օլթի է շարժվում զինապետ կոմս Սիմոնիչն իր ջոկատով, իսկ Արղահանյան կայազորի մի մասն ուղղվում է դեպի Նարիման: Կոմս Սիմոնիչը Հասնելով Օլթի՝ այնտեղ ապստամբներ չի հայտնաբերում: Օլթիի և Նարիմանի բնակիչները պատգամավորների միջոցով հնազանդություն են հայտնում Սիմոնիչին⁶⁵:

Էրզրումում նահանգային ժամանակավոր վարչություն կազմակերպելուց հետո Պասկևիչը Էրզրումի էյալեթի բոլոր սանջակների առաջարկում է կամավոր կերպով ընդունել ուսսական հպատակություն: Պասկևիչի առաջարկին ընդառաջ Վերին Բասենի (Հասան-կալա), Ատորին Բասենի, Թորթումի, Օվայի, Նարիմանի, Դերջանի, Երզնկայի և Խնուսի կառավարիչները ներկայանում են Պասկևիչին: Կոմսին հանգանդվելու իրենց պատրաստակամությունն են հայտնում նաև Սպերի սանջակեյ Ալի բեկն ու Օլթիի սանջակեյ Քյուչուկ բեկը⁶⁶: Սակայն Օլթիի սանջակեյը չի կատարում ուսսաներին տրված իր խոստումը, ուստի Պասկևիչը հրամայում է փոխզնդապետ Շումսկիին հնազանդեցնել Օլթին: Եթե Քյուչուկ բեկը հրաժարվի ընդունել ուսսական հպատակություն և փախչի Օլթիից, Շումսկին, համաձայն Պասկևիչի հրահանգի, պիտի առաջարկեր օլթեցիներին իրենց միջից նոր կառավարիչ ընտրել⁶⁷: Փոխզնդապետ Շումսկիին հաջողվում է օգոստոսի 2-ին գրավել Օլթին: Սակայն ուսսական հպատակությունից խուսափող Քյուչուկ բեկը փախչում է Լիվանե⁶⁸:

⁶⁰ АКАК, т. 7, с. 784.

⁶¹ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, քրք. 257գ, վավ. 62, ք. 1:

⁶² Տես Երիցեանց Ա., Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, մաս Ա, էջ 417-418:

⁶³ Տես Пущкин А. С., Путешествие в Арзрум во время похода 1829 г., էջ 398:

⁶⁴ Տես АКАК, т. 7, էջ 792:

⁶⁵ Տես АКАК, т. 7, с. 804-805:

⁶⁶ Նույն տեղում, էջ 807:

⁶⁷ Նույն տեղում, էջ 815:

⁶⁸ Նույն տեղում, էջ 821:

Շուտով Օլթիի և Նարիմանի սանջակներում իշխանությունը վերստին անցնում է թուրքամետ ուժերին՝ Հուսեյն բեկին և Օսման աղային, որոնք գրադվում են շրջակայքը թալանի ենթարկելով, ինչպես նաև հարձակվելով Կարսի Հետ ուղևորների հազորակազմության ուղիների վրա⁶⁹։ Այս անկարգությունները վերացնելու նպատակով Պասկեիչը հրամայում է գեներալ-մայոր Պանկրատևին՝ փոխգնդապետ իշխան Արղության-Երկայնաբազուկի ղլխավորությամբ մի արշավախումբ ուղարկել Օլթի, որի կազմում լինելու էին երկրորդ և չորրորդ մուսուլմանական զնդերը։ Չորրորդ մուսուլմանական զույգը սեպտեմբերի 13-ին Բար գյուղում պարտության է մատնում 200 հոգանոց քրդական ջոկատին։ Տեղեկանալով Նարիմանի լիվայի իդ և Կարա-Փուսկար դյուղերի մոտ թուրքական ուժերի կուտակման մասին, իշխան Արղության-Երկայնաբազուկն այնտեղ է ուղարկում մի զորաջոկատ, իսկ ինքն ուղղվում է գեպի Ակրա-սու գյուղը։ 500 հոգուց կազմված թշնամական զորաջոկատը Սուրբ-սարգիս գյուղից դալով, գրավում է հարմարավետ մի բարձունք և ապա համարվում շուրջ 800 հոգանոց զնդով։ Սակայն այս զորաջոկատը չի գիմանում Արղության-Երկայնաբազուկի զորախմբի հարձակմանը և նահանջում է՝ տալով շուրջ 100 զոհ և 54 գերի, այդ թվում Օլթիի գավառում մեծ ճանաչում ունեցող Օմար բեկին։

Հաջորդ օրը ուսական զորախումբն ուղղվում է Օլթիի վրա։ Հուսեյն բեկը Օլթիի բերդում թողնելով 20 զինվոր, իր զորքով դիրքավորվում է Ջուջուրիս գյուղի մոտ՝ Օլթիից 7 կմ հեռավորության վրա։ Արղությանի հրամանով 100 զինվորից և մեկ պիտներական վաշտից կազմված մի զորաջոկատ, փոխգնդապետ Կուվչիննիկովի հրամանատարությամբ, պաշարում են Օլթիի բերդը⁷⁰, իսկ մնացած ուժերը արշավում են Ջուջուրիս գյուղի ուղղությամբ։ Թշնամին, որի կազմի մեջ էին ընդգրկված զինված մահմեդական օլթեցիներ և 600 լազեր, հուժկու դիմադրություն է ցուցաբերում։ Էսսենին հաջողվում է ամրապնդվել նպաստավոր դիրքերում և ապա, հակահարձակման անցնելով, պարտության մատնել Հուսեյն բեկին։ Վերջ-

ինս տալով շուրջ 100 զոհ և 9 գերի՝ նահանջում է։ Սեպտեմբերի 15-ին հանձնվում է նաև Օլթի բերդի փոքրաթիվ կայազորը⁷¹։

Մինչև հաշտության կնքումը՝ Պասկեիչը Նիկոլայ I-ին հղած իր գեկուցագրերում անհրաժեշտ էր համարում կնքվելիք հաշտությամբ ամրագրել Արևմտյան Հայաստանի ազատազրկած տարածքների անցումը ուսական կայսրությանը։ Այս շրջանակներում կոմսը երեք տարբերակ է առաջարկում Կովկասում ուս-թուրքական սահմանների վերաբերյալ։ Երեք դեպքերում էլ սահմանները սկսվելու էին ճորտի ակունքների շրջանից. առաջինի դեպքում իր մեջ ներառելով ամբողջ Ախալցխայի էյալեթը, Կարսի էյալեթը և Բայազետի լիվա-փաշայությունը⁷²։ Երկրորդ և երրորդ առաջարկությունները համեմատաբար ավելի չափավոր էին։ Երրորդ դեպքում անդամ առաջարկվում էր Ախալցխան թողնել թուրքերին, բայց ուսական զորքերն Ախալցխայից դուրս բերելուց առաջ անհրաժեշտ էր համարվում Ախալցխայի բերդը հիմնահատակ կործանել, որպեսզի այն հետագայում Ռուսաստանի համար լուրջ վտանգ չներկայացնի⁷³։ Այսուհանդերձ, 1829 թ. սեպտեմբերի 2-ին Ազրիանուպոլսում կնքվում է մի պայմանագիր, որը շանթահար է անում միամտաբար մեծ ակնկալիքներ ունեցող արևմտահայությանը։ Պայմանագրի 4-րդ հոդվածով թուրքերից դրավված տարածքներից Ռուսաստանին է մնում միայն Ախալցխայի փաշայության մի մասը՝ Ախալցխա և Ախալքալաք ամրոցներով։ Հաշտության կնքման մասին լուրը Պասկեիչին հասնում է շուրջ մեկ ամիս ուշացումով, որի հետևանքով ամբողջ սեպտեմբեր ամսվա ընթացքում անընդհատ բախումներ էին տեղի ունենում ուսական բանակի և մահմեդականների միջև։

Ազրիանուպոլսի պայմանագրի 13-րդ հոդվածով թուրքահայասակ քրիստոնյաներին թույլատրվում էր 18 ամսվա ընթացքում «իրենց, պատերազմից առաջ կամ հետո ձեռք բերած, սեփականութայան վերաբերմամբ անել կարգազրույթյուն, և իրենց զրամագլուխներով ու շարժական գույքով անցնել պայմանավորվող տերությունների մեկի կամ մյուսի երկիրը»⁷⁴։ Հայությունը թուրքական վրեժխնդր-

⁶⁹ Տե՛ս ԱԿԱԿ, Կ. 7, էջ 823:

⁷⁰ Տե՛ս Ներսիսյան Ա., Արևմտահայերի տնտեսական ու քաղաքական վիճակը և ուսական օրինադրան XIX դ. առաջին կեսին, էջ 152–153:

⁷¹ Տե՛ս ԱԿԱԿ, Կ. 7, Կ. 824.

⁷² Պասկեիչի առաջարկության առաջին տարբերակով Տայի տարածքն ամբողջությամբ անցնելու էր ռուսական տիրապետության տակ։

⁷³ Տե՛ս ԱԿԱԿ, Կ. 7, Կ. 784.

⁷⁴ Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, էջ 81:

ությունից վախենալու բազում պատճառներ ունեն, քանի որ պատերազմի ժամանակ ռուսներին աջակցելը նրանց կողմից զանգվածային բնույթի էր կրել, ուստի շատ տեղերում գյուղացիները շրջապատելով ռուս բարձրաստիճան զինվորականներին, խնդրում էին իրենց չլքել և «չթողնել թուրքերի ու դադանաբարո քրդերի վրեժխնդրությունը»⁷⁵:

Սաղաղության լուրը ստանալուն պես Պասկևիչը շապեց Հոկտեմբերի 10-ին էրզրումից դիմել Նիկոլայ I-ին: Իր զեկուցագրում ներկայացնելով ռուսական զենքի հաջողությունները՝ Պասկևիչն այդ գործում մեծ տեղ է հատկացնում արևմտահայությունը: Ուստի խուսափելու համար թուրքական կառավարության վրեժխնդրությունից, Պասկևիչը կայսրից թույլատվություն է խնդրում կազմակերպելու արևմտահայության վերաբնակեցումը Ախալցխա, Ախալքալաք և Հայկական մարզ՝ համոզմունք հայտնելով, որ այդ գործում ծախսած միջոցների դիմաց աշխատանքը հայ ժողովուրդն իր գործունեությամբ առատորեն վարձահատույց կլինի: Յուրաքանչյուր ընտանիքի վերաբնակեցման հետ կապված ծախսը Պասկևիչի հաշվարկներով, կազմելու էր 25 ռուբլի արծաթով, որը կկազմեր 250 հազար ռուբլի արծաթ կամ մեկ միլիոն թղթադրամ ամբողջ գաղթականության համար⁷⁶:

Հայ պատմագրությունը շատ անգամ է անդրադարձել 1829–1830 թթ. արևմտահայերի վերաբնակեցման պատմությանը: Հայ պատմաբանների մի մասի կարծիքով այդ վերաբնակեցումը հիմնականում եղել է ռուսական զինվորական շրջանների և էրզրումի հայ առաքելական հոգևոր թեմի առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունու հորդորների հետևանք, որին Կ.Պոլսի հայոց պատրիարքը հանիրավի պաշտոնանկ էր արել⁷⁷: Սակայն կան փաստեր, որ Կարապետ Բագրատունին ի սկզբանե դեմ է եղել վերաբնակեցման գաղափարին՝ գիտակցելով դրա ծանր հետևանքները ինչպես գաղթողների, այնպես էլ Արևմտյան Հայաստանում մնացող հայության համար⁷⁸: Ռուսական ռազմական իշխանությունները կարողացան

բարեհաճ վերաբերմունքի, շնորհած արտոնությունների միջոցով օգտագործել Կարապետ Բագրատունու անձնական վերավորվածությունը պատրիարքարանից, ինչպես և անվիճելի հեղինակությունը թուրքերին վերադարձվելիք արևմտահայ գաղառներից զանգվածային արտագաղթ հրահրելու նպատակով⁷⁹:

Արդեն 1829 թ. հոկտեմբերին, չսպասելով վերաբնակեցման պաշտոնական թույլատվությանը և ռուսական կառավարության նյութական և ռազմական օգնությանը, Կարսի նահանգից, Բայազետից, Ալաշկերտից և էրզրումի մի քանի այլ լիվաներից գաղթականների առանձին խմբեր բռնում են գաղթի ճանապարհը, հայտարարելով՝ «գաղթում ենք և այլևս չենք մնում օսմանցոց ձեռքին»⁸⁰:

Այս վերաբնակեցումը Տայքի հայության համար նույնպիսի կործանարար և վնասաբեր ազդեցություն ունեցավ, ինչպես XVII–XVIII դարերի բռնի մահմեդականացումը: Եթե այս հարցը դիտարկենք վերաբնակվողների տեսանկյունից, ապա Տայքի հայությունը տեղափոխվելով Ախալցխա և Ախալքալաք, չկորցրեց իր էթնիկ նկարագիրը՝ ի տարբերություն մահմեդականացած հայության: Սակայն, երբ այս խնդրին անդրադառնում ենք Տայքի հայաթափման տեսանկյունից, տեսնում ենք, որ վերաբնակեցումը անդառնալի հետևանքներ թողեց Տայքի էթնոժողովրդագրական պատկերի վրա:

Ընդ որ է, Տայքի հայ կաթոլիկները քիչ թե շատ վայելում էին եվրոպական պետությունների աջակցությունը, սակայն XIX դ. սկզբին թուրքական իշխանությունների կողմից հալածանքներ տեղի ունեցան, որի հիշողությունը հայ կաթոլիկների մեջ 1829 թ. դեռևս թարմ էր մնում: Կարելի է ասել նաև, որ այս բռնությունները ազդակ հանդիսացան Տայքի հայ կաթոլիկների մի մասի համար՝ բռնելու վերաբնակեցման դժվարություններով լի ճանապարհը: Հայ կաթոլիկների հոգևոր առաջնորդ Եփրեմ Սեթի և էրզրումի ու շրջակա գաղառների 17 գյուղերի հայ կաթոլիկ հոգևորականների դիմումը⁸¹ նկատի ունենալով՝ գեներալ Ն. Պանկրատևը 1829 թ. դեկտեմբերի 1-ին զեկուցում էր կոմս Պասկևիչին, որ էրզրումի կաթոլիկ հայերը ռուսական սահմաններ տեղափոխվելու մտադրություն

⁷⁵ История военных действий в Азиатской Турции 1828–1829 года, ч. 2, с. 290.

⁷⁶ Տե՛ս Դարվինյան Մ. Գ., Новые документы о переселении персидских и западных армян в 1828–1830 гг., էջ 11–12:

⁷⁷ Տե՛ս Գեղամանց Յ., Կարապետ արքեպիսկոպոս, Փորձ, 1876, քիվ 1, էջ 187, Աղամեանց Գ., Կարնոյ գաղթը, էջ 4-5:

⁷⁸ Տե՛ս Մեթրոնյան Ա., Չափախըբ XIX դ. և XX դ. I քառորդին, էջ 182:

⁷⁹ Նույն տեղում, էջ 183:

⁸⁰ Երիցկանց Ա., Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի հայք XIX դա րում, մաս Ա, էջ 437:

⁸¹ Տե՛ս Присоединение Восточной Армении к России, т. 2, էջ 601–602:

ուսնեն: Պասկելիչից Հրաման խնդրելով վերջիններս վերաբնակեցումը կազմակերպելու համար, Պանկրատևը հազարգում է վիճակագրական տեղեկություններ կաթոլիկ Հայուխյան թվաքանակի վերաբերյալ, համաձայն որի Լըզրում քաղաքից, ինչպես նաև Օվայի, Դերջանի, Վերին Բասենի և Խնուսի սանջակներից Հայ կաթոլիկների 560 ընտանիք ցանկություն է հայտնել տեղափոխվելու ռուսական սահմաններ⁸²: Այս հազարգման մեջ առանձնահատուկ ուշադրություն է արժանի տեղեկությունը Դերջանի գավառի վերաբերյալ, որի նորչեն գյուղից գաղթելու ցանկություն էր հայտնել 40 ընտանիք, Ռաբաթ գյուղից՝ 15 ընտանիք և Մեղուս գյուղից՝ 4 ընտանիք⁸³: Այսպես անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ Մխիթարյանների արքահորն ուղղված Հայ կաթոլիկների առաջնորդ Եփրեմ Սեթի նամակին՝ գրված Ախալցխայում 1830 թ. օգոստոսի 27-ին: Հայր Եփրեմը խոսելով 1829 թ. կաթոլիկ Հայուխյան վերաբնակեցման նախապատրաստական աշխատանքների մասին՝ նշում է, որ «Կարնոյ դաւառ և Խնուս և Թորթում միաբանեցին զիմել յԱխլճխա: Բասեն վերին և ներքին ակն եզ ի Լոսի. միայն թէ ներքինն զրժեաց խոստմանն և յետ ընգուսելոյ զիր ճանապարհի...»⁸⁴: Ինչպես տեսնում ենք, Դերջանի գավառի վերաբերյալ 1829 թ. վերաբնակեցում կազմակերպելու մասին ոչ մի խոսք չկա: Դերջանի փոխարեն մենք այստեղ հանդիպում ենք Թորթում անվանը: Եթե հաշվի առնենք, որ նորչեն, Ռաբաթ և Մեղուս անունով գյուղեր խնդրո առարկա ժամանակաշրջանում եղել են նաև Թորթումի գավառում, ավելին, այնտեղ ապրելիս են եղել նաև Հայ կաթոլիկներ, ապա չի կարելի բացառել, որ գեներալ Պանկրատևը կոմս Պասկելիչին հղած իր վերոհիշյալ գեկուցագրում վրիպել է՝ շփոթելով Թորթում և Դերջան գավառները, և որ գաղթի ցանկություն հայտնած վերոհիշյալ 59 տուն Հայ կաթոլիկներն Թորթումի գավառից են⁸⁵: Այդ փաստի օգ-

⁸² Ст'ю Дарбинян М. Г., Новые документы о переселении персидских и западных армян в 1828–1830 гг., т. 2: 14:

⁸³ Նույն տեղում:

⁸⁴ Կարապետյան Մ., Եփրեմ Սեթը արևմտահայության 1829–1830 թթ. գաղթի մասին, էջ 288:

⁸⁵ Մեր կարծիքով, մի ուշագրավ գուցադիպուքյուն ևս կարելի է տեսնել ռուսական զինվորականների գեկուցագրերում: 1829 թ. վերջին Երզրումի լիվայից Լոսի գաղթած կաթոլիկ հայերի թիվը 59 ընտանիք է (տես Դարբինյան М. Г., Новые документы о переселении персидских и западных армян в 1828–1830 гг., т. 2): Ինչպես տեսանք,

տին վկայում է նաև այն, որ Հայ կաթոլիկների հոգևոր առաջնորդի տեղեկությունները հասակ են և տարբերությունների առիթ է են տալիս: Ինչ վերաբերում է Դերջանից կատարված վերաբնակեցմանը, ապա Եփրեմ Սեթը գրում է. «Յետ այսր ամենայնի ի հասարակածէ ամսեանն մայիսի սկիզբն արարեալ ժողովրդեան քակտիլ ի կայից իւրեանց մինչև զհինգ յունիսի դատարկեցաւ ողջ Արզուում քաղաք և շրջակայ դաշտն Կարնոյ և Դերջան և Թորթում, որք կանուխ յանձնեալ էին Օսմանցոյն»⁸⁶: Բնականաբար, այստեղ արգեն խոսք է գնում 1830 թ. իրադարձությունների մասին:

Ռուսական Հրամանատարություն և Հայերի փոխհամաձայնությունները Երզրումցի վերաբնակիչներին որպես բնակություն վայր տրամադրվելու էր նախկին Ախալցխայի նահանգի Ռուսաստանին անցած շրջանը, բայց զետեղները բնակվելու էին Ականի ավազանում, իսկ կարսեցիները՝ Գյումրի ամրոցում, Շորագյալի, Լոսի-Փամբակի գավառներում և Արագածի ամայի գյուղերում⁸⁷:

Ձմռան նախապատրաստական աշխատանքներից հետո, 1830 թ. վաղ դարձանը սկսվում է արևմտահայուխյան գանգավածային վերաբնակեցումը: Երզրումից և շրջակա գավառներից մեծ թվով Հայեր դիմումներ են ներկայացնում Կարապետ արքեպիսկոպոսին՝ խնդրելով իրենց տեղափոխելու ռուսական սահմանները⁸⁸:

Երզրումի գաղթականները Կարապետ արքեպիսկոպոսի առաջնորդությամբ 1830 թ. մայիսի 10-ին թողեցին պատմական Բարձր Հայքը և բռնեցին անսակնալ դժվարություններով լի երկար ու տխուր ճամփան: Ռուսական զինվորական Հրամանատարությունը Կարապետ արքեպիսկոպոսին և նրա մերձավորներին արտոնել էր մշտական բնակություն հաստատել Թիֆլիսում⁸⁹: Մայիսի 15-ից հունիսի 5-ը դատարկվեցին Երզրում, Բաբերդ, Գյումուշխանե, Քղի քաղաքները և Դերջան, Թորթում, Վերին Բասեն, Ներքին Բասեն, Սպեր, Թիքման գավառները: Դեպքերի ակնատես է. Սմիթը գրում

59 ընտանիք են նաև Թորթումի գավառի այն կաթոլիկները, որոնք 1829 թ. ցանկություն էին հայտնել վերաբնակվելու:

⁸⁶ Կարապետյան Մ., Եփրեմ Սեթը արևմտահայության 1829–1830 թթ. գաղթի մասին, էջ 290:

⁸⁷ Ст'ю Дарбинян М. Г., Новые документы о переселении персидских и западных армян в 1828–1830 гг., т. 2: 8–9:

⁸⁸ Ст'ю Մատենադարան, Կարապետ արք. արխիվ, թղթ. 163գ, վավ. 1177, ք. 1:

⁸⁹ Նշվ. ֆ., վավ. 1179, ք. 1:

է. «Ձկար էրզրումի փաշայութեան մի մաս, որտեղից փախուստ չէիներ, բացի էրզինջանից... Իսպիրի և Թորթումի մի մասից»⁹⁰: Թուրքական և քրդական հրոսակախմբերի հանկարծակի հարձակումները կանխելու նպատակով գեներալ Պանկրատեր յուրաքանչյուր խմբի կցում էր հայերեն իմացող մեկ սպայի և մի քանի կաղանկերից բաղկացած պահակախումբ⁹¹:

Տեսնելով, որ երկրամասը գրկվում է աշխատասեր Հայ գյուղացիութունից, հմուտ արհեստավորներից և առևտրականներից, Բ. Պուլը փորձում է տարբեր միջոցներով խոչընդոտել գաղթին: Կառավարության զրդմամբ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանից Արևմտյան Հայաստան է ուղարկվում Բարգուղիմեոս եպիսկոպոսը, որին, սակայն, չի հաջողվում հետ կանգնեցնել գաղթողներին: Ավելին, նրանք հայտարարեցին, որ «եթե անգամ Բրիտանոսն իջնի երկնքից և առաջարկի մնալ թուրքական տիրապետութեան տակ, մենք չենք հետևի նրա խորհրդին»⁹²:

Արևմտահայ վերաբնակիչները ընդհանուր թվի վերաբերյալ կան տարբեր տվյալներ, որոնք տատանվում են 83 հազարից⁹³ 100 հազարի⁹⁴ միջև: Եթե էրզրումից և նրա հարևան գավառներից վերաբնակեցված հայութեան թվաքանակի մասին տեղեկությունները (7154 ընտանիք), որոնք ներկայացվել են գեներալ Ն. Պանկրատևի ցուցակների հիման վրա, կարելի է իրական համարել, ապա Բայազետի լիվա-փաշայության տարածքից 4215 ընտանիք գաղթելու վերաբերյալ տվյալը՝ ներկայացված Հայկական մարզի կառավարիչ Վ. Բեհբուլթովի և գաղթականներին ուղեկցող իշխան Արզուլթյանի կողմից⁹⁵, Ա. Մելքոնյանը չափազանցված է համարում: Նա բազմաթիվ վկայությունների և տարբեր վիճակագրությունների վրա կատարած հաշվարկներով ցույց է տվել, որ իրականում Բայազետի լիվա-փաշայութունից ուսական սահմաններ են տեղափոխվել մոտ

2.500 ընտանիք կամ 15 հազար մարդ, քանի որ 1.828 թ. սեպտեմբերին այնտեղ ապրում էր շուրջ 3.200 հայ ընտանիք⁹⁶: Կարսից տեղափոխվածները թիվն իր հերթին կազմում էր 2.264 ընտանիք կամ 13.935 մարդ: Էրզրումի նահանգից տեղափոխվածների ընդհանուր թիվը պետք է ընդունել 9.682 ընտանիք, որից 2.528 ընտանիքը՝ Բայազետից, ինչպես դա հաղորդում էր գեներալ-մայոր Ռեուտը:

Այդպիսով, 1829–1830 թթ. ընթացքում ուսական տիրապետության տակ տեղափոխված արևմտահայ վերաբնակիչների թիվը կստացվի շուրջ 12.300 ընտանիք կամ 74 հազար մարդ⁹⁷:

Տայքի գավառներից 1829–1830 թթ. վերաբնակեցումն ամենամեծ ազդեցությունը թողեց Հայաշատ Թորթումի գավառի վրա, որի առանձին շրջաններից սակայն արտագաղթ տեղի չունեցավ, քանի որ Աղրիանապոլսի Հաշտութեան պայմանագրի կնքումից անմիջապես հետո ուսներն այնտեղից դուրս էին եկել, իսկ թուրքական իշխանությունները գեներով ստիպել էին Հայերին մնալ տեղերում⁹⁸: Թորթումից տեղի ունեցած վերաբնակեցման արդյունքում գավառը զրկվեց Հայ բնակչության մեծագույն մասից, որի հետևանքով բուռն կերպով սկսվեց կեսկես բնակչության թուրքացման գործընթացը: Բազմաթիվ Հայկական բնակավայրերից Թորթումի գավառում Հայաբնակ մնացին Ագրակը, Ապունեսը, Գառնկոցը, Գորբերը, Խախուն, Խոզպրակը, Մաղկին, Կոչանցը, Նորչենը, Շիփեքը, Պարը, Ռաբաթը, Վախթիկանցը, Վերինգյուղը, Տանձուտը, Քջխան և Օշկը⁹⁹:

Բացի մանր և անհատական դրսևորումներից, վերաբնակեցմանը չմասնակցեց Կիսկիմի գավառի Հայաբնակ գյուղերի՝ Խոտորչի, Մոխրկուտի, Կուլդրաշենի, Կարմիրքի և մյուսների հայությունը: Եփրեմ Սեթի Հաղորդած տեղեկությունների համաձայն, վերաբնակեցման ճանապարհին Հայ կաթողիկոսներին ուղեկցում էին խոտորչուրցի քահանաները, որոնք սակայն «թողին նոքա և մեկնեցան ի գաւառ իւրեանց»¹⁰⁰: Միայն Մխիթարյան միաբանության անդամ՝

⁹⁰ Smith E., նշվ. աշխ., էջ 124:

⁹¹ Տե՛ս Դարբինյան Մ., Արևմտահայերի 1829–1830 թթ. գաղթը Հայկական մարզ և հարակից շրջաններ, ՊԲՀ, 1974, № 2, էջ 95:

⁹² Дарвинян М. Г., Новые документы о переселении персидских и западных армян в 1828–1830 гг., с. 19:

⁹³ Նույն տեղում, էջ 20–21:

⁹⁴ Երիցյան Ա., Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, մաս II, էջ 441–442:

⁹⁵ Տե՛ս Дарвинян М. Г., Новые документы о переселении персидских и западных армян в 1828–1830 гг., էջ 20–21:

⁹⁶ Տե՛ս Մելքոնյան Ա., Էրզրում, էջ 142–144:

⁹⁷ Նույն տեղում, էջ 144:

⁹⁸ Տե՛ս Մելքոնյան Ա., Էրզրում, էջ 140–141:

⁹⁹ Տե՛ս Գ.ԱԹ, Թ. Ազատյանի ֆոնդ, քաժիմ IV, վավ. 224, էջ 147: Մի քանի տասնամյակ անց Թորթումի 15 հայաբնակ գյուղերի փոխարեն հիշատակվում են 13-ը (տե՛ս Էփրիկեան Ս., Պատկերագրող քնաշխարհիկ քառարան, հ. 2, գ. Ա, էջ 51):

¹⁰⁰ Կարապետյան Մ., Եփրեմ Սեթը արևմտահայոցյան 1829–1830 թթ. գաղթի մասին, էջ 290:

կարմիրքցի քահանա Հայր Նիկողայոսն է շարունակում ճանապարհը դեպի Ախալցխա և մեծագույն աջակցություն ցուցաբերում Եփրեմ Սեթին¹⁰¹:

Ցավոք, սիզբնաղբյուրներում Տալբից տեղի ունեցած վերաբնակեցման մասին հստակ տեղեկություններ չկան: Ակնհայտ է, որ տայեցիները բնակություն են հաստատել Ախալցխայում և նրա շրջակա շրջաններում: Ա. Մելքոնյանի կարծիքով՝ Զավաբի Բալխ գյուղ տեղափոխված էրզրուացիները Թորթումի Մեղրագոմ գյուղից են, իսկ Դամալա գյուղում հաստատված արևմտահայերի մեծագույն մասը Թորթումի Շիփեք, Գառնկոթ և Ռաբաթ գյուղերից են¹⁰²: Եթե մինչև վերաբնակեցումը Թորթումի լիվայի Հայություն թիվը հասնում էր շուրջ 5.440-ի¹⁰³, ապա վերաբնակեցումից հետո Թորթումի 17 Հայաբնակ գյուղերում մնաց շուրջ 3.000-ը: Տալբի մյուս գավառներից տեղի ունեցած վերաբնակեցման մասին տեղեկություններ չեն պահպանվել: Փաստն այն է, որ այդ գավառներում մինչև 1829-1830 թթ. վերաբնակեցումը բազմաթիվ Հայեր են սպրեղ¹⁰⁴:

Վրաստանի պատմության կենտրոնական պետական արխիվում և Մատենադարանում պահպանվել են վավերագրեր, որոնց հեղինակն է Համարվում Տայոց եպիսկոպոս Կարապետը¹⁰⁵: Մեր Համոզմամբ, Տայոց եպիսկոպոս Կարապետը նույն ինքը Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունին է, և այդպես անվանում է ինքն իրեն հնարավոր երեք պատճառներով: Առաջինը, որ Տալբի Հայ առաքելականները հոգևոր առումով զրկված էին իր ենթակայության ներքո: Երկրորդ, որ էրզրումի նահանգից Ախալցխա տեղափոխված Հայություն մեջ ստվար զանգված էին կազմում տայեցիները, մասնավորապես՝ Թորթումցիները, և երրորդ՝ Ախալցխայի շրջանը, ուր բնա-

կություն էին հաստատել էրզրումի նահանգի Հայերը, նրանց կողմից անվանվում էր «Ռուսաց Հայաստանի Տայոց աշխարհ»¹⁰⁶:

1830 թվականից հետո Արևմտյան Հայաստանում սկսված ներքին միգրացիոն գործընթացները բնորոշ էին նաև Տալբին, որը հանդիսանալով ուսուսական կայսրությանը սահմանամերձ շրջան, ընդունում էր վերաբնակիչների Արևմտյան Հայաստանի այլ շրջաններից: Այս նոր վերաբնակիչները գալիս էին լրացնելու այն թափուր մնացած տեղերը, որոնք առաջացել էին տեղաբնակիչների ուսուսական սահմաններն անցնելուց հետո: Այդպիսի վերաբնակիչներից էին Օլթիի գավառի Բերգուս գյուղի 50 տուն հայերը¹⁰⁷, Փանակի Ագրակ գյուղի 270 բնակիչները¹⁰⁸: Մեկ այլ տեղեկության համաձայն, Կարինից «երեկելի անձանց» մի ստվար խումբ տեղափոխվում է Տալբ, որոնց հետ նամակագրական կապեր էր շարունակում պահպանել Կարապետ արքեպիսկոպոսը¹⁰⁹:

1830 թ.-ից հետո Օլթի գետի ափագանում բնակվող Հայությունը գերազանցապես նորաբնակներ էին: Բնիկները կամ մահմեդականացել էին, կամ տեղափոխվել ուսուսական սահմաններ: Միաժամանակ, Ռուսաստանին անցած շրջաններից եկած մահմեդական բնակչությունը Հիմնականում հաստատվեց Կիսկիմի, Թորթումի, Սպերի, Վերին և Ստորին Բասենների դատարկված Հայկական գյուղերում՝ բացասական հետևանքներ թողնելով այդ գավառների էթնոտոլոգիզացրական պատկերի վրա¹¹⁰: Այս առթիվ Հ. Տաշյանը գրում է. «...գաղթային շրջանն ունեցած է ուրիշ արդիւնք մը, մեծ ներգաղթ մահմեդական տարրի մը (Կովկասէ ևն), և այս միջոցին մահմետականք ոտք կրնան դրած ըլլալ և յաճախ դրած են ոչ միայն Հայոց լքած վայրերն, այլ ուրիշ տեղեր ալ՝ ուր կուտան մը գտած են սպրդելու:... Ի հարկէ

¹⁰¹ Նույն տեղում:

¹⁰² Տե՛ս Մեղրոյան Ա., Զավախքը XIX դ. և XX դ. I քառորդին, էջ 193:

¹⁰³ Նույնի, Էրզրում, էջ 116:

¹⁰⁴ 1834 թ. Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի տվյալներով՝ հայեր էին բնակվում նաև Օլթիում, Կոտիքում, Վերիխասում, Ջուջուրիսում, Շեքերիսում, Փետկիրում, Պլտաջուրում և Էգաժորում (տե՛ս Գ.Ա.Թ., Թ. Ազատյանի ֆոնդ, քաժին IV, վավ. 224, էջ 147): Հայաշատ էր շարունակում մնալ նաև Կիսկիմի գավառը, հատկապես՝ խոտորջուրը:

¹⁰⁵ Տե՛ս ԱՊՈՒԱԳ, փ. 2, տ. 1, լ. 2594, լ. 28, Մատենադարան, Կարապետ արք. արխիվ, քրք. 163ե, վավ. 15, 106, Օրմանյան Մ., Ազգապատում, հ. Գ., էջ 4162, 4188, Դաքքիյան Մ., Վավերագրեր պարսկահայերի և արևմտահայերի 1828-1830 թթ. գաղթի վերաբերյալ, ԲՀԱ, 1973, քիվ 2, էջ 142:

¹⁰⁶ Աղանեանց Գ., Կարնոյ գաղթը, էջ 3:

¹⁰⁷ Տե՛ս ՅՄՐՋՈՆԵՆԻՆԻՆԻ ՅՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԻ, ք. 3, ՅՅ. 597.

¹⁰⁸ Տե՛ս ԱՊՈՒԱԳ, փ. 415, տ. 1, լ. 21, լ. 15.

¹⁰⁹ Տե՛ս Գեղամեանց Յ., նշվ. աշխ., էջ 205, Դիվան հայոց պատմության, գիրք Ժ, էջ 485:

¹¹⁰ Ժողովրդագրական ոչ հայանպաստ պատկերը Կիսկիմում և Թորթումում հատկապես արտացոլվում է XIX դ. II կեսի վիճակագրության մեջ: Այսպես, ըստ Գրյազնովի կազմած վիճակագրության՝ Կիսկիմի կազայում, որը Էրզրումի սանջակի ամենախիտ բնակեցված շրջանն էր, մահմեդականների քիվը կազմում էր 23929 մարդ, իսկ հայերինը՝ 6954 մարդ: Թորթումի կազայի 52591 բնակիչից հայ էին ընդամենը 2146-ը (Տե՛ս Գրյանով Փ., Военный обзор передоваго театра в Азиатской Турции, ч. 2, С.-Петербург, 1897, էջ 27):

չենք ուզեր ըսել, թէ այս մահամետականները միայն նոր գաղթականներ են և որեւէ բնիկ տարր չկար»¹¹¹:

Արեւմտահայութեան վերաբնակեցումը, սակայն, չհանգեցրեց Հայաստանին: XIX դ. կեսի դրութեամբ Հայերը շարունակում էին մնալ Արեւմտյան Հայաստանի ամենաստուր ժողովուրդը: Նրանց թիվը անցնում էր երկու միլիոնից: Այդ թիվն են նշում նաև թուրքական հարցերով զբաղված XIX դ. եվրոպացի հեղինակները¹¹²:

Այսպիսով, XIX դ. առաջին երեսնամյակի ժողովրդագրական տեղաշարժերը, այդ թվում արեւմտահայերի և մասնավորապես տայեցիների 1829—1830 թթ. զանգվածային վերաբնակեցումը խոշոր նշանակություն ունեցան Արևելյան Հայաստանի և Անդրկովկասի այլ շրջանների անասնաբուծության զարգացման համար: Անցնելով ցարական Ռուսաստանի տիրապետության տակ՝ շուրջ 74 հազար արեւմտահայերը դերձ չմնացին սոցիալական և ազգային ճնշումներից, այլ և Հայտնվեցին ցարական կառավարության վարած գաղութային քաղաքականության բովում: Այսուհանդերձ, ռուսական հպատակության տակ Հայությունն ազատվում էր ֆիզիկական բնաջնջման վտանգից, որ դարեր ի վեր դամոկլյան սրի պես կախված էր նրա գլխին, ձեռք էր բերում անձի և գույքի համեմատական ապահովություն, հաղորդակից դառնում տնտեսական և մշակութային կյանքով անհամեմատ ավելի բարձր կանգնած երկրի հետ: 1829—1830 թթ. վերաբնակեցման արդյունքում Արեւմտյան Հայաստանի բնակչության հաշվին ստվարացավ հայկական բնակչության թիվը Արևելյան Հայաստանի տարածքում, որն ավելի խորացրեց Արեւմտյան Հայաստանի ժողովրդագրական պատկերի դիմախեղման գործընթացը:

¹¹¹ Տաշեան Հ., Տայր, դրացիք և խոսքոքոր, ՀԱ, 1973, 1—3, էջ 44—45:

¹¹² Стів Увичини М., Изображение современного состояния Турции в географическом, статистическом, религиозном и военном отношениях, перевод с франц., СПб., 1854, с. 8.

ՎԵՐՋԱԲԱՆ

Մեծ Հայքի XIV աշխարհ Տայքի բնաաշխարհագրական նպաստավոր պայմանները խթանել են բնակչության կենսապահովման յուրահատուկ մշակույթի ձևավորմանը: Անհիշելի ժամանակներից սկսած Տայքը և տայեցիները Հայ ժողովրդի կազմավորման և հայկական պետականության կայացման մաս են կազմել: I հիշատակումները Տայքի վերաբերյալ թվագրվում են Ք.ա. XII դարով, երբ Ասորեստանի արքա Թիգլաթպալասար I-ն արշավեց Նաիրյան ցեղամիության կազմի մեջ մտնող Դայաենի երկիր:

Տայքը մշտապես եղել է բոլոր համահայկական թագավորությունների կազմում: Վանի թագավորության ժամանակաշրջանին վերաբերող արձանագրություններում Տայքը հիշատակվում է Դիաուխի ձևով: Ք.ա. 401 թ. Հույն զորավար Քսենոփոնը Հայաստանով անցնելիս հիշատակում է տառիներին: Ք.ա. II դ. Մեծ Հայքի թագավոր Արտաշես I-ը հյուսիսում իրականացրած միավորիչ զորածուներության արդյունքում Հայաստանին է միացնում Սելևկյան տիրապետության շրջանում Վիրքին անցած հայկական հողերը՝ այդ թվում նաև Տայքի մի մասը: Ք.հ. I դ. Տայքի Բողխա գավառում են հաստատվում Դիմաքսյան նախարարական տան ներկայացուցիչները, իսկ IV դ. Տայքը՝ իբրև ժառանգական կալվածք, տրվում է Մամիկոնյան նախարարական տանը: Ավելին, Մամիկոնյանները գլխավոր դեր էին ստանձնել օտար զավթիչների դեմ մղվող պայքարում, իսկ Տայքը շատ հաճախ դառնում էր հայկական զինված ուժերի ապաստարանը:

591 թ. Մավրիկիոս կայսեր օրոք Տայքը և Գուգարքի սահմանակից մասերն ընդգրկվում են Բանակ կենտրոնով մի նոր վարչամիավորի մեջ, որն ստանում է Խորագույն Հայք անվանումը:

VIII դ. վերջին՝ Հակաարարական ապստամբության անհաջող վախճանից հետո, երբ Մամիկոնյան նախարարական տան ներկայացուցիչները քաղաքական ապաստան գտնելու նպատակով ստիպված հեռացան Տայքից, այստեղ հաստատվեցին նրանց հետ խնամիական կապեր ունեցող Բագրատունիները: X դ. Տայքն ընդգրկվեց դեռևս IX դ. սկզբին հարևան Կղարքում Աշոտ Բագրատունու կողմից հիմնադրված կյուրապաղատության մեջ: X դ. II կեսին Դավիթ կյուրապաղատ Բագրատունու օրոք Տայքը հասավ իր հզորության

գագաթնակետին: Նրա օրոք Տայքի կյուրապաղատութեան սահմանները Հարավում հասան մինչև Հարբ և Ապահունիք: 1001 թ. Դավիթ Կյուրապաղատի մահից հետո Տայքն անցավ Բյուզանդիային: XI դ. II կեսին Տայքը հայտնվեց սելջուկյան ավերիչ արշավանքների կիզակետում: XII դ. սկզբին Տայքն անցավ Հոգրացած վարչական թագավորութեանը: XIII դ. I կեսին երկրամասը ենթարկվել է մոնղոլական հրոսակախմբերի ասպատակություններին, իսկ II կեսին՝ ընդգրկվել Սամցխեի աթաբեկություն կազմի մեջ: XVI դարում Տայքը հայտնվեց Օսմանյան կայսրության տիրապետության տակ:

Տայքի՝ ի սկզբանե, Հայերով բնակեցված լինելը վկայվում է ինչպես Հայկական, այնպես էլ հունական աղբյուրների կողմից: Արաբական դժնդակ տիրապետության ժամանակաշրջանում բազմաթիվ Հայեր, այդ թվում նաև տայքցի հոգևորականները, հեռանում են Տայքից: Նրանց փոխարեն Տայքում հաստատվում են փոքրաթիվ վրացիներ՝ իրենց հոգևորականների հետ միասին: Այստեղ վրացի կրոնավորները հոգևորություն համար պարարտ հող են գտնում, քանի որ լինելով Բյուզանդիային սահմանակից՝ Տայքը բավականին հանդուրժող էր քաղկեդոնականության նկատմամբ: Զարգացած միջնագարում մեծամասամբ Հարելով քաղկեդոնականությանը՝ տայքցի Հայր էի ասսիմիլացվում վրացական էթնոսին: Ընդհակառակը, Տայքում առկա վրացական փոքրամասնությունն առօրյայում ընդօրինակում է Հայերենը՝ Հայերին փոխանցելով վրացերենը միայն ու միայն իրենց եկեղեցական ժամերգությունների լեզու: Տայքի ազգային կազմի մեջ Հայերի ունեցած գերակայություն մասին են վկայում նաև օսմանյան Հարկացուցակները:

Օսմանյան կայսրության կազմում Տայքի գավառները բաժանվում են էրզրումի (Թորթումի լիվան, ինչպես նաև մինչև XVII դ. վերջը՝ Մամրվանի լիվան), Ախալցխայի (Կիսկիմի, Պարխարի, Թավուքարի, Օլթիի, Փանակի լիվանները, իսկ XVII դ. վերջից՝ նաև Մամրվանի լիվան) և Կարսի (Գյոլիի լիվան) նահանգների միջև: 1828–1829 թթ. ուղս-թուրքական պատերազմի հետևանքով, երբ Ախալցխայի նահանգի մի մասն անցնում է Ռուսաստանին, վարչական նոր փոփոխությունների ենթարկվելով՝ Տայքն ամբողջությամբ ընդգրկվում է էրզրումի նահանգի կազմի մեջ:

Տայքի արևմտյան գավառներն էին Կիսկիմը և Պարխարը: Կիսկիմի գավառը ընկած էր ձորոտ գետի երկու ափերին: XVI–XIX դ. I

երեսնամյակում այնտեղ հաշվվում է շուրջ 60 մեծ և փոքր բնակավայր, որոնցից 18-ը XIX դ. վերջին դեռևս հայաբնակ էին: Պարխարի գավառի մոտ 40 բնակավայրեր, որոնք ընկած էին Պարխար գետի և նրա Արջիվան, Բահլ ու Խևակ վտակների ավազանում, իրենց վրա կրելով վրացականացման և բռնի մահմեդականացման հետևանքները՝ մինչև XIX դարը գրեթե լիովին փոխում են իրենց էթնոկրոնական կազմը՝ Հայկական հետքը թողնելով միայն մի շարք բնակավայրերի և աշխարհագրական այլ վայրերի անվանումներում:

Տայքի կենտրոնական գավառներն էին Թորթումը, Թավուքարը, Օլթիի և Մամրվանը: Թորթումի գավառը, որը համապատասխանում էր «Աշխարհացոյց»-ի Ոքաղե և Ազորդացփոր գավառներին (Թորթում գետի ավազանում), ամենաշատն էր տուժել միջնադարյան ավերածություններից, բռնի մահմեդականացումից և բնակչության մասսայական արտագաղթներից: 1829–1830 թթ. վերաբնակեցումից հետո անգամ այստեղ կային շուրջ 2 տասնյակ հայաբնակ բնակավայրեր, որի հայությունը մինչև XX դ. սկիզբը կամ մահմեդականություն ընդունեց, կամ էլ զոհ գնաց ցեղասպանությանը: Թավուքարի գավառը («Աշխարհացոյց»-ի Ճակք գավառ) ընկած էր Օլթի գետի ստորին հոսանքի շրջանում, և, չնայած որ բավականին ընդարձակ տարածք էր զբաղեցնում, խնդրո առարկա ժամանակաշրջանում ուներ ընդամենը 24 գյուղ, որոնք, սակայն, բավականին բազմամարդ էին: Օլթիի գավառի բնակավայրերը («Աշխարհացոյց»-ի Բողխա և Պարտիզացփոր գավառներ), որոնք ընկած էին Օլթի գետի միջին հոսանքի ավազանում, XVI–XIX դդ. I երեսնամյակում տատանվում էին 45–90-ի սահմանում, ևս իրենց վրա կրում էին բռնի մահմեդականացման և արտագաղթների կնիքը, որի հետևանքով արդեն XIX դ. սկզբին Հայերն այնտեղ փոքրամասնություն էին կազմում: Մամրվանի գավառի («Աշխարհացոյց»-ի Բողխա գավառի Հարավային շրջան, Օլթի գետի վերին հոսանքի և Սիվրի-Հայի ավազան) շուրջ 30 բնակավայրերը XVI–XIX դարերում լուրջ փոփոխությունների են ենթարկվում: 1834 թ. այստեղ հայաբնակ էին հայաբնակ էին միայն Շեքերլի, Պլտաջուր, Փետկերը, Կըզըլբիլիսա, Վեղիխան և Ագրակ գյուղերը: Մնացած բնակավայրերը բնակեցված էին գլխավորապես թուրքերով և քրդերով:

Տայքի արևելյան գավառներն էին Փանակը և Գյոլեն: Փանակի գավառի բնակավայրերը (Օլթի գետի Փանակ և Փանագկերտ վտակների ավազան) XVI–XVIII դարերում տատանվում էին 45–109-ի

սահմանում: Թուրքական կառավարութեան վարած ներքին և արտաքին քաղաքականութեան հետևանքով ոչ միայն նոսրացավ Փանակի բնակչութիւնը, այլև ամայացան բազմաթիւ բնակավայրեր: XVI—XVIII դարերում հայերը փոքրամասնութիւն դարձան նաև Գյուլի գալաոփ (Կուր դետի վերնադալաւը, «Աշխարհացոյց»-ի Կող գալաո) բնակավայրերում: Բրիտանյա ազգերից բնակչութեան թիւով Գյուլեում հայերից հետո երկրորդ տեղում հույներն էին: Մեծամասնութիւնը մահադականներն էին, որոնց վարքն ու բարքը, սակայն, չէր տարբերուէ հայերի վարքից ու բարքից:

XVI—XVIII դարերում օսմանյան տիրապետութիւնը խիստ կործանարար հետևանքներ ունեցավ օսմանահպատակ ազգային փոքրամասնութիւնների համար: XVI դ. վերջին Տայքի մոտ 94 հազար բնակիչներից երկու երրորդը հայեր էին: Տայքի հայութեան համար իսկական պատուհաս էին թուրք-պարսկական պատերազմները: 1604 թ. պարսիկները տեղահանում են Գյուլի, Փանակի, Փանազկերտի, Օլթու և Մամբվանի հայութեան մի մասին: 1629 թ. բռնազաղթի է ենթարկուէ Թորթումի հայերի մի մասը: Մյուս կողմից, սուլթանական կառավարութիւնն սկսեց նվաճված երկրամասերը բնակեցնել թուրքալեզու և իրանալեզու (գերազանցապես քրդեր) ցեղերով՝ հպատակ ժողովուրդների նկատմամբ լրակատար գերիշխանութիւն հաստատելու նպատակով: Բրդաշատ բնակավայրեր առաջացան Գյուլեում և Փանակում, իսկ Կիսկիմը, Խոտորջուրը և Թորթումը, որոնք զուրկ էին քրդական տարրից, հայտնվեցին լազերի վտանգի առաջ: Իրավիճակը հատկապես ծանրացավ 1643 թ., երբ թուրքական կառավարութիւնը սաստկացրեց հարկային քաղաքականութիւնը կայսրութեան ոչ մահադական ազգաբնակչութեան նկատմամբ: Հետևանքը եղավ այն, որ ի տարբերութիւն կրոնափոխ չեղած առաքելական հայութեան՝ Տայքի քաղկեդոնական հայութիւնն ընդունեց մահադականութիւն: Իշխանութիւնների սպառնալիքի տակ Տայքի մահադականացած հայութեան մի զգալի մասն առերես էր ընդունել իսլամը՝ գաղտնի հաճախելով եկեղեցիներ, կատարելով քրիստոնեական զանազան ծիսակատարութիւններ: Այդօրինակ բնակչութիւնը հայտնի էր «կեսկեսներ» անունով՝ այսինքն կես հայ-քրիստոնյա և կես թուրք-մահադական: Կիսկիմի, Պարխարի և Թորթումի հայ բնակչութեան մի մասը լազերի բռնութիւններից ազատվելու համար հաճախ իրեն ներկայացնում էր ոչ միայն մահա-

եղական, այլև լազ: Այդ իսկ պատճառով նրանց հաճախ անվանում էին ոչ թե կեսկեսներ, այլ Հայ-լազեր:

Մահադականացման գործընթացին զուգահեռ՝ XVII դ. վերջին Տայքում աշխուժանում են նաև կաթոլիկ քարոզիչները, որոնք կարողանում են XVIII դ. ընթացքում Կիսկիմի և Թորթումի գավառների հայութեան մի մասի շրջանում տարածել կաթոլիկութիւնը:

Տայքում տեղի ունեցած ժողովրդագրական փոփոխութիւնները հստակ երևում են, երբ բազդատում ենք «Գյուրջիստանի վիլայեթի մեծ դավթարի» ու «Չլդըրի էյալեթի ջարա դավթարի» նյութերը: Հարյուրամյակի ընթացքում կտրուկ նվազել էր Տայքի բնակավայրերի թիւը: Եթե 1595 թ. տվյալներով Փանակի գավառն ուներ 109 բնակավայր, ապա XVIII դ. I կեսին այստեղ մնացել էր ընդամենը 46 բնակավայր: Նմանատիպ էր նաև վիճակը Օլթու լիվայում: 1595 թ. մոտ 90 բնակավայրի փոխարեն XVIII դ. I կեսին հանդիպում ենք 45 բնակավայրի:

XVIII դարի 40-ական թվականներից Վրաստանն ու Հայաստանի հյուսիսը հայտնվեցին թուրքական կառավարութեան բարեհաճութիւնը վայելող հյուսիսկովկասյան լեռնականների՝ լեզգիների հարձակումների թիրախում: Բախումները լեզգիների և հայ-վրացական ուժերի միջև հաճախ տեղի էին ունենում Տայքում, որը նոր դժբախտութիւնների առաջ է կանգնեցնում Տայքի հայութեանը:

XVIII—XIX դարերի սահմանադիւրի Տայքի բնակչութեան թիւը XVI դ. համեմատ բավականին նվազել էր և այժմ կազմում էր շուրջ 60.000 մարդ, որից 7.560-ը՝ Կիսկիմի լիվայում, 4.860-ը՝ Պարխարի լիվայում, 16.960-ը՝ Թորթումի լիվայում, 2.520-ը՝ Թափուքարի լիվայում, 8.100-ը՝ Օլթու լիվայում, 6.660-ը՝ Մամբվանի լիվայում, 8.280-ը՝ Փանակի լիվայում, 5.400-ը՝ Գյուլի լիվայում: Եթե XVI դ. երկրորդ կեսին հայկական էր Տայքի բնակչութեան երկու երրորդը (մոտ 60.000-ը), ապա XIX դ. սկզբին Տայքի բնակչութեան ճնշող մեծամասնութիւնը կեսկեսներն էին: Քրիստոնյա հայութիւնը (առաքելական և կաթոլիկ) կազմում էր Տայքի բնակչութեան մեկ երրորդը:

XIX դարի առաջին քառորդին Տայքի ժողովրդագրական պատկերի վրա լուրջ հետևանքներ են թողնում ինչպես ներքին միջրացիոն գործընթացները Օլթու գավառում, այնպես էլ 1820-1823 թթ. թուրք-պարսկական պատերազմը: Այս պատերազմի արդյունքում սարսափելի ավերածութիւնների է ենթարկվում Թորթումի գավառը:

1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ ռուսական զորքերը տիրեցին Տայքին՝ կոտորելով տեղի մահմեդական իշխանությունների վերնախավի (Օլթու սանջակբեյ Բյուզնուկ բեկ, Նարիմանի սանջակբեյ Օսման աղա, Հուսեյն բեկ, քուրդ Օմար բեկ և այլն) ղեմադրությունը: 1829 թ. սեպտեմբերի 2-ին կնքված Ադրբանուպոլսի հաշտության պայմանագիրն անկնկալի առաջ է կանգնեցնում պատերազմի ժամանակ ռուսներին ահռելի օգնություն ցուցաբերած հայությունը: Խուսափելու համար թուրքական կառավարության վրեժնազրույթունից, ռուսական զորքերի հրամանատար Ի. Պասկևիչը կայսրից թույլատվություն է խնդրում կազմակերպելու արևմտահայության վերաբնակեցումը Վրաստան և Հայկական մարզ:

1830 թ. մայիսի 10-ին սկսված վերաբնակեցումը Տայքի հայության համար նույնպիսի կործանարար և վնասաբեր ազդեցություն ունեցավ, ինչպես XVII—XVIII դարերի բռնի մահմեդականացումը: Էրզրումի հայ կաթողիկոսների հոգևոր առաջնորդ Եփրեմ Սեթի ղլխավորությամբ Ախալցխա են տեղափոխվում Թորթումի նորչին գյուղից 40, Ռարաթ գյուղից՝ 15 և Մեղուս գյուղից՝ 4 ընտանիք հայ կաթողիկոսները: Ախալցխա է տեղափոխվում նաև Թորթումի գավառի մյուս հայկական գյուղերի հայության մեծ մասը: Եթե մինչև վերաբնակեցումը Թորթումի լիվայի հայության թիվը հասնում էր շուրջ 5440-ի, ապա վերաբնակեցումից հետո Թորթումի շուրջ 20 հայաբնակ գյուղերում մնաց մոտ 3000-ը: Վերաբնակեցման արդյունքում Տայքը զրկվեց հայ բնակչության մեծագույն մասից, որի հետևանքով բուռն կերպով սկսվեց կեսկես բնակչության թուրքացման գործընթացը:

АРКАДИЙ АКОПОВ
Т А Й К
АДМИНИСТРАТИВНО-ДЕМОГРАФИЧЕСКАЯ
КАРТИНА С XVI ВЕКА ПО ПЕРВУЮ
ТРЕТЬ XIX ВЕКА

РЕЗЮМЕ

История XIV ашхара (область) Великой Армении Тайка является одной из самых недостаточно изученных тем Истории Армении. Тайк с древнейших времен являлся частью армянской государственности. Первые упоминания о Тайке относятся XII веку до н.э., когда ассирийский царь Тиглатпаласар I напал на государственное образование Наири, частью которой была страна Даяэни.

В надписях Ванского царства Тайк упоминается под именем Диаухи, а в 401 г. до н.э. греческий полководец и историк Ксенофонт, проходя по Армении, упоминает таохов. Во II веке до н.э. царь Великой Армении Арташес I (189-160 до н.э.) на севере к Армении присоединяет территории, которые в III веке отошли Грузии, в том числе часть Тайка. В I веке нашей эры один из гаваров (провинций) Тайка — Богха, упоминается как земельное владение нахарарского дома Димахсян. В IV веке Тайк передается Мамикьянам, которые очень часто становились предводителями борьбы против внешнего врага, а Тайк — опорным пунктом армянских вооруженных сил.

В 591 г. указом византийского императора Маврикия на территориях Тайка и Гугарка была сформирована новая административная единица — Глубинная Армения.

В конце VIII века, после антиарабского восстания, когда Мамиконяны в поисках политического убежища покинули Тайк, здесь обосновались Багратиды. В X веке край вошел состав курапалатства, которое было основано еще в IX веке в соседнем Кгарчке. Во II половине X века во времена правления Давида Курапалата, Тайк достиг пика своего могущества. После смерти Давида Курапалата Тайк отошел Византии. Во II

половине XI века Тайк подвергся опустошению со стороны сельджюкских войск, а в начале XII века попал под влияние Грузинского царства. После монгольских нашествий в 1266 году край вошел в состав княжества Самцхе, а в XVI веке был захвачен турками-османами.

Тайк издревле был населен армянами. Об этом свидетельствуют армянские и греческие источники. В VII–VIII веках находясь под арабским игом многие жители Тайка, в том числе и священнослужители, предпочли переселиться в соседнюю Византию. Вскоре в Тайке появляется грузинское духовенство, за которым и в край приходит небольшое количество грузинского населения. Армянское коренное население было довольно толерантным по отношению к халкидонитам, а вскоре, сами тайкские армяне предпочли принять халкидонитство, которое однако не подразумевало грузинизации армян.

В составе османской империи провинции Тайка были разделены между Эрзурумским (Тортумская и Мамрванская ливы), Ахалцихским (ливы Киским, Пархар, Тавускляр, Ольты и Пеняк) и Карсским (Гельская лива) эялетами. После расформирования Ахалцихского и Карсского эялетов Тайк целиком вошел в состав Эрзурумского эялета (1834 г.).

Османское иго тяжелейшим образом отразилось на демографической картине Тайка. Более 60% 94 тысячного населения Тайка составляли армяне, для которых настоящим ужасом стали войны между Турцией и Персией. В 1604 г. персы переселяют часть населения Геле, Пеняка, Панаскерта, Ольты и Мамрвана. С другой стороны османское правительство начало переселение в край туркоязычного и ираноязычного населения, с целью укрепить владычество над покоренными народами. В результате этой политики в Гельской и Пенякской ливах появились курдские поселения, а в Тортуме и Кискиме обосновались лазы. В 1643 г. османское правительство ужесточила налоговую политику по отношению к не мусульманского населения, в результате чего халкидонитское большинство армян Тайка предпочла принятие мусульманства, хотя многие из них продолжали соблюдать христианские традиции. Такие мусульмане были известны под именем “кескесы” (наполовину армяне-христиане, наполовину турки-мусульмане). Наряду с процессом мусульманизации населения, в конце XVII века в Тайке появились католические миссионеры, которые смогли

которые смогли распространить католичество среди части армянского населения Кискима и Тортума.

Демографические трансформации в Тайке особо заметны, когда сопоставляем 2 османских источника – “Большой давтар Гурджистанского вилаета” (1595 г.) и “Джаба давтар Чилдырского эялета” (первая половина XVIII в.). За полтора столетия резко сократились поселения Тайка. Так, с 1595–1732 гг. поселения Пенякской ливы сократились со 109 до 46, а вместо 90 поселений Ольтинской ливы в 1595, в начале XVIII века мы встречаем всего 45 поселений.

На рубеже XVIII–XIX вв. население Тайка по сравнению с XVI веком довольно сократилось и составляло чуть более 60.000 человек. По ливам население было распределено следующим образом: 7560 – в Кискиме, 4860 – в Пархаре, 16960 – в Тортуме, 2520 – в Тавускяре, 8100 – в Ольты, 6660 – в Мамрване, 8280 – в Пеняке и 5400 – в Геле. Если во второй половине XVI века армянским было более 60 % населения Тайка, то к началу XIX века армяне составляли всего треть населения.

Во время русско-турецкой войны 1828–1829 гг. русские войска захватили Тайк, подавив сопротивление местных вооруженных сил во главе Кючук бека и Османа аги. Согласно Адрианупольскому договору от 2-го сентября 1829 г. Тайк и остальные территории Западной Армении, которые были взяты русскими войсками, были вернуты Османской империи. Дабы избежать расправы над армянским населением со стороны турецкого правительства и мусульманских фанатиков, было организовано переселение армян в Ахалцихе и Ахалкалак, которые согласно Адрианопольскому договору перешли России, а также в Армянскую область. Переселение, которое началось 10-го мая 1830 г., имела такие же тяжелые последствия для армян Тайка, как и мусульманизация XVII–XVIII вв.. Армяне Тайка покинув свои края, обосновались в Ахалцихе и ее окрестностях. В результате переселения Тайк лишился половины своего армянского населения, которое ускорило отуречивание “кескесского” населения Тайка.

ARKADI AKOPOV

TAYK

ADMINISTRATIVE AND DEMOGRAPHIC

PICTURE FROM THE XVI CENTURY

TILL THE FIRST THIRD OF THE XIX CENTURY

SUMMARY

The history of XIV ashkharh (province) of Great Armenia – Tayk, is one of the most understudied by Armenian history. From the ancient times, Tayk was part of the Armenian statehood. The first mention of Tayk refers to the XII century BC, when the Assyrian king Tiglath-Pileser I, attacked state form Nairi, part of which was the country Dayaeni.

In the records of Van Kingdom, Tayk is mentioned as Diauhi. In 401 BC, Greek historian Xenophon, passing through Armenia, mentioned taokhs. In the II century BC, King of Great Armenia Artashes I (189–160 BC) attached the territory in the north, including the part of Tayk, that in the III century departed to Georgia. In the I century AD, one of the gavar (region) belonging to Tayk - Boghkha is referred to as a land ownership nakharar Dimaksyan dynasty. In the IV century Tayk is passed to nakharar Mamikonyan dynasty. The Mamikonyans very often became the leaders of the struggle against a foreign enemy, and Tayk- the stronghold of the Armenian armed forces.

In 591, by the order of the Byzantine Emperor Maurice, a new administrative unit was formed - Deep Armenia from the territories of Tayk and Gugark.

At the end of the VIII century, after the anti-Arab uprising, Mamikonyans were searching for a political asylum and had to leave Tayk where Bagratids emerged. In the X century the region became part of kurapalacy, which dates back to the IX century in the nearby Kgarchk. In the II half of the X century, during the reign of David Kurapalat, Tayk reached the peak of its power. After the death of David Kurapalat Tayk passed to Byzantium. In the II half of the XI century Tayk was destroyed by Seljuk troops, and at the beginning of the XII century it came under the influence of the Georgian kingdom. After the Mongol invasions of the fist half of XIII century, in 1266 Tayk became part of the

principality of Samtskhe, and in the XVI century it was conquered by the Ottoman Turks.

Since ancient times Tayk was inhabited by Armenians. This is certified in the Armenian and Greek sources. In the VII–VIII centuries while under the yoke of many Arab residents of Tayk, including the clerical estate, preferred to move to the neighbour Byzantium. Soon in Tayk there appeared the Georgian clerical estate, which joined a small amount of the Georgian population. Armenian indigenous population was quite tolerant towards Chalcedonism, and soon the Armenians themselves preferred to receive Chalcedonism, which however did not suppose the georgianisation of Armenians.

Tayk as a part of the Ottoman Empire was divided between the following eyalets (province): Erzurum (Tortum and Mamrvan sanjaks), Akhaltsikhe (Kiskim, Parhar, Tavuskyar, Olti and Panak sanjaks) and Kars (Gyole sanjak). After the dissolution of the Akhaltsikhe and Kars eyalets, Tayk entirely joined the Erzurum eyalet (1834).

Ottoman yoke had a serious influence on the demographic picture of Tayk. More than 60% of 94000 population of Tayk were Armenians, for whom the wars between Turkey and Persia became a real horror. In 1604 the population of Gyole, Panak, Panaskert, Olti and Mamrvan was migrated by the Persians. On the other hand, the Ottoman government began to inhabit Turkish-speaking and Iranian-speaking population, in order to strengthen dominion over the nations. As a result of this policy in Gyole and Panak sanjaks appeared Kurdish population, and in Tortum and Kiskim – settled by lazes. In 1643 the Ottoman government tightened fiscal policy in relation to non-Muslim population, causing in the majority of Armenian Chalcedonian of Tayk preferred to adopt Islam, although many of them continued to observe the Christian traditions. These Muslims were known as "keskes" (half Armenian Christians, half-Turkish Muslims). Along with the process of Islamization of the population at the end of XVII century, in Tayk appeared Catholic missionaries who were able to spread Catholicism among the Armenian population of Kiskim and Tortum.

Demographic transformation in Tayk is particularly noticeable when we compare the Ottoman sources - "The Big davtar of Gyurjistan vilayat" (1595) and "The Jaba davtar of Childir eyalet" (first half of the XVIII century.). For half a century, the population living in Tayk dramatically declined. Thus, from

1595–1732, the settlement of Panak sanjak was reduced from 109 to 46 and from 90 settlements of Olti sanjak in 1595, at the beginning of XVIII century, we find a total of 45 settlements.

At the turn of XVIII–XIX centuries the population of Tayk was 60,000 people, which was a significant decrease from the Tayk population of XVI century. The population of sanjaks was distributed as follows: 7560 - in Kiskim, 4860 - in Parhar, 16960 - in Tortum, 2520 - in Tavuskyar, 8100 - in Olti, 6660 - in Mamrvan, 8280 - in Panak and 5400 - in the Gyole. In the second half of the XVI century, the Armenians composed more than 60% of the population of Tayk. By the beginning of the XIX century, the Armenians were only a third of the population.

During the Russian-Turkish war of 1828–1829, Russian troops seized Tayk, suppressing the resistance of local armed forces led Kuchuk Agha and Osman Bey. According to September 2, 1829 Adrianopol agreement, the territories of Tayk as well as the territories of Western Armenia, which had been taken by the Russian troops, were given back to the Ottoman Empire. In order to avoid the massacre of the Armenian population by the Turkish government and Muslim fanatics, there were organized resettlements of Armenians in Akhaltsikhe and Akhalkalaki, which was according to the contract of Adrianapol passed to Russia, as well as to the Armenian region. Relocation, which began on 10th May 1830, had the same dire consequences for the Armenians of Tayk as an islamization of XVII–XVIII centuries. Leaving their territories, the Armenians of Tayk settled in Akhaltsikhe and the surrounding area. As a result of the relocation, Tayk lost half of its Armenian population, which accelerated turkification of "keskes" population of Tayk.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Սկզբնաղբյուրներ

I. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան

ա) Չեռագրեր

1.1. №№ 2751, 2803, 3223, 7866, 8064, 8624:

բ) Արխիվային նյութեր

1.2. Կաթողիկոսական դիվան, թրթապանակ 257գ, վավերագիր 62:

1.3. Կարապետ արքեպիսկոպոսի արխիվ, թրթապանակ 163բ, վավ. 486, 714, 747, 868, թրթապանակ 163գ, վավ. 1173, 1177, 1179, 1188, թրթապանակ 163ե, վավ. 15, 106:

II. Центральный государственный исторический архив Грузии (ЦИАИГ)

1.4. Ф. 2, оп. 1, л. 2594:

1.5. Ф. 415, оп. 1, л. 21:

1.6. Ф. 1438, оп. 1, л. 116, 323, 408, 734:

III. Եղիշե Չարենցի անվան Գրականության և արվեստի բանգարան

1.5. Թ.Ազատյանի ֆոնդ, բաժին IV, վավ. 224:

2. Տպագիր սկզբնաղբյուրներ

ա) հայերեն

2.1. Արրահամ կաթողիկոսի Կրետացոյ պատմագրութիւն անցիցն իւրոյ և Նատիր-Շահին պարսից, Վաղարշապատ. տպ. ս. Էջմիածնի, 1870, 4, 129 էջ:

2.2. Դարբինյան Մ., Վավերագրեր պարսկահայերի և արևմտահայերի 1828–1830 թթ. գաղթի վերաբերյալ, ԲՀԱ, 1973, թիվ 2, էջ 135–146:

2.3. Դիվան Հայոց պատմութեան, կազմեց Գիտ քահանայ Աղանեանց, գիրք Ա, Թիֆլիս, Շարածեի տպ., 1893, 326 էջ, գիրք Ը, Թիֆլիս, Աղանեանցի տպ., 1908, 664 էջ, գիրք Ժ, Թիֆլիս, Աղանեանցի տպ., 1912, 605 էջ:

- 2.4. Գիվան Հայոց պատմության, Նոր շարք, գիրք առաջին: Դուկաս Կարնեցի, հ. Ա, աշխատասիրությամբ Վ. Գրիգորյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1984, 595 էջ:
- 2.5. Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. Ա, Երևան, 1961, 404 էջ, հ. Բ, Երևան, 1964, 338 էջ, հ. Գ, Էվիա Չելեբի, կազմեց Ա. Խ. Մաֆրատյանը, Երևան, 1967, 346 էջ:
